Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 1-ի N 308 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԱՎԱՌ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ 4

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 6

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

2. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 13

3. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ 15

3.1 ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն 15
3.2 Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները 19
3.3 Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները 21
3.4 Մասնավոր հատվածի զարգացման 2012-2015թթ.առաջնահերթությունները 23
3.5 Զբոսաշրջության զարգացում 25
3.6 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն 25
3.7 Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները 27
3.8 Զբոսաշրջության զարգացման 2012-2015թթ. առաջնահերթությունները 28

4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 32
4.1 Կրթություն 32
4.1.1 Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն 32
4.1.2 Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը 47
4.2 Հանգիստ, մշակույթ և կրոն 50

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 61
5.1 Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն 61
5.1.1 Բնակչության առողջության վիճակն ու առողջության մատչելիությունը 61
5.2 Առողջության վիճակի ներկայիս հիմնախնդիրները 67
5.3 Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը 72
5.4 Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 78

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 85
6.1 Ոլորտի իրավիճակի վերլուծություն 85
6.2 Գեղարքունիքի մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը 2012-215թթ-ին 100

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 107
7.1 Իրավիճակը գյուղատնտեսության ոլորտում 2008-2011թթ. 107
7.2 Գյուղատնտեսության ոլորտի նպատակները և ռազմավարության ուղղությունները 118

8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 125
8.1 Բնապահպանական ոլորտի_հիմնախնդիրները 125
8.2 Բնապահպանական ոլորտի_զարգացման ուղղությունները 2012-215թթ 132

9. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 141
9.1 Ջրամատակարարում և ջրահեռացում 141
9.2 Գազամատակարարում 145
9.3 Էներգետիկա 147

9.3.1 Էլեկտրական էներգիա 147
9.3.2 Հիդրոէներգետիկա 148
9.4 Ճանապարհաշինություն 151
9.4.1 Ճանապարհաշինության ենթաոլորտի իրավիճակի վերլուծություն 151
9.5 Քաղաքաշինություն 157
9.5.1 Քաղաքաշինության ենթաոլորտի իրավիճակի վերլուծություն 157
9.5.2 Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն 160
9.5.3 Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում 160
9.5.4 Մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգում 162
9.5.5 Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում 162
9.5.6 Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման բարեփոխումներին ու վարչական շենքերին ուղղված միջոցառումներ 163
9.5.7 Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում 164

10. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 165
10.1 Տարածքային կառավարում 165
10.1.1 Վարչատարածքային բաժանում 165
10.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ 165
10.1.3 Մարզպետարանի կառավարում 167
10.1.4 Քաղաքացիական ծառայություն 168
10.1.5 Էլեկտրոնային կառավարում 169
10.2 Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում 170
10.2.1 Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ 170
10.2.2 Համայնքային ծառայություն 173
10.2.3 Տեխնիկական ապահովվածություն 174
10.2.4 Համայնքային զարգացման ծրագրեր 174
10.2.5 Քաղաքացիական հասարակություն 176
10.2.6 Մարզի զարգացման ծրագրի մշակման ինստիտուցիոնալ համակարգ 178

11. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 191
11.1 Ներածություն 191
11.2 Տարեկան աշխատանքային պլան 192
11.3 ՄԶԾ և ԿԶԾ ՄԳ համակարգերը 193
11.4 ՄԶԾ ՄԳ համակարգի կառուցվածքը 194
11.5 ՄԶԾ մոնիտորինգի ցիկլը 198
11.6 ՄԳ հաշվետվությունների բովանդակությունը 198
11.7 Տարեկան սեմինար-խորհրդակցություններ 199
11.8 Ինստիտուցիոնալ դրույթներ 199
11.9 2012-2015թթ. ՄԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ և ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ 202

12. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 207

13. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 210

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունները, տնտեսական միջավայրի ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում առկա իրողությունների համակողմանի վերլուծությունները հստակ ուրվագծվում և ներկայացվում են 2012-2015 թվականներին իրականացվող ռազմավարական ուղղություններում, որոնք կխթանեն մարզային ենթակառուցվածքների բնականոն գործունեությանը, մարզի համայնքների շարունակական և համաչափ զարգացմանն ու ազգաբնակչության կենսապայմանների բարելավմանը:

Ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի համաձայն: 2012-2015թթ. մարզի զարգացման ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել են ՀՀ կառավարության կողմից 2005 թվականի մարտի 31-ի թիվ 404-Ն և 2009 թվականի մայիսի 7-ի թիվ 505-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը:

Ակնկալում ենք, որ մարզի զարգացման ծրագիրը կնպաստի ՀՀ Գեղարքունիքի մարզի 92 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ ՀՀ Գեղարքունիքի մարզը աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած տարածքներից մեկը:

Գեղարքունիքի մարզը ունի զարգացման ուրույն հեռանկարներ ու համահունչ մոտեցումներ, որոնց դիտարկումներն էլ հանդիսացել են մարզային զարգացման հանձնաժողովի, ոլորտային աշխատանքային խմբերի և այս գործընթացին իրենց մասնակցությունն ունեցած բոլոր պետական, հասարակական, փորձագիտական կազմակերպությունների ու անհատների աշխատանքի կազմակերպման հիմնական ուղենիշն ու ելակետը:

Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագիրն ամբողջությամբ մաս է կազմում մեր երկրում ընթացող բարեփոխումների տրամաբանությանը, ՀՀ Նախագահի ու Կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային

մոտեցումներին և դիրքորոշումներին, ինչպես նաև ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության և խնդրի հետ կապված այլ կարևորագույն փաստաթղթերի հիմնական դրույթներն ու գերակայությունները:

Այս ամենի արդյունքում վստահաբար կարող ենք ընդգծել, որ ծրագիրը լիարժեքորեն կնպաստի տարբեր բնագավառների շարունակական զարգացմանը, ինքնատիպ դերակատարում կունենա մարզի 92 համայնքների գերակա խնդիրների լուծման ու հետագա առաջընթացի ասպարեզներում, կհանդիսանա մարզի տարեգրության առանցքային էջերից մեկը և կդառնա առօրյա աշխատանքի բացառիկ ուղեցույցն ու կողմնորոշիչը:

Մարզի զարգացման ծրագրի կազմման բոլոր փուլերում իր նշանակալի մասնակցությունն է ունեցել և հստակ աջակցություն ցուցաբերել ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը: Ոլորտային աշխատանքային խմբերն իրենց գործունեությունը կազմակերպել և վերլուծություններն իրականացրել են համապատասխան նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցության արդյունքում:

Մարզի զարգացման ծրագիրը Գեղարքունիքում նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Գեղարքունիքի մարզպետարանն ակնկալում է, որ նշված շահագրգիռ սուբյեկտների համար ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկները հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ է փոխշահավետ համագործակցության՝ հանուն Գեղարքունիքի մարզի կայուն զարգացման:

Ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, Գեղարքունիքի մարզի խորհրդի անդամներին, Մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված աշխատանքային խմբերին և աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անունից հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՊԿՉՆ	Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում
ԳԶՄՀ	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿՈՀ	Կրթության որակ և համապատասխանություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀՈԲԾ	Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր
ՀՊԾ	Համաշխարհային պարենի ծրագիր
ՀՏԶԾ	Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԶԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԾ	Մարզի զարգացման ծրագիր
ՄԶՀ	Մարզային զարգացման հանձնաժողով
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄԶՆ	Միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն

ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋԱՀԿ	Ջրհավաք ավազանների համայնքահեն կառավարում
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ	Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀԻ	Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ
ՏՀՏ	Տարածքային հարկային տեսչություն
ՈՒԹՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ	ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ
ՕՔԿ	Օքսֆորդի քաղաքական կառավարում
ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի գործընթացը սկսվել է 2003թ.-ից Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության ֆինանսավորմամբ՝ Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում:

2. Ծրագրի սկզբնական շրջանում Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի աշխատակազմն այցելություններ է կազմակերպել մարզի համայնքներ, տեղերում հանդիպել հասարակական կազմակերպությունների և համայնքային միավորումների հետ: Այս հանդիպումների ու քննարկումների նպատակն էր ուսումնասիրել հասարակական հատվածի կարողությունները և մշակել վերջիններիս բացթողումները վերացնելուն ուղղված միջոցառումները:

3. 2005թ.-ի մարտի 31-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված մարզի զարգացման ծրագրի նախապատրաստական փուլը մեկնարկեց 2003թ.-ի օգոստոսին՝ համայնքային ֆոկուս խմբերի ձևավորմամբ և աղքատության հիմնախնդիրների ու կարիքների մասին համայնքի տեսակետների հավաքագրմամբ: 2003թ.-ի վերջին մարզում իրականացվեց աղքատության մասնակցային գնահատում՝ աղքատության մասին բնակչության (հատկապես աղքատների) տեսակետները հավաքագրելու նպատակով:

4. 2004թ.-ից սկսվել են մարզային զարգացման ծրագրում ընդգրկված ոլորտների մշակման աշխատանքները, որոնք իրականացվում էին մարզպետարանում ձևավորված ոլորտային աշխատանքային խմբերի կողմից՝ մարզպետարանի համապատասխան վարչությունների պետերի ղեկավարությամբ: Այս աշխատանքի ընթացքում օգտագործվել են աղքատության մասնակցային գնահատման և ֆոկուս խմբերի քննարկումների արդյունքները: Այս գործընթացի համար բավական երկար ժամանակ է պահանջվեց, քանի որ աշխատանքային խմբերի համար անհրաժեշտ էր ներդնել պլանավորման նոր մոտեցումներ, կազմակերպել համապատասխան դասընթացներ այդ մոտեցումները կիրառելու համար, ինչպես նաև հաշվի առնել ռազմավարության պլանավորման ընթացքում առկա շահերը և կարիքները: Այդ նույն ժամանակահատվածում ձևավորվեց նաև մարզային զարգացման հանձնաժողովը՝ Գեղարքունիքի մարզպետի նախագահությամբ, որի կազմում ընդգրկված էին մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների և հասարակական կազմակերպությունների ընդհանուր առմամբ 30 ներկայացուցիչներ: Մարզային զարգացման հանձնաժողովի նպատակն էր ուսումնասիրել և քննարկել աշխատանքային խմբերի կողմից մշակած փաստաթուղթը, լուծել վիճահարույց հարցերը և հաստատել փաստաթուղթը մարզային մակարդակով: Այնուհետև ճյուղային նախարարությունները և դոնոր կազմակերպությունները քննարկել են մարզի զարգացման ծրագիրն՝ ներկայացնելով կարծիքներ և առաջարկություններ, ինչպես նաև Կայուն զարգացման ծրագրին և ազգային այլ ռազմավարությունների հետ նրա համապատասխանությունը ստուգելու նպատակով:

5. 2005-2007թթ.-ի համար մարզային զարգացման ծրագրիրն հաստատվել է 2005թ.-ի մարտի 31-ին ՀՀ կառավարության թիվ 404-Ն որոշմամբ, ինչով և ամրագրվեց մի նոր մոտեցում առկա հիմնախնդիրները Կառավարության և քաղաքացիական հասարակության հետ համատեղ բացահայտելու և դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումները մշակելու ուղղությամբ: Մարզային զարգացման ծրագիրն համահունչ է Կայուն զարգացման ծրագրին, միջնաժամկետ ծախսային և Հազարամյակի մարտահրավերներ ծրագրերի սկզբունքներին ու տարբեր ոլորտներում պետության կողմից իրականացվող քաղաքականությանը:

6. ՀՀ կառավարության կողմից 2009 թվականի մայիսի 7-ի N505-Ն որոշմամբ հաստատվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի 2009-2011թթ. զարգացման ծրագիրը:

7. ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38-Ա որոշմամբ հավանության է արժանացել <Մարզերի զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման հայեցակարգը>: Այժմ մեկնարկում ենք 2012-2015 թվականների ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի մշակման աշխատանքները, որը պետք է ներդաշնակ լինի ՀՀ կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերին և բնորոշի մարզի զարգացման առանձնահատկությունները**:**

8. Մարզի զարգացման ծրագրում արտացոլվել են մարզի զարգացման բոլոր ոլորտներն և ներառվեն մարզում իրականացվող բոլոր ծրագրերն ու միջոցառումները, որոնց ֆինանսավորումը կանխատեսվում է ՀՀ պետական բյուջեի, համայնքային բյուջեների, դոնոր կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների ու մասնավոր ներդրողների միջոցներից:

9. Մարզի զարգացման ծրագրի մշակման աշխատանքներին ներգրավվել են բոլոր կառույցների համատեղ ջանքերը՝ նախարարություններ, տարածքային կառավարման մարմիններ, համայնքային միություններ, հասարակական կազմակերպություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ: Մարզի զարգացման ծրագրում սահմանվել են ներոլորտային գերակայություններ:

10. Մարզի զարգացման ծրագրի մշակման ու իրականացման գործընթացի արդյունավետության կարևոր գործոնը թափանցիկությունն ու հրապարակայնությունն է, որը նպաստեց մասնակիցների միջև փոխադարձ վստահության, փոխըմբռնման և համագործակցության մթնոլորտի ձևավորմանը՝ միաժամանակ էապես մեծացնելով ծրագրերի իրականացման նկատմամբ հասարակական վերահսկողության աստիճանը:

11. Մարզի զարգացման ծրագրի գործընթացի հիմնական նպատակներից է Կայուն զարգացման ծրագրի և համապատասխան պետական ոլորտային ռազմավարությունների իրականացմանն աջակցելը, որն անդրադառնում է մի շարք համընդհանուր հիմնախնդիրների, ինչպիսիք են շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը, մասնավորապես՝ բնական ռեսուրսների օգտագործման ու բնապահպանական անվտանգության բնագավառներում:

12. Մարզի զարգացման ծրագիրը նախատեսված է քառամյա ժամկետի համար և ներառում է ֆինանսական միջոցներ յուրաքանչյուր տարվա համար:

13. Մարզի զարգացման ծրագրի ֆինանսավորման հիմնական մասն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով, ինչպես նաև այլ աղբյուրներով՝ դոնորների միջոցներով, մասնավոր հատվածի ներդրումներով, բարեգործական ծրագրերով, նվիրատվություններով, հասարակական կազմակերպությունների միջոցներով:

14. Մարզի զարգացման ծրագրում գույքագրվել է մարզի բոլոր կարիքները ու ծրագրերը միջնաժամկետ ծախսային ծրագրի հեռանկարում, որոնք սակայն կարող են ապահովված չլինել համապատասխան ֆինանսական ռեսուրսներով: Յուրաքանչյուր տարի իրականացվում են այն առաջնահերթ ծրագրերը, որոնք համապատասխանում են պետական ռազմավարություններում սահմանված գերակայություններին և որոնք ապահովված են ֆինանսական միջոցներով:

15. Մարզի զարգացման ծրագիրը մարզպետարանի համար մի գործիք է, որի շնորհիվ մարզպետարանը դառնում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման իրական շարժիչ ուժը, և ստանձնում է մարզի զարգացման պլանավորման և իրագործման արդյունավետ ու թափանցիկ համակարգի գործունեության պատասխանատվությունը: Մարզպետարանը և հասարակական կազմակերպությունը իրականացնում են ծրագրի կատարման ընթացքի մոնիտորինգ ու արդյունքների գնահատում:

16. Մարզի զարգացման ծրագրի մշակման ու իրականացման գործընթացում կարևոր դերակատարություն ունեն՝ ՀՀ գործադիր մարմինները, մարզային խորհուրդը, մարզային զարգացման հանձնաժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, մարզպետարանի աշխատակազմը, քաղաքացիական հասարակությունը և ոլորտային աշխատանքային խմբերը:

17. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ հունիսի 17-ի N133-Ա որոշմամբ ստեղծվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման աշխատանքները իրականացնող ոլորտային 6 աշխատանքային խմբեր՝

1. Գյուղատնտեսության և բնապահպանության
2. Մասնավոր հատվածի ու փոքր և միջին ձեռներեցության աջակցություն
3. Սոցիալական պաշտպանություն և առողջապահություն
4. Համայնքային զարգացում /ենթակառուցվածքներ/
5. Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն
6. Կրթություն, մշակույթ և սպորտ:

18. Յուրաքանչյուր աշխատանքային խումբ բաղկացած է մոտավորապես 15 անդամից, ովքեր հանդիսանում էին մարզպետարանի, ՀՀ գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնագիտացված գործակալությունների, հասարակական կազմակերպությունների, համայնքային միավորումների ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբերը ղեկավարում էին մարզպետարանի համապատասխան ոլորտային ստորաբաժանումների ղեկավարները:

19. Յուրաքանչյուր ոլորտային աշխատանքային խմբի կարևորագույն սկզբունքն էր ապահովել գործունեության առավելագույն հրապարակայնությունը: Ոլորտային աշխատանքային խմբերը ֆորմալ կառույցներ են, որոնց հավասարաչափ անդամակցում են մարզպետարանի աշխատակազմը, նախարարությունների ներկայացուցիչները, համայնքները և քաղաքացիական հասարակությունը:

20. Ոլորտային աշխատանքային խմբերի նիստերը բաց էին և անցկացվել են մարզպետարանում՝ 15-օրը մեկ:

21. Ոլորտային աշխատանքային խմբերը քննարկում են ոլորտի հիմնախնդիրները, բացահայտում ու լրացնում տեղեկատվական բացերը, սահմանում ոլորտային աշխատանքային խմբերի գործունեության մարտավարությունը:

22. Ոլորտային աշխատանքային խմբերը սահմանում են համապատասխան ոլորտի զարգացման առաջնահերթ կարիքները և մշակում դրանց իրականացմանն ուղղված ներդրումային միջոցառումների պլանը՝ նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

23. Ոլորտային աշխատանքային խմբերը մշակել են ոլորտի զարգացման ռազմավարության նախագիծ, որը քննարկվել է մարզային զարգացման հանձնաժողովի կողմից: Արդյուքում հաշվի է առնվել հանձնաժողովի կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները:

24. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունիսի 21-ի N132-Ա որոշմամբ ստեղծվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքային զարգացման հանձնաժողով:

25. Ոլորտային աշխատանքային խմբերը ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծի մշակման աշխատանքները ավարտվել և ներկայացրել են Գեղարքունիքի մարզային զարգացման հանձնաժողովին:

26. 2012-2015թթ. մարզի զարգացման ծրագրի մշակման գործընթացը սկսվել է 2011թ. հուլիսից, որի աշխատանքները համակարգվում էին մարզպետարանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից: 2012-2015թթ. մարզի զարգացման ծրագրի մշակման գործընթացի համար շատ ավելի քիչ ժամանակ պահանջվեց, քան առաջին և երկրորդ մարզային զարգացման ծրագրերի մշակման համար, քանի որ ձևավորված աշխատանքային խմբերն արդեն իսկ աշխատանքային փորձ ունեին:

27. Մարզի 2012-2015թթ. զարգացման ծրագրի մշակման մոտեցումները, մեթոդաբանությունը և սկզբունքները՝

1) Պետական քաղաքականության հետ համահունչ լինելը. մարզային զարգացման ծրագիրն համահունչ է պետական ռազմավարություններին ու քաղաքականություններին (օրինակ՝ ԿԶԾ, ՄԺԾԾ, ոլորտային ռազմավարություններ և այլն): Ոլորտային աշխատանքների ընթացքում աշխատանքային խմբերը հանդիպումներ ու քննարկումներ են ունեցել ճյուղային նախարարությունների հետ, որպեսզի առաջարկվող գործողություններն ու միջոցառումները համահունչ լինեն նախարարության կողմից վարվող քաղաքականությանը:

2) Մասնակցային. Մարզային զարգացման ծրագրի մշակման գործընթացը խորհրդակցական էր, մարզային մակարդակում բոլոր շահառուները հավասար հնարավորություն են ունեցել ներգրավվելու նշյալ գործընթացում: Մարզային զարգացման ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել համայնքների քառամյա զարգացման ծրագրերը, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի կարիքները:

3) Ծրագիրը մարզինն է. Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագիրը, դրա մշակման ու իրականացման համար անհրաժեշտ գործընթացները, ինստիտուցիոնալ կառույցներն ու մեխանիզմները, ծրագրի շնորհիվ ձևավորված հասարակական ու պետական հատվածների սերտ համագործակցությունը, ինչպես նաև այս համակարգի արմատավորումը և հետագա զարգացումը մարզի սեփականությունն է, որի հետագա հաջողության համար պատասխանատու են պետական մարմինները, մարզի իշխանություններն ու հասարակությունը:

4) Հիմնավորված. Մարզային զարգացման ծրագրում արձանագրվող առաջնահերթություններն ու միջոցառումները հիմնված են առկա տվյալների և դրանց վերլուծությունների վրա, այդ թվում՝

ա. Կայուն զարգացման ծրագրի առաջին և երկրորդ տարբերակների դրույթներն ու մոտեցումները և դրանցով նախատեսված առաջնահերթություններն ու ռազմավարությունները,

բ. Աղքատության մասնակցային գնահատում,

գ. Մարզային զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունները,

դ. 2009, 2010 և 2011թթ.-ի տարեկան աշխատանքային պլանները,

ե. Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից պատրաստած տվյալների բազաները,

զ. Ազգային վիճակագրական ծառայության, դոնոր և այլ միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները և ուսումնասիրությունները:

5) Գնահատելի. Մարզային զարգացման ծրագրում առաջարկվող միջոցառումները չափելի են, ունեն ցուցանիշներ և թիրախներ: Բոլոր բաժիններն ունեն ոլորտային տրամաբանական հենք:

6) Իրականանալի. Մարզային զարգացման ծրագրում առաջարկված միջոցառումներն իրատեսական են: Ծրագրում արտացոլված են միջոցառումները, որոնց համար արդեն իսկ գոյություն ունեն ֆինանսական միջոցներ և կան միջոցառումներ, որոնց համար ֆինանսավորման աղբյուրները դեռևս հստակ չեն:

28. Մարզային զարգացման ծրագրի մշակման մեթոդաբանությունը հիմնված է այն պարզ սկզբունքի վրա, որ մարզային զարգացման ծրագիրն պետք է արձանագրի մարզի տնտեսական ու սոցիալական վիճակը, ըստ ոլորտների կարևորագույն հիմնախնդիրները, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունները: Մարզային զարգացման ծրագիրն նպատակ չունի արձանագրել առանձին ծրագրեր ու միջոցառումներ: Վերջիններս արտացոլվելու են տարեկան աշխատանքային պլաններում:

29. Աշխատանքային խմբերն իրենց գործունեությունը սկսել են հիմնարար փաստաթղթերի, հաշվետվությունների և սոցիալ-տնտեսական տվյալների, եզրակացությունների քննարկումով, ինչպես նաև առաջնահերթությունների վերաբերյալ իրենց կարծիքների ձևավորումով:

30. Ոլորտային աշխատանքային խմբերի և ոլորտային գործադիր մարմինների հետ համաձայնություն է ձեռքբերվել՝ խնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ, քննարկվել է ընթացիկ վիճակն ու հիմնախնդիրները:

31. Ոլորտի խնդիրներն ու ռազմավարությունները ամրագրվել են տրամաբանական հենքի ձևաչափով: Տրամաբանական հենքը կառավարման մի գործիք է, որտեղ հստակ ներկայացվում են միջոցառումների, խնդիրների ու նպատակների միջև առկա կապերը: Սա կարող է դառնալ միջոցառումների պլանավորման, մոնիտորինգի ու գնահատման արդյունավետ ու ճկուն մեթոդ: Մարզային զարգացման ծրագրերի վերանայման համար կիրառվել է տրամաբանական հենքի պարզեցված տարբերակը, որը.

1) Նկարագրում է ոլորտի հիմնական **խնդիրը**, որը պետք է լուծել: Սա ,,քաղաքական ու ռազմավարական մակարդակի,, նպատակ է, որն ամրագրված է ընդհանուր ձևակերպումներով և պարտադիր չէ, որ այն լիարժեքորեն իրականացվի մարզային զարգացման ծրագրի գործողության քառամյա ժամկետում:

2) Նկարագրում է **առաջնահերթ ծրագրերը**, որոնք ուղղված են ոլորտի խնդրի իրականացմանը:

3) Սահմանում է այն **ցուցանիշները**, որոնց միջոցով կատարվելու է ծրագրի իրականացման և ոլորտային խնդիրների լուծման մոնիտորինգ:

4) Նկարագրում են բոլոր այն **հնարավոր ռիսկերը**, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրերի մշակման ու կատարման կամ ոլորտի ավելի լայն խնդիրների լուծման վրա:

32. Տրամաբանական հենքի նպատակն է ապահովել առանձին միջոցառումների մակարդակում ավելի մանրամասն պլանավորման հիմքեր, և այս աշխատանքները պետք է կատարվեն տարեկան կտրվածքով՝ մարզային զարգացման ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: Այս ավելի մանրամասն պլանավորման ընթացքում բացահայտվում են միջոցառումների արդյունքների ու անելիքների մանրամասները, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

33. Համաձայնեցնելով ոլորտային խնդիրներն ու գերակայությունները, ոլորտային աշխատանքային խմբերերը պատրաստել են ոլորտային ռազմավարությունների նախագծերը: Սրանց հիմքում ընկած են համապատասխան ոլորտների տրամաբանական հենքերը և կազմված են համաձայն հետևյալ կառուցվածքի.
ա) ոլորտում իրավիճակի վերլուծություն,
բ) ոլորտի ռազմավարությունը,
գ) ոլորտի ֆինանսավորումը:

34. Վերջին բաժնում ներկայացված են ոլորտային ռազմավարությունների իրականացման ֆինանսավորման մանրամասները, ինչպես նաև տեղեկատվություն է տրված առկա ֆինանսական աղբյուրների ու միջոցների մասին՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի համաձայն:

2. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

35. ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի արևելքում: Մարզը սահմանակից է ՀՀ Տավուշի և Լոռու (հյուսիսում), Կոտայքի և Արարատի (արևմուտքում) և Վայոց Ձորի մարզերին (հարավում), ինչպես նաև Ադրբեջանին (արևելքում): Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115կմ, արևմուտքից արևելք՝ 85կմ: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, ճամբարակի (նախկին Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզկենտրոնն է Գավառ քաղաքը: Մարզի տարածքը կազմում է 5348 քառ. կմ, որից գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունը կազմում է 240.033 հազ. հա: Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաքային՝ Գավառ, ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր:

36. Մարզի տարածքը, որն հիմնականում կազմում է Սեւանա լճի ջրահավաք ավազանը, ծովի մակերեւույթից գտնվում է 1600-ից մինչեւ 3597 մետր բարձրության վրա: Մարզը գոտևորում են Գեղամա, Վարդենիսի, Արեգունու, Արեւելյան Սեւանի, Սեւանի եւ Փամբակի լեռնաշղթաները: Ամենաբարձր լեռնագագաթը Աժդահակն է՝ 3597 մետր: Գեղարքունիքն ունի 238.000 բնակիչ: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է՝ 34.000 բնակիչ: Մարզի բնակչության 99 տոկոսից ավելին հայեր են, Հայ առաքելական եկեղեցու հետեւորդներ:Գեղարքունիքի տարբեր համայնքներում ապրում են նաեւ ռուսներ, ուկրաինացիներ, մորդվաններ, գերմանացիներ, հրեաներ:

37. Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598մ): Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555մ), Վարդենիսը (3522մ), Գեղասարը (3446մ): Ամենաերկար գետերն են Արգիճտին (51կմ), Գավառագետը (47կմ) և Մասրիկը (45կմ), առկա են նաև խառնարանային լճեր Աժդահակ և Աղմաղան (մինչև 50մ տրամագծով և 15մ խորությամբ):

38. Գեղարքունիքի մարզում է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1898մ). եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի ավազանի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 5 հազ. քառ. կմ. լճի հայելու մակերեսը 1.2 հազ. քառ. կմ. ծավալը 35.8 մլդ. խմ: Այն ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

39. Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, բայց առանձնապես ուշագրավ են բնական հուշարձանների խառնարանային լճերը, խարամային կոները, ընդածակ <քարային ծովերը>: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սևանա լճից ազատված տարածքներում հայտնաբերված մինչև 5000-ամյա հնության դամբարանները: ԵՒանա լիճն իր հերթին շրջապատված է պատմական արժեք ներկայացնող բազմաթիվ եկեղեցիներով, որոնցից առավել հայտնիներն են Հայրավանքի եկեղեցին, Մաքենիսի վանքը, Վանևանի և Սևանի թերակղզու վանական համալիրները:

40. Մարզի տարածքում է գտնվում 'Սևան ազգային պարկը ' (կազմավորվել է 1978թ-ին): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ. հա. որից 24.9 հազ. հա. առափնյա ցամաքային տարածքներ են: Այն շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

41. Մարզի տարածքում գործում է 292.2կմ. միջպետական, 110,8կմ. հանրապետական 312,6կմ. մարզային նշանակության և 141,9կմ. համայնքային ենթակայության ճանապարհներ: Մարզի տարածքում է անցնում Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական մշանակության մայրուղին: Մարզի բոլոր 5 քաղաքներից մինչև մայրաքաղաք ամեն օր գործում է հասարակական տրանսպորտ:

42. Զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: 42.000 գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում տարեկան արտադրվում է 230.000 տոննա կարտոֆիլ, 250.000 տոննա անասնակեր, 35.000 տոննա կաղամբ, 60.000 տոննա հացահատիկ, 7.000 տոննա պտուղ, 80.000 տոննա կաթ, 14.300 տոննա միս, 241 տոննա բուրդ: Անասնապահական տնտեսություններում պահվում է 107.000 գլուխ խոշոր, մանր եղջերավոր անասուն: Հեռանկարային են համարվում հանքահումքային, սննդի եւ թեթեւ արդյունաբերության ոլորտները: Վերջին տարիների ընթացքում վերաշահագործվել են Սոթքի ոսկու, Արդանիշի կրաքարի հանքավայրերը, հնդկական 'Սթերլայթ', հայկական 'Միկա-ցեմենտ' ընկերությունների կողմից: Գորգագործական արտադրամասեր են գործում Մարտունի, Սեւան, Ճամբարակ քաղաքներում եւ Կարմիրգյուղում: Մեծ համբավ ունեցող գորգերը արտադրվում, արտահանվում եւ իրացվում են ԱՄՆ-ում եւ եվրոպական երկրներում: Գորգագործության զարգացման հիմնական ներդրողներն ու կազմակերպիչները 'Թուֆենկյան հիմնադրամ' եւ 'Մեգերյան եղբայրներ' ընկերություններն են:

43. Ալպյան բազմազան բուսաշխարհը նպաստավոր է մեղրի արտադրության համար: Մեղվաբուծությամբ զբաղվում է մոտ 500 տնտեսություն՝ տարեկան արտադրելով մոտ 300 տոննա մեղր: Սեւանի ավազանի բուսաշխարհի մեջ բացառիկ նշանակություն ունի փշարմավը, որի պտուղն օգտագործվում է ինչպես սննդի, այպես էլ գիտական եւ ժողովրդական բժշկության

մեջ: Սեւանա լճում արդյունագործական նշանակություն ունեն սիգ, ծածան ձկնատեսակները եւ խեցգետինը:

44. Մարզում գործում է 128 հանրակրթական դպրոց, միջնակարգ մասնագիտական 8 հաստատություն, մեկ պետական համալսարան, 25 առողջապահական կազմակերպություն: Հանրաճանաչ են Գավառի երկրագիտական թանգարանը եւ Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնը, Սեւանի բնագիտական թանգարանը: Մշակույթի տներ եւ գեղարվեստական ինքնագործ խմբեր են գործում մարզի ավելի քան 30 համայնքներում:

3. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3. 1. ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն

45. Փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին արձանագրված աճի միտումները 2009-2010թթ. չեն պահպանվել՝ կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Չնայած համախառն ներքին արդյունքների որոշակի նվազման փոքր և միջին ձեռնարկության ոլորտի տեսակարար կշիռը 2009թ. համախառն ներքին արդյունքների մեջ աճել է, կազմելով՝ 42.5%, 2008 թվականի 41.7% դիմաց, կապված այն հանգամանքի հետ, որ ֆինանասատնտեսական ճգնաժամից ՀՀ-ում առավելապես տուժվել են խոշոր կազմակերպությունները, իսկ ՀՀ կառավարության նախաձեռնած հակաճգնաժամային ծրագրերը մեղմացրել են դրա ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտների վրա:

46. Ըստ փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի կողմից հրատարակված 2007-2009թթ. <<Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում>> տեղեկագրի, գրանցված փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է Աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1. Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն՝ ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց (2009թ.)

	ՓՄՁ սուբյեկտներ					
	Անհատ ձեռնարկատեր		Իրաբանական անձ		Ընդհամենը	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀՀ-ում	**73,693**	**100%**	**59,230**	**100%**	**132,923**	**100%**
այդ թվում՝						
ք. Երևան	30,209	41,0%	31,647	53,4%	61,857	46,5%
Արագածոտն	2,949	4,0%	1,647	2,8%	4,597	3,5%
Արարատ	5,394	7,3%	2,763	4,7%	8,157	6,1%
Արմավիր	6,187	8,4%	2,597	4,4%	8,784	6,6%
Գեղարքունիք	***3,369***	***4,6%***	***3,334***	**5,6%**	***6,703***	**5,0%**
Լոռի	5,904	8,0%	4,248	7,2%	10,153	7,6%
Կոտայք	6,223	8,4%	4,522	7,6%	10,745	8,1%

Շիրակ	4,046	5,5%	2,899	4,9%	6,946	5,2%
Սյունիք	3,872	5,3%	2,872	4,8%	6,744	5,1%
Վայոց Ձոր	1,541	2,5%	795	1,3%	2,636	2,0%
Տավուշ	3,698	5,0%	1,906	3,2%	5,603	4,2%

47. *Փոքր և միջին ձեռնարկության* պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը:Մարզի զարգացման ծրագրով փոքր և միջին ձեռնարկության աջակցության միջոցառումները նախատեսված է իրականացնել <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում:

48. Մարզում փոքր և միջին ձեռնարկության աջակցման նոր ստեղծված ենթակառուցվածքների տեղը փոքր և միջին ձեռնարկության աջակցման գործընթացը հետևյալն է՝



49. Կնքված պայմանագրերի շրջանակում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ուղղություններն են.

1) Կազմակերպությունների Եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոն Հայաստանում
2) Գործարար տեղեկատվություն
3) Գործարար խորհրդատվություն
4) Գործարար ուսուցում
5) Իրացման խթանում
6) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
7) Վարկային երաշխիքների տրամադրում
8) Վարկային տոկոսադրույքի սուբսիդավորում
9) Սեփական կապիտալի ֆինանսավորում
10) Արտահանման խթանում

50. 2009թ. փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզին տրամադրվել է 36.0 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն: Վարկային երաշխավորություն են ստացել 6 փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտ՝ ապահովելով 67.5 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոնի գործընկեր Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի, Անելիք բանկի և Յունիբանկի միջոցով:

51. 2009-2010թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում իրականացվել է սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության 2 ծրագիր: Ծրագրերի շրջանակներում աջակցություն է տրամադրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի 33 սկսնակ գործարարի:

52. Ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 9 սկսնակ գործարար, որոնց տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 15.43 մլն ՀՀ դրամ, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոնի երաշխավորությունը՝ շուրջ 20 մլն ՀՀ դրամ:

53. 922 փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին տեղեկատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով: Մասնագիտական գրականություն է տրամադրվել 200 փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտի:

54. Փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին տրամադրված տեղեկատվական և խորհրդատվական աջակցության այն մասը, որը պահանջում է նեղ մասնագիտական հմտություններ, իրականացվել է մրցույթով ընտրված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով: 8 փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտ ստացել են նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցություն, ֆինանսների կառավարման, հաշվապահական

հաշվառման, հարկային և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն:

55. 95 փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտ ուսուցողական աջակցություն են ստացել, մասնակցելով Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում կազմակերպված <<ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ>> թեմայով դասընթացներին:

56. Շուկաների առաջ մղմանն աջակցության ծրագրի շրջանակներում մարզից 18 փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներ ստացել են գովազդային վահանակների պատրաստման, պիտակների տպագրման, ինտերնետային կայքի պատրաստման, ցուցահանդեսին մասնակցության և այլ աջակցություն:

3.2 Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները

57. Աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են մարզկենտրոնում և քաղաքային համայնքներում գործող փոքր և միջին ձեռնարկությունները: Ծրագրի սկզբնական փուլում այս հանգամանքը թերևս հասկանալի է, սակայն հետագայում պետք է տարածաշրջանների ավելի համամասնական ընգրկում ապահովել: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմները ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող փոքր և միջին ձեռնարկության ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը փոքր և միջին ձեռնարկության աջակցմամբ հաջորդ տարիների պլաններում:

58. Ծրագրի շահառուների շրջանակները ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը փոքր և միջին ձեռնարկության աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

Աղյուսակ 3.2

ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ ԱՋԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ	**2009թ.**	**2010թ.**
Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր	**6**	**-**
Տեղեկատվական աջակցության ծրագիր	**705**	**217**
Գրականություն	**91**	**109**
Սկսնակ գործարարների աջակցության ծրագիր	**18**	**15**
Պետական գրանցում ստացածներ	**8**	**1**
Ֆինանասական աջակցություն ստացածներ	**8**	**1**
Ապրանքների և մատուցվող ծառայությունների շուկաներ առաջմղման աջակցության ծրագիր	**14**	**4**
Ուսուցողական աջակցության ծրագիր	**80**	**15**
Խորհրդատվական աջակցության ծրագիր	**8**	**-**

3.3 Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

59. Մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և մասնավոր հատվածի բիզնեսի աճի համար էական խոչնդոտ են համարվում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման դժվարությունները՝ ֆինանսավորման ռեսուրսները /սեփական միջոցները, վարկերը և այլն/ ծառայում են հիմնականում շրջանառու կապիտալի աղբյուրներ:

60. Մարզի փոքր և միջին ձեռնարկությունով՝ մասնավոր հատվածի բիզնեսով զբաղվողների համար բանկերից վարկ ստանալը դժվար չէ, սակայն առաջարկվող վարկերի պայմանները թույլ չեն տալիս կապիտալ ներդրումներ կատարել, քանի որ վարկի վերադարձի ժամկետները կարճ են/ մինչև 3 տարի/, իսկ այդ պայմաններով վարկերը նպաստավոր են միայն առևտրի և ծառայությունների ոլորտներում, իսկ շինարարության և արտադրության ոլորտներում նոր սարքավորումների ձեռք բերման և կապիտալ ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ են ավելի երկարաժամկետ վարկեր /4-6 տարի/: Սակայն <Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի <Գյուղական տարածքների տնտեսական զարգացման> և <Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին> ծրագրերի շրջանակներում 8 բանկերի միջոցով տրամադրվում են բացառապես ներդրումային վարկեր: Վարկերը տրամադրվում են 3 տարուց ավել ժամկետով՝ մինչև 7 տարի ժամկետով, և համեմատաբար ցածր տոկոսադրույքով՝ 10-14 տարեկան տոկոսադրույքով: Բացի վարկային միջոցներից <Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին> ծրագրի շրջանակներում ստեղծված <ՖՐԵԴԱ> հիմնադրամը իրականացնում է ֆինանսավորում փայամասնակցության տեսքով, առավելագույնը 7 տարի ժամկետով:

61. Ներդրումային ռեսուրսների սահմանափակ հնարավորություններից բացի որպես զարգացման խոչընդոտներ են նշվում նոր շուկաներ մուտք գործելու դժվարությունները:

62. Մասնավոր սեկտորի զարգացմանը խոչնդոտ է նաև ձեռներեցների կառավարման գիտելիքների և փորձի պակասը, մասնավորապես ֆինանսական կառավարման և շուկայավարման հարցերում: փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վրա բացասական է ազդում նաև միջին օղակի կառավարիչների պակաս լինելու հանգամանքը:

63. Մասնավոր ներդրումները ավելի գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է բարելավել տարածաշրջաններում ենթակառուցվածքների վիճակը, մասնավորապես՝ տեղական ճանապարհները, ջրամատակարարումը և այլն:

64. Մարզի համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, գործարարությունը լուրջ ազդեցություն չի ունեցել, քանի որ գործարարությամբ զբաղվողների թիվը համայնքներում չափազանց փոքր է;

65. Ֆինանսական աջակցություն /սկսնակներին և գործող փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում/:

66. Գործարար ուսուցում, տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում սկսնակ և գործող փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին:

67. Շուկաների առաջմղման աջակցություն:

68. Մարզում որոշակի աջակցություն ստացել են քաղաքային համայնքներում գործող փոքր և միջին ձեռնարկությունները, իսկ գյուղական համայնքները՝ ոչ: Մարզի տեղական ինքնակառավարման մարմինները կարևոր դեր ունեն փոքր և միջին ձեռնարկության աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

69. Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում հետևյալ ոլորտներում.

1) Առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր և խանութներ.
2) Ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, իսկ Սևանի տարածաշրջանում՝ նաև զբոսաշրջություն.
3) Արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքների վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն.
4) Շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ, որոնք համեմատաբար կայացած են Մարտունու տարածաշրջանում:

70. Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորությունները համաձայն նախորդ տարիներ ուսումնասիրությունների համարում են.

1)բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը (ընտանիքների 10-15%),

2)տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը,

3)զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով համայնքների մի մասի բարենպաստ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները,

4)համայնքում ներդրումներ կատարելու տեղաբնակ արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

71. Համայնքների ղեկավարները ցանկանում են մասնակցել համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակմանը, իսկ ծրագրերի իրագործման գործում պատրաստ են հատկացնել հողատարածքներ կամ՝ հնարավորության դեպքում նաև շենքային պայմաններ: Նման ծրագրերի մշակման և իրականացման համար համայնքապետերը աջակցություն են ակնկալում դոնոր կազմակերպություններից, փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամից, ինչպես նաև օտարերկրյա և տեղացի մասնավոր ներդրողներից:

72. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ համայնքներում մասնավոր ներդրումների ներհոսքը սահմանափակող հիմնական գործոնները հետևյալն են.

1)Համայնքի ղեկավարները կարևորելով մասնավոր ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը, դեռևս չունեն հստակ պատկերացում ներդրումների խրախուսման իրենց դերի վերաբերյալ,

2)Մասնավոր ներդրումների համար տեղական ռեսուրսների, մասնավորապես հողի և արտադրական տարածքների հատկացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,

3)Գործարար նախաձեռնությունների իրականացման համար անհրաժեշտ որակյալ աշխատուժի և մասնագետների պակասը:

73. Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի և մարզպետարանի համատեղ համագործակցության շրջանակներում առաջարկվել է հաջորդ տարվա ընթացքում անցկացնել հանդիպումներ փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտների հետ, որպես ռեգիոնալ զարգացման կարևոր տարերրի, վեր հանել խնդիրները և համատեղ մշակել լուծումներ ուղղված այդ խնդիրների լուծմանն ու փոքր և միջին ձեռնարկության–պետական մարմիններ երկխոսության կայացմանը:

74. Ցուցահանդեսների անցկացում:

75. Մարզում գործող փոքր և միջին ձեռնարկությունների արտահանման հնարավորությունների աջակցում, արտասահմանյան կազմակերպությունների հետ երկխոսության ու համագործակցության կայացման խթանում:

76. Համայնքներում բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծում /մասնավորապես հաղորդակցման միջոցների բարելավում/:

77. Համայնք – բիզնես կապի սերտացում:

78. Կադրերի վերապատրաստում, սկսնակ գործարարների ուսուցում:

79. Մարզում գործող գործարար ծառայություններ իրականացնող կազմակերպությունների կարողությունների հզորացում և դրանց միջոցով բիզնեսի հարմար ուսուցում ու խորհրդավության իրականացում:

80. Նոր աշխատատեղերի ստեղծում:

81. Հասանելի վարկերի տրամադրում, ցածր վարկային տոկոսադրույքների կիրառում:

3.4. Մասնավոր հատվածի զարգացման 2012-2015թթ. առաջնահերթությունները

82. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է առանձին փոքր և միջին ձեռնարկությունների մակարդակով ցուցաբերվող աջակցության շարունակումը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների

մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1) Փոքր և միջին ձեռնարկության *աջակցման և մասնավոր հատվածի զարգացման կարճաժամկետային ծրագրերի մշակում:*

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում:

83. Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումների խրախուսման համար:

84. Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

85. Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա ձևավորվել են մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես բարելավելու է գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

86. Այստեղ նշանակալի է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության, փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոնի, մարզպետարանի, մարզային խորհրդի դերը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

87. Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը գերմանական տեխնիկական աջակցություն կազմակերպության հետ մեկտեղ ստեղծել են գործարարության աջակցության ֆոնդ, որը տրամադրում է մինչև 400000 դրամ փոխատվություն մարզի տարածքում գործունեություն իրականացնող սկսնակ գործարարներին, որոնք վերապատրաստվել են Գեղարքունիքի

առևտրաարդյունաբերական պալատի մասնագետների կողմից Բիզնեսի պլանավորում և կազմակերպում մեթոդոլոգիայով:

88. Փոքր և միջին ձեռնարկության աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է ստորև Գծապատկերում.



3.5 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.6 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն

89. Մարզի զարգացման ծրագրի նպատակն է բնութագրել և գնահատել ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջության զարգացման միտումները և հեռանկարները՝

1) Սահմանել զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները.

2) Գնահատել մարտահրավերները և որոշել նպատակի իրականացման համար պետական քաղաքականության խնդիրներն, ուղղություններն ու սկզբունքները:

90. ՀՀ Գեղարքունիքի մարզում զբոսաշրջության ոլորտը գնահատվում է որպես գերակա ճյուղերից մեկը, որը զարգացման հիմնախնդիր ունի: Այդ ոլորտում կան զարգացման համար նշանակալի նախադրյալներ:

91. Գեղարքունիքի մարզը օժտված է՝

1) զբոսաշրջության համար գրավիչություն ներկայացնող Սևանա լիճ,

2) պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ տարածաշրջան

3) զբոսաշրջային շուկա առաջարկելու՝ բազմաբնույթ, մրցունակ, զբոսաշրջային արդյունքի և ծառայությունների մեծ ներուժ:

92. Զբոսաշրջության զարգացումն ինքնին կպահանջի ավելի բարձր որակավորված աշխատուժ, ավելի մեծ ներդրումներ, ավելի բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, հետազոտությունների ավելի ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ և ավելի նպաստավոր գործարար միջավայր:

93. 2010 թվականի հոկտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի Դեպարտամենտի գլխավոր խորհրդի միջև ապակենտրոնացված համագործակցության պայմանագիր է ստորագրվել: Համագործակցության շրջանակներում երկու կողմերը հսկայական աշխատանքներ են կատարել, և այժմ արդեն այս պայմանագրով ավելի կոնկրետ, ավելի նպատակային ծրագրեր են իրականացվելու: Ծրագրերի իրականացմանը աջակցում են Ֆրանսիայի հայկական ասոցիացիաները, Իզերի հայկական համայնքը և մասնավորապես Գրենոբլի ,,Հայ մշակույթի տունը,,:

94. Մարզի հինգ քաղաքներից 2-ը՝ Սևանը և Վարդենիսը, քույրացել են Ֆրանսիայի Հանրապետության Գրենոբլ և Ռոման քաղաքների հետ: Համագործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել Ֆրանսիայի այլ քաղաքների հետ համագործակցություն ծավալել մարզի Գավառ, Մարտունի և Ճամբարակ քաղաքները:

1) Գեղարքունիք մարզում համագործակցության շրջանակներում տուրիզմի ոլորտում առկա են նշանակալի ձեռքբերումներ: Ֆրանսիական կողմի աջակցությամբ կազմակերպվել է ֆրանս-հայկական ֆորում: Ֆորումի նպատակն էր մարզում ընդհանուր և գյուղական տուրիզմի զարգացումը, մարզում տուրիզմի զարգացման պայմաններն առավել պարզ պատկերացնելը;
2) վերապատրաստումների ու փորձի փոխանակման իրականացում՝ տուրիստական հնարավորություններին ծանոթացնելու նպատակով:

95. Անհրաժեշտ է հեշտացնել երկխոսությունը բոլոր համագործակցող կողմերի, կառույցների, ծառայությունների, տուրիզմի, մշակույթի, արհեստագործության, բնապահպանության բնագավառների մասնագետների միջև՝ ընդհանուր քննարկումների և թեմատիկ կլոր սեղանների միջոցով:

96. Անհրաժեշտ է մարզի բնակչությանը ներգրավել տուրիզմի զարգացման գործում, այդ թվում՝ տարածաշրջանի ժառանգության, բնության և կենսաձևի

պահպանման, մասնավոր և հասարակական կազմակերպությունների միջև կապի ստեղծման, տուրիստական արդյունքի որակի բարելավման միջոցով:

97. Սևան և Վարդենիս քաղաքներում ֆրանսիական համագործակցության շրջանակներում, բավականին ակտիվացել է ընդհանուր և գյուղական տուրիզմը: Մարզի Սևան և Վարդենիս քաղաքներ են այցելել բավականին մեծ քանակի տուրիստների:

98. Ֆրանսիական համագործակցության շրջանակներում մարզում մեծ աշխատանքներ են տարվում ֆրասախոսության ոլորտում և իրականացվելու է գիդերի վերապատրաստման դասընթացներ:

99. Ֆրանսիայի Ռոն Ալպ շրջանի աջակցությամբ պատրաստման ընթացքի մեջ է «Տեղական տուրիզմի ինտերնետային զարգացման» կայքը և մարզի տուրիստական գրքույկը, որոնք կնպաստեն մարզում տուրիզմի զարգացմանը:

3.7 Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները

100. Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով արնհրաժեշտ է ապահովել զբոսաշրջության կայուն զարգացում: Իսկ կայուն զարգացումը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ և արդյուունավետ համագործակցություն:

101. Կայուն զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջային ուղղությունները զարգանում են հիմնականում զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա՝ (բնական, պատմամշակութային, մարդկային), առանց որոնց պահպանության և վերարտադրության զարգացում ապահովել հնարավոր չէ:

102. Շրջակա միջավայրի կամ մշակույթի վրա ցանկացած բացասական ազդեցություն կարող է անդառնալի բացասական հետևանք ունենալ տուրիզմի երկարաժամկետ զարգացման համար:

103. Մարզի զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել ոլորտի ներդրումը ազգային տնտեսության ոլորտում, ապահովել համաչափ տարածքային տնտեսական զարգացում՝ միևնույն ժամանակ պայքարելով աղքատության դեմ:

104. Այս ամենի իրագործումը կնպաստի ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները՝ առաջարկելով ավելի բարձրորակ զբոսաշրջային արդյունք, ստեղծելով նոր աշխատատեղեր:

105. Գեղարքունիքի մարզի զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների լուծման համար, անհրաժեշտ են՝

1) զարգացնել առկա զբոսաշրջային կենտրոնները
2) սահմանել առաջարկվող ցանկ-պարզաբանել
3) առաջնայնացնել թիրախային շուկաները,
4) շարունակաբար ուսումնասիրել դրանց զարգացման միտումները,

5) զարգացնել մարզի ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ պայմաններ, ավելացնելով զբոսաշրջության զարգացման համար գրավչությունները,
6) ապահովել կեցության և այլ ենթակառուցվածքների որակական և քանակական աճը:

3.8 Զբոսաշրջության զարգացման 2012-2015 թթ. առաջնահերթությունները

106. Համայնքների զարգացում – Զբոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է նպաստել համայնքների զարգացմանը: Զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական ակտիվությանը, իսկ զբոսաշրջության որոլտում ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում ստացվող եկամուտները խթան կհանդիսանանտեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելուն:

107. Ենթակառուցվածքներ – Քանի որ զբոսաշրջությունը նպաստում է հանրային ծառայությունների զարգացմանը, այն գյուղական համայնքներում կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Այն ներառում է բարելավված ճանապարհային և հաղորդակման ենթակառուցվածքները, առողջապահության և տրասպորտի ոլորտների բարելավումը, նոր սպորտային և հանգստի համար նախատեսված զանազան համալիրները, հանգստի, սպասարկման, զվարճանքի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:

108. Մշակույթի և ավանդույթների վերագնահատում– Զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգմանը, պահպանմանն ու փոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը:

109. Քաղաքացիական գիտակցություն և հպարտություն – Զբոսաշրջությունը նպաստում է բնակչության մոտ բնական և մշակութային ռեսուրսների թե՛ ֆինանսական նշանակության գիտակցության և թե՛ դրանց նկատմամբ հպարտության զգացման բարձրացմանը՝ մեծացնելով դրանք պահպանելու ձգտումը:

110. Ֆինանսական – Զբոսաշրջությունից ստացված եկամուտները կարող են ուղղվել ինչպես ենթակառուցվածքների զարգացմանը, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանության բարձրացմանը:

111. Շրջակա միջավայրի պահպանություն – Զբոսաշրջությունը նպաստում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբազմազանության վերականգմանը, շրջակա միջավայրի պահպանության, հասարակության գիտակցության բարձրացմանը:

112. Զբոսաշրջության քաղաքականություն – Երկրի և մարզի նկարագրի ձևավորումը նպաստում է վերջինիս միջազգային ճանաչմանը, միջազգային հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանմանը:

113. Սեզոնայնություն – Մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ: Ներգնա զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով մարզ այցելողները՝ հատկապես Սևանա լիճ են ժամանում հունիս-սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, իսկ տարվա մնացած հատվածում զբոսաշրջիկների թիվը խիստ պակասում է: Որպեսզի մարզում տարվա բոլոր եղանակներին զբոսաշրջությունը զարգանա, անհրաժեշտ է ներդնել այլընտրանքային զբոսաշրջություն՝ ձմեռային սպորտաձևեր, որսորդություն, ձկնորսություն, նավագնացություն, առագաստանավային սպորտ (այս ուղղությունը վերջին ժամանակահատվածում զարգացում է ապրել), ալպինիզմ, որոնց համար կան բոլոր նպաստավոր պայմանները:

ՄԶԾ ծրագրավորվող մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ոլորտների ֆինանսավորումը 2012-2015թթ. /380.5 մլն. դրամ/ է և ներդրումները ակնկալվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ ,,Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն,, հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներից, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների միջոցներից:

Աղյուսակ 3.3. ՄԶԾ ծրագրավորվող մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ոլորտների ֆինանսավորումը 2012-2015թթ. /մլն. դրամ/

Հ/հ	ՄԶԾ ոլորտ	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ.				Ընդամենը՝ 2012-2015թթ.
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	
1.	ՓՄՁ ոլորտի աջակցություն	60.0	80.0	110.0	110.0	360.0
2.	Մարզում զբոսաշրջության զարգացման աջակցություն	2.5	3.5	6.0	8.5	20.5
	Ընդամենը	**62,5**	**83,5**	**116,0**	**118,5**	**380.5**

Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Ցուցանիշներ	Ռիսկեր/Նախադրյալներ
Ռազմավարական նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ ներգրավելով այդ գործընթաներում ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին***:***	ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով:	ՏԻՄ ղեկավաների աջակցությունը և մասնակցությունը ծրագրերի մշակման գործընթացում
Ծրագիր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջնահերթ միջոցառումներ. *Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցում *Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում	-Խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթների կազմակերպում -ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավում ծրագրերի մշակման գործընթացում -Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները	Մրցույթների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը
Ռազմավարական նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը:	Գերակա ոլորտների կազմակերպությունների եկամուտների աճ: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ: Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում: Զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ:	Գյուղմթերքների իրացման համար զբոսաշրջության շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմաններ
Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: **Առաջնահերթ միջոցառումներ.**	Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցնել	Շուկաների հետազոտման գործընթացում որակյալ մասնագիտական կադրերի ներգրավում:

*Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում * Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում *Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում *Գերակա ոլորտներում գործող ձեռնարկատիրությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում *Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում	- Հետազոտության իրականացում - Գյուղմթերքներքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանի ընդունում - Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանի ընդունում - Աշխատուժի պահանջարկը ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատում - ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսական պլաններում նախատեսնել գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար	Մարզի գերակա ոլորտների զարգացման միջոցառումների պլանը համահունչ լինի շահագրգիռ նախարարությունների քաղաքականությանը: Օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների աջակցություն վերապատրաստման ծրագրերին:
Ռազմավարական նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերում:	Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ:	Գործարարության զարգացման տեղական ռեսուրսների և ենթակառույցների անբավարար վիճակը
Ծրագիր 3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: **Առաջնահերթ միջոցառումներ**. *Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում *Ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում	- Տարածաշրջանային և/կամ ոլորտային ներդրումային առաջա վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են - Տեղական արտագնա և այլ արտագնա ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են	Ներդրումային առաջարկների և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են պոտենցիալ ներդրողների ակնկալիքներին:

4.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ,ԵՎ ԿՐՈՆ

4.1. Կրթություն

4.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

114. Համաձայն ԿԶԾ-ի կրթության բնագավառը դիտվում է որպես երկրի տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը, կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Կրթության որակի և մատչելիության բարձրացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում պետության և հասարակության առաջընթաց զարգացման, ինչպես նաև աղքատության և անհավասարության հաղթահարման կարևորագույն գործոններից է:

115. Վերջին տարիներին կրթության ոլորտում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծել համակարգում առկա շատ խնդիրնե, կայունացնել իրավիճակը և նախադրյալներ ստեղծել հետագա զարգացման համար: Այնուհարդերձ, կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, մինչդեռ առաջ են եկել նոր խնդիրներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

116. ***Նախադպրոցական կրթություն.*** Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականին հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականի ռազմավարական ծրագիրը», որը կրթական ծախսարդյունավետ ծառայությունների ներդրման միջոցով նախատեսում է մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով կառավարությունը կապահովի նաև նախադպրոցական կրթության չափորոշիչների համապատասխան ծրագրային նյութերի մշակումն ու ներդնումը:

117. Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչ 2011 թվականը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

118. Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, Գեղարքունիքի մարզում մանկապարտեզների, հետևաբար նաև երեխաների թիվը մանկապարտեզներում նվազում էր անկախության առաջին տարիներին: Հետագա տարիներին նույնպես, թեև հանրապետության տնտեսական վիճակը կայունացման միտում ուներ, նախադպրոցական հաստատությունների թիվը կրկին շարունակում էր նվազել, որին իր հետևանքն ունեցավ նաև 2008 թվականին սկսված համաշխարային տնտեսական ճգնաժամը: Էներգետիկ ճգնաժամը, ջեռուցման այլընտրանքային միջոցներ (փայտ, կերոսին և այլն) ձեռք բերելու դժվարությունները, իսկ հետո նաև ֆինանսական ռեսուրսների սղությունը մանկապարտեզների և հաճախող երեխաների քանակի նվազման պատճառ դարձան: Մանկապարտեզների (հատկապես գյուղական

բնակավայրերում) փակման պատճառ հանդիսացավ նաև դրանց ենթակայության փոխանցումը ՏԻՄ-երին:

119. Եթե Գեղարքունիքի մարզում 1998-2002թթ. ընկած ժամանակահատվածում գրեթե կեսով պակասել են նախադպրոցական հաստատությունները՝ 85-ից նվազելով մինչև 47, ապա վերջին տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դրանց թիվը կայունացման, միտում ունի (տես՝ Աղյուսակ 4.1):

Աղյուսակ 4.1. Համայնքային նախադպրոցական հաստատությունների գործունեության ցուցանիշները (2007-2011թթ.)

(աղբյուրը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն,ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան)

	ՆԴՀ-ների քանակը, միավոր	այդ թվում՝ ըստ աշխատանքային ռեժիմի				Խմբերի քանակը, միավոր		Տեղերի քանակը, միավոր	Երեխաների թվաքանակը, մարդ	
		շուրջօրյա	6-օրյա	5-օրյա	2-3-օրյա	ընդամենը	որից 3 և բարձր տարիքի երեխաներ		ընդամենը	նրանցից՝ աղջիկներ
2007թ										
Հայաստանի Հանրապետություն	637	7	3	627		2 187	1 837	69 270	50 491	25 382
ՀՀ Գեղարքունիքի մարզ	45	-	-	45		103	89	3 595	2 461	1 380
2008թ.										
Հայաստանի Հանրապետություն	628	4	8	613	3	2 233	1 851	71 271	53 718	26 704
ՀՀ Գեղարքունիքի մարզ	42					103	90	3 431	2 570	1 302
2009թ										
Հայաստանի Հանրապետություն	622	1	4	613	4	2 238	1 885	69 639	53 877	26 764
ՀՀ Գեղարքունիքի մարզ	43			43		103	90	3489	2 639	1 377
2010թ										
ՀՀ Գեղարքունիքի մարզ	47			47		111	95	6,275	3,112	1 672
2011թ.										
ՀՀ Գեղարքունիքի մարզ	43			43		105	96	6,275	2,867	1 821

120. Գեղարքունիքի մարզպետարանի տվյալների համաձայն 2011թ. դրությամբ մարզում գործող նախադպրոցական հաստատությունների թիվը 43-ն է: 2008թ.-ի համեմատ նվազել է մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը: 2011թ. դրությամբ մանկապարտեզ է հաճախում 2867 երեխա, որը կազմում է նույն համայնքների 10339 նախադպրոցական տարիքի երեխաների գրեթե 28%-ը (հաշվառումն իրականացվել է այն համայնքներում, որտեղ գործում են 43 մանկապարտեզները):

121. Այնուամենայնիվ, ոչ բավարար ֆինանսավորման պատճառով գործող մանկապարտեզները ևս կանոնավոր չեն աշխատում: Ներկայումս մարզում գործող 43 մանկապարտեզներից 7-ը աշխատում են շուրջտարյա, իսկ 36-ը՝ սեզոնային ժամանակացույցով: Դրանց հիմնական մասը գործում է քաղաքային համայնքներում, որտեղ մանկապարտեզների գործարկման համար առկա են համեմատաբար բարվոք պայմաններ: Փաստորեն նախադպրոցական կրթությունը առավել մատչելի է քաղաքային բնակավայրերում, իսկ գյուղական բնակավայրերի երեխաների զգալի մասը զրկվում են վաղ կրթություն ստանալու իրավունքից: Այսպիսով, 5-6 տարեկանների

համար ստեղծվում են անհավասար պայմաններ՝ դպրոցին նախապատրաստման հարցում:

122. Ըստ մարզպետարանի հաշվարկների մարզի 3-6 տարեկան բնակչության գրեթե 75%-ը ընդգրկված չէ նախադպրոցական համակարգում: Ընդ որում, մատչելիությունը առավել սուր է արտահայտված գյուղական բնակչության շրջանում: Գյուղական բնակավայրերում նախադպրոցական կրթության անմատչելիության հիմնական պատճառը նախադպրոցական հաստատության բացակայությունն է (43 համայնքներում), իսկ քաղաքային բնակավայրերում՝ նյութական անմատչելիությունը (ծնողների անվճարունակ լինելը), համայնքի բյուջեի սղությունն ու ոչ բավարար քանակի ներդրումները, որի արդյունքում կրճատվում է խմբերի թիվը:

123. Նախադպրոցական հաստատությունների առջև այսօր ծառացած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

1) *Կապիտալ վերանորոգում* (Համայնքների կողմից տրված նախահաշիվների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ոլորտում շենքերի վերանորգման համար անհրաժեշտ է մոտ 1,5 մլրդ. դրամ): Նախադպրոցական հաստատությունների գերակշռող մեծամասնության շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում:

2) Անբավարար ջեռուցում: Կենտրոնական ջեռուցման համակարգը գրեթե չի գործում և մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի օգնությամբ, ինչը մեծ տարածքի պայմաններում այդքան էլ արդյունավետ չէ:

3) Սնունդ: Չնայած, որ նախադպրոցական հաստատությունների գերակշռող մասում, որոնք աշխատում են 8-ժամյա ռեժիմով, երեխաների համար կազմակերպվում է որոշ սննդի մատուցում, այնուամենայնիվ, ըստ ԿԳՆ ուսումնասիրությունների, երեխաները թերսնվում են, իսկ սահմանված նորմատիվներն ապահովվում են նախատեսվածի 1/4 մասով: Բացի այդ սննդի կալորիականությունը և սննդարարությունը չի համապատասխանում նորմերին և շատ ցածր է: Սննդի տեսականին ևս միատարր է:

4) Գույք: Մանկապարտեզների գույքը և դիդակտիկ պարագաները թե բարոյապես և թե ֆիզիկապես մաշված են: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատությունները ունեն փափուկ և կոշտ գույքի, պարագաների, խմբասենյակների և դահլիճների կահավորման կարիք:

5) Ուսուցողական նյութեր: Նախադպրոցական հաստատությունների կրթական միջավայրը չափազանց աղքատիկ է և չի համապատասխանում կրթության ժամանակակից պահանջներին: Մանկապարտեզներն ունեն խաղալիքների և ուսուցողական դիդակտիկ պարագաների կարիք:

6) Մասնագիտական կադրեր: Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են լայնածավալ միջոցառումներ մանկավարժների վերապատրաստման ուղղությամբ, ապա նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է: Չնայած, որ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի միջոցով իրականացում են վերապատրաստման որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ դրանց ծավալները սահմանափակ են: Բացի այդ, կարևոր է նաև համապատասխան մասնագիտությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդիրը:

124. 5-6 տարեկանների ընդգրկվածությունը մեծացնելու և դպրոցի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով <Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում 2011 թվականին

Գեղարքունիքի մարզում ներդրվել է ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայություններ: Այս ծրագրի շարունակականության ապահովման համար հետագա տարիներին ընթացիկ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի չափից: Այդ նպատակով 2012-2014 թվականներին <<Նախադպրոցական կրթություն>> ծրագրի գծով Գեղարքունիքի մարզին 2012 թվականին հատկացվելու է 12459.1 հազար դրամ, 2013 թվականին՝ 44954.4 հազար դրամ, 2014 թվականին՝ 44954.4 հազար դրամ:

125. Հանրակրթություն. Վերջին տարիներին կառավարության կողմից հանրակրթության ոլորտում իրականացված միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի, ուղղված են համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հան-րակրթության որակի բարելավմանը: Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:

126. Մարզում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա: Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը հանրակրթությունում բավականին բարձր է, վերջին տարիներին այն միջինում կազմել է 90%: Հիմնական կրթության համակարգում ընդգրկվածությունը 2011թ. կազմել է շուրջ 95%, որը միատարր է տարածքային, գենդերային ու աղքատության խմբերի առումով և այս իմաստով էական անհավասարություններ չկան:

127. 2011թ.-ին Գեղարքունիքի մարզի կրթության ոլորտի բյուջետային ծախսերը 2008թ.-ի համեմատ աճել են գրեթե 11.5 %-ով (տես Աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. 2008-2011թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզի կրթության ոլորտին ՀՀ բյուջեից տրված հատկացումները և դրանց աճը (Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան)

h/h	Կրթության ոլորտ	2008թ.	%	2009թ.	%	2010թ.	%	2011թ.
1.	Հանրակրթություն	5345911.8	1.25	6699805.4	(1.6)	6322693.0	(1.058)	5978019.6
2.	Հատուկ կրթություն	74180.1	1.21	89784.0	(1.025)	87564.1	1.025	89797.3
3.	Արտադպրոցական դաստիարակություն	4826.5	1.25	6047.8		6047.8	1.08	6537.7
4.	Արհեստագործական կրթություն	30548.1	1.45	44365.0	(1.01)	43706.6	(1.08)	40345.5
	Ընդամենը	**5455466.5**		**6840002.2**		**6460011.5**		**6114700.1**

128. 2010-2011թթ. ուս.տարում մարզի դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1501,5 դասարան 29080 աշակերտով (ևս 119 դասարան 2624 աշակերտով կոմպլեկտավորվել է ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող 5 ավագ դպրոցներում և 1 կրթահամալիրում), Գավառի N 1 հատուկ դպրոցում՝ 8 դասարան 76 աշակերտով: Աշակերտների թիվը նախորդ ուստարվա համեմատությամբ պակասել է շուրջ 2000-ով, դասարանների թիվը պակասել է 65-ով:

129. Վերջին տարիների ընթացքում շարունակում է նվազել առաջին դասարան ընդունվողների թիվը՝ կրկին ծնելիության ցածր մակարդակի և արտագաղթի

պատճառներով: Առաջին դասարան են ընդունվել 2938 աշակերտներ (նախորդ տարի՝ 2948 աշակերտ):

130. Ինչ վերաբերում է աշակերտ-ուսուցիչ թվաքանակի հարաբերակցությանը, ապա Գեղարքունիքում 2008-2011թթ. այն գրեթե մնացել է անփոփոխ (տես Աղյուսակ 4.3***):***

Աղյուսակ 4.3. *Աշակերտ ուսուցիչ հարաբերակցությունը՝ ըստ տարիների (Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը* թվերով 2009թ.,2010թ.,2011թ.)

Մարզ	2009-2010թթ. ուս.տարի			2010-2011թթ. ուս.տարի		
	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբ.	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբ.
Գեղարքունիք	**33783**	**3491**	**9,7**	**31721**	**3526**	**9**

131. 2009-10թթ. ուսումնական տարում մարզի 126 հանրակրթական դպրոցներում աշխատել է 3491 ուսուցիչ: Նույն ուսումնական տարվա ընթացքում աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է 9.7: 2010-11թթ. ուսումնական տարում այն նվազել է՝ կազմելով 9:

132. Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում Գեղարքունիքի մարզում 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 98%:

133. Այնուամենայնիվ, մարզի ազգաբնակչության սակավ ապահովվածության պատճառով կրթական ծառայությունների մատչելիությունը դեռևս խնդիր է: Շատ աշակերտների անվճարունակության պատճառով երբեմն դասագրքերի նույն կոմպլեկտից օգտվում է մի քանի աշակերտ, բավարար չեն նրանց գրենական պիտույքները: Աշակերտները միշտ չէ, որ կարողանում են օգտվել հասարակական տրանսպորտից և հաճախել արտադպրոցական հաստատություններ, որոնք հիմնականում գտնվում են նախկին վարչական կենտրոններում:

134. Գեղարքունիքի մարզում 2011թ.-ին մեկ աշակերտին ընկնող տարեկան միջին գումարը 126930 դրամ է, որը 32262 դրամով ավելի է 2008թ. մեկ սովորողին ընկնող գումարի չափից:

135. Մարզի դպրոցական շենքերը և շինությունները, հատկապես հեռավոր համայնքներում գտնվում են կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է: Այդ նպատակով կառավարությունը 2012թ. պետբյուջեում 785 միլիոն դրամ է նախատեսել (ավելի քան 35 դպրոցի համար): Դպրոցների մարզադահլիճները և խաղահրապարակները (մոտ 70 դպրոցում) նույնպես կարիք ունեն վերանորոգման (մանրահատակները փոխելու, պաշտպանիչ ցանցեր տեղադրելու, տանիքները վերանորոգելու և այլն):

136. Մարզի հանրակրթության ոլորտում միայն 2009-11թթ. իրականացվել են մի շարք ծրագրեր (շենքերի վերանորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների,

տնօրենների և վերապատրաստման ծրագրեր), որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա: Աղյուսակ 4.4-ի տվյալները վկայում են, որ վերոհիշյալ ժամանակահատվածում մարզում վերանորոգվել է 49 և կառուցվել 1 դպրոց:

Աղյուսակ 4.4. *ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում վերանորոգված և կապիտալ շինարարություն իրականացրած դպրոցների թիվը* (*Աղբյուր՝* Գեղարքունիքի մարզպետարան)

Տարեթիվ	Վերանորոգված դպրոցների թիվ	Հատկացված գումարը, հազ.դրամ	Կապիտալ շին. դպրոցների թիվ	Հատկացված գումարը, հազ.դրամ	Ընդամենը	
					դպրոց	գումարը հազ.դրամ
2009թ.	20	622,899.6	1	169.000.0	21	791.899.6
2010թ.	18	465.575.6	1	25.469.2	19	491.044.8
2011թ.	11	425.300.0	1	47.000.0	12	472.300.0
Ընդամենը	49	1.513.775.2	3	241.469.2	52	1.755.244.4

137. Այնուամենայնիվ, բյուջեով նախատեսվող միջոցները բավարար չեն վերանորոգման աշխատանքներն ամբողջությամբ կատարելու համար (մարզի առաջնահերթ վերանորոգման կարիք ունեցող դպրոցների ցանկն՝ ըստ վթարայնության աստիճանի, *տես* Հավելված 1-ում): Այս հարցում զգալի աջակցություն են ցուցաբերում նաև միջազգային հումանիտար կազմակերպությունները `(<<Վորլդ Վիժն>>, «Կարիտաս» և այլն):

138. Հանրակրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում կարևորվել է ոչ պետական միջոցների ներգրավումը: Հումանիտար կազմակերպությունների, համայնքների ղեկավարների, դպրոցների տնօրենների, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային մյուս ստորաբաժնումների համագործակցության արդյունքում ապահովվել է շուրջ 43 միլիոն դրամի արտաբյուջետային միջոցների ներգրավում, որով իրականացվել են դպրոցների վերանորոգման և գույքավորման աշխատանքներ: Այս ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Լճափի միջնակարգ (1,7 մլն. դրամ, ֆրանսիական ուսանողական բարեգործական կազմակերպություն), Գանձակի N 1 միջնակարգ (1,65 մլն. դրամ, <<Վորլդ Վիժն>>), Վարդենիսի N 3 միջնակարգ (6,95 մլն. դրամ, <<ՎորլդՎիժն>>), Մ.Մասրիկի միջնակարգ (1,2 մլն. դրամ, <<ՎորլդՎիժն>>), Արփունքի միջնակարգ (1,16 մլն. դրամ, <<ՎորլդՎիժն>>), Ավազանի հինական (2,5 մլն. դրամ, <<ՎորլդՎիժն>>, գյուղապետարան), Նորաշենի հիմնական (3,9 մլն. դրամ, գյուղապետարան), Սեմյոնովկայի հիմնական (2,3 մլն. դրամ, <<Եկեղեցական կլոր սեղան>>), Լիճքի միջնակարգ (3,37 մլն. դրամ, գյուղապետարան, անհատ ձեռներեցներ), Մադինայի միջնակարգ (3,09 մլն. դրամ, ԱՄՆ խաղաղության կորպուս), Ն. Գետաշենի N 1 (1,2 մլն. դրամ, ԱՄՆ խաղաղության կորպուս): Համագործակցություն է իրականացվել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ, և մարզի տարբեր տարածաշրջանների 6 դպրոցներ ընդգրկվել են <<Աջակցություն Հարավային Կովկասի խոցելի համայնքներում և հաստատություններում աղետների ռիսկերի նվազեցմանը>> ծրագրում:

139. Աշխատանքներ են տարվում նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածությունն ու մատչելիությունը բարձրացնելու ուղղությամբ:

140. Մարզի 92 համայնքներից 29-ում կան մանկապարտեզներ: Գործող 47 մանկապարտեզներից 22-ը գործում է շուրջտարի, իսկ 25-ը՝ սեզոնային, համայնքների ղեկավարների հետ համագործակցության արդյունքում 2010-2011թթ. ուստարվա 1-ին

կիսամյակում արդեն գործում են 37-ը, իսկ Սարուխանի N 1, 2, Գանձակի, Վահանի և մի շարք այլ համայնքների մանկապարտեզների շենքերը հումանիտար կազմակերպությունների (<<ՎորլդՎիժն>>, <<Շեն>> բիկ և այլն), համայնքապետարանների (Վարդենիս, Գավառ, Զովաբեր, Մ. Մասրիկ և այլն) միջոցներից կատարված ներդրումների հաշվին վերանորոգվել կամ գույքավորվել են և կգործեն 2011թ. ընթացքում:

141. Չնայած, իրականացվող միջոցառումների, կրթական հաստատություններում ներկայումս համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մեծ մասը դեռևս աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, գրատախտակների, փափուկ գույքի խիստ կարիք ունեն, հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

142. Մարզպետարանի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքների համաձայն, այսօր մարզի դպրոցների համար պահանջվում է.

1) 14329 աշակերտական սեղան-նստարան (տարրական դասարանների համար՝ 4903, միջին և բարձր դասարանների համար՝ 9426),
2) 2007 ուսուցչական սեղան, աթոռ
3) 1947 գրատախտակ
4) 2561 գրապահարան:

143. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում գույքագրված գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 20%-ը օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

144. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլև մանկավարժների պատրաստվածությունից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը, ինչը վերջին տարիներին ակտիվ ընթացքի մեջ է:

145. 2009-2011թթ. անհրաժեշտ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են կատարվել՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացվող ուսուցիչների թեմատիկ վերապատրաստումներին աջակցելու շրջանակներում: Հանրակրթական տարբեր առարկաներից, <<Առողջ ապրելակերպ>>, <<Քաղաքացի>> նախագիծ, բնապահպանական, աղետների կանխարգելման ծրագրերով վերապատրաստվել են շուրջ 1450 ուսուցիչ: Մարզի կրթական ոլորտում գործունեություն են ծավալում նաև ՀԿ-ները: Մասնավորապես, «Կրթություն հանուն կայուն զարգացման» ՀԿ-ն մարզի 3 դպրոցներում ստեղծել է համայնքային ռեսուրս կենտրոններ, որտեղ իրականացվում են ուսուցողական ծրագրեր՝ համայնք-դպրոց կապի ամրապնդման նպատակով:

146. Վերջին տարիներին ներդրվել է մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստման համակարգը, որը հնարավորություն է տալիս

ապահովել ուսուցչական համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը և տարեկան վերապատրաստել նրանց շուրջ 20%-ը:

147. Միաժամանակ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերը համալրվում են մրցույթով: Ներդրվել է ուսուցիչների ատեստավորման կարգը:

148. Արդիական է նաև **դպրոցի կառավարման խնդիրը**: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին, համարելով, որ դա պետության խնդիրն է:

149. Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները գործում են ոչ լիարժեք: Դպրոցների խորհուրդների կազմը շարունակաբար փոփոխվում է, և նոր անդամները չունեն բավարար իրազեկվածություն դպրոցի կանոնադրական և գործառնական խնդիրների վերաբերյալ: 2010թ. դպրոցների նոր ձևավորված խորհուրդների մոտ 960 անդամներ չեն անցել համապատասխան վերապատրաստում: Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է, երբեմն էլ այն կրում է ձևական բնույթ: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին, համարելով, որ դա պետության խնդիրն է:

150. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն հանրակրթական դպրոցների տնօրենները անցել են համապատասխան վերապատրաստում և հավաստագրում: Այսուհետ հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր տեղերը կարող են համալրվել միայն մրցութային կարգով՝ սահմանված կարգով վերապատրաստում անցած և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք՝ հավաստագիր ունեցող անձանց կողմից:

151. Աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը. 62 դպրոց օգտագործել է գազ (անհատական կաթսայատան միջոցով), 6-ը՝ էլեկտրաէներգիա, 51-ը հեղուկ վառելանյութ, իսկ 9-ը՝ խառը:

152. Հետևողական աշխատանքներ են իրականացվել դպրոցները համակարգչային տեխնիկայով և տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինելու ուղղությամբ, որի արդյունքում 125 դպրոցներ ունեն 1052 համակարգիչներ և համակարգչային սարքավորումներ, իսկ 119 դպրոցներ միացած են ինտերնետ համացանցին (նախորդ տարվա 66-ի փոխարեն):

153. 1997թ. հիմնադրված «Դասագրքերի շրջանառու հիմնադրամի» շրջանակում **դասագրքերի ապահովվածության խնդիրը մեծ մասամբ լուծված է**: Դպրոցներին իրավունք է վերապահված աշակերտների թվի 8% շրջանակում սոցիալապես անապահով աշակերտներին ապահովել անվճար դասագրքերով: Սակայն խնդիր է դասագիրքը մարզկենտրոնից դպրոց հասցնելը, որովհետև հրատարակիչը դասագրքերը հասցնում է մարզկենտրոն, իսկ մարզկենտրոնից դպրոցներին հասցնելը դրված է մարզպետարանների վրա, որոնք այդ նպատակով օգտագործելու համապատասխան

ֆինանսական միջոցներ չունեն: Տեղափոխման նպատակով դպրոցների տնօրենները հաճախ գումարներ են հավաքում աշակերտներից, որն էլ առաջացնում է ծնողների իրավացի դժգոհությունը: Թեև դրամահավաքի, այս երևույթը 2010-2011թթ. գրեթե կանխվել է, սակայն խնդիրը դեռևս առկա է:

154. ՄԱԿ-ի ՀՊԾ-ի «Դպրոցի սնուցման» ծրագիրը մեծ աջակցություն էր աղքատ համայնքներում ուսուցման գործընթացը պատշաճ ձևով կազմակերպելու համար: Ծրագիրը նպաստել է դպրոց- ընտանիք համագործակցության ընդլայնմանը: Դպրոցում սննդի կազմակերպումը իր դրական ազդեցությունն է ունեցել նաև սովորողների հաճախումների մակարդակի վրա: Ծրագիրը որոշ ընդհատումից հետո շարունակվում է 2010-2011թթ. ուստարվանից:

155. ***Հատուկ ընդհանուր կրթության*** բնագավառում պետական ռազմավարությունն ուղղված է՝ մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները:

156. ***Արտադպրոցական դաստիարակության*** ոլորտում պետության ռազմավարությունն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

157. Մարզում 92 համայնքներից 10-ում գործում է 31 արտադպրոցական հաստատություն, այդ թվում 8 երաժշտական,5 արվեստի, 4 գեղարվեստի դպրոցներ, 1 գեղագիտական կենտրոն, 3 մանկական ստեղծագործական կենտրոն, 1 ուսուցողական կենտրոն և 9 մարզադպրոց, որտեղ հաճախում է շուրջ 5000 երեխա: Արտադպրոցական հաստատությունները ևս ունեն մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի և երաժշտական գործիքների, նկարչական պիտույքների, մարզագույքի ձեռքբերման, դահլիճների վերանորոգման, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ: Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1) շենքային պայմանների բարելավումը,
2) ծրագրային ու ուսումնամեթոդական ապահովվածությունը,
3) մասնագետների վերապատրաստման անհրաժեշտությունը,
4) բարձրագույն կրթությամբ մասնագետ-մանկավարժների պահանջարկի առկայությունը,
5) գյուղական համայնքներում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների, մարզադպրոցների անբավարար ցանցը,
6) ցածր աշխատավարձերը:

158. Երաժշտական և արվեստի դպրոցների որոշ բաժիններ գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում. մասնավորապես նրանցում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման պետական ծրագիրը հնարավորություն է տալիս մոռացության վտանգից ազատել մի շարք ազգային նվագարանների լինել-չլինելու հարցը: Պետական բյուջեից վերոնշյալ

բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսած գումարը 2011թ. համար կազմել է 27025.9 հազ. դրամ, որը նախատեսված է մարզի թվով 12 երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող 204 աշակերտների համար/յուրաքանչյուրամիս մեկ աշակերտի հաշվով 11040դրամ/:

159. Մարզում կազմակերպվում են մարզական և մշակութային, գեղարվեստական և առարկայական միջոցառումներ, փառատոններ և օլիմպիադաներ, որոնց սակայն հեռավոր համայնքների աշակերտները դժվարանում են մասնակցել:

160. Մարզում գործում է 1 հատուկ դպրոց, որտեղ ուսուցանվում են հիմնականում մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաներ: Հանրակրթական դպրոցներում չկան պայմաններ և հնարավորություններ հատուկ կրթության կարիք ունեցող երեխաներին ներառելու համար, մարզի աշխարհագրական տարածվածությունը խնդիր է ստեղծում տարբեր համայնքներից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ներառական կրթություն իրականացնող հաստատություն տեղափոխելու հարցում: 2009-2010թթ. ուսումնական տարվանից Գավառի N 1 հիմնական դպրոցում տարածաշրջանի 17 աշակերտների համար իրականացավում է ներառական կրթություն: Ներառական կրթության համակարգի ընդլայնման շրջանակներում 2011-2012թթ. ուսումնական տարում 15 աշակերտների համար ներառական կրթություն կիրականացվի նաև Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում:

161. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման նպատակով ուշադրություն է դարձվելու, որպեսզի նախահաշիվներում նախատեսվեն նաև թեքահարթակների կառուցման ծախսեր:

162. Ներառական կրթություն ծրագրի իրականացումը կշարունակվի նաև 2012-2014 թվականներին: Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով ՀՀ պետական բյուջեից Գեղարքունիքի մարզին կհատկացվի 2012 թվականին՝ 20869.6 հազար դրամ, 2013 թվականին՝ 12265.6 հազար դրամ, 2014 թվականին՝ 12477.5 հազար դրամ:

163. ***«Մասնագիտական կրթություն» - Մասնագիտական կրթության բնագավառում*** պետության ռազմավարությունն ուղղված է աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգաց-ման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովմանը:

164. ***Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն -*** Ներկայումս Գեղարքունքի մարզում գործում են տարբեր գերատեսչությունների ենթակայության պատկանող հետևյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները.

1) Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ,
2) Գավառի պետական երաժշտական քոլեջ,
3) Գավառի պետական բժշկական քոլեջ,

4) Սևանի պետական քոլեջ,
5) Գեղարքունիքի տարածաշրջանային քոլեջ,
6) Մարտունու բժշկական քոլեջ,
7) Վարդենիսի պետական քոլեջ:

165. Միջին մասնագիտական կրթական ծրագիր է իրականացնում նաև Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Մարտունու մասնաճյուղը: Մարզում գործում է նաև Սևանի արհեստագործական ուսումնարանը:

166.Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության բարձր որակի ապահովումը: Համակարգը ծերացման կայուն միտում ունի և առկա է որակյալ մանկավարժական կադրերի արտահոսք: Վերջինս հիմնականում պայմանավորված է համակարգում առկա ցածր աշխատավարձերով:

167. Դասավանդող անձնակազմը վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման կարիք ունի: Կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ընդլայնել տեղեկատվական հաղորդակցման և դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, թույլ է կազմակերպություն-ուսումնական հաստատություն կապը, բացակայում են արդյունավետ մեխանիզմները ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման առումով:

168. Աշխատաշուկան, ի դեմս գործատուների, թույլ է ներգրավված այս համակարգի կառավարման աշխատանքներում: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում լիարժեք ձևավորված չէ սոցիալական գործընկերությունը: Ներկայիս համակարգը բավարար ճկուն չէ և չի հասցնում ինքնակամ արձագանքել տնտեսության արագ զարգացող որոշ ճյուղերի պահանջներին: Ցածր է նաև հասարակության սոցիալական խոցելի խմբերի ընդգրկվածությունը, ինչն առաջին հերթին պայմանավորված է վճարովի ուսուցման համակարգում այս խմբերի համար բավական բարձր համարվող ուսման վարձավճարների չափով, և սա առավել հատկանշական է գյուղական երիտասարդության համար: Գործնական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան վերազինման կարիք ունի:

169. Նշված խնդիրների լուծման նպատակով վերջին տարիներին ոլորտում իրականացվում են բարեփոխումներ, որոնք պայմանավորված են նաև « Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով: Ոլորտի բարեփոխումների գծով ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը և Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը, Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Կրթություն ուղղված Հայաստանի ապագային» ծրագրի շրջանակներում հանրապետությունում 12 փորձարարական քոլեջներ վերակազմակերպվել են

տարածաշրջանային քոլեջների, ամբողջովին նորացվել և վերազինվել է դրանց նյութատեխնիկական բազան, բարելավվել են շենքային պայմանները:

170. Հայաստանում Բրիթիշ Քաունսիլի գրասենյակի կողմից իրականացվում է «Աշխատանք և հմտություններ» ծրագիրը, որի նպատակն է Հարավարևելյան Եվրոպայի երկրներում՝ Մեծ Բրիտանիայի հետ կապեր հաստատելու միջոցով, կրթությունը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին, դրանով իսկ նպաստելով արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի շուկայում աշխատուժի ազատ տեղաշարժմանը:

171. <<Անուշավան Աբրահամյան>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների շենքերի ու ջեռուցման համակարգի վերանորոգում, կաբինետ-լաբորատորիաների վերազինում:

172. Ներկայումս ընթացող բարեփոխումներով պայմանավորված տարեցտարի ավելանում է ոլորտի պետական ֆինանսավորումը, որն ուղղված է աղքատության կրճատմանը: Սոցիալական խոցելի խմբերի համար կրթության այս օղակում մատչելիությունը ապահովելու նպատակով 2011-2012թթ. ուսումնական տարում կտրուկ ավելացվեցին միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին հատկացված ընդունելության անվճար տեղերի քանակը՝ ելնելով աշխատաշուկայի պահանջներից:

173.Մասնագիտական կրթության ուսուցում /ՄԿՈՒ/ ոլորտում իրականացվող բարեփոխումների այս գործընթացում ընդգրկվել են նաև Գեղարքունիքի մարզի հաստատությունները: Նշված բարեփոխումների արդյունքում Մարտունու պետական քոլեջը և Մարտունու արհեստագործական ուսումնարանը վերակազմավորվել են Գեղարքունիքի տարածաշրջանային քոլեջի՝ շենքը վերանորոգվել է, իսկ նյութատեխնիկական բազան՝ հարստացվել: Ուսումնական գույքով ու տեխնիկայով են համալրվել նաև Գավառի պետական երաժշտական, Սևանի և Վարդենիսի պետական քոլեջները, ինչպես նաև Մարտունու արհեստագործական ուսումնարանը:

174. Գեղարքունիքի մարզում գործում է նաև մեկ բարձրագույն պետական ուսումնական հաստատություն՝ Գավառի պետական համալսարանը, որը ստեղծվել է 1992թ.-ին: Համալսարանն ունի հինգ ֆակուլտետներ՝ բնագիտության, հումանիտար, տնտեսագիտության, բանասիրության և հեռակա ուսուցման: Ներկայումս համալսարանում ուսանում է ավելի քան 2700 ուսանող: Պրոֆեսորադասախոսական կազմը մոտ 150 հոգի է:

175. Մարզում գործում է ոչ պետական 1 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Վարդենիսի մանկավարժական ինստիտուտը, որը ունի 225 սովորողներ և 33 աշխատողներ:

176. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնախնդիրը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործումն է, որը կապահովի հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին: Բարեփոխումների հիմնական ուղղություններն են՝

1) եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան՝ ներդնել որակավորումների ազգային շրջանակ,
2) ստեղծել որակի ապահովման ազգային համակարգ, ինչպես նաև զարգացնել, հզորացնել ու ամրապնդել նրա կարողությունները,

3) ձևավորել և ներդնել բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ և կայուն համակարգ,
4) ապահովել բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի փոխճանաչումը և համարժեքությունը,
5) խթանել ուսանողների շարժունությունը և Հայաստանի կրթական համակարգի գրավչությունը,
6) խթանել բուհերի և գործատուների (աշխատաշուկայի) փոխադարձ կապը, նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի տեղավորման խնդիրների լուծմանը:

177. Ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում հաստավել է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ), որը կապահովի ազգային որակավորումների համադրելիությունը եվրոպական որակավորումների հետ: Հաստատվել է բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

178. Հաստատվել է նաև բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկը, ինչպես նաև բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելվածը: Գործող մասնագիտությունների ուսումնական պլանները վերակազմվել են մոդուլային սկզբունքով: Հանրապետության բուհերում ներդրվել են կրթության եռաստիճան (բակալավրի մագիստրոսի և ասպիրանտի ծրագրերով) և կրեդիտային համակարգերը: Կիրառվում է ընդունելության քննությունների նոր՝ միասնական համակարգը: Նշված բարեփոխումների ընդհանուր համատեքստում առանձնահատուկ տեղ է հատկացվում մրցակցային կրթությանը և ըստ առաջադիմության՝ ուսանողների փոխատեղման գաղափարին:

179. «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են ՀՀ-ում պետական և ոչ պետական բուհերի մրցակցային դաշտի և միասնական քաղաքականության ստեղծմամբ, որը հնարավորություն կտա հավասար պայմաններ ստեղծել բոլոր դիմորդների և ուսանողների համար:

180. Մեկնարկել է բուհերի մրցակցային ֆինանսավորման փորձնական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս բոլոր բուհերին մրցութային կարգով ստանալ դրամաշնորհներ՝ նորարարական կրթական գործունեության և բարեփոխումներ իրականացնելու համար:

181. Ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը», ինչը թույլ կտա էլեկտրոնային միջավայրի, նորարար տեխնոլոգիաների օգտագործումը կրթության և գիտության ոլորտներում դարձնել ավելի կանոնակարգված և քաղաքացիներին ապահովել կրթության հավելյալ հնարավորություններով:

182. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում ձեռնարկված բարեփոխումների գործընթացում, որը ներառում է կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը, ներգրավվել է նաև Գավառի պետական համալսարանը, սակայն այս հաստատությունում դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք համալսարանի ընթացիկ ֆինանսական միջոցներով դժվար լուծելի են: Դրանց շարքում հարկ է նշել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, համակարգչային լաբորատորիաների թարմացման, մասնաշենքերի ընթացիկ նորոգման և ջեռուցման, ինչպես նաև ուսանողական և դասախոսական հանրակացարանների

վերանորոգման խնդիրները: Կարևորվում են նաև դասախոսական կազմի երիտասարդացման և աշխատավարձի բարձրացման խնդիրները:

183. Այնուամենայնիվ, համալսարանում առկա են մի շարք խնդիրներ, որոնք համալսարանի ընթացիկ ֆինանսական միջոցներով դժվար լուծելի են: Դրանց շարքում հարկ է նշել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, համակարգչային լաբորատորիաների թարմացման, մասնաշենքերի ընթացիկ նորոգման և ջեռուցման, ինչպես նաև ուսանողական և դասախոսական հանրակացարանների վերանորոգման խնդիրները: Կարևորվում են նաև դասախոսական կազմի երիտասարդացման և աշխատավարձի բարձրացման խնդիրները:

184. Ընդհանրացնելով ՀՀ Գեղարքունիքի մարզի կրթության ոլորտի իրավիճակի նկարագրությունը ամփոփ ձևով ներկայացվում է նրա հիմնական խնդիրները և նրանց միջև փոխկապակցվածությունը (տես՝ Գծապատկեր):

Կրթության ոլորտի խնդիրների «ծառը>>



4.1.2. Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

185. Կրթության ոլորտի իրավիճակի բարելավման նպատակով, <<Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրում>> ամրագրված ռազմավարական մոտեցումները կիրառվելու են նաև Գեղարքունիքի մարզում: Մասնավորապես, Կառավարության կողմից առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնածրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման, մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և համապատասխան միջոցառումները: Այդ միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել մարզային առանձնահատկությունները:

186. Ելնելով Գեղարքունիքի մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից, կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվելու միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը: Անհրաժեշտ է իրականացնել նաև համապատասխան միջոցառումներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական դպրոցներում ներառման ուղղությամբ:

187. Կարևոր պայման է դպրոցներում համակարգչային կենտրոնների ստեղծումը: Դրա միջոցով ակնկալվում է դպրոցը վերափոխել ինտերնետային կապով ապահովված համակարգչային, հեռահաղորդակցման, կրթական համայնքային կենտրոնի, որի արդյունքում կընդլայնվեն համայնք-դպրոց շարունակական կապերը՝ ամրագրելով տեղեկատվություն ստացող և փոխանակող, մշակութային և կրթական բազմապիսի ծառայություններ, ինչպես նաև համայնք-դպրոց շարունակական կապի հնարավորությունները:

188. Մարզի կրթության ոլորտի զարգացման տեսանկյունից չափազանց կարևորվում է նաև նախադպրոցական կրթության համակարգի կատարելագործումը, այլընտրանքային ծառայությունների ներդրումն ու ծախսարդյունավետ մոդելների կիրառումը: Ստորև ներկայացվում են կրթության ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները

Կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



189. Կրթության ոլորտի ֆինանսավորումը 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերով կրթության բնագավառի հիմնական գերակայությունը հանրակրթության ոլորտն է: Հետևաբար 2012-2014թթ. ծրագրային ժամանակահատվածում կրթության ոլորտի պետական ծախսերի ավելացումները գրեթե ամբողջությամբ ուղղվելու են հանրակրթության ոլորտ:

Աղյուսակ 4.5. Կրթության ոլորտի 2012-2014թթ.. ծախսերը ըստ կատարող պետական մարմինների, ծախսերի գործառական դասակարգման խմբերի և ենթախմբերի /մլն դրամով/ (*Աղբյուրը՝ ՀՀ 2012-2014թթ.. ՄԺԾԾ*)

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության բնագավառի 2012-2015թթ. ծախսերի համեմատություն

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	2012թ. հաստատված բյուջե	ՀՀ 2012-2014թթ. հաստատված ՄԺԾԾ	
					2013թ.	2014թ.
1	2	3	4	5	6	7
			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, որից	6,383,343.0	6,771,402.5	6,922,789.8
09	01		Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	1,933,020.2	44,954.4	44954.4
		01	Նախադպրոցական կրթություն	12,459.1	44,954.4	44954.4
			01.Նախադպրոցական կրթություն	12,459.1	44,954.4	44954.4
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	12,459.1	44,954.4	44954.4
		02	Տարրական ընդհանուր կրթություն	1,920,561.1	-	-
			01.Հանրակրթական ուսուցում	1,879,950.9	-	-
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	1,879,950.9		
			03.Հատուկ կրթություն	37,131.9	-	-
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	37,131.9	-	-
			04. Ներառական կրթություն	3,478.3	-	-
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	3,478.3		
09	02		Միջնակարգ ընդհանուր կրթություն	4,070,997.2	6,668,743.5	6,817,479.7
		01	Հիմնական ընդհանուր կրթություն	2,547,367.0	6,668,743.5	6,817,479.7
			02. Հանրակրթական ուսուցում	2,477,991.0	6,561,219.9	6,704,331.1
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2,477,991.0	6,561,219.9	6,704,331.1
			04. Հատուկ կրթություն	51,984.7	95,258.0	100,671.1
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	51,984.7	95,258.0	100,671.1
			05.Ներառական կրթություն	17,391.3	12,265.6	12,477.5
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	17,391.3	12,265.6	12,477.5
		02	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	1,523,630.2	-	-
			02.Հանրակրթական ուսուցում	1,523,630.2	-	-
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	1,523,630.2		
09	03		Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական	-	49,537.3	51,328.0
		01	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	-	49,537.3	51,328.0
			01. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	-	42,952.9	45,078.4
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	-	42,952.9	45,078.4
			02.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	-	6,584.4	6,249.6
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	-	6,584.4	6,249.6
09	05		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	33,563.6	6,958.6	7,819.3

		01	**Արտադպրոցական դաստիարակություն**	**6,537.7**	**6,958.6**	**7,819.3**
			02.Արտադպրոցական դաստիարակություն	6,537.7	6,958.6	7,819.3
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	6,537.7	6,958.6	7,819.3
			05.Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	**27,025.9**	**-**	**-**
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	27,025.9		
09	**06**		**Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ**	**345,762.0**	**1,208.4**	**1,208.4**
		01	**Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ**	**345,762.0**	**1,208.4**	**1,208.4**
			02.Կրթական օբյեկտների հիմնանորոգում	**344,553.6**	**-**	**-**
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	344,553.6		
			12.Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում	**1,208.4**	**1,208.4**	**1,208.4**
			- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	1,208.4	**1,208.4**	**1,208.4**

190. Հանրակրթության ոլորտի զարգացման նպատակով նախատեսված են նաև նեդրումներ Համաշխարհային Բանկի վարկային ծրագրի շրջանակներում: Թեև տարեց տարի այդ հատկացումները պակասում են, այնուամենայնիվ դա զգալի ներդրում կլինի Գեղարքունիքի մարզի հանրակրթական համակարգի իրավիճակի բարելավման գործում:

4.2 Հանգիստ, մշակույթ և կրոն

191. Մշակույթի ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են <<ՀՀ Կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրով>>: ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման ապահովումը ՀՀ կառավարության որդեգրած մշակութային քաղաքականության մեջ կարևոր հիմնական ուղղություն է:

192. ՀՀ Գեղարքունիքի մարզի մշակույթի ոլորտում վերջին տարիներին իրականացվող ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բաձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը և ներուժը, ապահովելու մշակութային ավանդական ձևերի զարգացումը:

193. Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Գեղարքունիքի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակութային հաստատությունների շենք-շինությունների, գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբների, գրադարանների, պատմամշակութային հուշարձանների, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի, արհեստի առանձին ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների նյութատեխնիկական բազայի զարգացման հետ:

194. ՀՀ Գեղարքունիքի մարզի մշակույթի ոլորտի զարգացման քաղաքականության գերակայություններն են.

1) ստեղծագործական գործունեության աջակցում և խթանում
2) մշակութային արժեքների պահպանում և տարածում
3) աշխատավարձի բարձրացում
4) մշակութային զարգացման իրավական և տնտեսական կարգավորում:

195. ՀՀ Գեղարքունիքի մարզի մշակույթի ոլորտում առկա մշակութային կազմակերպությունների ընդհանուր պատկերը բնութագրվում է աղյուսակ 4.6-ում բերված ցուցանիշներով:

Աղյուսակ 4.6 ՀՀ Գեղարքունիքի մարզի մշակութային կազմակերպություններ

Ոլորտ	**Տարածաշրջանը**					
	Գավառ	**Սևան**	**Մարտունի**	**Ճամբարակ**	**Վարդենիս**	**Ընդամենը**
Թանգարաններ	1	1	1	-	-	3
Գրադարաններ	15	16	24	11	22	88
Երաժշտական դպրոցներ	2	1	2	1	2	8
Արվեստի դպրոցներ	4	1	-	-	-	5
Մշակույթի տներ, ակումբներ	13	13	17	15	29	87
Դրամատիկական թատրոն	1	-	-	-	-	1
Գեղագիտական կենտրոն		1				1
Երաժշտական քոլեջ	1					1
Գեղարվեստի դպրոց	1	-	1	1	1	4
Պատկերասրահ	1		1			2
Մանկական ստեղծագործական և ուսուցողական կենտրոններ	2	1	1			4

196. Ելնելով ՀՀ կառավարության վարած քաղաքականությունից, ՀՀ Գեղարքունիքի մարզում մշակութային կրթության ոլորտում տարվում են աշխատանքներ՝ համակարգի արդիականացման և զարգացման նախադրյալների ստեղծման ուղղությամբ: Մարզի 92 համայնքներից 10-ում գործում են 8 երաժշտական, 5 արվեստի և 4 գեղարվեստի դպրոցներ, որոնցում սովորում են շուրջ 2100 երեխա: Երաժշտական և արվեստի դպրոցների որոշ բաժիններ գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում. մասնավորապես նրանցում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման պետական ծրագիրը հնարավորություն է տալիս մոռացության վտանգից ազատել մի շարք ազգային նվագարանների լինել-չլինելու հարցը: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի վերապատրաստման և վերարակավորման խնդիրը:

197. Պետական բյուջեից ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսած գումարը 2011թ. համար կազմել է 27025.9 հազ. դրամ, որը նախատեսված է մարզի թվով 12 երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող 204 աշակերտների համար /յուրաքանչյուր ամիս մեկ աշակերտի հաշվով 11040դրամ/:

198. 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում ակնկալվում է լուծել Ճամբարակի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգման, ջեռուցման համակարգի, սանհանգույցների տեղադրման, երաժշտական գործիքների և սարքավորումների ձեռքբերման, Մարտունու

երաժշտական դպրոցի շենքի կապիտալ վերանորոգման, Գավառի Ստ.Մինասյանի անվան գեղարվեստի դպրոցի շենքի վերանորոգման, ջեռուցման համակարգի, սանհանգույցի տեղադրման, ուսումնական և մասնագիտական գույքի, նկարչական նյութերի, ուսումնաօժանդակ գրականության ձեռքբերման հարցերը:

199. Գրադարաններ: Խորհրդային տարիներից ի վեր մշակութային օջախների շենքեի վերանորոգումը բավականին դանդաղ տեմպերով են ընթանում:Վորջին տարներին վերանորոգվել կամ մասնակի վերանորոգվել են մեկ տասնյակի հասնող գրադարանների շենքեր, իսկ հատկապես սահմանամերձ համայնքներում գտնվող գրադարանների շենքային պայմաններն անբարենպաստ են, ինչը խիստ վտանգում է հավաքածուների պահպանությունը և լիակատար օգտագործումը: Մարզում գրադարանային ֆոնդը մեծ մասամբ աղքատիկ է և հնամաշ: Գրադարաններից օգտվողների ընթերցանության պահանջը բավարարելու համար գրադարանային հավաքածուների համալրման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել նոր գրականության, ինչպես նաև գրադարանները համալրել ժամանակակից տեխնիկայով և ինտերնետ կապով:

200. Գրադարանների վիճակի բարելավումը կնպաստի բակչությանը մատուցվող գրադարանային տեղեկատվական սպասարկման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գրադարան հաճախելու ֆիզիկական սահմանափակում ունեցող անձանց գրադարանային ծառայությունների մեջ ներգրավմանը, ինչպես նաև գրադարանային հավաքածուների պահպանությանը:

201. Գրադարաններում 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում ակնկալվում է լուծել Վարդենիսի, Ճամբարակի, Մարտունու քաղաքային գրադարանների շենքերի կապիտալ վերանորոգման, Գավառի քաղաքային գրադարանը նոր գրականությամբ /բառարաններ, հանրագիտարաններ, գեղարվեստական և մասնագիտական / համալրման հարցերը:

202. Թանգարաններ: Մարզում գործում է 3 երկրագիտական թանգարան և 2 պատկերասրահ: Մարզում գտնվող 2 պատկերասրահները՝ Գավառ և Մարտունի քաղաքներում, ազգային պատկերասրահի մասնաճյուղերն են: Թանգարանային հավաքածուները հիմնականում համալրվում են նվիրատվությունների հաշվին: Թանգարանների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ապահովել նախ և առաջ թանգարանների շենքային պայմանների բարելավումը, հավաքածուների անվտանգությունը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում կայուն ջերմախոնավային պայմանների ստեղծումը: Թանգարաններում ցուցահանդեսների, ցուցադրությունների, մշակութային միջոցառումների կազմակերպմանը, հավաքածուների համալրմանը այլ աղբյուրներից նպատակաուղղված ֆինանսական միջոցները մեծապես կնպաստեն մարզի մշակութային կյանքի աշխուժացմանը:

203. Պատմամշակութային հուշարձանների պահպանում: Պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, պեղումների, պահպանության, վերականգնման և օգտագործման գործընթացների համակարգման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել այլ աղբյուրներից աջակցությունը:

204. Ոչ նյութայական մշակութային արժեքների պահպանում: Այս ոլորտի պետական մշակութային քաղաքականությունն ուղղված է մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանն ու պաշտպանությանը, ՀՀ ազգային ավանդական ոչ նյութական ժառանգության /բանավոր ստեղծագործություններ և հմտություններ/ պահպանմանը, տարածմանը և զարգացմանը՝ գործընթացին ՀՀ մարզերի ընդգրկվածության ապահովմամբ:

205. Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ): Այս ենթաոլորտի ռազմավարական նպատակն է թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործության և արհեստների պահպանությունը, ուսումնասիրումը, տարածումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը և խթանումը, տարածքային /ՀՀ մարզեր/ մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

206. Շենքային անբավարար պայմանների, ջեռուցման, օդափոխման համակարգերի բացակայության պատճառով վերջին տասնամյակում ընդհանուր առմամբ թատրոնների բնականոն գործունեությունը ոչ լիարժեք է իրականացվում:

207.Գեղարքունիքի մարզում այսօր հրատապ է մարզպետարանի ենթակայության <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի հիմնանորոգման հարցը: Առկա է նաև բեմի վերանորոգման, լուսաձայնային տեխնիկայի արդիականացման և նոր գույքով համալրելու խնդիրները:

208. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը ազգային մշակույթի անբաժանելի մասն են: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Գեղարքունիքի մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մարզական շինությունների, գյուղական համայնքներում պարզ տիպի խաղահրապարակների պահպանման, մարզադպրոցների նյութատեխնիկական բազայի զարգացման և մարզիչ-մանկավարժների վերապատրաստման ու վերարտակավորման հետ:

209. Մարզում գործում են 9 մարզադպրոց, 3 մարզադաշտ: Մարզադաշտերը հիմնականում գտնվում են ոչ բարվոք վիճակում և հիմնանորոգման կարիք ունեն: Մարզադպրոցներից մեկը հանրապետական, մեկը՝ մարզային, վեցը համայնքային ենթակայության են, իսկ մեկը պատկանում է <<Սևան>> ԳԿՄ ընկերությանը:

210. Ըստ բնակության վայրի իրականացվող ֆիզկուլտուրային-առողջարարական համակարգը ներկայումս գործում է ոչ արդյունավետ: Ֆիզիկական դաստիարակության համալիր միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ պետք է ապահովել ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների բարելավումը, բնակչության ազատ ժամանցի և ակտիվ հանգստի կազմակերպումը:

211. Սոցիալական գործոնների համընդհանուր համակարգում կարևորվում է մարդու հոգևոր ու ֆիզիկական բազմակողմանի զարգացման, առողջության ամրապնդման աշխատունակության բարձրացման և երկարակեցության պահպանման գործընթացը, որից ելնելով անհրաժեշտություն է կանաչ գոտիների, զբոսայգիների, արահետների, էկոլոգիապես մաքուր տարածքների ստեղծումն ու վերականգնումը:

212. Մարզի համար ռազմավարական նշանակություն ունեցող մարզաձևերի, մասնավորապես լող, հրաձգություն, ծանրամարտ, զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով՝ նպաստել տիպային հրաձգարանների, լողավազաններ ստեղծմանը, ինչպես նաև առկա հրաձգարանների

վերականգմանը: Լող մարզաձևի մասսայականացման նպատակով՝ օգտագործել Սևանա լճին հարող համայնքների հնարավորությունները՝ խթանել լող մարզաձևի ուսուցման համար ամառային ճամբարների ստեղծմանն ափամերձ վայրերում:

213. Ֆիզկուլտուրայի պարապմունքներին ազգաբնակչության ներգրավման, ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացման, ազատ ժամանցի ճիշտ կազմակերպման նպատակով՝ համայնքների գլխավոր հատակագծերում սահմանված կարգով նախատեսել և իրականացնել հողհատկացումներ պարզ տիպի խաղահրապարակների կառուցման համար, այդ թվում արհեստական խոտածածկով մարզական բակեր:

214. Մարզում կրթական, սոցիալական և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և նրա արդյունավետության բարձրացումը: Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

215. Այս ուղղությամբ կարևորագույն ձեռքբերումներից մեկը Գեղարքունիքի մարզում երիտասարդական կենտրոնի ստեղծումն էր, որն իր գործունեությամբ նպաստում է մարզում.

1) պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնելով առավել մեծ թվով երիտասարդական կազմակերպություններ:

2) մարզային երիտասարդական կառույցների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության սուբյեկտների խնդիրների մասին եղած տեղեկատվության հավաքմանը, համակարգման և հրապարակման կազմակերպմանը:

3) Երիտասարդությանը մատուցել սոցիալական, իրավաբանական, կազմակերպչական ծառայություններ:

4) աջակցել երիտասարդության շահերն ու իրավունքները ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը և այդ գործընթացում երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը:

5) իրականացնել երիտասարդության հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ (ուսումնասիրություններ, հոդվածներ, այս բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն):

6) երիտասարդության համար հաստատել և ամրապնդել արտաքին կապեր, կատարել փորձի փոխանակում:

216. Այսպիսով՝ Գեղարքունիքի մարզում սպորտի բնագավառում զարգացման հիմնական գերակայություններն են.

1) մարզի մարզական կյանքի զարգացում.

2) մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման որակի բարձրացում և մասսայականության ապահովում.

3) մարզական կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում և նյութատեխնիկական բազայի արդիականացում.

4) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերարակավորման գործընթացի բարելավում.

5) սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

6) ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական, զանգվածային մարզական աշխատանքների բարելավում, բնակչության ազատ ժամանցի և ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ կենսակերպի արմատավորում:

Աղյուսակ 4. 7 ՄԶԾ ծրագրավորվող կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների ֆինանսավորումը 2012-2015թթ /մլն դրամ/

հ/հ	ՄԶԾ ոլորտ	ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ՖԻՆԱՍԱՎՈՐՈՒՄ 2012-2015թթ.				Ընդամենը 2012-2015թթ.
		2012թ.	2013թ,	2014թ,	2015թ,	
1	**Կրթություն**	**6,383,343.0**	**6,771,402.5**	**6,922,789.8**	**6,723,958.1**	**26,801,493.4**
2	**Հանգիստ, մշակույթ և կրոն**	**54,898.2**	**59,347.1**	**59,347.1**	**99,965.4**	**273,557.8**
	Որից՝					
	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	14,368.9	15,563.2	15,563.2	25,182.2	70,677.5
	Մշակութային միջոցառումների իրականացում	3,278.2	3,278.2	3,278.2	7,231.6	17,066.2
	Թատերական ներկայացումներ	37,251.1	40,505.7	40,505.7	67,551.6	185,814.1

Կրթության ոլորտի ծրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	**Արդյունքային ցուցանիշներ**	**Նախադրյալներ**
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Գեղարքունիքի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը տարրական դպրոցում 99.7%, 2. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում 99.7%, 3. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը հանրակրթական դպրոցում՝ 12.5:1 4. աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով՝ 25, 5. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը 70% 6. Նախադպրոցական կրթությունում 5-6 տարեկանների համախառն ընդգրկվածության գործակիցը 60 % 7. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ 35% 8. Աշխատանքի տեղավորված նախնական(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ 80%	Կրթության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների: Ֆինանսական միջոցները բաշխված են ըստ առանձին ծրագրերի և տրամադրված են ժամանակին:
1. Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:		
1.1 Դպրոցական շենքերի կառուցում և վերանորոգում	Վերանորոգված դպրոցների թիվը՝ 40 Նոր կառուցված դպրոցների թիվը՝ 1	Կառավարության կողմից դպրոցական շենքերի վերանորոգման և նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով հատկացվող ֆինանսական միջոցները տարեց տարի
1.2 Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում,	Բարեկարգված մարզադահիլճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների	

մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	տեսակարար կշիռը 5 %	ավելանում են:
1.3 Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում	Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռ 10 % Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը 20000 հազ., 70%	
1.4 Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը՝ 115 Աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով՝ 25 Ինտերնետային կապով ապահովված հանրակրթական դպրոցների թիվը դպրոցների ընդհանուր թվի նկատմամբ 120:119, 99.5 %	ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագիր
2. Ուսուցչական անձնակազմի որակավարման բարձրացում		
2.1 Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը՝ 600 Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ՝ 2500	Ուսուցիչների վերապատրաստումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, այդ գործընթացին աջակցում է նաև ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագիրը:
2.2 Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նպատակով		
2.3 Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Հանրակրթական դպրոցների ատեստավորված ուսուցիչների թիվը 2500, 80 (%) Տարակարգ ստացած ուսուցիչների տեսակարար կշիռը ատեստավորված ուսուցիչների ընդհանուր թվաքանակի մեջ 30%	
3. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում		
3.1 Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում:	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը՝ 20	Դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է, այդ գործընթացին աջակցում է նաև ՀԲ

	Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում 1%	«Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագիրը:
3.2 Դպրոցական խորհուրդների անդամների վերապատրաստում՝ խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով	Վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցական խորհրդի անդամների թիվը՝ 60 Դպրոցում իրականացվող ոչ պետական ծրագրերի /նախաձեռնությունների թիվը 30	
3.3 Աշակերտական խորհուրդների ակտիվության բարձրացում՝ խորհրդի անդամների և դաստիարակության գծով տնօրենի տեղակալի, մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի վերապատրաստման միջոցով	Դպրոցական խորհուրդներում աշակերտական խորհրդի ներկայացուցիչների թիվը 120	ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագիր
	Աշակերտական խորհուրդների կողմից իրականացված նախաձեռնությունների թիվը 5	
4. Ներառական կրթության համակարգի զարգացում		
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթության նպաստավոր պայմանների ստեղծում	Հանրակրթական դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը՝ 30	
	Հանրակրթական դպրոցներում կառուցված թեքահարթակների թիվը՝ 5	
5. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:		
5.1 Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	Վերանորոգված և նոր գործող մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների թիվը՝ 5	ՀԲ, ՀՀ պետական բյուջե
5.2 Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային/ համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը՝ 5 Հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռը 1% Ցուցահանդեսների այցելուների քանակ տարեկան կտրվածքով՝ 300 Թատերական ներկայացումների քանակ՝ 2 Թատերական միջոցառումների մասնակիցների	ՀՀ պետական բյուջե

	քանակ՝ 4000	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում		
6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը՝ 20	Պետությունը հետևողական է <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի կիրարկման, նախադպրոցական կրթության ոլորտի բարեփոխումների ծրագրի իրականացման հարցում:
6.2 Նախադպրոցական հասատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիակական բազա ունեցող մանկապարտեզների թիվ՝ 20	
6.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվ՝ 30	
6.4. Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում	նախադպրոցական այլընտրանքային ծառայություններում ընդգրկված երեխաների թիվը՝ 30	
	գործող նախադպրոցական հաստատությունների թիվը՝ 50 Նոր ներդրված ՆԴՀ –ների թիվը՝ 50	
	Նախադպրոցական կրթությունում 5-6 տարեկանների համախառն ընդգրկվածության գործակիցը 35 %	
	Նախադպրոցական կրթությունում 5 տարեկանների զուտ ընդգրկվածության գործակիցը 60(%)	

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

5.1. Առողջապահական ոլորտի իրավիճակի վերլուծություն

5.1.1 Բնակչության առողջական վիճակն ու առողջապահության մատչելիությունը

217. Գեղարքունիքի մարզի հանրային առողջության վիճակի մասին պատկերացում առաջին հերթին կարելի է կազմել հիմնվելով այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են ծնելիությունը, մահացությունը և բնակչության բնական աճը: Վերջին տարիների վիճակագրությունը վկայում է, որ մահացության դեպքերի թիվը ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Գեղարքունիքի մարզում աճել է (1.1%-ով), ընդհանուր առմամբ՝ ծնելիության ցուցանիշը 2002թ.-ից ևս սկսել է աճել:

Աղյուսակ 5.1. Առողջության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան բացարձակ թվերով Գեղարքունիքի մարզում, (Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2001-2005թթ., Վիճակագրական ժողովածու, ք. Երևան 2007թ.)

	Ծնվածների թվաքանակը				Մահացածների թվաքանակը				Բնական աճ				Մինչև 1 տարեկան մահացած երեխաների թվաքանակ			
	2006	2007	2008	2009	2006	2007	2008	2009	2006	2007	2008	2009	2006	2007	2008	2009
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	37639				27202				10437				523			
Ք. ԵՐԵՎԱՆ	12405				9235				3170				130			
ԱՐԱԳԱԾՈՏՆ	1797				1167				630				23			
ԱՐԱՐԱՏ	3222				2030				1192				36			
ԱՐՄԱՎԻՐ	3356				2161				1195				48			
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	3029	3143	3251	3426	1889	1791	1904	1898	1140	1352	1347	1528	52	50	49	47
ԼՈՌԻ	3177				2802				375				54			
ԿՈՏԱՅՔ	3433				2076				1357				47			
ՇԻՐԱԿ	3339				2615				724				74			
ՍՅՈՒՆԻՔ	1643				1361				282				24			
ՎԱՅՈՑ ՁՈՐ	628				500				128				9			
ՏԱՎՈՒՇ	1610				1366				244				26			

218. Մանկամահացության դեպքերը 2000 թվականի սկզբից սկսած նվազեցին, այնուամենայնիվ 2005-06թթ.-ին մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերն ավելացել են (2004թ.-ի համեմատ այս ցուցանիշը կազմել է 2.6%) (տես Աղյուսակ 5.1): Չնայած այդ ուղղությամբ որոշակի միջոցառումներ են իրականացվել, մասնավորապես՝ մարզում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպվել է ուսուցողական ծրագիր, որի շրջանակում մարզի ակտիվ վերարտադրողական տարիքի կանանց շրջանում խորհրդատվություններ և ուսուցումներ են իրականացվել: Բացի այդ առողջության պահպանման առաջնային օղակի բուժանձնակազմի համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ կապված մանկական հիվանդությունների բուժման հետ: Մարզպետարանի տվյալների համաձայն, մինչև մեկ տարեկան երեխաների կանխարգելիչ զննումները և պատվաստումներն ընդգրկում են նրանց 95%-ը: Մանկամահացության բարձր ցուցանիշը պայմանավորված է մի շարք գործոններով.

1) գյուղական համայնքներում մակաբարձագինեկոլոգյական ծառայությունների ցածր որակը,

2) մանկան առողջության պահպանման վերաբերյալ բնակչության ոչ բավարար իրազեկությամբ,

3) գործազրկության բարձր աստիճանով, ընտանիքների և երիտասարդների եկամուտների ցածր մակարդակով և այլն:

219. Մարզի բնակչության առողջական վիճակի մասին կարելի է դատել նաև ելնելով հիվանդությունների տարածման միտումներից: Դիտարկելով հիվանդությունների տարածման մասին վկայող տվյալները, կարելի է եզրակացնել, որ ընդհանուր մահացության բարձր մակարդակը մարզում հիմնականում պայմանավորված է արյան շրջանառության, ուռուցքային հիվանդություններով և շաքարային դիաբետի բարդություններով:

220. Արյան շրջանառության, ուռուցքաին հիվանդությունների և շաքարաին դիաբետի բարդությունների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել վերոհիշյալ հիվանդություններով տառապող անձանց պրոֆիլակտիկ հետազոտություններ, այն հաշվով որ հիվանդությունների վաղ հայտնաբերման փուլում կազմակերպվի համապատասխան բուժական միջոցառումներ ինչը կբերի բարդությունների հետագա նվազեցմանը: Միջոցառումնրում պետք է ընդգրկել դեղորայքաին բուժումը, կարիքի դեպքում ստացիոնար հետազոտությունները և բուժումները ինչպես նաև սան–կուրորտաին բուժման կուրսերը:

221. Հատկանշական է, որ մարզի համար լրջագույն խնդիր է դարձել այնպիսի սոցիալական հիվանդությունների աճը, ինչպիսիք են հոգեկան հիվանդությունները (տես Աղյուսակ 5.2):

Աղյուսակ 5.2. Հիվանդությունների դինամիկան Գեղարքունիքի մարզում (Աղբյուրը՝ Գեղարքունիքի մարզպետարանի տվյալներ)

Հիվանդություն	2006թ.	2007թ.	2008թ	2009թ	2010թ
Շաքարային դիաբետ	1570	1236	2598	2730	
ՍՃՓ հիվանդություններ	88	81	90	92	
Հոգեկան հիվանդություններ	1211	1217	2513	2678	
Նորագոյացություններ	1416	1368	1666	1804	
Թերսնուցում (0-2տարեկան)	40	64	60	58	
Սակավարյունություն (0-5 տարեկան)	13	4	6	3	
Տուբերկուլոզի հիվանդներ	311	191	214	209	
Հղիների սակավարյունություն	92	28	30	27	

222. Հայաստանը ներկայումս ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածության ցածր ցուցանիշ ունեցող երկրներից է: 2010թ. Դեկտեմբերի 31 դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 971 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում: Ընդհանուր առմամբ վերջին տարիներին նկատվում է արձանագրվող դեպքերի թվի աճ: Այսպես, ՄԻԱՎ վարակի գրանցման բոլոր դեպքերի կեսից ավելին արձանագրվել է վերջին 4, իսկ ՁԻԱՀ–ի դեպքերի կեսից ավելին՝ վերջին 3 տարիների ընթացքում:

223. Գեղարքունիքի մարզը ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի և բացարձակ թվով, և 100 հազար բնակչի հաշվով արձանագրված դեպքերի թվով գտնվում է 7-րդ տեղում հանրապետության մարզերի շարքում՝ ներառյալ ք. Երևանը: Գեղարքունիքի մարզի բնակիչների շրջանում ՄԻԱՎ վարակի առաջին դեպքն արձանագրվել է 1996թ.: Այդ ժամանակից ի վեր մինչև 2010թ. դեկտեմբերի 31–ը մարզի բնակիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 53 դեպք, ինչը 100 հազար բնակչի հաշվով կազմում է 21,9:

224. Ըստ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների, Գեղարքունիքի մարզի բնակիչների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերը 2008-2010թթ. ավելացել են 23–ով: ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ–ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 2500:

225. Սակայն վերջին 4 տարիների ընթացքում գրանցված ՄԻԱՎ վարակի, ՁԻԱՀ-ի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան դեպքերի թիվը աճում է՝ գերազանցելով բոլոր նախորդ տարիների ընթացքում գրանցված դեպքերի թիվը: Այլ վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակի առումով նշենք, որ Գեղարքունիքի մարզում 2007թ. գարանանը արձանագրվել է տուլարեմիայի 17 բռնկման դեպք Ծովագյուղ համայնքում: Հիվանդության տարածման կանխարգելման ուղղությամբ իրականացվել են կանխարգելիչ և հակահամաճարակային հետևյալ միջոցառումները՝ պատվաստումներ բնակչության շրջանում, կրծողասպան միջոցառումներ և այլն:

226. 2007թ. ընթացքում Գեղարքունիքի մարզում գրանցվել է բրուցելոզի 31 դեպք: Բրուցելոզ հիվանդությունը պայմանավորված է կենդանիների շրջանում վերջիններիս տարածվածությամբ: Հետևաբար անասնաբուժության և առողջապահության ոլորտի մասնագետների համատեղ աշխատանքների արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ պայքարել բրուցելոզի տարածման դեմ:

Աղյուսակ 5.3. Գեղարքունիքի մարզում ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը

Տարեթիվ	2005թ.	2006թ	2007թ	2008թ	2009թ	2010թ	Ընդամենը
ՄԻԱՎ վարակի գրանցման դեպքերը բացարձակ թվերով	22	2	6	8	6	9	53

227. ՄԻԱՎ-ի տարածվածության առումով մարզի բնակչությանը հնարավոր վտանգ է ներկայացնում այն փաստը, որ բնակչության մեծ զանգված են կազմում

աշխատանքային միգրանտները, որոնք մեկնում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածության բարձր ցուցանիշ ունեցող երկրներ, ինչպիսին են Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան:

228. Առողջապահության բնագավառում հիմնական գերակայություն է շարունակում համարվել առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությունը: Սկսած 2006 թվականից ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության ծրագրերում ընդգրկվել է հանրապետության բնակչությունն ամբողջությամբ՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, (բացառությամբ ստոմոտոլոգիական բուժօգնությունից, որն անվճար է միայն բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածների և մինչև 8 տարեկան երեխաների համար), որի արդյունքում նկատելի աճել են հաճախումները ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում (տես Աղյուսակ 5.4):

229. Այսպես, 2006-2009թթ. ընկած ժամանակահատվածում Գեղարքունիքում 42.7%-ով աճել են հաճախումները առաջնային բուժօգնության բուժկանխարգելիչ հաստատություններ:

Աղյուսակ 5.4. Հաճախումների թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում 2006-2009 թթ.

	հազ մարդ.				
	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	9078,1				
ք. ԵՐԵՎԱՆ	3277.2				
ԱՐԱԳԱԾՈՏՆ	226.9				
ԱՐԱՐԱՏ	620.4				
ԱՐՄԱՎԻՐ	631.5				
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	**605.2**	**605.9**	**609.3**	**693**	
ԼՈՌԻ	723.9				
ԿՈՏԱՅՔ	672.0				
ՇԻՐԱԿ	700.6				
ՍՅՈՒՆԻՔ	614.5				
ՎԱՅՈՑ ՁՈՐ	144.8				
ՏԱՎՈՒՇ	291.1				

230. Հաճախումների հարաբերական ցուցանիշները նույնպես վկայում են այն մասին, որ բնակչությունը այսօր ավելի հաճախ է դիմում կանխարգելիչ բուժհաստատություններ, քան նախորդ տարիներին (տես՝ Աղյուսակ 5.5):

Աղյուսակ 5.5 Գեղարքունիքի մարզում մեկ բնակչին ընկնող միջին ամբուլատոր հաճախումների թիվը 2006-2009թթ.

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Գեղարքունիքի մարզ	2.5	2,5	2,9	2.9	

231. Նախկինում առողջապահական համակարգը գերկենտրոնացված էր: Ամբողջ բնակչության համար երաշխավորված էր անվճար բուժօգնությունը անկախ սոցիալական կարգավիճակից: Մարզում գործում էին 5 կենտրոնական շրջանային հիվանդանոցներ

(մարզի յուրաքանչյուր քաղաքում՝ մեկական), որոնց կազմում ընդգրկված էին բոլոր բուժհաստատությունները՝ պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, բուժակ-մանկաբարձական կետեր և այլն: Համակարգն ամբողջովին ֆինանսավորվում էր բյուջեի միջոցներից՝ ելնելով սահմանված նորմատիվներից:

232. Անցումային շրջանում և շուկայական մեխանիզմների ներդրման գործընթացի ներքո պարզ դարձավ, որ առողջապահության առկա համակարգի (հագեցած մեծաքանակ և ուռճացված հզորություններով) պահպանումը բյուջետային ֆինանսավորմամբ անարդյունավետ է և անհնար: Համակարգի ֆինանսական ծախսերի օպտիմալացման և ինքնաֆինանսավորման բաղադրիչի զարգացման նպատակով, սկիզբ դրվեց առողջապահության համակարգի կառուցվածքային բարեփոխումներին:

233. Առողջապահական համակարգի ապակենտրոնացման արդյունքում 1996թ. Գեղարքունիքի մարզի առողջապահական հաստատությունների կառավարման իրավասությունները փոխանցվեցին մարզպետարանին: Կենտրոնական շրջանային հիվանդանոցները բաժանվեցին առանձին հիմնարկների, որոնց տրվեց ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտների կարգավիճակ:

234. Շարունակելով առողջապահական համակարգի ապակենտրոնացման գործընթացը, 2006թ. առողջապահական համակարգի օպտիմալացման երկրորդ ծրագրով (կառավարության որոշում թիվ 1911-Ն) իրականացվել են հետևյալ փոփոխությունները՝ մարզի բոլոր տարածաշրջաններում կազմակերպվել են տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ, սակայն ներկայումս այդ կաբինետները իրենց տեղակայմամբ և կառուցվածքով չեն համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի N 21–Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողություն>> N 3.1.1-010-08 սանիտարահակահամաճարակային կանոնների և նորմերի պահանջներին: Սկսվել են Գավառի և Մարտունու տուբ. կաբինետների վերանորոգման նախագծային աշխատանքները, այն ավարտելուց հետո 2012թ.-ին կսկսվի վերանորոգումը:

1) Գավառի տարածաշրջան: Ստեղծվեց տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ, նրան վերապահելով դիսպանսեր գործունեության իրավասություններ: Գավառի պոլիկլինիկայից առանձնացվել են Լճափի և Գանձակի ամբուլատորիաները՝ տալով նրանց առանձին իրավաբանական անձի կարգավիճակ:

2) Մարտունու տարածաշրջան: Մարտունու պոլիկլինիկան և հիվանդանոցը վերամիավորվել են՝ արդյունքում ունենալով Մարտունու բժշկական կենտրոն ՓԲԸ-ն: Մարտունու Բ/Կ կազմից առանձնացվել են Երանոսի, Գեղհովիտի, Վաղաշենի, Արծվանիստի, Աստղաձորի, Լիճքի, Ծակքարի, Վարդաձորի ամբուլատորիաները՝ տալով նրանց առանձին անձի իրավաբանական կարգավիճակ:

3) Սևանի տարածաշրջան: Ստեղծվել է տուբերկուլոզի կաբինետը՝ այն վերանվանելով տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ, նրան վերապահելով դիսպանսեր գործունեության իրավասություններ: Սևանի պոլիկլինիկայից առանձնացվել են Լճաշենի, Դդմաշենի և Ծովագյուղի բժշկական ամբուլատորիաները՝ տալով առանձին անձի իրավանաբանական կարգավիճակ:

4) Վարդենիսի տարածաշրջան: Պոլիկլինիկայից առանձնացվել են Գեղամասարի, Լուսակունքի, Ակունքի, Կարճաղբյուրի, Ծովակի, Մեծ Մասրիկի բժշկական ամբուլատորիաները՝ տալով նրանց առանձին անձի իրավաբանական կարգավիճակ:

5) Ճամբարակի տարածաշրջան: Հիվանդանոցը և պոլիկլինիկան վերակազմակերպման ճանապարհով վերակազմավորվել են: Արդյունքում ստեղծվել է Ճամբարակի առողջության կենտրոն ՓԲԸ:

235. Վարդենիսի ստամոտոլոգիական պոլիկլինիկան ներկայացվել է սեփականաշնորհման, Մարտունու ստամոտոլոգիական պոլիկլինիկան սեփականաշնորհվել է արդյունքում մարզում գործում են մասնավոր ստոմոտոլոգիական պոլիկլինիկաներ:

236. Վարդենիսի ստամոտոլոգիական պոլիկլինիկայի սեփականաշնորման գործընթացը դեռևս գտնվում է իրականացման փուլում և կավարտվեն մինչև 2011թ. տարեվերջ:

237. Ապակենտրոնացման արդյունքում մարզում նախկինում գործող 25 առողջապահական հաստատությունների փոխարեն կգործեն 40-ը (տես՝ Աղյուսակ 5.6):

Աղյուսակ 5.6. Գեղարքունիքի մարզի բուժհաստատությունների քանակը, (2006-2010 թթ.)

Բուժ.հաստատություններ	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Հիվանդանոցներ	8	3	3	2	2
Բժշկական կենտրոն	-	1	1	2	2
Պոլիկլինիկաներ	5	3	3	3	3
Ստոմ. պոլիկլինիկաներ	2	2	2	2	1
Առողջության կենտրոններ	1	2	2	2	2
Գյուղական բուժ. ամբուլատորիաներ	24	26	27	29	29
Շտապ բուժօգնության կայաններ	5	5	0	0	0
Ծննդատներ	2	2	2	1	1
Ընդամենը	45	44	40	41	40

5.2. Առողջապահական համակարգի ներկայիս հիմնախնդիրները

238. Հարկ է նշել, որ բուժհաստատությունների միավորման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման արդյունքում զգալիորեն բարելավվեց նրանց ֆինանսական վիճակը: Սակայն, վերոհիշյալ ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները բավարար չեն համակարգի կայուն զարգացման համար: Տարիների ընթացքում մարզի առողջապահական համակարգի առջև կուտակվել են նաև այլ կարևոր խնդիրներ, որոնց լուծումից է այսօր կախված ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացումը: Ստորև ներկայացվում են այդ խնդիրները.

239. Մասնագետների պակասը. Նախ և առաջ պետք է նշել, որ օպտիմալացման հետևանքով, բուժանձնակազմի թվաքանակը թե ամբուլատոր-պոլիկլինիկական և թե հիվանդանոցային համակարգում կրճատվել է: Միևնույն ժամանակ բժիշկ-մասնագետ/սպասարկվող բնակչություն հարաբերակցությունը մնացել է նույնը: Սակայն, համեմատելով այլ մարզերի հետ, Գեղարքունիքում բժիշկ-բնակչություն հարաբերակցության ցուցանիշը ամենացածրն է:

Աղյուսակ 5.7. Բժշկական կադրերը և նրանցով ապահովվածությունը

	Բոլոր մասնագիտությունների գծով բժիշկներ								Միջին բուժանձնակազմ							
	2006թ.		2007թ.		2008թ.		2009թ.		2006թ.		2007թ.		2008թ.		2009թ.	
	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով
ք.ԵՐԵՎԱՆ	241	17.2							730	52.1						
ԱՐԱԳԱԾՈՏՆ	455	16.5							1071	38.9						
ԱՐԱՐԱՏ	410	14.6							1116	39.8						
ԱՐՄԱՎԻՐ	333	13.8							1256	52.4						
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	**502**	**17.8**	345	14,4	346	14,4	341	14.1	**1203**	**42.6**	1221	50.9	1155	47.9	1101	45.6
ԼՈՌԻ	564	20.4							1352	49.0						
ԿՈՏԱՅՔ	557	19.8							1679	59.7						
ՇԻՐԱԿ	305	19.9							855	55.9						
ՍՅՈՒՆԻՔ	106	19.0							279	50.0						
ՎԱՅՈՑ ՁՈՐ	247	18.4							695	51.8						

240. Միջին բուժանձնակազմի թվաքանակի առումով այլ մարզերի համեմատ Գեղարքունիքի մարզն ունի միջին ցուցանիշ: Այնուամենայնիվ, այսօր մարզի բուժհաստատություններն ունեն թափուր հաստիքներ: Հիմնականում բուժհաստատություններում, հատկապես առաջնային օղակում, կարիք է զգացվում ընդհանուր պրակտիկայի և վերարտադրողական առողջության բնագավառի մասնագետների (ընտանեկան բժիշկների, թերապևտի, մանկաբույժի, գինեկոլոգի), ինչպես նաև որոշ նեղ մասնագետների (անեսթեզիոլոգ- ռեանիմատոլոգ, ռենտգենոլոգ, օկուլիստ, հոգեբույժ, էնդոկրինոլոգ): Հիվանդանոցային համակարգում առավել լուրջ է

արտահայտված շտապ օգնության բժիշկների պակասը (պահանջվող մասնագետների ցանկը և նրանց քանակը ըստ տարածաշրջանների տես Հավելված 3-ում):

241. Ընտանեկան բժիշկների վերապատրաստում. Իրավիճակն առաջնային բուժօգնության ոլորտում փոքր ինչ բարելավվել է՝ ի շնորհիվ ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման: Առ այսօր մարզում պատրաստվել է 83 ընտանեկան բժիշկ և 123 ընտանեկան բուժքույր մինչդեռ մարզի բոլոր բնակավայրերը սպասարկելու համար անհրաժեշտ է շուրջ 100 ընտանեկան բժիշկ: Ընտանեկան բժիշկների մասնագիտացման գործընթացը կավարտվի 2011-12թթ.:

242. Առողջապահական ընկերություններում դեռևս չի լուծված շուրջօրյա ւրամատակարարման, կեղտաջրերի և բժշկական (կենսաբանական թափոններ, ներարկիչներ) թափոնների պատշաճ հեռացման, ինչպես նաև ջեռուցման համակարգով և տաք ջրով ապահովման հարցերի վերաբերյալ, քանի որ նշվածները խիստ կարևոր են առողջապահական հիմնարկներում սանիտարահակամաճարակային ռեժիմի ապահովման և ներհիվանդանոցային վարակների կանխարգելման տեսանկյունից:

243. Անբավարար նյութատեխնիկական բազան (հատկապես հեռավոր գյուղական համայնքների բուժկետերում). 2004թ.-ից մինչ այսօր տարբեր դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ վերանորոգվել են շուրջ 14 ամբուլատորիաներ և 50 բուժկետեր: Ընթացիկ վերանորոգման են ենթարկվել 5 հիվանդանոց և 5 պոլիկլինիկա:

244. ՀԲ-ի ,,Առողջապահության ֆինանսավորման բարելավման և առողջության առաջնային պահպանման զարգացման,, վարկային ծրագրի շրջանակում սկսած 1997թ-ից մարզի բոլոր համայնքներում կառուցվել են ալբուլատորիաների նոր շենքեր, բացի Ակունքի, Վարդաձորի, Ծակքարի և Լճափի համայնքներից: Այս տարի նախատեսված է Ակունքի և Վարդաձորի համայնքներում ամբուլատորիայի շենքի կառուցում: Բոլոր համայնքների ամբուլատորիաներին հատկացվել են բժշկական կահույքի, սարքավորումների և բժշկական պարագաների հավաքածուներ և բուժօգնության մեքենա: Գավառի պոլիկլինիկային հատկացվել է ախտորոշիչ սարքավորումների հավաքածու: ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության Գեղարքունիքի մարզային կենտրոնի ենթակայության Գավառի, Մարտունու, Ճամբարակի, Սևանի և Վարդենիսի ՊՈԱԿ-ների՝ մանրէաբանական լաբորատորիաներին հատկացվել են սարքավորումներ: Գեղարքունիքի ՀՀԿ-ին հատկացվել է շարժական լաբորատորիա՝ բուժօգնության մեքենա իր սարքավորումներով: Ընդհանուր առմամբ, Գեղարքունիքի մարզում կատարվել է մոտ 518.668.0 ԱՄՆ դոլարի չափ ներդրում՝ հավելված 4-րդ:

245. Առողջապահական համակարգի արդիականացում՝ թիվ 3920 վարկային ծրագրով Գեղարքունիքի մարզում 2006-2007թթ-ի ընթացքում կառուցվել են երեք համայնքային ամբուլատորիա, ևս երեք համայնքների ամբուլատորիաները վերանորոգվել են: Թվով 11 ամբուլատորիա 11 առողջության առաջնային կենտրոն և 1 առողջության կենտրոն հագեցվել են բժշկական սարքավորումներով, բժշկական կահույկով և բժշկական պարագաներով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <<Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացում 2>> թիվ 4267-AM վարկային ծրագրերի շրջանակներում 3 առողջության առաջնային պահպանման կենտրոնի համար կառուցվել են նոր շենքեր, և 3 համայնքում իրականացվել են բուժհիմնարկների վերանորոգման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ առաջին և երկրորդ վարկային ծրագրերով Գեղարքունիքի մարզի բուժօգնության առաջնահին օղակում կատարվել է շուրջ 2.857.718 ԱՄՆ դոլարի չափով ներդրում:

246. <<Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացում>> վարկային ծրագրի շրջանակներում ներկայում իրականացվում են Գավառի բժշկական կենտրոնի հիմնանորոգման, ինչպես նաև նոր դիահերձարանի կառուցման աշխատանքները: Բժշկական կենտրոնը կհագեցվի կահույքով, բժշկական սարքավորումներով և պարագաներով: Գավառի բժշկական կենտրոնը նախատեսվում է շահագործման հանձնել 2011թ. դեկտեմբեր ամսին: Արդյունքում, Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանում կգործի առդի միջազգային չափանիշներին համապատասխանող բժշկական հաստատություն:

247. 2006թ.-ին մարզում դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվեցին առաջնային օղակի բուժքույրերի վերապատրաստման, 20 բուժկետերի վերանորոգման և առաջնային օգնության պարագաներով ապահովման միջոցառումներ:

248. Ֆրանսիական Իզերի նահանգը, որը Գեղարքունիքի մարզի քույր նահանգն է՝ 2006-10թթ. Գավառի, Վարդենիսի և Սևանի հիվանդանոցներում իրականացրել է որոշակի շինարարական աշխատանքներ, ինչպես նաև տրամադրել է մեկական շտապօգնության մեքենա:

249. 2006-07թթ. մարզի տարածաշրջանային կենտրոններին անհատ բարերարների կողմից տրվեցին շտապօգնության մեքենաներ (մոտ 12 մեքենա)՝ այսպիսով, մարզում լիովին լուծելով շտապօգնության մեքենաների խնդիրը: 2011թ-ին մարզի չորս առողջապահական ընկերություններ՝ Գավառի Բ/Կ, Մարտունու Բ/Կ, Վարդենիսի հիվանդանոց և Սևանի հիվանդանոց ՊՓԲԸ-ները համալրվեցին մեկական շտապօգնության մեքենաներով:

250. 2004թ.-ից առ այսօր մարզի առողջապահական հաստատությունների թե շենքային, թե տեխնիկական պայմանները բարելավվել են, ինչպես նաև իրականացվել է կադրերի վերապատրաստում:

251. Հիմնական նորոգման կարիք ունեն մարզի բոլոր տարածաշրջանների պոլիկլինիկաները, բացի Սևանի պոլիկլինիկայից որոնց վերանորոգման համապատասխան նախահաշիվները պատրաստվել են մարզպետարանի կողմից (պահանջվող սարքավորումների, ինչպես նաև վերանորոգման կարիք ունեցող բուժհիմնարկների ցանկը տես Հավելվածներ 3 և 4-ում):

252. Ամերիկյան դոնոր կազմակերպությունը Սոցիալական բարեփոխումների ծրագրի շրջանակներում մեծ աշխատանք է կատարել մարզի առաջնային բուժօգնության ոլորտում: Ծրագրի շրջանակներում բնակչությանը բուժօգնություն է տրամադրվել բժշկական շարժական խմբերի միջոցով, կազմակերպվել է բնակչության ուսուցում: 2009թ.-ից դադարեցվեց շրջիկ բժշկական բրիգադաների գործունեությունը ինչը իր բացասական ազդեցությունն է ունենալու մարզի հեռավոր և սահմանամերձ գյուղերի ազգաբնակչության բուժսպասարկման գործի կազմակերպման վրա:

253. Մարզի բոլոր տարածաշրջանային կենտրոններում հիմնվել են հոգեկան առողջության ցերեկային կենտրոններ, որոնք կազմակերպության գործունեության դադարացումից հետո գտնվում են Սևանի հոգեբուժական հիվանդանոցի ենթակայության տակ: 2003թ.-ից սկսած հոգեբույժից, հոգեբանից և սոցիալական աշխատողից բաղկացած աշխատակազմը սկսել է մատուցել անվճար ծառայություններ: Բացի այդ կազմակերպությունը վերանորոգել է Վարդենիսի տարածաշրջանի Գեղամասար, Կարճաղբյուր, Մեծ Մասրիկ, Ծովակ համայնքների ամբուլատորիաները: Ինչպես նաև վերանորոգման է ենթարկվել Ճամբարակի հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը, Այգուտի բուժամանկաբարձական կետը:

254. Ծառայությունների որակի զարգացման ֆինանսական խթանների բացակայությունը. 2005թ. սկսած առողջապահական համակարգի ֆինանսական ծավալների ավելացումը և ժամանակին ֆինանսավորումը զգալիորեն նպաստել է առաջնային օղակի բուժաշխատողների աշխատավարձի բարձրացմանը, ինչը ազդել է մատուցվող ծառայությունների որակի վրա:

255. Սակայն, հիվանդանոցային համակարգը նույնպես վերափոխման կարիք ունի: Դրա պահպանումը բյուջետային ֆինանսավորմամբ տնտեսապես նպատակահարմար չէ: Չնայած վերջին տարիներին պետական ֆինանսավորումը զգալիորեն ավելացել է, լրացուցիչ ներդրվել է համավճարի մեխանիզմը, ինչպես նաև փոքր ինչ բարելավվել է բնակչության վճարունակությունը, սակայն համակարգում վիճակը դեռևս մնում է խնդրահարույց: Այսպես, չնայած նրան, որ օպտիմալացման հետևանքով, վերջին տարիների ընթացքում մահճակալային ֆոնդը նվազել է (տես Աղյուսակ 5.8), ըստ մարզպետարանի տվյալների 2006թ. մահճակալային ֆոնդը շարունակում է գործել զգալի թերծանրաբեռնվածությամբ:

Աղյուսակ 5.8. Բնակչության ապահովվածությունը մահճակալային ֆոնդով և դրա օգտագործումը ըստ մարզերի

	Մահճակալների քանակը									
	Բացարձակ թվեր					10000 բնակչի հաշվով				
	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Ք. ԵՐԵՎԱՆ	7393					66.9				
Ընդամենը	468					33.4				
ԱՐԱԳԱԾՈՏՆ	805					29.3				
ԱՐԱՐԱՏ	632					22.6				
ԱՐՄԱՎԻՐ	504					25.2				
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	**840**	**504**	**390**	**335**	**335**	**29.7**	**25.2**	**19.5**	**16.7**	**16.7**
ԼՈՌԻ	935					33.9				
ԿՈՏԱՅՔ	1034					36.8				
ՇԻՐԱԿ	710					46.4				
ՍՅՈՒՆԻՔ	190					34.1				
ՎԱՅՈՑ ՁՈՐ	380					28.3				

256. Լրջագույն խնդիր է թերևս շենքային պայմանների անբավարար վիճակը: Ներկայումս Գեղարքունիքի մարզի Ճամբարակ Ա/Կ, Սևան, Մարտունու Բ/Կ, Վարդենիս) հիվանդանոցները հիմնանորոգման կարիք ունեն: Մասնավորապես, Ճամբարակի հիվանդանոցը շուրջ 25 տարի հիմնական նորոգման չի ենթարկվել, շարքից դուրս է եկել ջեռուցման համակարգը, լուսամուտները և դռները տարիների ընթացքում ենթարկվել են դեֆորմացիայի: Ավելին, Ճամբարակի տարածաշրջանի հեռավոր և սահմանամերձ լինելու հանգամանքն ավելի արդիական է դարձնում մարզի այդ հատվածում արդյունավետ բուժսպասարկում ապահովելու խնդիրը: Այս խնդիրը չափազանց արդիական է նաև, քանի որ հիվանդանոցը միավորվել է պոլիկլինիկայի հետ և դարձել առողջության կենտրոն՝ պետգույքի կառավարմանը հանձնելով շուրջ 2200ք/մ տարածք:

257. Մարզի առողջապահության ոլորտի հիմնական խնդիրները և նրանց փոխադարձ կապը, ամփոփ ձևով ներկայացված են գծապատկերում:

Առողջապահության ոլորտի հիմնախնդիրների<<ծառը>>

5.3 Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

258. ՀՀ կառավարության կողմից հաստատված առողջապահության ոլորտում ԿԶԾ-ի կատարման հանրապետական միջոցառումները անմիջական ազդեցություն կունենան Գեղարքունիքի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ուղղություններն ու նրանց համապատասխան մշակված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածաշրջանային մակարդակով լրացնելու և, հետևաբար, ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

259. Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվում բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է առողջության առաջնային պահպանման մակարդակի բարելավման, առաջնային և երկրորդային բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները ներկայացվում են ստորև.

Առողջապահության ոլորտի զարգացման նպատակներն ուղղությունները



260. Մարզում գերակա հիմնախնդիր է համարվում ազգաբնակչությանը որակյալ ջրով ապահովելը և ջրահեռացման գործի կազմակերպումը: Այդ հարցի կարգավորման նպատակով 2006 թվականին մարտի 23-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 397–Ն <<Սևանա լիճ ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող

կեղտաջրերի մաքրման մասին>> որոշումը, որը սահմանում է որ Սևանա լիճ ափամերձ տարածքում գոյություն ունեցող առանձին օբյեկտներից առաջացող կեղտաջրերը, մինչև Սևանա լիճ թափվելը, անհրաժեշտ է ենթարկել կենսաբանական մաքրման: Հետագայում՝ ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1142–Ն <<Կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների համար կոյուղաջրերի տեղային մաքրման կայանների պարտադիր տեղադրման նորմերը հաստատելու մասին>> որոշմամբ ևս պահանջվում է կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների կոյուղաջրերը հեռացնել միայն տեղային մաքրման կայանների միջոցով: Նշված ՀՀ կառավարության որոշումների իրականացումը կապահովի Սևանա լիճ հետագա աղտոտման կանխումը: Ուստի պետք է նախատեսել գործուն մեխանիզմներ՝ նշված ՀՀ կառավարության որոշումների իրականացման համար:

261. Ծխելու դեմ պայքարի կազմակերպման համար նախատեսվում են՝

1) Ձևավորել ծխելու դեմ պայքարի մարզային հանձնաժողով:

2) Օգտագործել մարզային մասայական լրատվամիջոցները ծխելու դեմ պայքարի բնագավառում:

3) Առողջապահության գործի կազմակերպման մեջ ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում ծխելու դեմ պայքարի 2010-2015թթ. պետական ծրագրով նախատեսված միջոցառումները, այդ թվում ծխելու դեմ պայքարի մեթոդների վերաբերյալ առաջնային օղակի բուժաշխատողների վերապատրաստումը:

4) Ծխելու դեմ պայքարի պետական ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ամենամսյա հաշվետվության իրականացում:

5) Ծխելու դեմ պայքարի հարցերով համագործակցել միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

262. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ 2012 -2015թթ.

1) Պետական առողջապահական գործակալության հետ պայմանագրի կնքում 1 տարվա փոխարեն կնքելով 3-5տարի ժամկետով:

2) Բժիշկների աշխատավարձի բարձրացումը շուրջ 2 անգամ:

3) Պետական գնումների գործընթացի հրապարակայնության և թափանցիկության ապահովում:

4) Բնակչության կողմից դիմում–բողոքների, առաջարկությունների քննարկումների կազմակերպում:

5)Առողջապահական ընկերություններում պաշտոնական կայքերի ստեղծում և դրանցում լիարժեք տեղեկատվության տեղադրում:

6)Քաղաքացիական հասարակական կազմակերպության կողմից մոնիտորինգի իրականացում և արդյունքային գնահատում:

263. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1) Բժշկական հաստատությունները պետք է ընդունեն բժշկական հաստատություն դիմելու կարգը, իրականացվող ծառայությունների ցանկը, համավճարների չափը, բժշկական հաստատությունից տրված փաստաթղթեր, քաղվածքներ կամ պատճենը տրամադրելու, բողոքների և առաջարկությունների ներկայացման կարգը:

2)Բժշկական հաստատության աշխատանքի կանոնակարգը պետք է փակցված լինի տվյալ հաստատության ամենատեսանելի վայրում:

264. ՀՀ-ՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԽՆԴԻՐԸ 2012 - 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1) Հայաստանում մայրական մահացությունը /31,8-100000/ զիջում է տարածաշրջանային միջին ցուցանիշից /15,6-100000/ ՀՀ Գեղարքունիքի մարզը այս վերջին 5 տարիներին 0% է:

2) Վաղաժամ ծննդաբերությունը հասցնել մինիմալի:

3) Սակավարյունության դեմ պայքարի միջոցառումների կազմակերպում այն հաշվով, որ 1000 ծննդաբերության դեպքում ներկայիս 107-ի փոխարեն սակավարյունության դեպքերի թիվը հասնի 60-70-ի:

4)Պերինատալ մահացության ցուցանիշը 14-ից հասցնել 8-ի:

5)Անցանկալի հղիությունը կանխարգելելու նպատակով բարձրացնել հակաբեղմնավորիչների օգտագործման իրազեկությունը:

6)Պայքարը անպտղության դեմ այսօրվա դրությաբ 32%-ից իջեցնել հասցնելով 20%-ի:

7)Դեռահասների նկատմամբ կատարվելիք հետազոտությունները հասցնել 98%-ի, իրականացնել կրթական ծրագրեր սեռավարակների, վերաարտադրողական առողջության պահպանման թեմաներով:

8)Իրականացնել անհատների, համայնքների, հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունը վերարտադրողական առողջության պահպանման գործում:

9)Հակաբեղմնավորիչ միջոցների տրամադրումը ապահովել պետության կողմից, սոցանապահով խմբերի համար:

10)Հղիության արհեստական վիժումների քանակը հասցնել մինչև 6-ի /15-49 տ/ կանանց հաշվով:

11)Վերարտադրողական համակարգի օրգանների քաղցկեղի դեմ պայքարի համար բարձրացնել առաջնային օղակի բուժաշխատողների կրթական մակարդակը , այն հաշվով,որ մինչև 2015 թվականը ուշ հայտնաբերված կրծքագեղձի քաղցկեղի դեպքերի թիվը հասցնել 15-ի /ներկայիս 47-ի փոխարեն;

12)Սեռավարակի թիվը մինչև 2015 թվականը նվազեցնել հասցնելով 10%:

13)Մինչև 2015 թվականը մարզում ունենալ առողջապահական մեկ երիտասարդական-բարեկամ առողջապահական ծառայություն /նպատակակետ 40%/:

14)Դեռևս մոր ու մանկան առողջության պահպանման հիմնախնդիրը շարունակվում է մնալ առաջնահերթությունների շարգում: Պետական հավաստագրերի ներդրումը բերելե նրան,

որ մարզում խիստ նվազել է տնարն ծնունդների թիվը բարձրացել է հղիության վաղաժամ ընգրկվածությունը ինչը բերել է նրան, որ հղիության վաղաժամկետ հատվածում ախտորոշվում են առկա հիվանդությունները և կազմակերպվում է նրանց բուժումը: Արդյունքում ունենում ենք առողջ մայր և երեխա:

265. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԾՐԱԳԻՐ 2012-2015թթ.- 2007-2015թթ. ծրագրի ներդրման նպատակը ՀՀ-ում 2007-2015թթ. ընթացքում բարելավվել համաճարակաբանական իրավիճակը՝ հիվանդացության և տուբերկուլոզից մահացության, տուբերկուլոզի դեղակայուն ձևերի զարգացման աճի իջեցման միջոցով:

266. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐՆ ԵՆ՝

1) Տուբերկուլոզի դեմ պայքար ուղղված ազգային քաղաքականության պետական աջակցության զարգացում և իրականացում մարզում:

2) <<Հայաստանում ընդուված և միջազգայնորեն առաջարկվող <<Ուղղակիորեն դիտվող կարճաժամկետ բուժում>> (ԴՈՏՍ) հակատուբերկուլոզային ռազմավարության բոլոր բաղադրիչների կատարման բարելավում>>

3) Առողջության առաջնային պահպանման օղակի և ընդհանուր բժշկական ցանցի ներգրավում հակատուբերկուլոզային ենթակառուցվածքներում:

4)ՄԻԱՎ-ՁԻԱՀԻ կանխարգելման ազգային ծրագրի հետ համագործակցելու ամրապնդում:

5)Կադրերի վերապատրաստում առողջապահության բոլոր մակարդակներում:

6)Առավել մեծ ուշադրություն դարձնել հաշվետվությունների ընդունման և ՏԲ մասնագետների կողմից կատարած աշխատանքների վերահսկմանը, քննարկմանը:

7)Բարձրացնել ուշադրությունը ազատազրկման վայրերից և բանակից զորացրվածների նկատմամբ վերահսկողության բարձրացմանը:

8)Բարձրացնել մասայական լրատվամիջոցների ներգրավվածությունը հակատուբերկուլոզային պայքարի պրոպագանդման գործում:

9) <<Տուբերկուլոզի դեղորայքակայուն ձևերով հիվանդների բուժման ապահովում>>:

10) <<Կանխարգելիչ միջոցառումների ապահովում՝ ներառյալ տուբերկուլոզի հայտնաբերման օջախներում>>:

267. ԻՄՈՒՆՈԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1) Իմունոկանխարգելման ազգային ծրագրի նպատակն է ՀՀ-ում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազումը, դրա հետևանքով մահվան դեպքերի կանխարգելումը և վարակիչ հիվանդության նկատմամբ բնակչության անընկալունակության ապահովվումը:

2) Իմունոկանխարգելման համակարգի հզորացման,պատվաստանյութերի ձեռք բերման համար կայուն ֆինանսական միջոցների առկայությունն է:

3) Ապահովվել պատվաստումների ընդգրկվածության 95 և բարձր%:

4) ՈՒշադրության կենտրոնում պահել պոլիոմիելիտի դեմ պրոֆ պատվաստումների իրականացումը:

5) Ապահովվել դիֆթերիայի դեմ պրոֆ պատվաստումների 96 տոկոս և ավել:

6) Ապահովել ՀԻԲ բաղադրիչով հնգավալենտ պատվաստումների 96 և ավելի բարձր ընդգրկվածության մակարդակ:

268. Զարգացման նշված ուղղությունները համահունչ են ՄԱԿ-ի կողմից հռչակված և Հայաստանի կողմից ընդունած Հազարամյակի զարգացման նպատակներին: Նրանց իրականացումը երկարաժամկետ հեռանկարում պետք է նպաստի մարզում մանկական մահացության նվազմանը և մայրական մահացության առկա ցածր մակարդակի պահպանմանը, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի արդյունավետությանը: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզում ակնկալվում է 2009թ.-ին նվազեցնել մանկական մահացությունը 1000 կենդանածինների հաշվով մինչև 10% (տես՝ Աղյուսակ 5.9):

Աղյուսակ 5.9. Հազարամյակի զարգացման նպատակներն առողջապահության ոլորտում

Նպատակ և խնդիրներ	Ցուցանիշ	2003	2004	2006	2009	2012	2015
Խնդիր 5: Մինչև 2015թ. 2/3-ով կրճատել մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակը	13.Մինչև 5 տարեկանների մահացության մակարդակը	15.6	15.3	14.4	13.0	11.5	5.0
	Գեղարքունիքի մարզ						
	14. Մինչև 1 տարեկանների մահացությունը (ԿԶԾ)	13.2	13.0	12.2	11.0	9.8	8.5
	Գեղարքունիքի մարզ	12.47					
	15. Կարմրուկի դեմ պատ¬վաստ¬ված մինչև մեկ տարե¬կան երեխաների տեսակարար կշիռը, (ԿԶԾ) (%)				95%		95%
	Գեղարքունիքի մարզ						
Նպատակ 5. Մոր առողջության բարելավում							
Խնդիր 6: Մինչև 2015թ. 3/4-ով կրճատել մայրական մահացության մակարդակը	16. Մայրական մահացության մակարդակ (ԿԶԾ)	27.0	24.0	22.0	15.5	13.0	10.0
	Գեղարքունիքի մարզ	-	-	-	-	-	-
	17. Բժշկական որակյալ անձ¬նա¬կազմի կողմից ընդունված ծնունդների տեսակարար կշիռը, (ԿԶԾ), (%ով)				98		98
	Գեղարքունիքի մարզ	94.7			97		98
Նպատակ 6: Պայքարել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ							
Խնդիր 7: Մինչև 2015թ. կանգնեցնել	18. 15-24 տարեկանների մեջ ՄԻԱՎ-ով հիվանդ հղի կանանց թիվը				< 1%		< 1%

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումը	(ԿՁԾ)						
	Գեղարքունիքի մարզ				< 1%		< 1%
	19. Հակաբեղմնավորիչների օգտագործման աստիճանը (ԿՁԾ)				33%		44%
	Գեղարքունիքի մարզ						
Խնդիր 8: Մինչև 2015թ. կանգնեցնել մալարիայի և այլ հիվանդությունների տարածումը	23.Տուբերկուլոզի հետևան¬քով առաջացած մահվան դեպ¬քերը				70		50
	Գեղարքունիքի մարզ						
	24.Տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերում և բուժում				< 600 100%		<300 100%
	Գեղարքունիքի մարզ	250	220	200			

5.4 Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը

269. Ընդհանուր առմամբ, պետական բյուջեի հատկացումները՝ 2006թ.-ից կտրուկ աճել են: 2009թ-ին այն կազմել է 1 879 242.2, իսկ 2010թ. 1 852 646.5 հազ. դրամ:

270. Սկսած 2005թ.-ից Գեղարքունիքի մարզի առողջապահության ոլորտի գրեթե բոլոր ուղղություններով պետական հատկացումներո ավելացել են գրեթե 30-35%-ով՝ տարեկան կտրվածքով: Ընդ որում, առաջնային բուժօգնության ֆինանսավորումը, որպես առողջապահության զարգացման գերակա ուղղություն, աճում է առաջանցիկ տեմպերով: Հավանաբար դա հնարավորություն կընձեռի բարելավելու ոչ միայն սոցիալապես խոցելի խմբերի, այլ նաև ողջ բնակչության առաջնային բուժսպասարկման մատչելիությունը:

271. 2009-2011թթ. ժամանակահատվածում ՀԲ-ի կողմից տրամադրված միջոցներով առողջապահության ոլորտում կիրականացվի Առողջապահության համակարգի երկրորդ վարկային ծրագիրը, որի նպատակն է բարելավել բուժօգնության որակն ու մատչելիությունը, իրականացնել առողջապահության համակարգի օպտիմալացման այնպիսի ռազմավարություն, որը կբարձրացնի համակարգի արդյունավետությունը:

272. Ստորև ներկայացվում է Գեղարքունիքի մարզի առողջապահության ոլորտին տրամադրվող պետական բյուջեի միջոցների ծավալն՝ ըստ տարիների (տես՝ Աղյուսակ 5.10):

Աղյուսակ 5.10. ՀՀ պետական բյուջեի ծախսերը Գեղարքունիքի մարզի առողջապահության ոլորտում

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Ընդամենը, հազ. դրամ	1329447.4	1438358.5	1777710.8	1987883.0	2260729.0
1. Հիվանդանոցային բուժօգնություն	411260.0	457931.7	486585.4	697421.6	699448.5
2. Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն	846494.9	890398.1	1192841.5	1098341.7	1077223.6
3. Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր	71692.5	90028.7	98283.9	192119.7	484056.9
այդ թվում՝	-	-	-		
3.1 Շտապ բժշկական օգնություն	-	-	-	92708,4	87059,6
3.2 Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագիր	71692.5	90028.7	98283.9	99411.3	396997.3

Աղյուսակ 5. 11. ՄԶԾ ծրագրավորվող առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2012-2015թթ.
(մլրդ. դրամ)

Հ/հ	ՄԶԾ ոլորտ	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ				Ընդամենը՝ 2012-2015թթ.
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	
1.	Առողջապահություն	2.5	2.8	3.1	3.5	11.9

Ծանոթություն: Առողջապահության ոլորտի 2012-2015 թթ-ի մարզի զարգացման ծրագրով ծրագրավորվող միջոցառումների ֆինանսավորումը ակնկալվում է ՀՀ պետական բյուրջեի միջոցներից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների ներդրումներից: ՀՀ առողջապահության նախարարության բոլոր ծրագրերը համապետական են և միջնաժամկետ ծախսային ծրագրերով /ՄԺԾԾ/ ըստ մարզերի համապատասխան բաշխում չի կատարվել, ուստի համադրումն անհնարին է:

Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Ռիսկեր
Ոլորտային նպատակ՝ Բարելավել բուժսպասարկման մատչելիությունը և որակը Գեղարքունիքի մարզում	1. Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000՝ 0-1 կենդանածինների հաշվով 2. Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000՝ 0-1 կենդանածինների հաշվով 3. Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով՝ 0-1 4. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, 100 հազ. մարդ 5. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ բնակչի հաշվով՝ 55% 6. Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդները՝ 80% 7. Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, դեպքերի թիվը 10000 բնակչի հաշվով՝ 200-500 8. ՄԻԱՎ տարածվածության աստիճանը, վարակակիրների թիվը՝ 10000 բնակչի հաշվով՝ 100 9. Բնակչության հիվանդացությունը ակտիվ տուբերկուլոզով՝ դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով՝ 120	Առողջապահության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի		

բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացությունների և մահացության նվազմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը:		
1. 1 Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ առավելագույնս ուշադրություն դարձնելով գյուղական բուժամբուլատորիաների աշխատակազմին	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական մակարդակի անձնակազմի ընդհանուր թվում 20-25%	Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է վերապատրաստումից ստացած գիտելիքները: Մասնագետների արտահոսքը ցածր է:
1.2 Մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով՝ 4 Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով՝ 5 Մայրական մահացություն 100000 կենդանածինների հաշվով՝ 0-1	Երեխաներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մասնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից: Բուժանձնակազմը և ծնողները համագործակցում են
Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդների տեսակարար կշիռը 80 %	

		միմյանց հետ:
Մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների կանխարգելիչ զննումների հաճախակի իրականացում	Երեխաների քրոնիկ թերսնուցման և սակավարյունության դեպքերի քանակ՝ 10 Պատվաստված երեխաների տեսակարար կշիռը երեխաների ընդհանուր թվում, 80-90%	
2. Գյուղական բնակավայրերում առողջության պահպանման առաջնային ծառայությունների մատչելիության բարձրացում, որի արդյունքում մարզի բնակչության գերակշռող մեծամասնությունը հնարավորություն կունենա օգտվելու որակյալ առաջնային բուժօգնության ծառայություններից:		
Գյուղական համայնքներում (հատկապես հեռավոր և սահմանամերձ) շրջիկ բժշկական խմբերի կանոնավոր այցելությունների կազմակերպում	Գյուղական համայնքների բնակչության %, որը օգտվել է շրջիկ բժշկական խմբերի ծառայություններից՝ 60-70% Շրջիկ բժշկական խմբերի ծառայությունների որակից գյուղական բնակչության բավարարվածության աստիճան~70%	Կառավարության կողմից հաստատված առողջապահական ծրագրերը իրագործվում են գյուղական վայրերում: Շրջիկ բուժսպասարկման ծառայություն իրականացնող անձնակազմն առկա է:
3.Բուժսպասարկման ենթակառուցվածքի (առաջնային և երկրորդային) և նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը:		
3.1 Բժշկական հաստատությունների (հատկապես գյուղական) շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված բուժհիմնարկների տեսակարար կշիռը 60%	Շենքերի, սարքավորումների, շրջիկ բուժսպասարկման
3.2 Պոլիկլինիկաների հագեցում	Ախտորոշիչ սարքավորումներով	

ախտորոշիչ սարքավորումներով	ապահովված հիմնարկների (պոլիկլինիկական-ամբուլատոր, հիվանդանոցային) տեսակար կշիռը 30-40%	պարագաների պահպանման և կառավարման կարողությունները մարզում առկա են:
3.3 Գյուղական համայնքների (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ) ամբուլատորիաների, բուժկետերի առաջին օգնության պարագաներով ապահովում	Առաջին օգնության պարագաներով ապահովված պոլիկլինիկական-ամբուլատոր հիմնարկների տեսակարար կշիռը 70-80%	
3.4 Հիվանդանոցների հիմնանորոգում և ժամանակակից սարքավորումներով ապահովում	Հիմնանորոգված հիվանդանոցների թիվ՝ 1 Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռ 20 % ք. Երևան ուղեգրված հիվանդների տեսկարար կշիռը բուժօգնություն ստացածների ընդհանուր թվում 20-30 %	
4. Բուժհաստատությունների կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում:		
4.1 Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում ժամանակակից կառավարման մեթոդների և այլընտրանքային/արտաբյուջետային ֆինանսական աղբյուրների ներգրավվման հմտությունների վերաբերյալ 4.2 Առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շարունակում: Հիվանդանոցային համակարգի	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը 50-60% Բուժհաստատության կողմից մատուցվող մասնավոր ծառայություններից գոյացող միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեում 20-22 % Վերամիավորված բուժհաստատությունների թիվ՝ 1 Վերամիավորված բաժանմունքների թիվ՝ 2	Բուժհիմնարկների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ:

օպտիմալացման արդյունքում համակարգի ներքին աուդիտի կազմակերպում՝նյութատեխնիկական բազայի ուսումնասիրման և գույքագրման նպատակով:		
5. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պայքարի ուժեղացում, ինչը կնպաստի սեռավարակակիրների թվի կրճատմանը և մահացության դեպքերի նվազմանը		
Անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ դպրոցներում դասընթացների կազմակերպում	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակված հիվանդների թիվը՝ 100000 բնակչի հաշվով՝ 10% Դասընթացներին ներգրավված դպրոցների տեսակարար կշիռը 10%	Տեղական իշխանությունները, դպրոցները, բուժհիմնարկները շահագրգռված են կախարգելման միջոցառումների շարունակելիության մեջ:
ՁԼՄ-ների միջոցով տարափոխիկ հիվանդությունների (հատկապես տուբերկուլոզի), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում	ՄԻԱՎ-ի վարակակիրների թիվը՝ 100000 բնակչի հաշվով՝ 328 ՄԻԱՎ-ի տարածվածությունը հղի կանանց շրջանում՝ 12 Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակար կշիռը 70 %	Մշակութային արժեքները չեն խոչընդոտում անվտանգ սեռական հարաբերությունների, բեղմնականխիչ միջոցների, ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

Աղյուսակ 5.12.Ստորև ներկայացված են Գեղարքունիքի մարզի տուբերկուլոզից հիվանդացության և մահացության ցուցանիշները(100000 բնակչի հաշվով).

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Հիվանդացություն	**31.3**	**30.9**	**35.4**	**33.0**	**35.0**
Մահացություն	**2.9**	**1.3**	**0.8**	**2.5**	**1.2**

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Ոլորտի իրավիճակի վերլուծություն

273. Աղքատությունը ազդեց բնակչության ոչ միայն ավանդաբար ռիսկային համարվող խմբերի (ծերեր, հաշմանդամներ, երեխաներ), այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես բյուջետային հիմնարկներում (կրթության և մշակույթի ոլորտներում զբաղված) և արդյունաբերական կազմակերպություններում աշխատողների վրա:

274. Գեղարքունիքի մարզն աչքի է ընկնում նաև խոցելիության բարձր համաթվով, որը հաշվարկվել է փորձագիտական հետազոտության արդյունքում ստացված խոցելի խմբերի ցանկի և նրանց խոցելիության աստիճանների ամփոփ գնահատականների հիման վրա (տես Աղյուսակ 6.1):

Աղյուսակ 6.1. Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում և ք. Երևանում, % մարզի բնակչության թվում

(Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական միտումները: Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում: Տեղեկատվական-վերլուծական պարբերական: ՄԱԿԶԾ - Հոկտեմբեր 2005թ., էջ 17)

	Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում, % մարզի բնակչության թվում								**Խոցելիության համաթիվ**
	Հաշմանդամներ՝ այդ թվում երեխա	Ծնողազուրկ երեխաներ	Միայնակ ծերեր	Գործազուրկներ	Տարեցներ	Բազմազավակ ընտանիքներ	Փախստականներ	Նպաստառուներ	
ք. Երևան	4.4	2.1	9.8	25.0	12.9	4.9	4.6	9.2	31.7
Արագածոտն	3.7	3.1	9.8	16.9	12.0	20.2	5.1	17.5	34.2
Կոտայք	2.6	1.7	6.2	37.1	8.8	14.8	11.0	13.7	38.1
Գեղարքունիք	**4.0**	**1.4**	**8.4**	**37.3**	**12.0**	**21.4**	**11.0**	**23.3**	**45.5**
Տավուշ	6.9	5.1	16.2	27.8	15.7	8.0	7.4	21.2	45.6
Լոռի	5.1	3.9	9.6	19.1	11.6	9.0	5.8	29.4	35.5
Շիրակ	4.2	4.8	13.2	18.2	11.8	8.2	1.3	35.9	36.6
Արարատ	3.4	3.1	7.8	14.9	13.1	12.6	17.0	12.4	31.8
Արմավիր	2.9	2.8	9.6	18.3	10.5	13.8	8.6	9.1	30.5
Սյունիք	5.5	5.2	13.2	19.7	12.6	9.6	9.0	14.5	37.5
Վայոց Ձոր	5.6	2.5	7.2	21.9	13.3	13.2	7.0	19.0	35.6
Ընդամենը ՀՀ	4.2	3.2	10.1	24.2	12.2	12.3	7.2	17.3	36.6

275. Խոցելի բնակչության տեսակարար կշիռն ավելի մեծ է փոքր համայնքներում (մինչև 1000 բնակիչ ունեցող): Փաստորեն, որքան փոքր է համայնքը, այնքան մեծ է այնտեղ խոցելի բնակչության տեսակարար կշիռը և որքան մեծ է փոքր համայնքների տեսակարար կշիռը մարզի համայնքների ընդհանուր թվում, այնքան բարձր է խոցելի բնակչության միջին մակարդակը մարզում:

276. Գործազրկությունը թերևս աղքատությունը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է: Գործազրկության մակարդակը հանրապետությունում վերջին չորս տարիների ընթացքում, ընդհանուր առմամբ, նվազման միտում ունի: Այսպես. 2008թ.-ին գործազրկության մակարդակը կազմում էր 6.3%. 2009թ.-ին՝ 7.0%, 2010թ.-ին՝6.9%, իսկ 2011թ.-ին՝ 6.4%: Ըստ Գեղարքունիքի մարզի Գավառի Զբաղվածության մարզային կենտրոնի տվյալների 2008թ.-ին գործազրկության մակարդակը կազմում էր 5.6%. 2009թ.-ին՝ 5.6%, 2010թ.-ին՝ 5.8%, իսկ 2011թ.-ին՝ 5.1%: Գործազուրկների թվի ավելացումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2006թ. հունվարի 1-ից գործողության մեջ է մտել 'Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին' ՀՀ օրենքը, ըստ որի նախկինում ,,աշխատանք փնտրող չզբաղված,, կարգավիճակ ունեցող անձանց նոր օրենքով տրվեց գործազուրկի կարգավիճակ, որի պատճառով էլ աճեց նաև պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը, իսկ ինչ վերաբերվում է գործազրկությանը ընդհանրապես, ապա մարզում վերջին չորս տարիների ընթացքում նկատվում է նվազման միտում՝ հանրապետական միջինի համեմատությամբ:

277.Օրենսդրական դաշտի փոփոխության հետ կապված ավելացել է գործազրկության նպաստի չափը, ինչը անդրադարձել է նաև նպաստառուների թվաքանակի վրա:

Աղյուսակ 6.2. Գեղարքունիքի մարզի տարածաշրջաններում 01.01.2011թ. դրությամբ աշխատանք փնտրող և գործազուրկ քաղաքացիների թիվը (մարդ)՝ ըստ ժողովրդագրական հատկանիշների

(Աղբյուրը՝ Գեղարքունիքի մարզպետարան)

		Գավառ	Սևան	Մարտունի	Վարդենիս	Ճամբարակ	Ընդամենը
Աշխատանք փնտրողներ որից	ընդամենը	2310	2174	1655	1719	350	8208
	Կին	1356	1374	1001	962	228	4921
	Տղամարդ	954	800	654	757	122	3287
Գործազուրկներ, որից՝	ընդամենը	1720	2019	1010	1109	285	6143
	Կին	1170	1283	703	658	202	4016
	Տղամարդ	550	736	307	451	83	2127
Ըստ տարիքի		4	5	8	2	-	19
մինչև 18 տարեկանը		68	147	58	61	12	346
18-24		230	362	149	158	37	936
25-30		213	353	129	183	37	915
31-34		525	565	350	225	83	1748
35-45 տարեկան		470	399	224	325	91	1509
46-54 տարեկան		210	188	92	155	25	670
55 և բարձր		1655	1754	645	784	212	5050
Ըստ բնակության վայրի		65	265	365	325	73	1093
քաղաքային		80	127	37	95	13	352
գյուղական		1	3	3	42	-	49
Ըստ կրթության		267	613	103	320	38	1341
բարձրագույն		45	62	55	-	12	174
թերի բարձրագույն		1147	1043	797	591	199	3777
միջ.մասնագիտական		-	-	-	-	-	-

արհեստագործական	156	164	14	-	23	357
միջնակարգ	24	7	1	61	-	93

278. Աղյուսակ 6-2-ի տվյալների վերլուծությունը վկայում է, որ.
1) մեծ է միջին տարիքի գործազուրկների մասնաբաժինը,
2) կանայք կազմում են գործազուրկների թվի գրեթե կեսը կամ ավելին,
3) աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանող կրթությամբ և որակավորմամբ մարդիկ գերիշխում են գործազուրկների կազմում:

279. Ակնառու տնտեսական հետևանքներից բացի, գործազրկությունն ունի մի շարք սոցիալական հետևանքներ, հատկապես եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին: Այսպես.
1) մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի,
2) եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյազրկման պատճառ է դառնում,
3) աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների և շեղվող վարքի տարբեր ձևերի դրսևորման (հարբեցողություն և այլն) պատճառ են դառնում:

280. Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երեք գործազուրկներից մոտավորապես երկուսը ենթակա են աղքատության ռիսկի: Հետևաբար, գործազուրկների մրցունակությունը բարձրացնելու նպատակով՝ վերջին տարիներին ավելացվել են նաև մասնագիտական ուսուցման ծրագրերի քանակը: Քանի որ, ըստ նոր օրենքի, գործազրկության կարգավիճակ ստացան նաև ապահովագրական ստաժ չունեցողները (դրանք հիմնականում երիտասարդներ էին), նրանց համար ևս իրականացվում են նոր մասնագիտական ուսուցման ծրագրեր: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2010թ. վերապատրաստում անցած գործազուրկների վերաբերյալ վիճակագրական որոշ տեղեկություններ, այդ թվում նաև՝ ըստ մասնագիտական ուսուցման տեսակի:

Աղյուսակ 6.3. Գործազուրկների մասնագիտական ուսուցումը Գեղարքունիքի մարզում 01.01. 2011թ.
(Աղբյուրը՝ Գեղարքունիքի Զբաղվածության մարզային կենտրոն)

Ցուցանիշի անվանումը	Տողի համարը	Ընդամենը (մարդ)	**այդ թվում**		
			վերամաս-նագիտա-ցում	**որակավորման բարձրացում**	**նախնական (արհեստագործական) մասնագիտական պատրաստում**
Ա	**Բ**	1	2	3	4
Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը տարեսկզբից	01	101	38	0	63
Նրանցից՝ հաշվետու եռամսյակում	02	28	10	0	18
Մասնագիտական ուսուցումն անցնողների թվաքանակը հաշվետու տարում	03	22	10	0	12
Ընդգրկվել են ուսուցման մեջ հաշվետու եռամսյակում	04	30	7	0	6

Ուսուցումը շարունակողների թվաքանակը հաշվետու (տող 03+04-02) տարում	05	30	7	0	0
տող 01-ից՝ զբաղվածության ծառայության ուսումնական հաստատություններում	06	0	0	0	0
կազմակերպություններում	07	35	17	0	28
ուսումնական այլ հաստատություններում	08	8	1	0	7
այլ կազմակերպություններում	09	48	20	1	28
տող 01-ից՝ կանայք	10	79	45	0	34
տող 01-ից տեղավորվել են աշխատանքի	11	46	22	1	24
նրանցից՝ կանայք	12	33	19	0	14
16-24 տարեկան երիտասարդներ	13	15	4	0	11
25-30 տարեկան երիտասարդներ	14	19	9	0	10
տող 01-ից՝ առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձանց թվաքանակը	15	37	21	1	16
ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձանց թվաքանակը	16	64	17	0	5

281. Աղյուսակ 6.3-ի տվյալները վկայում են, որ 2010թ-ին 101 գործազուրկ /79 կին/ ավարտել են մասնագիտական ուսուցումը, իսկ 7 գործազուրկի ուսուցումը շարունակվում է: Արդյունքում գործազուրկներից 46-ը տեղավորվել է աշխատանքի /33 կանայք/:

282. 2006-07թթ. <<Համակարգչային հաշվապահություն>> և <<Փոքր բիզնեսի կազմակերպում>> դասընթացներին մասնակցել է 78 մարդ, որից 17-ը՝ <<Փոքր բիզնեսի կազմակերպում>> դասընթացի, իսկ մնացածը՝ <<Համակարգչային հաշվապահություն>. դասընթացի: 2007-2008թթ. նախատեսված է արհեստագործական ուսուցման ճանապարհով ուսուցանել շուրջ 250 գործազուրկ քաղաքացիների:

283. Տարեցներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրմանը: Վերջին տարիներին այս բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է տարեցների, և հատկապես միայնակ և հաշմանդամ տարեցների կյանքի պայմանների բարելավմանը: Բնագավառում դեռևս առկա են լուծման կարիք ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից են՝

1) տարեցների սոցիալական ապահովության բնագավառի օրենսդրության կատարելագործումը (ռազմավարական ծրագրի մշակում),

2) տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների բարելավումը,

3) տուն-ինտերնատներում սպասարկման որակի բարձրացումը և տուն-ինտերնատների պայմանների բարելավումը,

4) անօթևան մարդկանց օգնելու համար ժամանակավոր կացարանային տեղերի ավելացում,

5) Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանությունը:

284. Ինչպես ողջ հանրապետության, այնպես էլ մարզի մասշտաբով նկատվում է բնակչության ծերացման միտում՝ բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների թվաքանակի ավելացում: Երիտասարդ ընտանիքների արտագաղթը, ծնելիության կտրուկ անկումը հանգեցրեց տարեց բնակչության չափաբաժնի ավելացմանը, որի արդյունքում, սոցիալական և տնտեսական դժվարությունների հետ մեկտեղ, երիտասարդ հասարակությունից դեպի տարեց հասարակություն ժողովրդագրական ցատկի ականատեսը եղանք:

285. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն, Գեղարքունիքի մարզում կենսաթոշակառուների տեսակարար կշիռը բնակչության թվաքանակում ՀՀ այլ մարզերի հետ համեմատած այդքան էլ մեծ չէ շուրջ 15% (տես աղյուսակ 6.4), այնուամենայնիվ այս հանգամանքը չի նվազեցնում ծերերի նկատմամբ տարվող սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը:

Աղյուսակ 6.4. Կենսաթոշակառուների թվաքանակը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի

	2008թ.		2009թ.		2010թ.	
	Ընդամենը	1000 բնակչի հաշվով	Ընդամենը	1000 բնակչի հաշվով	Ընդամենը	1000 բնակչի հաշվով
Հայաստանի Հանրապետություն	540298	168.0	533288	165.7	527496	163.8
Ք. Երևան	181212	164.3	179214	162.4	178049	161.2
Արագածոտն	23132	166.3	22876	164.2	22743	162.8
Արարատ	42903	156.9	42342	154.6	42005	152.9
Արմավիր	40807	146.7	40243	144.4	39698	141.9
Գեղարքունիք	**34.964**	**145.1**	**36.342**	**150.5**	**35.761**	**147.5**
Լոռի	56268	198.2	55218	194.7	54258	191.7
Կոտայք	40303	147.0	39838	145.0	39538	143.5
Շիրակ	51158	181.6	50646	179.9	49977	177.6
Սյունիք	27119	177.2	26696	174.5	26303	172.0
Վայոց Ձոր	11078	198.2	10851	194.5	10665	191.1
Տավուշ	27798	206.8	27127	201.5	26559	197.8

286. Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում տարեցների լիարժեք սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

1) Ծերությունը կյանքի յուրահատուկ կենսաբանական փուլերից է և տարեցների խոցելիությունը օբյեկտիվ է: Նրանք համարվում են բժշկական և սոցիալական ծառայությունների ամենախոշոր սպառողները, սակայն կենսաթոշակների ցածր մակարդակի պատճառով տարեցներն այսօր բնակչության ամենաանպաշտպան խմբերից են:

2) Տարեցներն ավելի զգայուն են հասարակական փոփոխությունների նկատմամբ և դրա համար կրում են սոցիալական, քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական փոփոխությունների ողջ բեռը:

3) Բնակչության այդ կատեգորիային սոցիալական և տնտեսական համակարգերի փոխակերպումները նպաստել են տարեցների, հատկապես միայնակ ծերերի, հասարակությունից օտարմանը, մեկուսացմանը:

287. ,,Տարեցների մատուցվող ծառայություններ,, ծրագրի շրջանակներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերականգնման նպատակով պետական աջակցությամբ Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատին (2004թ. հունվարին նյարդահոգեբուժական տուն-ինտերնատը տրվեց ԱՍՀՆ-ի ենթակայության, իսկ մինչ այդ այն գործում էր մարզպետարանի ենթակայության տակ) կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնի միջոցով խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են ստանում 50 հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ և նրանց ընտանիքի անդամներ:

288. Տարեցներին ծառայությունների տրամադրման հարցում աջակցում են նաև հասարակական կազմակերպությունները: 2006թ.-ին առաջին անգամ մարզպետարանի կողմից 3.8 մլն դրամ է հատկացվել մարզի ՀԿ-ներին՝ տարեցներին տարաբնույթ սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով:

289. ,,Առաքելություն Հայաստան,, ԲՀԿ մարզում իրականացնում է ծերերի և հաշմանդամների սննդապահովման ծրագիր՝ 6 բարեգործական ճաշարանների միջոցով մարզի 5 տարածաշրջանային կենտրոններում, որից 2-ը Սևան քաղաքում: Յուրաքանչյուր ճաշարան սպասարկում է մոտ 100 քաղաքացիների, սակայն 2010-2011 թ.թ.-ին այն կրճատվել է 3-ով՝ չեն գործում Մարտունու, Վարդենիսի և Սևանի մեկ ճաշարանները, այստեղ անհրաժեշտ է պետական և դոնոր հանրության աջակցությունը, որպեսզի վերականգնվի նախկին քանակությունը: 01.06.2011թ. դրությամբ գործում է 3 ճաշարան ՝ օգտվում են 277 ծերեր և հաշմանդամներ:

290. Փախստականների՝ որպես առանձնահատկություն ունեցող սոցիալապես անապահով առանձին խմբի, սոցիալական օժանդակության ծրագրերի անհրաժեշտությունը ամրագրված է նաև ԿԶԾ-ում:

291.Անկախ միգրացիոն զարգացումներից, Գեղարքունիքի մարզում բնակվող փախստականների թվաքանակը գերազանցում է հանրապետության մյուս մարզերի ցուցանիշներին: Բռնագաղթին հաջորդող տարիներին մարզում բնակվում էին շուրջ 35 հազար փախստականներ:

292. 1996-2003թթ.-ի (հուլիսի 1-ի դրությամբ) ընթացքում փախստականների թիվը կրճատվել է ավելի քան 3 անգամ: Նման երևույթը բացատրվում է երկու հիմնական գործոններով. նրանց ինտենսիվ արտագաղթով և նատուրալիզացիայով: Հատկանշական է, որ տարվա ընթացքում փախստականների թիվը փոփոխվում է նաև կապված նրանց սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու փաստի հետ: 2004թ.-ին փախստականների թիվը մարզում կազմել է 11000, 2005-2006թթ.-ին՝ 10400 մարդ, 2010-2011թ.թ.՝ 8800 մարդ:

293. 2005-2007թթ. ընթացքում մարզում փախստական ընտանիքների համար պետբյուջեով բնակարանների գնման վկայագրերով գնվել են 22 բնակարաններ (հաշվառվել են 39 ընտանիքներ, սակայն կառավարության որոշմամբ բնակարանի վկայագրեր տրվել են 22-ին:

294. Այսօր փախստականների առաջ ծառացած են ինչպես բոլոր խոցելի խմբերին բնորոշ, այնպես էլ առանձնահատուկ խնդիրներ:

1) Աշխատատեղերի բացակայությունը. Գործազրկության բարձր մակարդակը բնորոշ է նաև փախստականներին, ինչի պատճառով նրանցից շատերը գտնվում են ծայրաստիճան կարիքի և զրկանքների մեջ:

2) Բնակարանային վիճակը. Չնայած, որ կառավարության և դոնոր հանրության ջանքերով այսօր արդեն իրական առաջընթաց է գրանցվել փախստականների բնակարանային խնդրի լուծման հարցում, այնուամենայնիվ դեռևս կան ընտանիքներ, որոնք ապրում են ժամանակավոր կացարաններում, և ընգրկված չեն առաջնահերթության ծրագրերում (ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 5-ի թիվ 747-Ն որոշման համաձայն հանրապետությունում իրականացվում է բնակարանաշինության առաջնահերթ ծրագիր, որտեղ սահմանվում են, թե փախստականների որ

կատեգորիաներին է տրվում բնակարան): Մարզում բնակվում է մոտ 41 ընտանիք (վարձով, հարազատների ու բարեկամների տանը), որոնք պետական կամ միջազգային որևէ ծրագրերում ընդգրկված չեն:

3) Սոցիալական, կենցաղային տարրական պայմանների անբավարար վիճակ. Փախստականների կենցաղային պայմանները ևս բարվոք չեն:

4) Իրազեկվածության ցածր մակարդակը: Փախստականների խոցելիության և աղքատության հաղթահարման խոչընդոտներից է նաև սոցիալական իրավունքների և իրականացվող աջակցության ծրագրերի վերաբերյալ նրանց իրազեկության ցածր մակարդակը, որոնք պայմանավորված են հեռուստատեսությամբ հաղորդումների սահմանափակ լինելով:

295. Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական ապահովության մասին>> ՀՀ օրենքի և <<Հաշմանդամների սոցիալական ապահովության 2006-2015 թթ. ռազմավարության>> պահանջներից է:

296. Ստորև ներկայացվում է Գեղարքունիքի մարզում բնակվող հաշմանդամների վերաբերյալ վիճակագրությունը (տես աղյուսակ 6.5):

Աղյուսակ 6.5. Գեղարքունիքի մարզում հաշմանդամների թվաքանակը 2008-2011թթ.-ին

(Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Գեղարքունիքի մարզպետարան)

Մարզի տարածաշրջան	Հաշմանդամության	2008թ.	2009թ.	2010թ.
Գավառ	1-ին խումբ	363	335	339
	2-րդ խումբ	2531	2597	2589
	3-րդ խումբ	1379	1580	1601
	հաշմանդամ երեխա	228	197	211
Ճամբարակ	1-ին խումբ	53	78	71
	2-րդ խումբ	583	570	569
	3-րդ խումբ	192	339	343
	հաշմանդամ երեխա	56	48	54
Մարտունի	1-ին խումբ	225	220	223
	2-րդ խումբ	1744	1732	1763
	3-րդ խումբ	1363	1615	1672
	հաշմանդամ երեխա	301	288	314
Սևան	1-ին խումբ	248	208	244
	2-րդ խումբ	1253	1166	1288
	3-խումբ	676	600	786
	հաշմանդամ երեխա	126	101	116

Վարդենիս	1-ին խումբ	157	183	181
	2 խումբ	991	1029	1027
	3-խումբ	707	816	829
	հաշմանդամ երեխա	113	96	97
	Ընդամենը՝	13.289	14.291	14.317

297. Ինչպես վկայում են տվյալները, վերջին տարիներին մարզում զգալի ավելացել է հաշմանդամների թիվը: Ընդ որում, ավելացումը նկատվում է հաշմանդամների բոլոր կատեգորիաներով:

298. Զգալի աճել է հաշմանդամ երեխաների թիվը: Աճի բարձր տեմպերը նկատվում են մարզի բոլոր տարածաշրջաններում: Գավառում, Մարտունիում և Վարդենիսում հաշմանդամ երեխաների թիվն ամենամեծն է:

299. Մարզում բնակվում են շուրջ 1390 զինհաշմանդամներ, որոնցից շուրջ 320-ը ՀՀ սահմանների պաշտպաններ են: Ընդհանուր առմամբ, հաշմանդամների թվաքանակի տեսանկյունից ներկայումս ամենածանրաբեռնված տարածաշրջաններն են Գավառը և Մարտունին, որտեղ բնակվում է մարզի հաշմանդամների կեսից ավելին:

300. ՀՀ ԱՍՀՆ-ի տվյալներով, 2009-10թթ.-ի ընթացքում Գեղարքունիքի մարզի շուրջ 2500 հաշմանդամներ ստացել են տարբեր տեսակի բժշկական, մասնագիտական և սոցիալական օգնություն (տես՝ Աղյուսակ 6.6):

Աղյուսակ 6.6. Վերականգնողական օգնություն ստացած հաշմանդամների թիվը ըստ տարածաշրջանների

(Աղբյուրը՝ ՀՀ ԱՍՀՆ)

Վերականգնողական օգնության տեսակները		Ընդամենը	
		2009թ.	2010թ.
Գավառ	Հենակ	5	1
	Պրոթեզի կոշիկ	8	6
	Սայլակ	5	6
	Կրծքի պրոթեզ	3	2
	Լսողական սարք	15	5
	Ոտքի ապարատ	1	
	Աչքի պրոթեզ	3	
	Ձայնաստեղծ սարք		1
	Սեղմիրան		2
Մարտունի	Պրոթեզի կոշիկ	7	5
	Ձեռնափայտ	7	6
	Հենակ		35
	Սայլակ	6	4
	Լսողական սարք	14	5
	Ձայնաստեղծ սարք	2	2
	Օրթեզի կոշիկ	1	

Վարդենիս	Սեզմիրան	4	2
	Հենակ		6
	Պրոթեզի կոշիկ		
	Օրթեզ	4	2
	Օրթեզի կոշիկ	10	
	Ոտքի պրոթեզ		7
	Լսողական սարք	14	5
	Սայլակ	6	4
Ճամբարակ	Աչքի պրոթեզ	1	
	Հեծանվասայլակ		1
	Քայլակ		1
	Լսողական սարք	7	1
	Օրթոպեդրկ պարագա /ձեռքի և ոտքի/		1
	Օրթեզի կոշիկ	4	5
Սևան	Օրթեզ	2	
	Հենակ	1	5
	Աչքի պրոքթեզ	1	1
	Լսողական սարք	8	18
	Ձայնաստեղծ սարք		1
	Օրթեզի կոշիկ	3	3
	Սեղմիրան		1
	Սայլակ	11	6
	Կրծքագեղձի պրոթեզ	1	1
	Ոտքի պրոթեզ	4	4

301. Այնուամենայնիվ, ներկայիս սոցիալական ապահովության համակարգը դեռևս չի կարողանում լիարժեք բավարարել հաշմանդամների յուրահատուկ պահանջմունքները, որի պատճառով հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը դանդաղ է ընթանում:

302. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է ‘Երեխայի իրավունքների մասին’, ‘Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին’ ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N1745-Ն որոշմամբ հաստատված ‘Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագրի’ հանձայն: Ծրագրի շրջանակներում մատուցվում են մանկատներում և ընտանիքներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքի և դաստիարակության անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներին, մանկատների շրջանավարտներին սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական, խնամքի և դաստիարակության ծառայություններ:

303. Այս գործառույթներն իրականացնելու համար 2006թ.-ին մարզպետարաններում բացվեցին երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ, որոնց միջոցով էլ համակարգվում են երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվող միջոցառումները:

304. Գավառում գործում է մանկատուն, որն ունի 71 սան, ինչպես նաև գործում է պետական հատուկ հանրակրթական դպրոց՝ 75 աշակերտով:

Աղյուսակ 6.7. Տեղեկություններ Գավառի մանկատան երեխաների շարժի մասին 2008թ-ի, 2009թ-ի և 2010թ-ի մինչև հոկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի համար

Թվականը	Երեխաների թիվը 01 հունվարի դրությամբ	Ընդունվել են	Դուրս են գրվել	Կենսաբանական ընտանիք	Այլ հաստատություն	Որդեգրման հանձնված	Դուրս են գրվել 18-ը լրանալուց հետո
2008թ	92	6	14	4	7	3	-
2009թ	84	6	13	3	7	3	-
2010թ	77	15	21	10	7	4	3

305. Աղյուսակ 6.7-ի տվյալները վկայում են, որ 2008թ.-ի համեմատ մանկատան սաների թիվը նվազել է, ինչը մանկատների բեռնաթափման նպատակով իրականացվող միջոցառումների արդյունք է:

306. 2008թ. հունվարից խնամատար ընտանիքի ծրագիրը իրականացվում է արդեն պետական ֆինանսավորմամբ,որը հաջողված է: Առաջարկվում է կապված մանկատների բեռնաթափման հետ ընդլայնել խնամատար ընտանիքի ներդրման գործընթացը:

307. Խնամատարության փորձնական ծրագրի մասին-Ծրագիրը բաղկացած է մի քանի փուլից՝

1/ մարզի բնակչության իրազեկում խնամատարության ինստիտուտի ներդրման մասին.

2/ խնամատար ընտանիքների գրանցում և գնահատում.

3/ խնամատար ծնողների վերապատրաստումներ և աշխատանք երեխաների հետ.

4/ խնամատար ընտանիքների վերջնական ընտրություն և երեխաների համադրումներ.

5/ խնամատար ընտանիքների հետ պայմանագրի կնքում

6/ երեխաների տեղավորման վերաբերյալ որոշումների կայացում և տեղավորումներ.

7/ շարունակական վերահսկողություն.

308. 2008-10թթ. մարզում որդեգրման խնդրանքով դիմում են ներկայացրել 25 ընտանիք, որից 16-ում կատարվել է որդեգրում: ՀՕՖ-ի կողմից 46 ընտանիք վերապատրաստվել է, բայց որպես խնամատար ընտանիք հաշվառվել է 16-ը, իսկ հաշվառված 16 ընտանիքներից 7-ում տեղավորվել է 8 երեխա Գավառի մանկատնից: Բաժնի ստեղծման օրվանից որդեգրվել են 49 երեխաներ, որոնցից 5-ը՝ 2011թ.:

309. Այս ծրագրում կարևորվում է նաև երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացման և համայնքների ներգրավվման սկզբունքը՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման միջոցով:

310. Նշված միջոցառումների իրականացումը մարզում չափազանց կարևոր է, քանի որ 2008-10թթ. մարզում բնակվում է 2256 միակողմանի և 80 երկկողմանի ծնողազուրկ երեխա (տես աղյուսակ 6.8): Ըստ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների դիտարկումների՝ մարզում քիչ չեն նաև սոցիալական տարբեր հիմնախնդիրներ ունեցող երեխաները: Մարզում կան նաև սոցիալական խնդիրներ ունեցող երեխաներ: Ծնողներից շատերն աշխատանք գտնելու նպատակով երկար ժամանակով բացակայում են հանրապետությունից, երեխաներին թողնելով բախտի քմահաճույքին: Երեխաներից շատերը բացակայում են դպրոցից գրենական պիտույքներ, հագուստ, կոշիկ չունենալու պատճառով, շատերն էլ թերսնվածության պատճառով հիվանդանում են: Մարզում հաշվառված են երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, որոնք ունեն բնակարանային խնդիրներ: Հաշվառված են նաև միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաներ: Երեխաների համար չկան ազատ ժամանակն անցկացնելու ժամանցի վայրեր: Անհրաժեշտ է ստեղծել մարզի հինգ տարածաշրջաններում ցերեկային կենտրոններ:

Աղյուսակ 6.8. ՀՀ Գեղարքունիքի մարզի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, ֆիզիկական արատներով ծնված, մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և դժվար դաստիարակվող երեխաների մասին թվային տվյալները ըստ տարածքների 2008-10թթ. (Աղբյուրը՝ Գեղարքունիքի մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժին)

Տարածա շրջան	Միակողմանի ծնողազուրկ երեխաների թիվը	Երկկողմանի ծնողազուրկ երեխաների թիվը	Հաշմանդամ երեխաների թիվը	Իրավախախտ, դժվար դաստիարակվող երեխաների թիվը
Գավառ	320	19	473	6
Սևան	366	3	115	7
Ճամբարակ	163	7	47	2
Վարդենիս	573	16	130	3
Մարտունի	834	35	233	6
Ընդամենը	2256	80	998	24

311. Աղյուսակ 6.8-ի տվյալները վկայում են, որ ծնողազուրկ երեխաների թիվը մարզում բավական բարձր է: Քիչ չեն նաև վարքային խնդիրներ ունեցող երեխաները: Ըստ վերջին տվյալների ՀՀ Գեղարքունիքի մարզում հաշվառված են վարքային խնդիրներ ունեցող 36 անչափահաս, որոնց համար մշակվել են հատուկ միջոցառումների ծրագիր, գնահատվել է նրանց ընտանիքների սոցիալական վիճակը:

312. Մարզի սոցիալական ոլորտի ծրագրերին աջակցում են նաև արտասահմանցի հայ բարերարները: Այսպես, շվեյցարական հիմնադրամը ֆինանսավորեց Գավառի մանկատան գլխավոր մասնաշենքի վերանորոգման, տարածքի բարեկարգման 281,3 հազ ԱՄՆ դոլարի արժողությամբ նախագիծը:

313. Սոցիալական ապահովության համակարգի տարրերը.. Վերոհիշյալ բոլոր խոցելի խմբերի նկատմամբ այսօր պետության կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ: Սոցիալական պաշտպանության համակարգը թե՛ հանրապետության, թե՛ Գեղարքունիքի մարզի կտրվածքով այսօր ներառում է.

1) պետական սոցիալական օժանդակության ծրագրեր, ինչպիսիք են՝ պետական նպաստները (ընտանեկան, ծննդյան միանվագ (50 հազար դրամ, 3 և 4 երեխաների դեպքում՝ 430 հազար դրամ), մինչև 2 տարեկան երեխաների խնամքի և հուղարկավորության նպաստներ), ԽՍՀՄ խնայբանկում ներդրված ավանդների փոխհատուցման և այլ աջակցությունների ուղղված ծրագրերը,

2) սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես բժշկասոցիալական վերականգնման ծրագրեր, տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում սպասարկելու սոցիալական ծրագրեր, տուն-ինտերնատների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների պահպանման ծրագրեր,

3) պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր, որոնք բաղկացած են վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նպաստից, ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստներից,

4) զբաղվածության պետական ծրագրեր՝ գործազրկության նպաստի վճարում, մասնագիտական ուսուցում, աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին, վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում և այլն:

5) պետական կենսաթոշակային համակարգի շրջանակներում վճարվող ապահովագրական և սոցիալական կենսաթոշակները,

6) փոխհատուցում գործատուին, վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում և այլն:

314. Պետական նպաստների տրամադրման բնագավառը կանոնակարգվում է ‘Պետական նպաստների մասին’, ,,Սոցիալական աջակցության մասին,, ՀՀ օրենքներով, ինչպես նաև օրենքների կիրառությունն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներով և իր մեջ ներառում է հետևյալ համակարգը և ծրագրերը.

1) ընտանեկան նպաստի համակարգ,

2) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագիր,

3) երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի ծրագիր:

315. Ընտանեկան նպաստի համակարգը գործում է 1999 թվականից և կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին: Իրականացվող ծրագիրն այս տարիների ընթացքում ենթարկվել է փոփոխությունների, ինչպես ընտանիքների անապահովության գնահատման, ընտանեկան նպաստի չափի որոշման բանաձևերի փոփոխությունների, այնպես էլ համակարգի վարչարարության բարելավման առումով:

316. Սոցիալական օգնության պետական ծրագրերից ամենամեծը աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրն է: Գեղարքունիքի մարզում այդ ծրագրի շահառուների թիվը վերջին տարիներին դանդաղորեն նվազում է (տես աղյուսակ 6.9): 2001թ.-ից 2006թ.-ը նվազումը պայմանավորված է կենսաթոշակների չափի բարձրացմամբ, որի արդյունքում մարզի թոշակառուների որոշակի զանգվածը դուրս է մնացել համակարգից: Իսկ մարզի նպաստառուների 2008-10թթ. համեմատ աճ չի գրանցվել և պահպանվել է հիմնականում պայմանավորված է երեխաների թվի ավելացմամբ՝ ծնելիության աճով :

Աղյուսակ 6.9 . Գեղարքունիքի մարզի ընտանեկան նպաստառուների թվաքանակը 2008-2010թթ.

(Աղբյուրը՝ Գեղարքունիքի մարզպետարան)

	2008թ	2009թ	2010թ
Գավառ	2196	2158	2275
Մարտունի	2765	2636	1815
Սևան	1287	1074	2755
Վարդենիս	1832	1867	1062
Ճամբարակ	5146	4960	5139
Ընդամենը մարզում	**13222**	**12695**	**13046**

317. Ընտանեկան նպաստի համակարգում սկսել է կիրառվել տարբերակված մոտեցում կարիքավորության աստիճանի հիման վրա: Փաստորեն, որքան աղքատ է ընտանիքը, այդքան բարձր է աղքատության ընտանեկան նպաստի չափը: Նպաստառու ընտանիքների կեսից ավելին գյուղական ընտանիքներ են: Սակայն, հաշվի առնելով, որ մարզի բնակչությունը հիմնականում գյուղական է, ավելի հետաքրքիր է դիտարկել նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը առանձին վերցված գյուղական և քաղաքային տնային տնտեսությունների թվում: Այս առումով նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես ավելի մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում՝ նպաստառու է քաղաքային տ/տ-ների 25,3%-ը, մինչդեռ գյուղական տնային տնտեսությունների՝ ընդամենը 16,2%-ը (տես՝ Հայաստանի սոցիալական միտումները, N 05, Տեղեկատվական-վերլուծական պարբերական, 2004, էջ.32): Ընտանեկան նպաստների և այլ սոցիալական օգնության ծրագրերի իրականացման պատասխանատուները սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններն են: Սակայն նրանք հիմնականում գտնվում են նախկին շրջկենտրոններում և տրանսպորտի ոչ լիարժեք աշխատանքի պատճառով, հասու են ոչ բոլորին: Դրանով է մասամբ պայամանավորված այն, որ բնակչության ամենաաղքատ խավերի շրջանում ընտանեկան նպաստների համակարգի մասին տեղեկատվությունը լիարժեք չէ: Այդ հանգամանքը պահանջում է, որ սոցիալական ծառայությունները նաև իրենք բացահայտեն ամենաաղքատներին, այլ ոչ թե ընտրությունը կատարեն միայն նպաստառու դառնալ ցանկացող տնտեսությունների դիմումների հիման վրա: Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները՝ ծառայողական տրանսպորտի բացակայության, համակարգչային և այլ տեխնիկայի հնամաշության, սահմանափակ տեխնիկայի պատճառով, ժամանակակից ծառայություններ մատուցելու բավարար բազա չունեն:

318. Ինչ վերաբերում է ՍԾՏԳ-ների մասնագիտական ներուժին, ապա այս ոլորտում վերջին տարիներին ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀԲ-ի համագործակցության շրջանակներում սոցիալական հետազոտությունների Ազգային ինստիտուտում իրականացվում են սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացներ: 2006-07թթ. մարզից այդ դասընթացներին մասնակցել է 40

մասնագետ, որից 4-ը մարզպետարանի, իսկ 36-ը՝ ՍԾՏԳ-ների աշխատակիցներ: Մինչև 2007թ. տարեվերջ կվերապատրաստվի ևս 7 մասնագետ:

319. Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում աղքատությունը մեղմելու և ժամանակավոր զբաղվածություն ապահովելու նպատակով 2001թ.-ից պետությունն իրականացնում է հասարակական աշխատանքների կազմակերպմանն ուղղված միջոցառումներ: Այդ նպատակով պետբյուջեից 2001-2004 թվականներին տարեկան հատկացվում էր 500 մլն դրամ, 2005 թվականին՝ 600 մլն դրամ, 2006-2009 թվականներին 700 մլն դրամ:

320. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ծրագրով 2006թ-ին հանրապետությունում իրականացվել է 504 ծրագիր՝ 418421 մարդ/օր ծավալով և ընդգրկվել է 9260 մարդ: 2008 թվականին իրականացվել է 439 ծրագիր՝ 264504 մարդ/օր ծավալով, ծրագրում ընդգրկված անձանց թիվը կազմել է 7006՝ նախորդ տարվա 9083-ի փոխարեն, ինչը բացատրվում է ծրագրում ընդգրվածների օրավարձի չափի ավելացմամբ:

321. 2006թ. յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանվել է 1200 դրամի վճար, նախորդ տարվա 1100 դրամի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ ավելացել է գյուղական համայնքների ընդգրկվածությունը (319 ծրագրից դարձել է 330 ծրագիր): 2007թ. յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանվել է 1400 դրամ, իսկ 2008 թվականից՝ 'Նվազագույն ամսական աշխատավարձի մասին' ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի 8 տոկոսի չափով:

Աղյուսակ 6.10. Տեղեկություններ Գեղարքունիքի մարզում իրականացված վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի վերաբերյալ

		2008թ.	2009թ.	2010թ.
1	,,Վարձատրվող հասարակական աշխատանքների ,, ծրագրերի թիվը	28	17	29
2	Հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը	964	487	793
3	Վճարման ենթակա ֆինանսական միջոցների ծավալը (մլն. դրամ)	70.3	47,4	68.9

322. Գեղարքունիքի մարզից մասնակիցների թվի և օգտագործված ֆինանսական միջոցների վերաբերյալ տվյալները (տես Աղյուսակ 6.10) վկայում են, որ մարզը բավական ակտիվ է հասարակական աշխատանքների կազմակերպման գործում:

323. Մարզի սոցիալական ապահովության ոլորտի խնդիրները և նրանց միջև փոխկապվածությունը ներկայացված է գծապատկերում:

Սոցիալական ապահովության ոլորտի խնդիրների ծառը



6.2 Գեղարքունիքի մարզի սոցիալական ապահովության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը 2012-2015թթ-ին

324. Սոցիալական ապահովության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման /2012-2015թ-ին այս առումով անհրաժեշտ կլինի շուրջ 260.0 մլն. դրամ/ , ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

325. Անհրաժեշտ է, որ շարունակվեն ընտանեկան նպաստների ծրագրի և կենսաթոշակային ապահովության համակարգի հետագա կատարելագործման և միանվագ դրամական օգնության վճարների բարձրացման միջոցառումները, որոնք ուղղված են լինելու նաև մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

326. Այս առումով մարզի համար սոցիալական ապահովության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

1) հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,

2)ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տան պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,

3)խնամատար ինստիտուտի ներդրման աշխատանքների շարունակության ապահովում,

4)կյանքի դժվարին իրավիճակներում հայտված երեխաների խնամքի ցերեկային/ընտանեկան կենտրոնների ստեղծումը,

5) փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,

6)սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը,

7)բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծման նպատակով, զբաղվածության մարզային կենտրոնների գործընկերային հարաբերությունների հաստատում պետական և մասնավոր կառույցների հետ, գյուղական բնակավայրերի բնակչության զբաղմունքների բազմազանեցում, ոչ գյուղական ոլորտի ճյուղերի առաջանցիկ զարգացման խրախուսում, և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծում պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ու ուղղությունների մշակման և կիրարկման միջոցով, որոնք կխթանեն արտագաղթի, գործազրկության, ինչպես նաև աղքատության կրճատմանը մարզում: Միաժամանակ, մարզում գյուղատնտեսական վարկերի հասանելիության միջոցով նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը: Գյուղական համայնքների երիտասարդության համար աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտական կրթության հասանելիության և մատչելիության ապահովումը, աշխատատեղերի ստեղծումը,որը կնպաստի նաև արտագաղթի կանխմանը:

327. Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ:

328. Կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը շարունակում է ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն հանդիսանալ, այս պայմաններում ՄԺԾԾ բոլոր երեք տարիների ընթացքում կադրերի վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն: Մասնավորապես, կարևորվում է սոցիալական ծառայությունների, ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական, մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում՝ տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

329.Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ցերեկային/ընտանեկան կենտրոնների ստեղծումը ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական (սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացում) աջակցության ցուցաբերում: Բացի այդ խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման արդյունավետությունը թույլ կտա շարունակելու ծրագիրը և ավելի մեծ թվով երեխաներ տեղավորելու ընտանիքներ: Հաշվի առնելով <<Հայաստանի Հանրապետության քաղաքականության 2011-2015 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքները, ինչպես նաև <<Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը>> ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը մարզի 2012-2015 թվականների զարգացման ծրագրում այդ ուղղությամբ ներառել է հետևյալ միջոցառումները՝

1)Ղեկավարվելով ՀՀ նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով, մարզում ստեղծվել է գենդերային հարցերով մշտական գործող հանձնաժողով:

3) Մշակվել է <<Ընդդեմ գենդերային բռնության>> 2012 թվականի միջոցառումների ծրագիր:
4) Ընտրություններին կին թեկնածուներին աջակցելու նպատակով ձևավորվել են նախաձեռնող խմբեր, կազմակերպվել դասընթաց-սեմինարներ:
5) Կանանց իրավագիտակցության բարձրացման նպատակով կկազմակերպվեն սեմինարներ, նվիրված աշխատանքային օրենսդրության, թրաֆիքինգի կանխարգելմանն:
6) Աջակցում ծանր իրավիճակում հայտնված միայնակ մայրերին:
7) Գենդերային հիմնահարցերին ազգաբնակչությանը իրազեկելու նպատակով՝ կկազմակերպվեն թեմային նվիրված հոդվածների շարք մարզային <<Գեղամա աշխարհ>> ամսաթերթում:

330. Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը կարևոր դեր ունի ՍԾՏԳ-ների գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

331. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը իր մեջ ներառում է՝

1) ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը,

2) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը,

3) կամավորների շարժման (կենտրոնի) զարգացումը:

Աղյուսակ 6.11. ՄԶԾ ծրագրավորվող սոցիալական ապահովության ֆինանսավորումը 2012-2015թ.թ.

(մլն. դրամ)

ՄԶԾ ոլորտը	**Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ.**				
	2012թ.	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**Ընդամենը 2012-2015թթ.**
Սոցիալական պաշտպանություն	50.0	60.0	70.0	80.0	260.0

Ծանոթություն: Սոցիալական ապահովության ոլորտի 2012-2015թթ-ի մարզի զարգացման ծրագրով ծրագրավորվող միջոցառումների ֆինանսավորումը ակնկալվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների ներդրումներից: ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բոլոր ծրագրերը համապետական են և միջնաժամկետ ծախսային ծրագրերով /ՄԺԾԾ/ ըստ մարզերի համապատասխան բաշխում չի կատարվել, ուստի համադրումն անհնարին է:

Սոցիալական ապահովության ոլորտի տրամաբանական հենք

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ **Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Գեղարքունիքի մարզում**	1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճան, % 2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճան, % 3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը, % 4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը, % 5. Սոցիալական ապահովության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, %	Սոցիալական ապահովության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացվ ³Í:
1. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով		
1.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական և ոչ պետական) համակարգչային գույքով, տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, % Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, % Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը, %	
2. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին		
2.1Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	Մարզում դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվ	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը գտնվում է

2.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում	Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվ	կառավարության ուշադրության կենտրոնում:
3. Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերի համար մատուցվող ծառայությունների բազմազանությանը		
3.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամների, ծերերի խնամքը, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր-կազմակերպություններից: Անհրաժեշտ փորձ և հմտություններ ունեցող սոցիալական ծառայություններ մատուցողների (պետական, ոչ կառավարական) առկայություն: Պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության բարձր աստիճան:
3.2 Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը, %	
3.3 Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	
3.4 Հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին և նրանց ծնողների) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում Հաշմանդամ երեխաների առողջա-վերականգնողական ցերեկային կենտրոնի ստեղծում	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը Կենտրոնի ծառայությունից օգտվող հաշմանդամ երեխաների թիվ	

3.5 Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում	Հաշվառված խնամատար ընտանիքների թիվ Խնամատար ընտանիքներ տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը	ՀՀ կառավությունը աջակցում է խնամատար ընտանիքի ինստիտուտի կայացմանը հանրապետությունում:
3.6 Գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման միջոցառումների կազմակերպում	Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը, նրանցից աշխատանքի տեղավորվածներ	Մասնագիտական ուսուցում կազմակերպելու համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից:
4. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում խոցելի բնակչության սոցիալական սպասարկման գործում կավելանան համագործակցությամբ իրականացվող ծրագրերը		
4.1 ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-երի միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդնում :	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր-կազմակերպություններից
4.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում		
4.3 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	Խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն Խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվ	
4.4 Մարզային երիտասարդական կենտրոնի զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	Երիտասարդությունը ցանկանում է հասարակական հիմունքներով ծառայություն մատուցել խոցելի խմբերին:
5. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացում, ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար նաև նրանց աշխատանքի նպատակայնության բարձրացմանը		
5.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումների թիվը	Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել իրենց սոցիալական ծրագրերի մասին տեղեկատվություն:

	Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռ, % Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում, %	
5.2Մարզպետարանի սոցիալական ապահովության վարչության/ ՍԾՏԳ-ների կանոնավոր հաշվետվությունների հրապարակային ներկայացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ		
6.Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում		
6.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում (դասընթացներ, արտասահմանյան փորձ և այլն)	Մատուցվող ոչ նյութական ծառայությունների թիվը Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը	
6.2 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական և ոչ պետական) կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը (մարզպետարան և ՍԾՏԳ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ)	

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

7.1 Իրավիճակը գյուղատնտեսության ոլորտում 2008-2011թթ.

332. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Ազգաբնակչության 67.%-ը կազմում է գյուղական բնակչությունը:

333. Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների միջոցով: 2011թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզում գործում են 63500 գյուղացիական տնտեսություններ: Գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների թիվը մարզում կազմում է 13, գյուղարտադրանքի շուկաների թիվը՝ 4:

334. Գյուղատնտեսական հողատեսքերը ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 59.3%-ը (359.800հա): Աղյուսակ 7.1-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական հողատեսքերի տեսակները և ծավալները: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի 51%--ը կազմում են արոտավայրերը, 11%-ը՝ խոտհարքները, իսկ վարելահողերի ընդհանուր տարածքը կազմում է մոտ 23%:

Աղյուսակ 7.1. ***Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի ցուցանիշները՝ ըստ 2007-2010թթ-ի հաշվեկշռի տվյալների*** (ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի 2007թ.-ի հունվարի 1-ի տվյալներով)

Գեղարքունիքի մարզ	Գյուղատնտ. հողատեսքեր (հա)	Այդ թվում				
		վարելահողեր (հա)	բազմամյա տնկարկներ (հա)	խոտհարքներ (հա)	արոտա-վայրեր (հա)	այլ հողա-տեսքեր (հա)
2007թ.	352800	81075	1113	37979	180822	52923
2010թ.	348264.8	80967.3	15.2	37977.8	177541.3	51763.2
Հողատեսքերի տեսակարար կշիռը 2007թ-ին, %	100	23.2	0.01	10.9	51.0	14.90
Մարզի տեսա-կարար կշիռը հանրապետության մեջ, %	16.5	17.9	4.0	29.8	16.0	13.3

335. 2007թ.-ից սկսած Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքն ունի կայուն աճի դինամիկա: Եթե 2007թ-ին այն կազմում էր 90.0 մլրդ դրամ, ապա 2009թ.-ին՝ 94.6 մլրդ դրամ, իսկ 2010թ.-ին այն հասավ 125.7 մլրդ դրամի, որից բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է շուրջ 85 մլրդ դրամ. իսկ անասնապահությանը՝ 40.2 մլրդ դրամ: Եթե 2007թ.-ին Գեղարքունիքի մարզը արտադրում էր հանրպետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի շուրջ 14%-ը, ապա

2010 թվականին արտադրել է ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի 19.7%-ը: 2010թ.-ին մարզի համախառն արտադրանքի կառուցվածքում բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է շուրջ 68%, որը հետևանք է բուսաբուծական ֆմթերքների գների կտրուկ աճի:

336. Գեղարքունիքի մարզում մշակվող հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկային մշակաբույսեր (43753 հա, որը կազմում է մարզի ընդհանուր ցանքատարածությունների 62.3%), կարտոֆիլ (13000 հա, 18.4%), բանջարեղեն (1668 հա, 2.3%) և կերային մշակաբույսեր (11832 հա, 16.8%): Վերջին տարիներին առաջընթաց է զգացվում նաև հատիկաընդերային մշակաբույսերի մշակությունը Գեղարքունիքի մարզում արմատավորելու գործում (ոլոռ, սիսեռ, ոսպ), որոնք իրենց տնտեսական արդյունավետությամբ 3-4 անգամ գերազանցում են հացահատիկային մշակաբույսերին:

337. Կարտոֆիլի մշակությունը եղել, կա և կմնա մարզում մշակվող ամենաշահութաբեր մշակաբույսը: Ճիշտ է՝ վերջին երկու տարիներին կարտոֆիլի ցանքատարածությունները համեմատաբար կրճատվեցին. 2007թ.-ի 15582 հեկտարից 2010թթ.-ին այն հասավ 12938 հեկտարի: Դա հետևանք էր այն բանի, որ 2008-2009թթ.-ին կարտոֆիլի իրացման խնդիր առաջացավ. 1կգ կարտոֆիլը վաճառվում էր համարյա ինքնարժեքով: սակայն 2010թ.-ին կարտոֆիլի գնի կտրուկ աճի հետևանքով 2011թ.-ին արդեն նկատելի է կարտոֆիլի ցանքատարածությունների ավելացումը՝ 2010թ.-ին այն հասել է շուրջ 13 հազար հեկտարի, որը կազմում է հանրապետության կարտոֆիլի ցանքատարածությունների 45.7%-ը:

338. ***Բուսաբուծություն-*** Աղյուսակ 7.2-ում ներկայացված են մարզի հիմնական մշակաբույսերի (հացահատիկ, կարտոֆիլ և բանջարեղեն) ցանքատարածությունների, բերքատվության և համախառն բերքի ծավալները 2006-2010թթ. համար:

Աղյուսակ 7.2. Գյուղատնտեսական մշակաբույսերի 2006-2010թթ. հիմնական արտադրական ցուցանիշները

Տարեթվեր	Ցանքա-տարա-ծությու-նը, հազ.հա	Բերքա-տվու-թյունը g/հա	Համա-խառն բերքը, հազ.տ	Ցանքա-տարածու-թյունը, հազ.հա	Բերքա-տվու-թյունը g/հա	Համա-խառն բերքը, հազ.տ	Ցանքա-տարածու-թյունը, հազ.հա	Բերքա-տվու-թյունը g/հա	Համա-խառն բերքը, հազ.տ
	Հացահատիկ			Կարտոֆիլ			Բանջարեղեն		
2006թ.	42.0	21.5	90.3	15.1	171.8	260.0	1.8	280.0	50.4
2007թ.	42.0	26.8	112.6	15.5	174.1	271.3.0	2.1	250	50.0
2008թ.	42.4	27.0	114.8	15.5	178.3	277.9	2.0	271	56.5
2009թ.	42.1	26.4	111.0	14.7	172.5	254.3	1.6	309.5	51.3
2010թ.	43.7	24.9	108.9	12.9	180.1	233.0	1.6	309.1	51.5

339. Աղյուսակից երևում է, որ վերջին տարիներին կայունացել է հացահատիկի համախառն արտադրությունը (շուրջ 110 հազար տոննա), մեկ հեկտարի բերքատվության ցուցանիշը կազմելով 25-27 ցենտներ: Գեղարքունիքի մարզում է գտնվում ՀՀ հացահատիկի ցանքատարածությունների 27.4%-ը (43753 հա): Մարզում է արտադրվում ՀՀ-ում արտադրվող հացահատիկի 33.7%-ը (108.9 հազար տոննա):

340. Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետության կարտոֆիլ արտադրող կարևոր տարածաշրջաններից մեկը: Վերջին երկու տարիներին կարտոֆիլի ցանքատարածությունները կրճատվեցին, որը հետևանք էր կարտոֆիլի իրացման ցածր գների: Սակայն կարտոֆիլի մշակության ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ (սորտաթարմացում,ոռոգում,պարարտանյութերի օպտիմալ չափաքանակի կիրառում և վնասատուների դեմ արդյունավետ պայքար) 1 հեկտարի միջին բերքատվությունը 2006թ.-ի 171g.-ից 2010 թվականին հասավ 181g.-ի: 2010թ.-ին մարզում արտադրվել է 233 հազար տոննա կարտոֆիլ կամ հանրապետությունում արտադրված կարտոֆիլի 48.1%-ը:

341. Զգալի առաջընթաց կա նաև բանջարանոցային մշակաբույսերի արտադրության և բազմամյա կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդարձակման ուղղությամբ:

342. Սևանա լիճը գոտևորող անտառներում չիչխանի մեծ պաշարներ կան: Սակայն ոչ մի կերպ մարզում չի կառուցվում չիչխանի վերամշակման արտադրամասեր, մինչդեռ այս բնագավառում կարելի է օգտագործել մեծ թվով աշխատուժ, ստանալ արժեքավոր հյութ և բուժիչ յուղ:

343. Աղյուսակ 7.3-ում ներկայացված են մարզի հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններն ըստ տարածաշրջանների: Վերջին տարիներին մարզում բարձրացել է վարելահողերի օգտագործման արդյունավետությունը: Եթե 5-6 տարի առաջ չէր մշակվում շուրջ 20 հազար հեկտար վարելահող, ապա 2010թ.-ին չի մշակվում 9-10 հազար հեկտար, որի պատճառը գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակությունն է: Բացի դա, դանդաղ է թարմացվում գյուղատնտեսական տեխնիկայի համակազմը: 1998-2010թթ.-ի ընթացքում թարմացվել է տրակտորների արտադրանքի 18-25%):

Աղյուսակ 7.3. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքն ըստ մարզի տարածաշրջանների, 2010թ.

Մշակաբույսերի անվանումը	**Գավառ (հա)**	**Վարդենիս (հա)**	**Մարտունի (հա)**	**Ճամբարակ (հա)**	**Սևան (հա)**	**Ընդամենը(հա)**	**Տեսակարար կշիռը մարզում (%)**
Հացահատիկ	8600	20631	10715	1200	2607	43753	62.3
Կարտոֆիլ	3650	4258	3850	570	610	12938	18.4
Բանջարեղեն	295	323	891	78	81	1668	2.4
Կերային բույսեր	1620	4750	2308	350	2804	11832	16.9
Ընդամենը	14165	29962	17764	2198	6102	70196	100

344. Մարզի 81 հազար հեկտար վարելահողերը բաժանված են 64 հազար մանր գյուղացիական տնտեսությունների մեջ, որոնց մշակության արդյունավետությունը ցածր է: Հողի, գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցման գործում կարևոր հիմնախնդիր է հողերի կամավոր միավորումը և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը: 2010թ.-ի ընթացքում մարզի տարբեր տարածաշրջաններում կազմակերպվել են շուրջ 10 կոոպերատիվներ, որոնք արդյունավետ գործունեություն են ծավալում:

345. 2007թ. ՀՀ պետբյուջեի հաշվին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մարզին անվճար հատկացրեց 120 տոննա գարնանացան գարու բավական բարձր պոտենցիալ ունեցող սերմ, որի ցանքերի բերքատվությունը կազմեց 45-55 ցենտներ:

346. Մարզպետարանի գյուղատնտեսության վարչությունը նպատակահարմար է գտնում յուրաքանչյուր տարածաշրջանում ունենալ կազմակերպված սերմնաբուծական տնտեսություններ, որպեսզի համայնքների գյուղացիական տնտեսությունները առանց լուրջ դժվարությունների գնեն որակյալ սերմեր, ստանան բարձր բերք, որը լուրջ խթան կհանդիսանա աղքատության նվազեցման գործում իրականացվող ռազմավարության ճանապարհին:

347. Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում, որտեղ գրեթե ամեն տարի անպակաս են տարերային աղետները: Ցրտահարություն, կարկտահարություն, տևական երաշտ, հեղեղումներ, ահա այն ոչ լրիվ ցանկը, որոնց հետևանքով գրեթե ամեն տարի մարզի ազգաբնակչությունը տուժում է: Հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում ապահովագրական համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը: Ստորև ներկայացվում են ապահովագրական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը փաստող որոշ տվյալներ 2008-20010թթ.-ի համար:

1) ՀՀ Գեղարքունիքի մարզում 2009թ.-ին տեղի ունեցած ցրտահարության և կարկտահարության հետևանքով մարզի գյուղացիական տնտեսություններին պատճառվել է շուրջ445.0 մլն դրամի վնաս:

2) 2009թ.-ի տևական երաշտի հետևանքով մարզի համայնքները կրել են գրեթե240 մլն Ադրամի հասնող նյութական վնաս:

348. Այդ ամենը հրամայաբար թելադրում են մարզում տեղադրել հակակարկտային կայանքներ և ապահովագրական համակարգ:

349. Մարզի գյուղացիական տնտեսություններին գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2008--2009թ.-ին ,,հողօգտագործողներին պետական աջակցություն'' ծրագրի շրջանակներում իրականացվեց հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների սուբսիդացիա,յուրաքանչյուր հեկտարին տրամադրելով 35000 դրամ գումար: 2009թ մարզի համայնքներին տրամադրվեց շուրջ 1 մլրդ. դրամ գումար:

Ներդիր 1. Ներդրումները բուսաբուծության ճյուղում 2009-2010թթ.-ի ընթացքում

Ստորև ներկայացվում են բուսաբուծության ճյուղում 2009-2010թթ.-ին իրականացված աշխատանքները և ֆինանսավորման աղբյուրները

<u>ՀՀ կառավարություն.</u>

- Բնական աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին օգնության կարգով տրամադրվել է 317 տոննա աշնանացան ցորենի և 465 տոննա գարնանացան գարու սերմացու.):
- Իրականացվել են 2,580 տոննա ազոտական պարարտանյութերի և 5 տոննա թունաքիմիկատների ներկրման աշխատանքներ: :

<u>ՄԶՆ.</u>

- 2009-2010թթ. մարզում իրականացվել է 120 մլն դրամի կարտոֆիլի տնկանյութի սորտաթարմացում:

350. Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածություն - Մարզի բուսաբուծության զարգացման համար շատ կարևոր է նաև գյուղատնտեսական մեքենաների և գործիքների հետևողական թարմացումը: Գյուղտեխնիկայի հավաքակազմը մարզում բավականին հնացած է:

351. Մարզի համայնքները ունեն գյուղացիական մեքենաների և գործիքների ապահովվածության միջին մակարդակ: Թեև տարեկան միջին հաշվով մարզ է ներկրվում 18-20 միավոր տեխնիկա, սակայն համայնքների գերակշռող մասը հացահատիկահավաք կոմբայնների (Ճամբարակի տարածաշրջան), անիվավոր, թրթուրավոր տրակտորների, խոտհնձիչների և հակավորող մեխանիզմների խիստ կարիք ունի: Մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, դրա տեխնիկական վիճակի և տեխնիկայով գյուղացիական տնտեսությունների ապահովվածության վերաբերյալ 2003թ. և 2006թ.-ի համեմատական տվյալները ներկայացված են Աղյուսակ 7.4-ում:

Աղյուսակ 7.4. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը, տեխնիկական վիճակը և գյուղտեխնիկայով գյուղացիական տնտեսությունների ապահովվածությունը

	2007թ.-ի հունվարի 1-ի դրությամբ			**2010թ.-ի հունվարի 1-ի դրությամբ**		
	Առկա քանակը,միավոր	**Սարքինության մակարդակը %**	**100 տնտեսության հաշվով ապահովվածությունը %**	**Առկա քանակը, միավոր**	**Սարքինության մակարդակը%**	**100 տնտեսության հաշվով ապահովվածությունը %**
Տրակտորներ	2900	60	4.43	2648	85.4	4.2
Բեռնատար ավտոմեքենաներ	2100	60	3.2	2734	75.7	3.1
Հացահատիկահավաք կոմբայններ	200	80	0.3	295	91.3	0.5
Տրակտորային կցասայլեր	400	70	0.6	844	94.4	1.3
Տրակտորային խոտհնձիչներ	290	90	0.44	304	88.2	0.47
Հատիկազտիչ մեքենաներ	50	70	0.08	78	76.9	0.12
Տրակտորային շարքացաններ	260	80	0.4	320	92.2	0.5
Տրակտորային գութաններ	520	90	0.79	431	71.7	0.67
Կուլտիվատորներ	60	80	0.09	206	92.7	0.3
Հավաքիչ-մամլիչներ	370	70	0.56	257	90.3	0.4

352. Ընդհանուր առմամբ, տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը հիմնականում գերազանցում է 20 տարվա սահմանը, առկա տեխնիկան իր հզորություններով չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին: Այս բնագավառում առաջնահերթ խնդիր է

տեխնիկայով ապահովվածության մակարդակի և տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացումը:

353. Վերջին տարիներին ՀՀ կառավարության և Գյուղատնտեսության նախարարության կողմից գործնական օգնություն է ցուցաբերվում մարզին գյուղտեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Այս գործընթացն իրականացվում է մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհների հաշվին: Աղյուսակ 7.5-ում ներկայացված է 2011թ. ընթացքում մարզ ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի քանակը՝ ըստ համայնքների:

Աղյուսակ 7.5. 2011թ. ՀՀ Գեղարքունիքի մարզ ներկրված գյուղատնտեսական մեքենաները ըստ համայնքների;

Համայնք	**Անիվավոր տրակտոր**
Լիճք	1
Գեզիովիտ	1
Գանձակ	1
Սարուխան	1
Ախպրաձոր	1
Շորժա	1
Վարդաձոր	1
Ավազան	1
Վահան	1
Արծվաշեն	2
Ընդամենը	**11**

354. ***Ոռոգման համակարգ*** - ՀՀ Գեղարքունիքի մարզում մինչև հողերի սեփականաշնորհումը ոռոգելի հողերի տարածքը կազմում էր 23.0 հազար հեկտար: Կապված 2008-2010թթ-ի տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից կատարված ներդրումների հաշվին ոռոգելի հողերը 8.0 հազար հեկտարից ավելացել են 1230 հեկտարով և կազմում են 9730 հեկտար:

355. Մարզպետարանի ստեղծման օրվանից /1996թ./ միշտ աշխատանքներ է տարվել ոռոգելի հողատարածությունների ընդարձակման ուղղությամբ ,որը հնարավոր է իրականացնելու նոր խորքային հորերի հորատմամբ, ոռոգման ցանցերի և նոր պոմպակայանների կառուցմամբ, ինչպես նաև չգործող խորքային հորերի վերանորոգմամբ, ինքնահոս ջրատարների նորոգմամբ և այլն:

356. Մարզի տարածաշրջաններում ոռոգումը կազմակերպվում է մարզի թվով երեք ՋՕԸ-ների միջոցով, դրանք են <<Գավառ>> ՋՕԸ–ն, որը սպասարկում է Գավառի ամբողջ տարածաշրջանը, <<Մարտունի>> ՋՕԸ–ն, որը սպասարկում է Մարտունու ամբողջ տարածաշրջանը և <<Վարդենիս>> ՋՕԸ–ն, որը սպասարկում է Վարդենիսի ամբողջ տարածաշրջանը: Նշենք որ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումը համեմատաբար լավ է կատարվում Գավառի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում՝ ինչը չի կարելի ասել Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների համար: Այդ իսկ տեսանկյունից, ինչպես գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, այնպես էլ համախառն արտադրության առումով այդ տարածաշրջանները համեմատաբար ցածր արդյունքներ են ապահովում: Ի դեպ,

կարտոֆիլի և բանջարեղենի ցանքատարածությունների մեծ մասը մարզում մշակվում է անջրդի հողատարածությունների վրա / 8000-8500հա/:

357. <<Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրով 2009-2010 թթ.–ին հիմնանորոգվել է Մասրիկի ջրանցքը՝ 380,0 միլիոն դրամ արժողությամբ, որի շնորհիվ ոռոգելի հողատարածությունները 2011թ. կավելանան 400 հա-ով: Մարտունու տարածաշրջանում << Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրով իրականացվել է Զոլաքարի պոմպակայանի վերակառուցում՝ 1,2490 միլիարդ դրամ արժողությամբ, որի շնորհիվ ոռոգելի հողատարածությունները ավելացել են 350 հա-ով: Վերակառուցվել է Մարտունու պոմպակայանը <<Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրով, որի արժեքը կազմում է 886.6 միլիոն դրամ՝ ոռոգելի հողատարածությունները ավելացել են 480հա-ով:

358. Մարզումի տարածաշրջանների համայնքներում կանոնավոր ոռոգում կատարվում է Գավառի, Մարտունու և Վարդենիսի ՋՕԸ-ների միջոցով: 2010թ-ին օրինակ <<Գավառ>> ՋՕԸ-ն տարածաշրջանի ազգաբնակչությանը մատակարարել է 832.0 հազար մետր խորանարդ ջուր, հասույթը կազմել է 9152,0 հազար դրամ, որը ամբողջովին գանձվել է: Ոռոգման լայնածավալ աշխատանքներ է կատարել <<Մարտունի>> ՋՕԸ–ն, այստեղ ոռոգման սեզոնում ազգաբնակչությանը մատակարարել է 2930,0 հազար մետր խորանարդ ջուր, հասույթը կազմել է 32230,0 միլիոն դրամ, գանձվել է 25100,0 միլիոն դրամը / 77,8% /: <<Վարդենիս>> ՋՕԸ–ն ոռոգման սեզոնում ազգաբնակչությանը մատակարարել է 1062,0 հազար մետր խորանարդ ջուր, հասույթը կազմել է 11682,0 միլիոն դրամ, գանձվել է 9000,0 միլիոն դրամը /77 % /:

359. 2008-2010թթ-ին Գեղարքունիքի մարզում /հիմնականում մայիս ամսվա ընթացքում/ պարբերաբար տեղի ունեցած հեղեղումների հետևանքով զգալի վնասներ են հասցվել վարելահողերին և բնակելի շինություններին: Մեծ չափերի վնասներ են հասցվել Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Կարմիրգյուղ, Գանձակ, Գավառ քաղաքի Հացառատ և Արծվաքար թաղամասեր, Ն. Գետաշեն, Դրախտիկ, Մ. Մասրիկ, Գեհովիտ համայնքներին:

360. Մարզի համայնքներում կատարվել են երրորդ կարգի ջրանցքների վերականգնում 562.7միլիոն դրամ ընդհանուր արժեքով:

361. Երրորդ կարգի ջրանցքների վերականգման ցանկում ընդգրկվել են մարզի թվով 10-ը համայնքներ /Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գեղհովիտ, Կարճաղբյուր, Խաչաղբյուր, Ծովակ, Ակունք, Լուսակունք և Մեծ Մասրիկ/, որոնք ամբողջովին կատարել են իրենց կողմից հասանելիք 15 % համաֆինանսավորումը: Նշված համայնքներում աշխատանքներն ավարտվել են 2011թ. օգոստոսի 31-ի դրությամբ:

362. ***Անասնաբուծություն*** - Գեղարքունիքի մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնա և մսամթերքի արտադրությունն է: Աղյուսակ 7.6-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը և անասնապահական մթերքի արտադրության համեմատական ծավալները 2007-2010թթ-ի տվյալներով: Վերջին տարիներին չնայած խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը պակասել է, սակայն բարձրացել է կենդարիների մթերատվությունը, որը հետևանք է կենդանիների ցեղի բարելավման, կերակրման ու խնամքի նոր տեխնալոգիաների կիրառման: Օրինակ, եթե 2007թ. 1 կովի միջին կաթնատվությունը կազմում էր 1943կգ, ապա 2010թ .այն կազմել է 2243կգ: Նույնը կարելի է ասել կենդանի քաշով իրացված մսի վերաբերյալեկ գլուխ խոշորի հաշվով եթե 2007թ-ին կազմում էր

172կգ, ապա 2010թ-ին այն կազմեց 216կգ: 2011թ-ին 2010թ-ի համեմատությամբ անասնագլխաքանակը ավելացել է:

Աղյուսակ 7.6. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ և անասնապահական մթերքի արտադրության ծավալները, 2007 - 2010 թթ. (***Աղբյուր՝*** Գեղարքունիքի վիճակագրական վարչությունից)

	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	Այդ թվում՝ կովեր	խոզեր	ոչխարներ և այծեր	Իրացված միս կենդանի քաշով, հազ.տ.	Կաթ, հազ.տ.	Ձու (մլն հատ)
2007թ.	110667	57308	13159	106092	19.1	114	46.6
2008թ.	111357	59863	7629	105779	19.7	117.5	73.1
2009թ.	104110	53218	6778	99877	21.7	123.5	60.5
2010թ.	101910	50617	8416	85242	21.5	112.4	68.3
2011թ.	95880	51871	8541	90822			

363. Գեղարքունիքի մարզը մասնագիտացված է կաթնա- և մսամթերային անասնապահության ոլորտում: Մարզի անասնագլխաքանակի տեսակարար կշիռը հանրապետության մեջ միջինում կազմում է 16-189%: Մարզի թվով 5 տարածաշրջաններում գործում են կաթի ընդունման 35 կետեր, որտեղ ընդունվում է գյուղացիական տնտեսություններում արտադրված կաթը: Մի շարք մասնագիտացված պանրագործարաններում, հարմարեցված արտադրամասերում արտադրվում է բարձրորակ «Լոռի», «Զանախ» պանիրները, որոնց պահանջարկը հանրապետության շուկաներում բավականին բարձր է: Սակայն կաթի իրացումից գյուղացիական տնտեսությունները շատ քիչ են օգտվում, քանի որ կաթի 1 լիտրը ընդունվում է120-130 դրամով, մինչդեռ մեկ լիտր հանքային ջրի արժեքը 250 դրամ է:

364. Նախկին խոշոր տնտեսությունների բազայի վրա մարզում առկա են թվով 24 անասնապահական ֆերմերային տնտեսություններ, որոնց ապրանքայնությունը բավականին բարձր է, դրանք երբեմն պետությունից ստանում են օժանդակություն: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը նրանց հատկացնում է սերմեր, պարարտանյութեր, գյուղատնտեսական տեխնիկա (համապատասխան բացթողման գներով):

365. Վերջին տարիներին մարզի տարածաշրջաններում լայն թափ են ստացել նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը: Մարզի վիճակագրական տվյալներով թռչունների գլխաքանակը արդեն հասնում է 230 հազարի իսկ մեղվաընտանիքներինը՝ 36 հազարի: Արդեն պատշաճ ուշադրություն է դարձվում հատկապես այծաբուծությանը: Այս ճյուղի զարգացման արդյունքում արդյունավետ կօգտագործվեն հեռագնա և դժվարամատչելի արոտավայրերը:

366. Մարզում անասնակերի բազայի հետ կապված բոլոր խնդիրները լուծված են: Տարեկան կուտակվում է 300-400 հազար տոննա բարձրորակ խոտ, անասնապահական խոշոր տնտեսություններում բավական ուշադրություն է դարձվում նաև հյութալի կերերի արտադրությանը:

Ներդիր 2. Ներդրումներն անասնաբուծության ճյուղում

- «Մարզում /պետպատվերի շրջանակներում/ կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ

ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր ու վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ, որոնց անցկացման համար պետբյուջեից հատկացվում են որոշակի ֆինանսական միջոցներ՝ համապատասխան պատվաստուկներ և ախտորոշիչ պարագաներ ձեռք բերելու համար:

- Մարզի համայնքներում պետպատվերի շրջանակում ներառված կենդանիների հիվանդությունների նկատմամբ անասնաբուժական սպասարկման մատուցումն իրականացվում է եռակողմ պայմանագրի հիման վրա /ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ «Պատվիրատու», ՀՀ մարզերի տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար՝ «Պատվիրակալ» և համայնքը սպասարկող անասնաբուժական մասնագետ՝ «Կատարող»:
- 2010թ. մարզի գյուղկենդանիներն ընդգրկվելով կանխարգելիչ հակաանասնահամաճարակային միջոցառումների մեջ՝ բազմիցս ենթարկվել են պատվաստումների ու ախտորոշիչ հետազոտումների, և պլանային առաջադրանքի կատարողականը կազմել է 102.%:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1898-Ն որոշմամբ անասնաբուժական պետական տեսչությունը վերակազմավորվել է «սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության»՝ իր կառուցվածքային ստորաբաժանումով և տարածքային մարմիններով:
- Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության Գեղարքունիքի մարզային կենտրոնի կողմից 2010 թվականի ընթացքում իրականացվել է սննդամթերքի արտադրության, մշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահպանման, իրացման ժամանակ անվտանգությանը ներկայացվող պահանջների ապահովման, կենդանական ծագման մթերքների և հումքի արտադրության, վերամշակման, փոխադրման, պահպանման և իրացման ժամանակ անասնաբուժասանիտարական պահանջների ապահովման նկատմամբ վերահսկողություն:
- 2010 թվականին բացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 50 համաձայնագիր՝ մարզի տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը ստուգելու համար: Հայտնաբերված խախտումների դիմաց նշանակվել են տուգանքներ: Արդյունքում պետբյուջե է մուտք արվել 2340 հազ.դրամ:

367. Անասնաբուժությունը - 2010թ.-ի սկզբներից թեև մարզում կատարվել են անասնաբուժական հակահամաճարակային բոլոր միջոցառումները, սակայն համայնքներում արձանագրվեցին «Դաբաղ» հիվանդությունները:

368. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին անվճար հատկացվեցին բուժանյութեր, պատվաստանյութեր և ախտահանիչներ:

369. Դաբաղ հիվանդությոընը կանխելու համար մարզում տեղադրվեցին կարանտին կետեր, հսկողություն սահմանվեց կենդանիների շարժի, սպանդի, շուկաներում մսի իրացման վրա:

370. Ընթացիկ տարում «Դաբաղ» հիվանդության դեմ կատարվել են պատվաստումներ 172.0 հազար գլուխ խոշոր և 13.8 հազար գլուխ մանր եղջերավոր անասուններ: Մինչև տարեվերջ կպատվաստվեն ևս 100.0 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուններ: Մարզում այժմ արդեն կանխվել են 2010թ.-ի ամռան

ընթացքում արձանագրված համաճարակային հիվանդությունները: Բուժ-կանխարգելիչ աշխատանքները բոլոր տարածաշրջաններում արդեն ցանկալի արդյունք են տվել:

Ներդիր 3. Ներդրումներն անասնաբուժության գծով

ՀՀ Կառավարություն.

- 2010թ.-ին ՀՀ պետբյուջեի հաշվին մարզի անասնաբուժության ոլորտում ներդրվել է շուրջ 220 հազ. ԱՄՆ դոլար: Նորոգվել և կահավորվել է անասնաբուժական կենտրոնի շենքը համայնքների անասնաբույժներին հատկացվել է թվով 52 հատ սառնարան, զգալի միջոցներ են ներդրվել պատվաստանյութերի, բուժանյութերի և ախտահանիչ նյութերի ձեռքբերման համար:
- 2009-2010թթ. պետական բյուջեի շրջանակում կատարվել է. խոշոր եղջերավոր անասունների 1,032 հազար պատվաստում (5 տեսակի հիվանդության դեմ), մանր եղջերավոր անասունների 217հազար պատվաստում (երկու տիպի հիվանդության դեմ) և թռչունների 286 հազար պատվաստում:
- «Համայնքը սպասարկող անասնաբուժական մասնագետներին հատկացվել է 60 հատ կենցաղային սառնարան
- «ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալության փոքր և միջին ձեռնարկությունների շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում թռչնագրիպ հիվանդության դաշտային ախտորոշում» բաղադրիչով սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության Գեղարքունիքի մարզային կենտրոնին և համայնքները սպասարկող անասնաբուժական մասնագետներին է հանձնվել անհրաժեշտ պարագաներ պարունակող /արտահագուստ, երկարաճիտ կոշիկներ, ջերմաճամպրուկ, ներարկիչներ, ձեռնոցներ, ախտահանիչ նյութ, դույլ, խոզանակ, մկրատ, լանցետ և այլն/ թվով 110 անասնաբուժական հավաքածու»:
- ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսվում է մարզի «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի <<շենք-շինությունների հիմնանորոգման միջոցով» ծրագրի շրջանակներում 2010թ. հիմնանորոգվել են Ճամբարակի , Սևանի և Վարդենիսի տարածաշրջանների մասնաճյուղերի շենքերը:
- «2009-2011թթ. ՄԺԾԾ-ում նախատեսվել է 2011 թվականին հիմնանորոգել մարզի Մարտունու տարածաշրջանի մասնաճյուղի շենքը»: «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի

371. Գյուղատնտեսական մթերքների իրացումը և ապրանքայնության մակարդակը **-**Գյուղատնտեսության կայուն զարգացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և վերարտադրության ապահովման համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով: Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է գյուղացիական տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակության կամ ծառայությունների դիմաց բնամթերքով տրված գյուղատնտեսական մթերքների ծավալների հանրագումարը:

372. Աղյուսակ 7.7-ում ներկայացված է մարզում վերջին տարիներին գյուղատնտեսական արտադրանքի իրացման տոկոսի աստիճանական աճը, որը վկայում է Գեղարքունիքի մարզի որոշ գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության բարձր մակարդակը հանրապետության միջինի համեմատ:

Աղյուսակ 7.7. Իրացված գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժինը
(Հունվարի 1-ի դրությամբ, բոլոր տարիների համար)

Գյուղ. մթերքների անվանումը	**Ապրանքայնության մակարդակը, %**			
	Գեղարքունիքի մարզում			**ՀՀ-ում**
	2008	*2009*	*2010*	*2010*
Հացահատիկ	23.2	16.2	19.0	28.1
Կարտոֆիլ	44.5	42.7	37.7	43.5
Բանջարեղեն	30.1	46.6	39.6	75.9
Պտուղ	13.2	10.5	4.5	64.2
Միս	81.4	56.5	55.3	84.9
Կաթ	44.3	36.2	29.2	53.0
Ձու	56.7	30.8	33.6	55.5
Բուրդ	55.0	49.8	45.7	56.1
Մեղր	50.7	38.4	38.4	61.9

373. ***Գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի օգտագործումը և գյուղատնտեսների մասնագիտական կարողությունները -*** Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսությունն ապահովված է անհրաժեշտ հմտություններ ունեցող աշխատուժով: Միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին ընկնող աշխատունակ (18-60 տարեկան) անդամների թիվը կազմում է 2.7, հանրապետության միջինի՝ 2.9-ի դիմաց: Այնուամենանիվ, համայնքներում առկա աշխատուժը գյուղատնտեսության ոլորտում լիարժեք չի օգտագործվում: Գյուղացիական տնտեսություններում աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման մարզային ցուցանիշը կազմում է 0.45, որը զգալիորեն ցածր է հանրապետության միջինից (0.54):

374. Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության զարգացման գործում շատ կարևոր է գյուղատնտեսների մասնագիտական կարողությունների բարելավումը, ֆերմերների շրջանում խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը: Այդ ծրագրի ռազմավարությունը ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը.

1) Մարզային ուսուցողա-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել դասընթացներ գյուղմթերքների արտադրություն և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ:

2) Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի, արմատավորման ուղղությամբ:

3) Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ:

4) Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, գյուղատնտեսությանը վերաբերվող մասնագիտական աշխատանքների մասին:

375. Այս ուղղությամբ մարզին զգալի օգնություն է ցուցաբերում գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնը (ԳԱՄԿ), որը տարեկան միջին հաշվով իրականացրել է տարբեր թեմաներով 58802սեմինար մարզի 92 համայնքներում, որոնց մասնակցել են 42-43 հազար մարդ:

376. ***Գյուղատնտեսության վարկավորումը -*** Գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրական գործընթացում ունեն շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն: Բացի այդ, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարողները հաճախ ունեն խոշոր ներդրումների անհրաժեշտություն: Վերջիններիս ապահովման հիմնական ձևը վարկավորումն է, որն իրականացվում է առևտրային բանկերի, միկրովարկավորման կազմակերպությունների միջոցով:

377. Մարզի գյուղատնտեսության ոլորտում վարկավորումն իրականացվել է «Գյուղատնտեսության բարեփոխումներին աջակցություն» (ՀԲ) և «Գյուղատնտեսության ծառայություններ» (ԳԶՄՀ) վարկային ծրագրերի շրջանակներում՝ կարճաժամկետ և միջնաժամկետ վարկավորմամբ: Վարկավորումը իրականացվել է առևտրային բանկերի միջոցով, մրցույթային կարգով՝ 12-18% տոկոսադրույքով: Այս ծրագրերի շրջանակներում Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ոլորտին, շրջանառու ֆոնդի հետ միասին, տրամադրվել է թվով 1010 վարկ՝ 915. հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:

Ներդիր 4. Մարզում գործող վարկատու կազմակերպությունները

Ստորև ներկայացվում են այն կառույցները, որոնք տրամադրում են վարկեր գյուղատնտեսական արտադրությամբ կամ գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

- *Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ* - ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին նպատակային վարկեր են տրամադրում Գավառի, Սևանի , Մարտունո ևև Վարդենիսի համանուն բանկային ստորաբաժանումները: 2010թ.-ին ընդհանուր առմամբ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են թվով 7240 վարկ, 2.350.0 մլն.դրամ ընդհանուր գումարով:
- Մարզի գյուղատնտեսության ոլորտին զգալիորեն օժանդակում է նաև «Արեգակ» վարկային համակարգը՝ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով: 2009-2010թթ.-ին «Արեգակ» ծրագրով վարկ է ստացել 9160 մարդ, հատկացվել է շուրջ 45.7 մլն դրամ:

7.2. Գյուղատնտեսության ոլորտի նպատակները և ռազմավարական ուղղությունները

378. Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության և անասնապահության ճյուղերի հետևողական ինտենսիվացման շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, որը կբերի գյուղատնտեսական տնտեսությունների եկամուտների աճին և աղքատության կրճատմանը մարզի գյուղական համայնքներում: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

1) Հետևողական և արդյունավետ կերպով օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով:

2) Բուսաբուծական մթերքների, հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի, արտադրության ծավալների ավելացում, ապրանքայնության մակարդակի բարձրացում, հատկապես կարտոֆիլի արտահանման ծավալների էական ընդլայնում՝ անհրաժեշտ քանակությամբ կարտոֆիլի բարձր վերարտադրության տնկանյութի, հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմերի ներկրման, ինչպես նաև ոռոգման ջրի, հանքային և օրգանական պարարտանյութերի արդյունավետ օգտագործման միջոցով:

3) Բարելավել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ կառուցել նոր և վերանորոգել առկա ջրամբարները, պոմպակայանները, ջրանցքները, բարելավել ոռոգման ներտնտեսային համակարգը և վերացնել ջրօգտագործման ասպարեզում առկա թերություններն ու բացթողումները:

4) Անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքի որակը, արտադրության արդյունավետությունը և ապրանքայնության մակարդակը:

5) Արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները:

6) Պատշաճ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, աջակցելով տարածաշրջաններում մասնավոր սերմնաբուծական կայուն տնտեսությունների ստեղծմանը:

7) Յուրաքանչյուր տարածաշրջանում ստեղծել գյուղատնտեսական մթերքների ընդունման մեծածախ շուկա, դրանք կահավորելով պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներով;

8) Գյուղական համայնքներում հիմնադրել գյուղատնտեսական մթերքների վերամշակման կառույցներ:

9) Աջակցել մասնագիտացված սերմնաբուծական տնտեսությունների (մասնավորապես կարտոֆիլի և հացահատիկի) ձևավորմանը՝ մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բարձրորակ սերմացուների նկատմամբ բավարարելու նպատակով:

10) Մարզ 5 տարածաշրջաններում տեղակայել հակակարկտային կայանքներ;՝ Մարզում հաճախակի կրկնվող կարկտահարությունները կանխելու նպատակով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ մշակել մարզում հակակարկտային համակարգի ստեղծման ծրագիր;

11) Ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական կազմակերպությունների համար:

12) Ստեղծել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգը:

13) Բարելավել միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վիճակը, վերացնել կապի և հաղորդակցության համակարգում եղած թերությունները:

14) Նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության գիտակ մասնագետների ուժերը, խորհրդատվությունը, բարելավել ճյուղերի նյութատեխնիկական սպասարկումը, մատչելիությունը:

15) Բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը՝ կոոպերացիայի և այլ կազմակերպական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով:

16) Մարզում շահագրգռել հողերի խոշորացումը և գյուղացիական տնտեսությունների միավորումը:

17) Ուժեղացնել ՄԶԾ-ի ինստիտուցիոնալ համակարգով նախատեսված մոնիտորինգի գործառույթը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գյուղվարչությունում:

18) Ապահովել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին բնակչության իրազեկումը:

19)Մկնանման կրծոների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպում և իրականացում:

Գյուղատնտեսության ռազմավարության ֆինանսավորումը

ՀՀ	Միջոցառման անվանում	Ֆինանսավորման աղբյուր			Նշումներ
		ՀՀ կառավարություն	Դոնոր կազմակերպություններ	Ֆինանսավորման կարիքը	
		Գումար, մլն. դրամ			
1.	Երրորդ կարգի ջրանցքների վերանորոգում ա/ք.Մարտունի բ/Աստղաձոր գ/Վաղաշեն դ/Վ.Գետաշեն ե/Ձորագյուղ զ/Ծովակի ջրանցքի վերանորոգում է/ Ծովակի2-րդ կարգի ջրանցքի վերանորոգում ը/Սոթքի ներքին ցանցի վերանորոգում թ/Վարդենիսի ներքին ցանցի վերանորոգում ժ/Մաքենիսի ջրանցքի վերանորոգում ի/Սարալանջի ջրանցքի վերանորոգում լ/ՀԵԿԻ ջրանցքի վերանորոգում խ/ Ծովակի ներքին ցանցի վերանորոգում			197.**3** 92.0 64.6 125.3 81.3 6.2 1.2 12.6 1.4 12.7 1.4 13.9 1.5	
2.	Կարտոֆիլի բարձր վերարտադրության տնկանյութի տարեկան ներկրում			150.0	տարեկան պահանջը կազմում է 100 տոննա
3.	Աշնանացան ցորենի բարձր վերարտադրության սերմերի տարեկան ներկրում			194.0	տարեկան պահանջը կազմում է 1000 տոննա
4.	Գարնանացան գարու բարձր վերարտադրության սերմերի տարեկան ներկրում			40.0	տարեկան պահանջը կազմում է 200 տոննա
5.	Բազմամյա խոտաբույսերի սերմերի տարեկան ներկրում			40.0	տարեկան պահանջը կազմում է 20 տոննա
6.	Թունաքիմիկատների և			167.0	տարեկան 20 տոննա

	բուժանյութերի ձեռքբերում (մկնանման կրծողների դեմ պայքարի նպատակով)				
7.	Սարուխանի Ջ/Կ-ի մոտ.ջրանցքի նորոգ.			14	
8.	Նորատուսի աջ և ձախ ջրանցքի նորոգում			150.0	
9.	Գեղարքունիք և Լանջաղբյուր ջրամբարների մոտեցնող ջրանցքների վերանորոգում			110.0	
10.	Ախպրաձոր, Գեղաքար ջրատարի վերանորոգում:			40.0	
11.	Թարայի ջրատարի վերանորոգում (Վարդենիս)			43.0	
12.	Ազատի ջրատարի վերանորոգում			28.0	
13.	Կուտականի և Տրետուքի ջրանցքի նորոգում			35.0	
14.	Ջիլի պոմպակայանի նորոգում			12.0	
15.	Վարսեր, Ծովագյուղ համայնքներում խորքային հորերի հորատում			90.0	
16.	Գեղամավանի ջրատարի կառուցում			33.0	
17.	Գավառի տարածաշրջանում ոռոգման ջրատարերի և ջրհան կայանի նորոգում		129.0		ՀՄՀ/ 2009-2011 թթ.
18.	Մարտունի տարածաշրջանում համայնքների ոռոգման ցանցերի, ջրհան կայանների նորոգում		1,014.4		ՀՄՀ/ 2009-2011 թթ.
19.	Մարզի 7000 հա արոտավայրերի ջրարբիացում			320.0	Գեղամա լեռնաշղթայի արոտավայրերում
20.	Գյուղատնտեսական կենդանիներին համաճարակների դեմ պատվաստվում	62.0			տարեկան հատկացում
21.	Անասնաբուժական պրեպարատների և այլ պարագաների ձեռքբերում			141.0	տարեկան պահանջ
22.	Արհեստական սերմնավորման պարագաներ			50.0	տարեկան պահանջ

23.	Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ձեռքբերում			143.6	տարեկան 20 միավոր
24.	Հակակարկտային մեկ կայանքի տեղադրում			1,000.0	մարզի տարածաշրջանների մեկում
Ընդամենը		**62.0**	**1.143.4**	**3,412.0**	

Աղյուսակ 7.8 ՄԶԾ ծրագրավորվող գյուղատնտեսության ոլորտի ֆինանսաորումը 2012-2015թթ. /մլն դրամ /

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ				
	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը 2015-2015թթ
Գյուղատնտեսություն	890.0	927.0	853.0	742.0	3.412.0

Ծանոթություն: Գյուղատնտեսության ոլորտի 2012-2015թթ-ի մարզի զարգացման ծրագրով ծրագրավորվող միջոցառումների ֆինանսավորումը ակնկալվում է ՀՀ պետական բյուրջեի միջոցներից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների ներդրումներից: ՀՀ գյուղատնտեսության նախարարության բոլոր ծրագրերը համապետական են և միջնաժամկետ ծախսային ծրագրերով /ՄԺԾԾ/ ըստ մարզերի համապատասխան բաշխում չի կատարվել, ուստի համադրումն անհնարին է:

Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտային նպատակը	Արդյունքային ցուցանիշներ, թիրախներ	Նախապայմաններ
Ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրությունը, նվազեցնել ազգաբնակչության աղքատությունը:	1.Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլն դրամ 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում, % 3.Գյուղացիական տնտեսությունների աղքատության մակարդակը, %	Առկա նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում:	1.1 Օգտագործվող վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի մակերեսը, հա 1.2 Չօգտագործվող վարելահողերի տարածքը, հա 1.3 Ոռոգելի մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը, հա 1.4 Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը, %	Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայություն
Արդյունք 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն արտադրանքի ծավալների բարձրացում	2.1 Կարտոֆիլի համախառն արտադրանքը, հազ. տոննա <u>Թիրախ.</u> 2012-2015թթ համախառն բերքը ավելացնել 15%-ով, տարեկան արտադրելով 350 հազ.տոննա 2.2 Կարտոֆիլի բերքատվությունը, գ/հա 2.3 Հացահատիկի համախառն արտադրությունը, հազ. տոննա 2.4 Հացահատիկի միջին բերքատվությունը, գ/հա 2.5 Կոշտ կերերի արտադրությունը, տոննա 2.6 Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները, հա	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Որակյալ սերմերի, տնկանյութի առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 3. Ոռոգման համակարգի բարելավում	3.1 Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը, հա <u>Թիրախ</u>.2012-2015թթ. ոռոգելի հողերը մարզում ընդարձակել 2000 հեկտարով: 3.2 Մարզում վերականգնված ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը ,	ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն:

	կմ Ներդրում. 2012-2015թթ-ին 3.5 մլն ԱՄՆ դոլար, 3.3 Էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը, % 3.4 Ոռոգման ջրի կորուստների տեսակարար կշիռը, % 3.5 ՋՕԸ-երին ոռոգման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ պետ. բյուջեից հատկացումների չափը, մլն դրամ	
Արդյունք 4. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	4.1 Կաթի արտադրության ծավալները, հազ. տոննա 4.2 Մսի արտադրության ծավալները, հազ. տոննա 4.3 Կաթի իրացման ծավալները, հազ.տոննա 4.4 Մսի իրացման ծավալները, հազ. տոննա 4.5 Բրդի իրացման ծավալները, հազ. տոննա 4.6 Ձվի իրացման ծավալները, մլն հատ 4.7 Արհեստականորեն սերմնավորված խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, հազ. գլուխ 4.8 Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխա-քանակը, հազ. գլուխ Ներդրում. տարեկան 60 մլն դրամ (պետ.բյուջե)	Անասնաբուժական կանոնների ճիշտ և ժամանակին կիրառում Գյուղկենդանիների հիվանդությունների բռնկման կանխարգելում
Արդյունք 5. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում	5.1 Մարզում գյուղատնտեսական արտադրանքի շուկաների թիվը 5.2 Մարզում առևտրային կազմակերպությունների թիվը 5.3 Մարզում գյուղացիական տնտեսությունների թիվը 5.4 Սառնարանային տնտեսությունների թիվը 5.5 Սպանդանոցների թիվը 2 5.6 Կաթի ընդունման և նախնական վերամշակման կետերի թիվը 11 5.7 Մսի և մսամթերքների վերամշակման կետերի թիվը	ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայություն Ք.Գավառ,գՎահան Ք.Վարդենիս 2, Ակունք 1

		Ք.Գավառ 2 , Սարուխան 1 Լճաշեն 1 ,Վահան 1,Թթուջուր 1, Շորժա 1,Վարդաձոր 1
Արդյունք 6. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում	6.1 Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների/ կազմակերպությունների թիվը	Վարկերի հասանելիություն գյուղացիական տնտեսությունների, կազմակերպությունների համար

8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1 Բնապահպանական ոլորտի հիմնախնդիրները

379. Գեղարքունիքի մարզի բնապահպանական հիմնախնդիրները եղել և մնում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: 2003թ.-ին մշակված ՀՀ ԿԶԾ-ում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները կարևորվել են, որպես աղքատության նվազեցման քաղաքականության իրականացման երաշխիք: Ծրագրում բնապահպանություն ոլորտի քաղաքականության հետևյալ գերակայությունները ընդգրկվել էին աղքատության հաղթահարման ռազմավարության տեսանկյունից.

1) անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում,

2) հողերի դեգրադացիայի կանխում, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցում,

3) ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, օգտագործում և Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում,

4) կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վնասակար թափոնների խնդիրներ:

380. ԿԶԾ-ում առանձնակի կարևորված էր Սևանա լճի հիմնախնդիրը, որպես Հայաստանի համար ռազմավարական նշանակության խնդիր: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով՝

1) Սևանա լիճը Հայաստանի ջրային ռեսուսների ամենամեծ շտեմարանն է, որը ապահովում է ջրի ինչպես կենցաղային (խմելու ջուր), այնպես էլ արդյունաբերական (ոռոգում, հիդրոէներգետիկա) կարիքների զգալի մասը,

2) Սևանա լիճը ափամերձ բնակավայրերի բնակչության եկամուտների (ձկան և խեցգետնի արդյունահանում, հանգստի գոտիների կազմակերպում, տուրիստների սպասարկում և այլն) կարևորագույն աղբյուրներից է,

3) Սևանա լիճը համարվում է Հայաստանի հիմնական հանգստյան գոտիներից մեկը և այս առումով նաև մեծ նշանակություն ունի զբոսաշրջության զարգացման համար:

381. Վերը նշված բնապահպանական հիմնախնդիրները ունենալով համակարգային բնույթ չեն կարող դիտարկվել և լուծվել միայն մարզային մակարդակով իրականացվող, և կոնկրետ բնապահպանական ուղղվածության առանձին ծրագրերի միջոցով: Փոխկապակցված լինելով տնտեսության զարգացման մակարդակի, տնտեսության այլ ճյուղերի գործունեության, քաղաքացիական հասարակության կայացման հետ, ՄԶԾ իրականացման (2005-2007թթ. և 2009-2011թթ.) դիտարկվող ժամանակահատվածը տեսանելի դինամիկա արձանագրելու համար բավական կարճ է: Սակայն իրականացված ծրագրերի միջանկյալ արդյունքները և դրանց կազմակերպման արդյունավետության վերլուծությունը կարևոր է 2012-2015թթ. ՄԶԾ բնապահպանական բաժնի մշակման համար:

382. Գեղարքունիքի նախորդ մարզային զարգացման ծրագրի բնապահպանական ոլորտի քաղաքականությունը մշակվել է հենվելով և ուղղորդվելով ԿԶԾ-ի, Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրի, Կայուն զարգացման ռազմավարության հայեցակարգի (2002թ), ՀՀ կողմից վավերացրած միջազգային համաձայնագրերի դրույթներով և գերակայություններով:

383. Մարզի զարգացման ծրագրի բնապահպանական ոլորտի քառամյա պլանի նպատակն է եղել բարելավել բնապահպանական իրավիճակը Գեղարքունիքի մարզում՝ մասնավորապես իրականացնելով. ա) անտառների վերականգնում և անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում, բ) Սևանա լճում ձկան պաշարի աճ և ձկնաբուծության զարգացում, գ) լեռնային արոտավայրերի կառավարման պլանի մշակում, դ) հանրային իրազեկում բնապահպանական խնդիրների վերաբերյալ, ներառյալ բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում և շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող ՀԿ-ների կարողությունների բարելավում:

384. Միջոցառումների և ծրագրերի կազմման համար հիմք են ծառայել դոնորների և շահագրգիռ կողմերի հետ իրականացված քննարկումները և առաջարկությունները, միաժամանակ փորձ էր արվել գնահատել այդ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները և դրանց տրամադրման իրատեսությունը:

385. Այդ ժամանակահատվածում մարզի բնապահպանական հիմնախնդիրները ունենալով համազգային նշանակություն եղել են ՀՀ Կառավարության ուշադրության կենտրոնում: Սևանա լճի մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները ապահովել են կայուն միտումներ՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1899.24մ, մակարդակի բարձրացումը կազմել է 223սմ:

386. Ջրի մակարդակի բարձրացումը միաժամանակ ավելի հրատապ է դարձրել ափամերձ տարածքների կառավարման թերությունների վերացումը՝ բուսածածկի հեռացում, շինությունների և ապօրինի այլ կառույցների ապամոնտաժում, ենթակառուցվածքների վերապլանավորում:

387. Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների պլանով նախատեսված մի շարք խնդիրների լուծման համար պետական բյուջեից տրամադրվող միջոցներից բացի, առաջին անգամ ՀՀ բնապահպանական խնդիրների լուծման համար, ներգարվվել են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային և դրամաշնորհային միջոցները: ՀՀ բնապահպանության նախարարությունը 2011թ.-ի գերակա խնդիրների շարքում ներառել է՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված՝ ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության

կանխարգելման միջոցառումների իրականացումը և Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակներից՝ գեղարքունի, ամառային իշխանի, բեղլուի, ինչպես նաև կողակի պոպուլյացիայի համալրումը:

388. Սևանի ավազանի բնապահպանական իրավիճակի բարելավմանը կարող են նպաստել վերջին տարիներին ընդունված մի շարք իրավական ակտեր:

389. ՀՀ Նախագահի 25.12.2008թ. ՆԿ-234 կարգադրությամբ ստեղծվել է Սևանա լճի հիմնախնդիրներով զբաղվող հանձնաժողով Սևանա լճի ու դրա ջրհավաք ավազանի ջրային պաշարների պահպանման, վերականգնման, օգտագործման, կենդանական ու բուսական աշխարհի բնականոն զարգացման և էկոլոգիական ենթահամակարգերի հարցերով առաջարկություններ ներկայացնելու նպատակով: ՀՀ կառավարության կողմից (14-06-2011թ. թիվ 987-Ն) ընդունվել է <<Սևանա լճի էկոհամակարգի և ջրաբանական մոնիտորինգի համալիր ծրագիրը հաստատելու մասին>> և <<Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամ ստեղծելու մասին>> (28-04 -2011թ. թիվ N517-Ն) որոշումները:

390. ՀՀ Կառավարության 18.01.2007թ. N 205-Ն որոշմամբ հաստատվել է ,,Սևան ազգային պարկի,, 2007-2011թթ. կառավարման պլանը: Այդ պլանի ընդունումը կարևոր նախապայման է պլանավորված և համակարգված աշխատանքների կազմակերպման և դրանց իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման համար: Սևան ազգային պարկի կառավարման բարելավման ընթացքը մեծ չափով կնպաստի մարզում տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության լայն շրջանակների կողմից բնապահպանական խնդիրների լուծման համար վստահելի մթնոլորտի ստեղծմանը: Ստեղծվել ,,Սևան ԱՊ,, կառավարման խորհուրդը:

391. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պահպանության և վերարտադրության գործընթացի ծրագրավորման նպատակով մշակվել է ,,Սևանի էնդեմիկ ձկնատեսակների (իշխան, կողակ, բեղլու) պոպուլյացիաների վերականգնման նպատակով արհեստական վերարտադրության նոր կենսատեխնոլոգիայի ներդրման հայեցակարգը,,, որը հաստատվել է ՀՀ կառավարության 14.09.06թ. թիվ 36 արձանագրային որոշմամբ: ՀՀ կառավարության 09.12.2010թ. թիվ 1755_Ն որոշմամբ հաստատվել է ,,Սևանա լճում արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման ծրագիրը,,:

392. ՀՀ բնապահպանության նախարարի, ՀՀ գեղարքունիքի մարզպետարանի և ՀՀ ոստիկանության կողմից ամեն տարի մշակվում և իրականացվում է համատեղ միջոցառումների ծրագիր /սիգ ձկնատեսակի բնական վերարտադրության ապահովման նպատակով/ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ձկան արդյունագործական որսը արգելելու համար: Մշակվում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ երեք տարով Սևանա լճում արգելելու ձկան արդյունագործական որսը:

393. Միաժամանակ պետք է նշել, որ մարզում իրականացվող բարեփոխումները այդ թվում նաև բնապահպանական ոլորտում դեռևս բավարար չեն, ինչպես օբյեկտիվ այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով: Սևանա լճի կենսապաշարների պահպանության նկատմամբ տեսչական վերահսկողական աշխատանքների թերությունների վերացումը պետք է ընթանա բնական ռեսուրսների ինքնավերականգնմանը նպաստող աշխատանքներին զուգահեռ:

394. Դրա համար որպես դրական նախապայման կարող է դիտարկվել <<Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական

պետական տեսչության համակարգի ամրապնդման և հզորացման ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակումը:

395. Մարզում գրանցված 76 հասարարակական կազմակերպություններից (ներառյալ մասնաճյուղերը և միությունները) միայն 6-ն ունեն բնապահպանական ուղղվածություն և լիարժեք չեն կարող ապահովել իրազեկության բարձրացման նպատակաուղղված գործունեության կազմակերպման և մարզի բնապահապանական հիմնախնդիրներին և գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

396. ,,Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն,, ՊՈԱԿ-ի և Հայպետհիդրոմետի կողմից իրականացվել է Սևանա լճի և լճի ավազանի գետերի դիտակետերի ցանցի ընդլայնում և բարելավվել է սիստեմատիկ դիտարկումների համակարգը: Սևանա լճի ավազանի գետերում, ինչպես նաև Սևանա լճում և Արփա գետում որոշված ցուցանիշների միջին կոնցետրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը մշակել է համալիր ծրագիր Սևանա լճում, լիճ թափվող գետերում ու նրանց ջրահավաք ավազանում էֆտրոֆացվող, տոքսիկ և աղտոտող նյութերի չափաքանակները վերահսկելու ինչպես նաև լճի ջրային հաշվեկշռի կազմման հուսալիության բարձրացման նպատակով՝ լճի մակերևույթից գոլորշիացման ծավալների որոշման մեթոդաբանությունը կատապելագործելու համար ծամանակակից էկոլոգիական մոնիտորինգային ցանց ստեղծեիու վերաբերյալ:

397. Վերջին տարիները բավականին ջրառատ են եղել, սակայն կան ահազանգեր, որ զգալի է դարձել մրցակցությունը ջրային ռեսուրսների օգտագործողների միջև: Սևանա լիճ թափվող գետերի ռեսուրսների օգտագործման ծավալների աճի պայմաններում նոր կառուցվող հիդրոկայանների նկատմամբ պետք է ուժեղացնել տեսչական վերահսկողությունը՝ ձկների ձվադրման պայմանների ապահովման և մանրաձկների կորուստները կանխելու համար: Միաժամանակ արձանագրվել է, որ գետերի հուների մաքրման աշխատանքները չեն համաձայնեցվում բնապահպանական կառույցների հետ, որի հետևանքով մանրաձկների զարգացման համար ստեղծվում են անբարենպաստ պայմաններ: Այդ պատճառով ,,Սևանա լճի մասին,, օրենքում նախատեսվում է կատարել լրացում, արգելելով փոքր ՀԷԿ-երի կառուցումը, թեև ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 4-ի նիստի թիվ 30 արձանագրային որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 22-ի նիստի <<Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմային հավանություն տալու մասին>> թիվ 3 արձանագրային որոշման 9-րդ կետով հավանության արժանացած՝ փոքր հիդրոէլեկտրակայանների զարգազման սխեմայի հավելվածի <<Սևանա լճի ավազան>> բաժինը:

398. Դեռևս լուծում չեն ստացել կոշտ թափոնների կառավարման խնդիրները, չնայած մարզի քաղաքների համար մշակված գլխավոր հատակագծերում աղբավայրերի խնդիրները ներառված են որպես կարևոր խնդիր, արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործման խնդիրը ներառված է նաև ,,Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերում,,:

399. Սևանի ազգային պարկի տարածքում հողհատկացման գործընթացի տարբեր փուլերը լինելով տարբեր գերատեսչությունների իրավասությունների շրջանակներում, պահանջում են հստակ պետական դիրքորոշում այս խնդրի կանոնակարգման համար: Տարերայնորեն ընթացող անհատական շինարարության հետևանքների վերացումը, ապօրինի կառույցների ապամոնտաժումը, փոխհատուցումների տրամադրման կարիքը այն դեպքերում երբ առկա են կառուցապատման թույլտվություններ (սակայն հաճախ դրանք հակասում են Սևանի մասին օրենքի դրույթներին)

հետագայում կարող են լուրջ բեռ դառնալ պետական բյուջեի համար՝ դրանով իսկ բարդացնելով կամ նույնիսկ վտանգելով ջրի մակարդակի բարձրացման գործընթացը:

400. Սևանա լճի ձկնային պաշարների ներկա մակարդակը բավական մտահոգիչ է, դեռևս լիարժեք չի գնահատված, թե միջոցառումների ինչ համակարգ կարող է ապահովել վերարտադրության անհրաժեշտ պայմաններ: Խնդիրը, իր բնույթով լինելով կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիր, վերաճել է պարենային ապահովության և մարզի աղքատությունը խորացնող գործոնի:

401. Էկոհամակարգերի վրա ճնշման նվազեցման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, այդ թվում կարևոր է մարզում ստեղծել աշխատատեղեր, քանի որ սակավահող մարզի համար գյուղատնտեսության և բնական ռեսուրսների շահագործման վրա հենված տնտեսությունը հանգեցնում է բնական ռեսուրսների սպառման, որը չի կարող կարգավորվել միայն վերահսկողության ուժեղացմամբ:

402. Մարզում առկա 49 օգտակար հանածոների հանքավայրերից ներկայումս շահագործվում են 21-ը, 28 հանքերևակումներում իրականացվում են երկրաբանա-հետախուզական ուսումնասիրություններ: Մարզում առկա են նաև իրենց արտադրական պաշարները սպառած և լքված մի շարք հանքավայրեր, որոնց շահագործման արդյունքում խախտվել է տվյալ տարածքների հողաշերտը և անհրաժեշտ է վերականգնել այն:

403. 2005-2007թթ. և 2008-2011թթ. ՄԶԾ իրականացման ընթացքի վերլուծությունը ՈԱԽ-ի կողմից թույլ է տվել գնահատել, թե ինչքանով նախատեսված միջոցառումները արդիական են նոր ժամանակահատվածի համար, բացի այդ բացահայտվել են ծրագրերի իրականացման մեխանիզմների թերությունները: Վերլուծության համար հիմք են հանդիսացել կառավարման մարմինների և միջազգային աջակցության ծրագրերի հաշվետվությունները, վիճակագրական տեղակագրքերը, տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունները, առանձին միջոցառումների իրականցման ընթացքի վերաբերյալ ՈԱԽ անդամների կարծիքը, ինչպես նաև գնահատվել են վերջին 3 տարիների ընթացքում օրենսդրական դաշտի փոփոխությունները և ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարական փաստաթղթերը ու ծրագրերը:

404. Պետական բյուջեի միջոցներով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1) Ջրածածկման ենթակա անտառածածկ տարածքներում ծառաթփային բույսերի մաքրման և հեռացման համար պետական բյուջեից հատկացված գումարներով մաքրվել է 1757 հա. ծառաթփային տարածքներ: Սակայն մինչև 2010թ.-ը աշխատանքների իրականացման տեմպերը և որակը դեռ ցածր էին, ապրանքային արժեք ներկայացնող անտառափայտը հանվում է, իսկ թափուկը և թփուտները չեն տեղափոխվում և անցնում են ջրի տակ, որը նպաստում է լճի էվտրոֆիկացիայի խորացմանը: 2010թ. ձեռք բերվեց հատուկ տեխնիկան, որը կատարում է անհրաժեշտ մաքրում և 2011թ. մաքրվելու է 620հա.:

2) Սևանա լճի ձկնային պաշարների համալրման նպատակով, ֆինանսավորման մի քանի աղբյուրների (պետական բյուջե, ,,Սևան,, ազգային պարկ,, ՊՈԱԿ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված ֆինանսական միջոցներ, Բնապահպանական նպատակային ֆոնդ) հաշվին իրականացվել է Սևանա լճի ձկնային պաշարների համալրում: 2006թ-ից մինչև 2011թ. Սևանա լիճ է բաց թողնվել /972.590 **/** հատ ամառային իշխանի և գեղարքունի տեսակի տարբեր քաշի մանրաձկներ, որոնց համար պետ բյուջեից ծախսվել է 368մլն ՀՀ դրամ.:

3) Անտառների վերականգնման և պահպանման նպատակով Սևան Ազգային պարկին և Ճամբարակի անտառտնտեսությանը 2008-2011թթ. տրամադրվել է 26.5 մլն. դրամ: Իրականացվել է 150 հա նոր անտառի հիմնում, 338 հա անտառի խնամք, 88 հա անտառի լրացում և 230 հա բնաշվային վերաճին նպաստող աշխատանքներ:

4) Հայաստանի ծառատունկ ծրագրով Ճամբարակի Այգուտ գյուղում դեռևս 2004թ. ստեղծված ընտանեկան տնկարանային տնտեսությունների տնկանյութով 2007թ. գարնանը Գետիկի հովտում տնկվել է 343,750 ծառ:

5) ,,Համահայկական ծառատունկի շրջանակներում մարզում տնկվել է 150.000 հատ դեկորատիվ ծառ, ''Կանաչազարդ Հայաստան,, ՀԿ-ի և ՀՀ տարածքային նախարարության կողմից 2010թ. գարնանը մարզ են ներկրվել 22000հատ տարատեսակ դեկորատիվ և պտղատու ծառերի տնկիներ, որոնք բաշխվել են մարզի 29 համայնքներին, կրթական հաստատություններին, առողջապահական հիմնարկներին և անհատ քաղաքացիներին, որոնց կողմից կատարվում է համապատասխան խնամք: 2011թ. գարնանը տարբեր ծրագրերով կատարվել են 19 հա. անտառատնկման աշխատանքներ մարզի Դդմաշեն, Լիճք, Ծովինար և Վարդենիկ համայնքներում:

405. Միաժամանակ պետք է նշել, որ նոր անտառների հիմնումը չի կարող սահմանափակվել միայն տնկման աշխատանքներով, նոր տնկիների կպչողականության ապահովման համար պետք է ոռոգում, խնամք և պահպանություն: Այսինքն այդ աշխատանքները պետք է լիարժեք պլանավորվեն, ֆինանսավորվեն և դրանց արդյունավետության բարձրացման համար պետք է հետևողականություն և վերահսկողություն:

406. ,,Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման,, ծրագրով նախատեսվել և իրականացվել են համալիր միջոցառումներ ուղղված Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնական ռեսուրսների կառավարման բարելավմանը.

1) Իրականացվել են ,,Սևան ազգային պարկի,, շենք-շինությունների վերանորոգման աշխատանքները, ձեռք են բերվել տեխնիկական միջոցներ:
2) ,,Գեղարքունիքի և Տավուշի մարզերում կենսաբազմազանության պահպանության և պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ծառայության մատուցում,, խորհրդատվական ծառայության պայմանագրով իրականացվել են ուսուցողական ծրագրեր և հրատարակվել են գիտահանրամատչելի և գովազդային բնույթի բրոշյուրներ:
3) Մշակվել են ,,Սևան,, ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման մեթոդական ցուցումները և որոշվել են ինդիկատորները:
4) Մշակվել է Ճամբարակի և Արծվաբերդի անտառտնտեսություններ կառավարման պլանը:
5) Իրականացվում է ,,Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում,, ամենամյա միջոցառումների ծրագիրը:

6) Ջրհավաք ավազանների համայնքահեն կառավարման բաղադրիչի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզում ընդգրկված են 52 համայնքներ: 2008-2011թթ.-ին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ա. 46,5հա ծառատնկման և 13,7կմ ցանկապատի կառուցման աշխատանքներ,

բ. 3114հա համայնքային արոտների, 1495հա սեփականաշնորհված խոտ-հարքների պարարտացում, ցանվել է 1214հա առվույտ և կորնգան, 607հա աշնանացան ցորեն և գարնանացան գարի, վերանորոգվել են 377կմ դաշտամիջյան ճանապարհներ, կառուցվել են 52 հատ ջրարբիացման կետեր, տեղադրվել են 222հատ ջրահեռացման խողովակներ, 35 միավոր գաբիոններ, կատարվել է 26.5 հա ծառատնկման աշխատանքներ,

գ. տրամադրվել են 1220 հատ մեղվափեթակներ՝ կոմպլեկտավորող գործիքներով, 41 համայնքներում կազմակերպվել են սեմինար պարապմունքներ, որոնք նպաստել են կառավարման պլաններով իրականացվող աշխատանքների առավել խորացված պարզաբանմանը, ինչպես նաև շահառուների գիտելիքների բարձրացմանը:

407. Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվող վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրով մասնավոր ներդրողներին արտոնյալ պայմաններով տրամադրվել են վարկային միջոցներ փոքր հիդրոկայանների կառուցման համար: Գեղարքունիքի մարզում կառուցել է. Վարդենիկ (1.7 ՄՎտ), Մասրիկ (3.21 ՄՎտ), Մարտունի (1.7 ՄՎտ), Արգիճի (7.9 ՄՎտ) և Կարճաղբյուր (0.87 ՄՎտ) փոքր ՀԷԿ-երը:

408. ԵՄ ՏԱՍԻՍ ծրագրով 2006-2007թթ.-ին գնահատվել է մարզի վերականգնվող ռեսուրսների ներուժը, ներդրումային տեսակետից գրավիչ նախագծերի մշակման համար: Վերջնական հաշվետվությունը ներկայացվել է 2007թ. նոյեմբերին: ԱՀԿ գրասենյակը, Գեղարքունիքի մարզպետարանի հետ ստորագրած հուշագրի շրջանակներում, Գավառ քաղաքում հիմնադրել է Օրհուսի կենտրոն, որտեղ և կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկմանը և բնապահպանական ՀԿ-ների կարողությունների զարգացմանը: Սևանի ավազանի կենսաբազմազանության պահպանության խնդիրը եղել է էկոլրագրողների կողմից ընտրված Հայաստանի 3 թեժ կետերից մեկը: 2007, 2008, 2009, 2010 և 2011թթ. էկոտուր է կազմակերպվել Սևան՝ լուսաբանելու համար առկա խնդիրները և լրագրողների, պաշտոնյաների ու գործարար կառույցների միջև երկխոսության կազմակերպման միջոցով նախանշել լուծման հնարավոր ուղիներ:

409. Բացի դրանից բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստել են ոռոգման համակարգի վերակառուցման և ընդլայնման, գազամատակարարման համակարգի, մասնավոր ձեռներեցության զարգացման աշխատանքները: Աջակցությունը բնապահպանական տուրիզմի զարգացմանը նպաստող համայնքների նախաձեռնություններին:

410. Սակայն պետք է նշել, որ 2005-2007թթ.-ի և 2008-2011թթ. ՄԶԾ նախատեսված միջոցառումները իրականացվել են ոչ ամբողջ ծավալով, դեռևս չի հաղթահարված ՄԶԾ-ի մշակման սկզբում վեր հանված այն խնդիրը, որը վերաբերում է մարզում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի մասին մարզային կառույցների հետ համաձայնեցման, արդյունքների քննարկման և տեղեկատվության տրամադրման համակարգման խնդրի կարգավորմանը:

411. 2006-2007թթ. և 2008-2011թթ. ՏԱՊ-ի շրջանակներում նախատեսված միջոցառումներից չեն իրականացվել հետևյալ աշխատանքները՝

1)Տնկարանային տնտեսությունների հիմնում, նախկինների վերականգնում’ (Ծովինարի տնկարան);

2)Այլընտրանքային էներգիայի զարգացում՝ կենսագազի կայանների արտադրության կազմակերպում և տեղադրում;

3)Համալիր ձկնաբուծարանի հիմնում և Սևանի իշխանի արհեստական վերարտադրության կազմակերպում Սևանի ավազանում;

4) Սևանա լճից և գետերից ջրառի բոլոր կետերում ձկնապաշտպան կառույցների տեղադրում: Նորատուս համայնքի քարհանքի ռեկուլտիվացիա (1 հա):

5) Ոչ բնափայտային անտառային մթերքի /ՈԲԱՄ/ վերամշակման և իրացման համար համաֆինանսավորման սկզբունքով համայքներին աջակցության տրամադրում:

8.2 Բնապահպանական ոլորտի զարգացման ուղղությունները 2012-2015թթ.

412*. Սևան ազգային պարկի արդյունավետ կառավարում -* Մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրմանև օգտագործման ծրագրերի և ,,Սևան ազգային պարկ,,-ի կառավարման պլանի արդյունավետ իրականացման հետ, որը կարող է երաշխավորել մարզում բնապահպանական իրավիճակի բարելավման կայուն հիմքեր: Սակայն ազգային պարկի կառավարման պլանի իրականացումը չի կարող դիտարկվել առանց կառավարման առկա համակարգի փոփոխության: Ափամերձ տարածքների շահագրգիռ համայնքների մասնակցության, որոշումների կայացման գործընթացների թափանցիկության ապահովման համար իստիտուցիոնալ պայմաններ չեն ստեղծված: ԱՊ տնտեսական գործունեության արդյունքում ստացվող օգուտները բաշխվում են մարզի սահմաններից դուրս, հարակից համայնքները չեն մասնակցում դրան, չեն մասնակցում համայնքների շահերին անմիջականորեն առնչվող որոշումների ընդունման գործընթացին, դրանով է մասամբ բացատրվում ԱՊ վերահսկողական գործառույթների թուլությունը և հարակից համայնքերի հետ կոնֆլիկտների առկայությունը:

413. Միևնույն ժամանակ ստեղծվել է ''ՍԵՎԱՆ ԱՊ,, կառավարման խորհուրդ կառավարման վարչարարության կատարելագործման համար: Այդ խորհրդակցական մարմնի աշխատանքի արդյունքում ակնկալվում է նաև, որ ԱՊ, տարածքային կառավարման մարմնի ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և վստահության մթնոլորտի համար կստեղծվեն համապատասխան պայմաններ: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ ԱՊ համագործակցությանը կարող է նպաստել ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի թիվ 927-Ն որոշումը, որով ամրագրվել է, որ ԱՊ տնօրինությանը հանձնված, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների 30% պետք փոխանցվի համայնքային բյուջե: Այդ միջոցների նպատակային օգտագործման համար կարևոր է աջակցել տեղական ինքնակառավարման մարմիններին տեղական բյուջեի պլանավորման մեջ բնապահպանական խնդիրների ներառմանը**:** Այս գործընթացի արդյունավետությունը կբարձրանա, եթե վարձակալության տրվող տարածքների կադաստրային արժեքները լիարժեք գնահատվեն: Վարձակալների կողմից տարածքների կառուցապատման աշխատանքները պետք է անցնեն բնապահպանական լիարժեք փորձաքննություն, որն ապագայում կնվազեցնի հնարավոր անցանկալի կոնֆլիկտները:

414. Էկոտուրիզմի զարգացումը կարող է նպաստել Սևանի տուրիստական սեզոնի երկարացմանը, ռեկրեացիոն գոտու գրավչությունը բարձրացնելու համար կկանոնակարգվի ափամերձ գոտու տարերային կառուցապատումը, որը հաշվի չի առնում լանդշաֆտների պահպանության տարրական նորմերը: Ապօրինի շինությունների վերացման խնդիրը, իհարկե բավական բարդ խնդիր է, սակայն հետևողական քաղաքական կամքի դրսևորման դեպքում այն կնպաստի մարզի բնապահպանական իրավիճակի բարելավմանը և տուրիստական գործունեությունից ստացվող տնտեսական օգուտների աճին:

415. Ազգային պարկի արդյունավետ կառավարումը պետք է ապավովվի կառավարման պլանով նախատեսված բոլոր միջոցառումների և /կամ/ գործողությունների ծրագրավորված ժամկետներում և ծավալով կատարման միջոցով, որի իրագործման նախապայման պետք է հանդիսանա բյուջետային հատկացումների շարունակական ավելացումները, ,,Սևան ազգային պարկ,, ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների աճի և դրանց նպատակային օգտագործման միջազգային ֆինանսավորման խողովակներով /Կովկասյան ԲՊՏ տրաստային ֆոնդ, Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամ և այլն/ ստացվող ֆինանսական ռեսուրսների ներգրավման և դրանց արդյունավետ օգտագործման ապահովումը:

416. Ազգային պարկի արդյունավետ կառավարումը ենթադրում է նաև ,,Սևան ազգային պարկի,,, տեղական համայնքների ու ռեսուրսօգտագործողների միջև ազգային պարկի և դրա պահպանման գոտում կենսաբանական պաշարների օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման/մասհանումների համապատասխան միջազգայնորեն ընդունված սկզբունքների ապահովում,,:

417. Սևանի ջրավազանի ջրային ռեսուրսների աղտոտման մակարդակի նվազեցում - Սևանա լճի ջրի մակարդակի աճին զուգահեռ կարևոր է ջրի որակի բարելավման համար գետային հոսքի որակի և օգտագործման ծավալների կանոնակարգումը և վերահսկման համակարգի ձևավորումը: Խոշոր բնակավայրերի կեղտաջրերի ազդեցությունը ավազանի գետերի վրա նվազեցնելու համար Հայջուր ընկերությունը կնքել է վարկային պայմանագիր ԵՎԶԲ հետ, Սևանի ջրահավաք ավազանի 5 քաղաքների, մաքրման կայանների կառուցման համար, դրանցից 4-ը Գեղարքունիքի մարզում են: Աշխատանքներ են տարվում մշակելու և աստիճանաբար իրականացնելու Սևանի ավազանի խոշոր բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղացման և կեղտաջրերի մաքրման համալիր ծրագիրը, առաջնահերթությունը տալով Գավառագետի ափերին գտնվող խոշոր համայնքներին / Նորատուս, Կարմիրգյուղ, Սարուխան և այլն/:

418. Հաշվի առնելով, որ այդ ջրային ավազանների աղտոտվածության 64% գյուղատնտեսական գործունեության հետևանքով է, պետք է միաժամանակ նախատեսվեն միջոցառումներ, որոնք կկանխարգելեն պարարտանյութերի և գյուղատնտեսական այլ թափոնների ներթափանցումը լիճ: Միաժամանակ ջրօգտագործողների միջև կոնֆլիկտային իրավիճակների բացառման համար կակտիվացվի ջրավազանային կառավարման մարմիններում տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և մարզի բնապահպանական բաժնի մասնագետների մասնակցությունը:

419*. Կենցաղային և արտադրական թափոնների կառավարման բարելավում*- Բավական հրատապ է դարձել կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը, որը բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ Սևանի լճի որպես ռեկրեացիոն գոտու վիճակի վրա: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում**,** իրենց տեղադրման կարողությունները սպառած աղբանոցների և աղբավայրերի փակում և կոնսերվացում, ՏԻՄ-երին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում՝ աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ**:** Նախատեսվում է մարզի տարածքում կառուցել աղբավերամշակման գործարան:

420. Մարզում լուրջ հիմնախնդիր է մնում Սևանա լճի ափամերձ հանգստի գոտում հանգստացողների սանիտարահամաճարակային անվտանգության հարցը, ինչը անմիջականորեն կապված է խմելու ջրի որակի և անվտանգության հետ:

421. ***Հանրային մասնավոր համագործակցության խթանում բնապահպանական ծրագրերի իրականացման համար*** - Հեռանկարային կարող է լինել համաֆինանսավորման սկզբունքով պետական և համայնքային, ինչպես նաև մասնավոր ներդրողների ներգրավման միջոցով իրականացվող նախագծերի մշակումը և իրականացումը: Այդ մեխանիզմով կարող են իրականացվել ինչպես անտառապատման, այնպես էլ ձկնաբուծության, մեղվաբուծության, խոտաբույսերի և

հատապտուղների հավաքի ու վերամշակմանը միտված զարգացման ծրագրեր: Այսպես օրինակ՝ անտառապատման, կամ կանաչապատման ծրագրերի արդյունավետության ապահովման համար համայնքները պետք է երաշխավորեն անտառապատված տարածքների ոռոգման և խնամքի կազմակերպման աշխատանքները, իսկ Սևանա լճում ձկնային պաշարների ավելացման նպատակով մասնավոր ձկնաբուծարաններին տրամադրվող պետական կամ միջազգային կառույցներից ստացված գրանտային միջոցները պետք է հետ վերադարձվեն բնությանը ապրանքային տեսքով՝ տվյալ դեպքում մանրաձկան տեսքով: Միաժամանակ նման ծրագրերը կապահովեն աշխատատեղեր մարզում և կնվազեցնեն պահպանական ոլորտի տրամաբանական հենքը:

2012-2015թթ. նախատեսված բնապահպանական ոլորտի միջոցառումների բյուջեն /մլն.ՀՀ դրամ/

Միջոցառումներ	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	
Ջրածածկ տարածքների մաքրում	125.4	125.4	125.4	125.4	501.6
Ձկնային պաշարների համալրում	60.0	60.0	60.0	60.0	240.0
Սևանա լճում ձկնային պաշարների հաշվառում	7.526	7.526	7.526	7.526	30.104
Անտառատնկման աշխատանքների իրականացում	4.0	4.11	5.11	9.29	22.51
Ընդամենը	**196.926**	**197.036**	**198.036**	**202.216**	**794.214**

Աղյուսակ 8.1.ՄԶԾ ծրագրավորվող բնապահպանական ոլորտի ֆինանսավորումը 2012-2015թթ./մլն.դրամ/

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ.				
	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը
Բնապահպանություն	196.9	197.0	198.0	202.2	794.1

Ծանոթություն: Բնապահպանության ոլորտի 2012-2015թթ-ի մարզի զարգացման ծրագրով ծրագրավորվող միջոցառումների ֆինանսավորումը ակնկալվում է ՀՀ պետական բյուրջեի միջոցներից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների ներդրումներից: ՀՀ բնապահպանության նախարարության բոլոր ծրագրերը համապետական են և միջնաժամկետ ծախսային ծրագրերով /ՄԺԾԾ/ ըստ մարզերի համապատասխան բաշխում չի կատարվել, ուստի համադրումն անհնարին է:

Բնապահպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտի նպատակները, արդյունքներն ու	**Արդյունքային ցուցանիշներ**	**Ռիսկեր**

միջոցառումները		
• Բարելավել բնապահպանական իրավիճակը Գեղարքունիքի մարզում	Ափամերձ տարածքների կառավարման համակարգի բարելավումը: Կենսաբազմազանության մոնիտորինգի արդյունքները: Ձկնային պաշարների քանակի կայունացումը և համալրման աշխատանքների համար ֆինանսական միջոցների տրամադրումը:	*<u>Ֆինանսական՝</u>* Ջրածածկվող տարածքների մաքրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները չեն տրամադրվում: *<u>Քաղաքական՝</u>* Ապօրինի հողհատկացումների և կառուցապատումների դեմ պայքարի համար բավականին քաղաքական կամք չի դրսևորվում:
Արդյունք 1. Մարզային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ԲՊՏ Գեղարքունիքի տարածքային բաժնի և Սևան ազգային պարկի համագործակցության համար ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում: ***Միջոցառումներ*** -Ապահովել ափամերձ տարածքների կառավար-ման գործընթացներում տեղական ինքնակա-ռավարման մարմինների մասնակցությունը և գործընթացների թափանցիկությունը -Բնական ռեսուրսների կառավարման գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցության	Սևանա լճի ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում 2489 հա /տարեկան՝600-650 հա/ Համայնքների թիվը, որոնք մասնակցում են ափամերձ տարածքների պլանավորման, կառավարման աշխատանքներին: Համայնքահեն կազմակերպությունները մասնակցում են ԱՊ տարածքում իրականացվող աշխատանքներին: Նախագծերի թիվը, որոնք անցել են հանրային քննարկումներ: Սևանա լճի հարակից համայնքները ներգրավված են ափամերձ տարածքների կառավարման գործընթացներում: /21 համայնք/	***Ռիսկեր՝*** անհրաժեշտ ֆինանսական միջոցները չեն տրամադրվում **Մեղմում՝** ներառված է ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնարողովի 2009թ. աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված միջոցառումների ժամանակացույցում, /Հավելված ՀՀ Կառավարության 2010թ. հունիսի 24-ի 876-ն որոշման/ ***Ռիսկեր՝*** Կոնֆլիկտներ Սևան ԱՊ ՊՈԱԿ-ի և համայնքների միջև, շահերի բախումներ ***Մեղմում՝*** ,,ՍԵՎԱՆ ԱՊ՚՚ կառավարման խորհրդատվական մարմինը ստեղծված է, որպես ԱՊ կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմ ***Ռիսկեր՝***

ապահովում • ԱՊ տարածքում իրականացվող շինարարության և ծրագրերի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, ՀԿ-երի միջոցով հանրային լսումների կազմակեր-պում • Մարզի բնապահպանական ՀԿ-ների, լրատվամիջոցների կարողությունների զարգացում ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և հանրային իրազեկման մեջ նրանց ներգրավելու համար	Ակտիվ գործող ՀԿ-ների թիվը և իրականացված ծրագերի ծավալը /11 ՀԿ/ *Մարզի համայնքներում ՀԿ-րի կողմից կազմակերպվել են հանրային լսումներ /11 հանրային լսում/	Ֆինանսավորման ոչ բավարար լինելը, Տեղեկատվության հասանելիությունը չի ապահովված ***Մեղմում՝*** Համայնքները շահագրգռված են մասնացելու կառավարման գործընթացներին Մարզում կան ակտիվ ՀԿ-ներ, գործում է Գավառի Օրհուսի կենտրոնը
Արդյունք 2. Անտառների կառավարման բարելավում ***Միջոցառումներ*** --Համայնքային անտառների հիմնում	Համայնքներում և անտառտնտեսություններում անտառապատ տարածքների ավելացում *Համայնքների թիվը, որտեղ հիմնվել են համայնքային անտառներ /35 համայնքներում/ *Հիմնված անտառների մակերեսը /35հա/ *Սևան ԱՊ և Ճամբարակի անտառտնտեսություններում տնկված նոր անտառներ/200հա./, անտառլրացման /200հա/, անտառվերականգնման և նախորդ տարիներին հիմնված անտառի խնամքի աշխատանքներ /450հա/: *Բարեկարգված անտառային	***Ռիսկերը՝*** ՏԻՄ-րի կողմից տնկված անտառների ոռոգման և խնամքի կազմակերպման համար շահագրգռվածության բացակայություն ***Մեղմում՝*** ,,Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտերի հիմնման ծրագիրը հաստատելու մասին'' ՀՀ կառավարությունը ընդունել է որոշում որի համաձայն հատկացվելու է 15 մլն ՀՀդրամ:

--Ոչ բնափայտային անտառային մթերքի /ՈԲԱՄ/ վերամշակման և իրացման համար համաֆինանսավորման սկզբունքով համայքներին աջակցության տրամադրում	ճանապարհներ: /45 կմ/ *Իրացված ՈԲԱՄ ծավալը, / կգ/	***Ռիսկերը՝*** Պետական սեկտորի կողմից ֆինանսավորում չապահովելը ***Մեղմում՝*** Մարզում կա բավարար քանակությամբ անտառային մթերք /չիչխան, մասուր, դեղաբույսեր, հատապտուղներ և այլն
Արդյունք 3. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների մայրական կազմի ստեղծում և պոպուլյացիայի համալրում ***Միջոցառումներ*** • Սևանի ավազանում էնդեմիկ ձկնատեսակների մայրական կազմի ստեղծման, բուծման և պահպանության համար ձկնաբուծարանների կառուցում/վերակառուցում, հանրային մասնավոր համագործակցության մոդելի կիրառմամբ: ՄԶԾ-ի կողմից տրամադրվող միջոցները պետք է վերադարձվեն ապրանքային ձևով՝ լիճ բացթողնվող մանրաձկան տեսքով, --Սևանա լճում սիգի պոպուլյացիայի վերականգնման	*Ձկնաբուծարաններում ստեղծված է Սևանի իշխանի մայրական կազմ: ******Սևանա լիճ բաց թողնված մանրաձկերի քանակը և գումարը *Յուրաքանչյուր տարի Սևանա լիճ է բաց թողնվելու **/366700** / հատ սևանի իշխանի մանրաձուկ 60մլն դրամ արժողությամբ *ՀՀ կառավարության որոշմամբ երեք տարով դադարեցվի Սևանա լճում արդյունագործական ձկնորսությունը Ամեն տարի պետ բյուջեից հատկացվելու է՝ 7.526մլն. դրամ	***Ռիսկերը՝*** Մասնավոր սեկտորը չի մշակի տնտեսապես հիմնավորված բիզնես պլան, ֆինանսական միջոցները ժամանակին չեն տրամադրվի: ***Մեղմում՝*** Համապատասխանում է ՀՀ կառավարության 14.09.06թ. թիվ 36 արձանագրային որոշմանը

խթանում: --Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկնատեսակների գույքագրում, հաշվառում օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում և պահպանության միջացառումների իրականացում: Լիճ բաց թողնվող մանրաձկան պայմանագրերի իրականացման նկատմամբ սահմանել հանրային հսկողություն	<<Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում:>>ՄԺԾ շրջանակներում իրականացվող ծրագրի համար	
Արդյունք 4. Սևանա լիճը սնող գետերի վերահսկողության կազմակերպում ***Միջոցառումներ*** • Համաձայնեցնել գետերի վրա իրականացվող աշխատանքները և դրանց ժամանակցույցը ՀՀ բնապահպանության նախարարության և մարզի բնապահպանական մարմինների հետ • Ստեղծել մոնիտորինգի խմբեր, մասնագետների և ՀԿ-ների ներգրավմամբ, ձվադրման գետերի օգտագործման վերահսկողության համար: • Ջրավազանային տարածքային	Սևան քաղաքում բարելավվել է կեղտաջրերի հեռացման ցանցը: Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան և վերանորոգվել է ցանցը: Մշակել և աստիճանաբար իրականացնել Սևանի ավազանի մյուս խոշոր բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղացման և կեղտաջրերի մաքրման համալիր ծրագիրը, առաջնահերթությունը տալով Գավառագետի ափերին գտնվող խոշոր համայնքներին /Նորատուս, Կարմիրգյուղ, Սարուխան և այլն/: Ափամերձ տարածքներում շահագործվող կառույցները կահավորված են սեպտիկ հորերով, կանխված են կեղտաջրերի արտանետումները դեպի Սևանա լիճ թափվող գետերը Ընդհանուր շահագործվող օբյեկտների	***Ռիսկերը***՝ վարկային ծրագրի իրականացման ժամանկացույցի խախտում ***Մեղմում՝*** Վարկային համաձայնագիրը կնքվել է 2007թ.: Աշխատանքները նախատեսված են Սևան ԱՊ կառավարման պլանով, Ջրի ազգային ծրագրով, Կենսաբազմազանության պահպանության ծրագրով

կառավարման բաժինների աշխատանքներում ՏԻՄ-երի և հանրային մասնակցության ապահովում:	85% ***Սևանա լճի մեխանիկական աղտոտվածությունը բարելավված է*** Գետերի հուների մաքրման աշխատանքների կատարման ժամանակացույցը համաձայնեցված է ՀՀ բնապահպանության նախարարության և մարզպետարանի բնապահպանության վարչության հետ Համաձայնեցված նախագծեր, 100% ***Գետերից ջրառը համապատասխանում է նվազագույն թողքի համար սահմանված արժեքին***	
Արդյունք 5. Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում ***Միջոցառումներ*** • Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում • Միջհամայնքային աղբավայրերի նախագծում • Տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցություն աղբահանության պայմանագրային հարաբերությունների ձևավորման համար • Գագարին համայնքր տարածքում աղբավերամշակման գործարանի կառուցում	***Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ, թիվ*** Մարզի 5 քաղաքներում մշակված է աղբավայրերի կառավարման պլան, ցանկապատված են գործող աղբավայրերը ***Աղբավայրեր որոնք ցանկապատվել են, թիվ*** ***Միջհամյանքային աղբավայրերի մշակված նախագծեր, թիվ*** Կազմակերպված է աղբահեռացման միջհամայնքային կազմակերպություն ***Համայնքներ, որոնք ունեն աղբահեռացման պայմանագրեր, թիվ*** Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծի հայեցակարգը մշակվել է և հավանության արժանացել ՀՀ կառավարության2011թ հունիսի 10-ի թիվ 22 նիստով:	***Ռիսկերը՝*** Ֆինանսական միջոցների բացակայություն Միջհամայնքային աղբավայրերի համար հողհատկացման տարածքների ընտրության մեջ առկա է շահերի բախում ***Մեղմում*** Թափոնների կառավարման հիմնախնդիրը կառավարության գերակայությունների շարքում է: Աղբավայրերի վերակառուցման/կառուցման խնդիրը նախատեսված է քաղաքների գլխավոր հատակագծերով:
•		

Արդյունք 7. Խախտված հողերի վերականգնում *Միջոցառումներ* • Լքված հանքավայրերի ռեկուլտիվացիա • Գործող հանքարդյունահանող ընկերությունների բնապահպանական կառավարման պլանների իրականացման հսկողության ուժեղացում • Տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացում • Թափոնների քանակի նվազեցմանն ուղղված աշխատանքներ՝ անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման, թափոնների հավաքման ու օգտահանման, թափոնների կրճատման, առավելագույն օգտագործման ապահովման,ներառյալ թափոնների երկրորդային օգտագործման հնարավորությունների ընդլայնման միջոցով: •	Մելիորացված հողեր, հա	*Ռիսկեր՝* Ֆինանսների բացակայություն, ՏԻՄ-երի կողմից համաֆինանսավորում իրականացնելու շահագրգռվածության բացակայություն Համապատասխանում է ՀՀ կառավարության 18.08.2011թ. ,,Հայաստանի հանրապետության տարածքում տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը հաստատելու մասին,, թիվ 1192-ն որոշմանը:

9. ՄԱՐԶԱՅԻՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

9.1 Ջրամատակարարում և ջրահեռացում

422. Ոլորտի իրավիճակի վերլուծություն - Անվտանգ խմելու ջրի աղբյուրների մատչելիությունը ոչ միայն Հազարամյակի զարգացման նպատակների և ԿԶԾ-ի կարևոր թիրախներից մեկն է, այլև աղքատության կրճատման գործոններից է:

423. Ջրամատակարարումը և ջրահեռացումը մարզում իրականացվում է ''Հայջրմուղկոյուղի'' կազմակերպության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ: Այսպիսով՝ ջրամատակարարման ոլորտի խնդիրը կապված է ոչ թե ջրի պակասի, այլ.

1) ջրամատակարարման համակարգերի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայության,

2) արտահոսքի և կորուստի (հատկապես կոմերցիոն և խողովակների քայքայվածությունից առաջացող կորուստներ),

3) համայնքների կողմից ուշադրության պակասի (սեփականատիրոջ վերաբերմունքի պակասի)

4) գանձումների ցածր մակարդակի,

5) որակի խնդիրների հետ (Էլեկտրաէներգիայի անջատումները և կամ ջրի սահմանաքանակային տրամադրումը կարող են հանգեցնել աղտոտման, հաշվի առնելով, որ այս դեպքում գծերում դրենաժը գործում է միայն մասնակի ռեժիմով, ինչպես նաև կան օդի խցանման պատճառով առաջացող այլ խնդիրներ):

424. Կարիքների, արդյունավետության ու ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները.

1) տեխնիկական և տնտեսական տվյալներ,

2) հիդրո-տեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ (ծավալ, հզորություններ և այլն),

3) ջրագծերի վերաբերյալ տվյալներ (երկարություն, ինժեներական պարամետրեր),

4) կարիքներ (օրական ծավալներ՝ խմելու և ոռոգման ջրի համար),

5) սակագներ,

5) որակ,

7) ջրահեռացման ծավալները:

425. Մատակարար-սպառող և ներդնող-շահառու փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը: Այստեղ պարզ ''ծախսերի և օգուտների'' վերլուծությունը բավարար չի կարող լինել ներդրման կենսունակությունը գնահատելու համար: Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը: Այնուամենայնիվ, սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսածածկումից: Կապիտալ ծախսերն այս փուլում պետք է իրականացվեն պետության կողմից՝ պետական ներդրումային ծրագրերի միջոցով (այլ կերպ ասած, ծառայությունների մատուցման համար կատարվող պահպանման և շահագործման ծախսերը փոխհատուցվում են սպառողների կողմից, իսկ կապիտալ ներդրումները ՝ պետության):

426.Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման համակարգի շարունակական բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

427. 2009-2011թթ. մարզի տարածքում նախատեսված և իրականացված աշխատանքների ծավալը ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 9.1 մլն դրամ

Աշխատանքի անվանումը	2009թ.		2010թ.		2011թ.	
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի
Ջրամատակարարում	2.650.0	747.0	2.650.0	248.0	2.650.0	-
Ջրահեռացում, կոյուղու կառուցում	1700.0	538.0	1700.0	2284.2	1700.0	-
Ընդամենը	4350.0	1285.0	4350.0	2532.2	4350.0	-

428. Ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների հիմնական նպատակն է նվազեցնել Սևանա լճի ավազանի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև բարձրացնել առողջապահական ցուցանիշները՝ կեղտաջրերի մաքրման համակարգի բարելավման միջոցով:

429. Զուգահեռաբար, մասնավոր հատվածի մասնակցությունը այս բնագավառում պետք է մանրամասնորեն ուսումնասիրվի՝ գործող պայմանագրի ժամկետի ավարտից հետո այսպիսի մասնակցությունը շարունակական դարձնելու նպատակով:

430. Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանների կառուցումը մարզի բոլոր քաղաքներում: Այս կապակցությամբ անհրաժեշտ են հետևյալ ներդրումները՝

1) Գավառ - 1.2 մլրդ դրամ

2) Մարտունի - 1.0 մլրդ դրամ

3) Վարդենիս - 0.8 մլրդ դրամ

431. Ընթացիկ շրջանում հրատապ են կոյուղացման հիմնախնդիրները Գավառում, Սևանում, Մարտունիում Վարդենիսում ու Ճամբարակում (յուրաքանչյուրի գծով ներդրումների գնահատված պահանջը կազմում է 4-4.5 մլն ԱՄՆ դոլար, նման ծավալների ներդրումներ կարող են անել կամ պետությունը կամ դոնորները), քանի որ այսօր Սևան թափվող կեղտաջրերը ակնհայտ բացասական էկոլոգիական վնաս են հասցնում լճի էկոհամակարգին:

432. Այս կարիքների բավարարմանն է ուղղված ՎԶԵԲ ֆինանսավորումը, որի հաշվին իրականացվում են կեղտաջրերի մաքրման կայանների և Գավառի, Վարդենիսի, Մարտունու, Սևանի ու Ջերմուկի համակարգերի վերականգնման աշխատանքները (ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12.5 մլն եվրո):

433. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի առաջնահերթություններից են.

1) 5 քաղաքային և 17 գյուղական համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգումը և տեղադրումը, խմելու ջրի ու ջրահեռացման համակարգերի մաքրման կայանների հիմնումը, առավելապես ուշադրության կիզակետում պահելով Սևանա լճի ափամերձ այն բնակավայրերը, որոնք գտնվում են գետերի գետաբերանների վրա և կեղտաջրերն անարգել բաց են թողնվում դեպի լիճ: Հիշենք, որ գետերի ջրերն ինքնամաքրվում են 10կմ և ավելի հոսելուց հետո: Նման համայնքներից են Նորատուսը, Վարդենիկը, որոնք ունեն 7000 և ավելի բնակչություն:

2) ջրային ցանցի կառավարման համակարգերի բարեփոխումներ, այդ թվում՝ ֆինանսական կայունությանը (վճարների հավաքագրման արդյունավետության բարձրացում) և ջրային ընկերությունների գործունեության կանոնակարգմանն ուղղված միջոցառումները (համապատասխան խթանների գործադրում),

3) գյուղական համայնքներում ջրի վարակազերծման նպատակով գլխամասային կառույցների և ՕԿՋ-ների սանիտարական պահպանման գոտիների վերականգնում:

434. Խմելու ջրի և ջրահեռացման շուրջ 981.5կմ երկարությամբ խողովակաշարեր կառուցման և վերանորոգման կարիք ունեն, որոնց վերականգնման ու կառուցման կարիքները կազմում են շուրջ 9109.0 մլն դրամ /տես Հավելված 5-ում/:

2011թ.-ին ընթացքի մեջ են հետևյալ աշխատանքները.

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ֆինանսավորման գումարը/մլն դրամ/	Ծանոթություն
1	Ծաղկունքի խմելու ջրագծի կառուցում	48.0	
2	Ն.Գետաշենի խորքային հորի կառուցում	20.4	
3	Տրետուքի խմելու ջրագծի վերակառուցում	15.0	
4	Նորակերտի խմելու ջրագծի հիմնանորոգում	30.0	
5	Գեղհովիտի կոյուղու կառուցում	7.0	
6	Արծվանիստի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	20.0	
Ընդամենը		**140.4**	

435. Ստորև ներկայացվում է ''ՀՋԿ'' ՓԲԸ-ի կողմից սպասարկվող ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակավայրերում 2012-2015թթ. ընթացքում նախատեսվող ներդրումային ծրագրեր՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների: Նախնական նախագծերի իրականացումից հետո, երբ կկատարվի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման համար անհրաժեշտ միջոցառումների խոշորացված գնահատում, ներկայացված ցանկում հնարավոր են որոշակի փոփոխություններ:

Ասիական Զարգացման բանկ.

Քաղաքներ	Գյուղական բնակավայրեր	Ներդրման չափը/ԱՄՆ դոլար/
Գավառ,Մարտունի	Նորատուս, Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Շատվան, Դդմաշեն	7 400 000.0

Ընդամենը ըստ ՎԶԵԲ-ի 7 400 000.0

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ.

Հ/հ	Քաղաքներ	Գյուղական բնակավայրեր	Ներդրման չափը/ԱՄՆ դոլար/
1	Սևան		2 000 000.0
2	Ճամբարակ		1 200 000.0
3	Գավառ		1 600 000.0
4	Մարտունի		1 600 000.0
5		Սարուխան	800 000.0

Ընդամենը ըստ ԱԶԲ-ի՝ 7 200 000.0

9.2 Գազամատակարարում

436. Գազիֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը, ինչը կնպաստի բազմաթիվ բնակարանների, առողջապահական, կրթական, մշակույթային և այլ հաստատությունների կողմից էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործմանը և ջեռուցման կազմակերպմանը: Բացի այդ, գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12մ^3 վառելափայտի խնայողություն, որն իր հերթին կկանխի անտառահատումները և կնպաստի բնապահպանական խնդիրների լուծմանը:

437.Գազամատակարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով ջերմամատակարարման լոկալ համակարգերի ներդրման վրա: Մարզում արդեն աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան տներում լոկալ ջեռուցման համակարգերի տեղադրման ուղղությամբ: Գազամատակարարման համար կատարվող շահագործման և պահպանման բոլոր ծախսերը փոխհատուցվելու են սպառողների կողմից: Բազմաբնակարան տների արդյունավետ կառավարումը նույնպես կարևոր հարց է ջերմամատակարարման ծառայությունների հասանելիության և արդյունավետության բարելավման առումով: Այս հարցի լուծմանը կնպաստի 2002 թվականին ընդունված ''Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին'' օրենքի փոփոխված տարբերակի ընդունումը***:***

438. 2009-2011թ.թ. Ճամբարակի, Վարդենիսի և մասամբ Սևանի տարածաշրջանների համար գործարկվել է 34կմ գազատար, որի մոտավոր արժեքը կազմում է 193 մլն դրամ:

ՄԶԾ-ով 2011թվականին գազամատակարարման ոլորտում իրականացվող աշխատանքները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 9.2

ՀՈՀ	Միջոցառման անվանումը	ՄԶԾ-ով նախատեսված 2011թ. կարիքները /մլն. դրամ/	2011թ. իրատեսական պլանավորված բյուջե /մլն. դրամ/	2011թ-ի 1-ին կիսամյակի փաստացի
1	Գազամատակարարում, այդ թվում	40,0	-	
	Արտանիշի գազատարի ներքին ցանցի կառուցում **/ՀՀ պետ,բյուջե/**	-	25,0	Ընթացքի մեջ է
	Դրախտիկի գազատարի ներքին ցանցի կառուցում **/ՀՀ պետ,բյուջե/**	-	15,0	Ընթացքի մեջ է

	Տորֆավանի գազամատակարարման համակարգի կառուցում **/ՀՀ պետ,բյուջե/**	-	12,0	Ընթացքի մեջ է
	Սեմյոնավկայի գազամատակարարման համակարգի կառուցում **/ՀՀ պետ,բյուջե/**	-	20,0	Ընթացքի մեջ է
	ԸՆԴԱՄԵՆԸ	40,0	72,0	

439. 2011 թվականին գազամատակարարման համակարգի բաժանորդների թիվը կաճի 0,3%-ով Անկախ պատճառներից, պետական գազամատակարարման ընկերության կողմից ծառայությունների կրճատումը համայնքներում հանգեցրել է սպասարկվող համայնքների թվի կրճատմանը (այժմ գազ ունի խորհրդային շրջանի քաղաքային բազմաբնակարան շենքերի բնակարանների 82,6%-ը և գյուղական համայնքների 65.2%-ը): Այսօր բնական գազ է մատակարարվում մարզի միայն 61 համայնքներին: 2011թ-ին ''ՀայՌուսգազարդ'' ՓԲԸ –ի կողմից նախատեսված է իրականացնել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Գազիֆիկացված տնային տնտեսությունների թիվը պետք է հասցվի 45000-ի: Առ. 01.07.2011թ. դրությամբ մարզի 92 բնակավայրերից գազիֆիկացվել են 61-ը: Ըստ տարածաշրջանների պատկերը հետևյալն է.

Գավառի տարածաշրջան -12 բնակավայր
Մարտունու տարածաշրջան -18 բնակավայր
Վարդենիսի տարածաշրջան - 11 բնակավայր
Սևանի տարածաշրջան -11 բնակավայր
Ճամբարակի տարածաշրջան -9 բնակավայր

440. 2011թ. օգոստոսի 1-ի դրությամբ մարզի գազիֆիկացված բնակարանների թիվը 43796 է,որոնցից 9358-ը բազմաբնակարան շենքերում են, իսկ 34438-ը՝ առանձնատներ են: Ընդհանուր թիվը բաշխվում է հետևյալ կերպ.

Հ/Հ	Տարածաշրջանը	Ընդամենը բաժանորդ	Այդ թվում	
			ԲԲՇ	Առանձնատուն
1	Գավառ	12139	1753	10386
2	Մարտունի	15186	1129	14057
3	Վարդենիս	5434	1054	4380
4	Սևան	9336	4843	4493
5	Ճամբարակ	1701	579	1122
Ընդամենը		43796	9358	34438

441. Ներկայումս գազամատակարարման վերականգնման աշխատանքների իրկանացման համար ներդրողի կողմից մայր գազատարների և ներհամայնքային ցանցերի վրա ծախսված ֆինանսական միջոցներն ավելի մեծ են քան սպասվելիք փոխհատուցումը, մասնավորապես փոքր համայնքներում փոքրաթիվ բաժանորդներ ունենալու պատճառով, որը բիզնեսի առումով շահավետ չէ:

442. Այդ իսկ պատճառով, ''ՀայՌուսգազարդ'' ՓԲԸ-ի կողմից առաջիկա տարիներին ներդրումային ծրագրերով մարզում գազիֆիկացման աշխատանքներ չեն նախատեսվում: Ընկերության կողմից ներդրումները հիմնականում կուղղվեն Սևանա լճի բարձրացման հետ կապված, ինչպես նաև գազաբաշխման համակարգի վթարային գազատարների փոխարինման և

վերատեղադրման աշխատանքներին: Ընկերության կողմից 2011-2013թթ նախատեսվում են մոտ 970 մլն դրամի ներդրումներ:

443. 2012-2014թթ ՀՀ պետբյուջեի հաշվին Գեղարքունիքի մարզում նախատեսվող կապիտալ ծախսերը, այդ թվում՝ կապիտալ ներդրումները. տես՝ հավելված 6-ում:

444. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ''ՀայՌուսգազարդ'' ՓԲԸ 2011-2013թթ ներդրումային ծրագիրը ֆինանսական հոսքերի կարգավորման նպատակով Ընկերության հիմնադիրների պահանջով դասակարգվել է ըստ ներդրումների առաջնահերթության, համաձայն որի Գեղարքունիքի մարզում 2011թ.-ին նախատեսված է իրականացնել Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված, ինչպես նաև գազաբաշխման համակարգի վթարային գազատարների փոխարինման ու վերատեղադրման 410.0մլն դրամի, 2012թ.-ին՝ 450.0մլն դրամի, իսկ 2013թ.-ին՝ 110.0 մլն դրամի աշխատանքներ:

9.3 Էներգետիկա

9.3.1. Էլեկտրական էներգիա

445. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում էներգամատակարարումը իրականացվում է <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ի Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ մասնաճյուղերի կողմից: Մարզը ամբողջովին էլեկտրաֆիկացված է: Էներգամատակարարման որակը բարձրացնելու նպատակով 2012-2014թթ. մարզում <ՀԷՑ> ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել շուրջ 2676.24 մլն. դրամի ներդրումներ: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն օդային, մալուխային գծերի կառուցման, վերանորոգման աշխատանքներին /տես Աղյուսակ 9.3/:

/Աղյուսակ 9.3/

Հ/հ	Նորոգման աշխատանքների անվանումը և ներդրումները	Նախատեսված ներդրումներ /մլն դրամ/			
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
1	110-35 կՎ էլ. ցանցերում	170.24	166.0	172.4	176.6
2	10-6-0.4 կՎ էլ. ցանցերում	469.0	457.3	475.0	486.6
3	110-35-6-10-0.4 կՎ էլ. ցանցերում ձմռան նախապատրաստական աշխատանքներ	25.6	25.0	25.9	26.6
	Ընդամենը	**664.84**	**648.3**	**673.3**	**689.8**

446. Մարզում <Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ի միջոցով նախատեսվում է իրականացնել շուրջ 43700 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ: Ներդրումներն կուղղվեն Իրան Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի՝ մարզով անցնող մասի կառուցմանը և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող <էլեկտրամատակարարման հուսալիություն> ծրագրի շրջանակներում 220 կՎ էլեկտրահաղորդման նոր գծի / Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան 1/ կառուցմանը /տես Աղյուսակ 9.4/:

/Աղյուսակ 9.4/

N	Ծրագրի անվանումը	Ներդրումների ծավալն ըստ տարիների հազ.ԱՄՆ դոլար			
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
1	<Իրան-Հայաստան> 400 կՎ 3-րդ էլեկտրահաղորդման գիծ	14300	14000		
2	<Էլեկտրամատակարարման հուսալիություն> ծրագրի շրջանակներում 220 կՎ էլեկտրահաղորդման գիծ (Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք - Որոտան-1)	3000	6000	6400	
Ընդամենը		**17300**	**20000**	**6400**	
Ընդհանուրը		**43700**			

9.3.2. Հիդրոէներգետիկա

447. Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտադրության լիցենզիաների համաձայն 2011թ. հուլիսից ևս մեկ ՓՀԷԿ սկսել է արտադրել էլեկտրաէներգիա: Հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզում տարեկան 45,65 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա են արտադրում 9 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 12400 կՎտ ընդհանուր հզորությամբ /տես աղյուսակ 9.5/:

448. Մարզում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվում են 8 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 25350 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 81,0 մլն. կՎտժ-ով, որն՝ իր հերթին, կհանգեցնի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և տասնյակ աշխատատեղերի ստեղծմանը /տես աղյուսակ 9.6/:

449. Սակայն, ելնելով Սևանա լճի էկոհամակարգի և էնդեմիկ ձկնատեսակների պահպանության խնդիրներից ՀՀ կառավարության 04.08.2011թ. N30 որոշմամբ ՓՀԷԿ-երի զարգազման սխեմայի ցանկից հանվել է Սևանա լճի ավազան բաժինը, նպատակ ունենալով դադարեցնել Սևանա լճի ավազանում ՓՀԷԿ-երի կառուցում

Աղյուսակ 9.5. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ

Հ/հ	Շահագործող ընկերության անվանումը	Լիցենզիայի համարը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը	ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը		ՓՀԷԿ-ի տիպը	հաշվարկային ելքը
						կՎտ	մլն.կվտժ		մ3/ վրկ
1	2	3	4	5	6	7	8	9	16
1	‘Գրիգոր Թադևոսյանի կվարց’ ՍՊԸ	58	20.04.2001	20.04.2016	Անի	47	0.19	հաշվարկային	0.5
2	‘ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ’ ՍՊԸ	307	29.12.2008	29.12.2023	Ձորագյուղ-1	493	3.25	ոռոգման	0.1
3	‘ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ’ ՍՊԸ	339	02.12.2009	02.12.2024	Ձորագյուղ-3	274	4.34	համալիր	0.1
4	‘Լուսակունք’ ՍՊԸ	358	09.06.2010	09.06.2025	Այրք ՀԷԿ-1	361	1.9	ոռոգման համալիր	0.9
5	‘ԷՐԻԿ’ ՓՀԷԿ’ ՍՊԸ	367	28.07.2010	28.07.2025	Էրիկ	2,460	8.6	ոռոգման համալիր	3.0
6	‘Լուսակունք’ ՍՊԸ	382	08.12.2010	08.12.2025	Այրք ՀԷԿ-2	659	1.9	բնական ջրահոսք	0.9
7	‘Լուսակունք’ ՍՊԸ	389	19.01.2011	19.01.2026	Ավազան	706	2.0	ոռոգման համալիր	0.7
8	‘ՄԿՇԳ ԷՆԵՐԳԻԱ’ ՍՊԸ	395	02.03.2011	02.03.2026	Մարտունի3	1,800	7.2	բնական ջրահոսք	1.3
9	‘ԳՐԻԱՐ’ ՓԲԸ	413	06.07.2011	06. 07.2026	Գետեկ-1	5,600	16.3	բնական ջրահոսք	4.0
ԸՆԴԱՄԵՆԸ						**12,400**	**45.65**		

Աղյուսակ 9.6. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Շահագործող ընկերության անվանումը	Լիցենզիայի N	Լիցենզիայի գործողության ժամկետը		Երկարաձգվել է անգամ / ամիս	ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը	Տարեկան արտադրանք	Ներդրումների վերադարձը (առանց ԱԱՀ)
			սկիզբ	ավարտ			կՎտ	մլն կվտժ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	‘Հիդրո կորպորացիա’ ՓԲԸ	149	19.11.2004	19.07.2012	3/68	Արգիչի2	8,400	30.5	3,468.0
2	‘Ջրասահք’ ՍՊԸ	244	11.05.2007	11.05.2013	1/36	Վարդենիկ1	6,130	16.7	1379.0
3	‘ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ’ ՍՊԸ	289	02.07.2008	02.05.2012	1/22	Ձորագյուղ-22	212	1.2	199.8
4	‘ՌԵՅԳԱԼ’ ՍՊԸ	381	19.11.2010	19.07.2012	-	Կարճաղբյուր ՓՀԷԿ-21	1,119	8.0	348.9
5	‘Լուսակունք’ ՍՊԸ	386	22.12.2010	22.12.2011	-	Այրք ՀԷԿ-12	209	0.6	652.3
6	‘ԱՐՄԱՐՍՈՆ-ԷՆԵՐՋԻ’ ՍՊԸ	387	28.12.2010	28.12.2013	-	Ծովակ1	230	1.3	54.2
7	‘ՌԵՅԳԱԼ’ ՍՊԸ	405	25.05.2011	25.03.2013	-	Կարճաղբյուր ՓՀԷԿ-11	1,383	7.9	394.6
8	՞Ֆիրմա Գ.Ա.Խ՞ ՍՊԸ	425	14.09.2011	14.08.2014	-	Վարդենիկ-2[1]	7,667	14.8	196.0
ԸՆԴԱՄԵՆԸ							**25,350**	**81.0**	

9.4 Ճանապարհաշինություն

9.4.1 Ճանապարհաշինության ենթաոլորտի իրավիճակի վերլուծություն

450. Ֆիզիկական մեկուսացվածությունը ԿԶԾ-ում սահմանված է որպես կարևորագույն գործոն, որը խոչընդոտում է կենսաբանական, սոցիալական ու մշակութային կարիքները հոգալուն: Հայաստանում աղքատության մակարդակը ուղղակիորեն կապակցված է ք. Երևանից ու մարզկենտրոններից համայնքների հեռավորության հետ և հատկապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակի հետ: Այս առումով աղքատության աստիճանը ուղղակիորեն կապվում է ճանապարհային ցանցի վիճակի հետ:

451. Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հունվարի 10-ի թիվ 112-Ն որոշմամբ հաստատված անվանացանկերի մարզի տարածքում գործում են՝

1) Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 283.6կմ

2)Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 348.1կմ այդ թվում՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության 113.1կմ, մարզային ենթակայության 171.3 կմ, համայնքային ենթակայության 63.7 կմ և մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 211.8կմ:

452. Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները դասակարգվում են ըստ ենթակայության՝ /ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, մարզային և համայնքային/, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհները՝ /մարզային և համայնքային ենթակայության/:

453. Մարզի միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ճանապարհային ցանցում ճանապարհների անընդհատությունն ապահովելու նպատակով գործում են նաև կամուրջներ, կամրջային անցումներ, ջրթող խողովակներ և այլն:

454. 2009-2010թթ. իրականացրած քաղաքականության արդյունքում արձանագրվել է որոշակի ձեռքբերումներ, այն է՝

1) ՀՀ 2009թ. պետական բյուջեով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ա. Սևան-Ծաղկունք-Զովաբեր շուրջ 8.0կմ երկարությամբ հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել էր 2008թ.: 2008թ. հիմնանորոգվել էր 7.1կմ հատվածը: 2009թ. ընթացքում հիմնանորոգվեց մնացած 0.9կմ հատվածը, որի արդյունքում ծախսվել է 111.4մլն.դրամ:

բ. Հիմնանորոգվել են նաև Մ-4-Ճամբարակ-Դրախտիկ 2.8կմ երկարությամբ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ48+800-կմ51+600 հատվածը, որի արդյունքում ծախսվել է 321.4մլն.դրամ, Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս 5.58կմ երկարությամբ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ6+620-կմ12+200 հատվածը, որի արդյունքում ծախսվել է 361.2մլն.դրամ, Գավառ-Նորատուս տեղական նշանակության ավտոճանապարհի 1.7կմ հատվածը, որի արդյունքում ծախսվել է 308.1մլն.դրամ,Մ-14-Դրախտիկ ավտոճանապարհի մի հատվածը, որի արդյունքում ներդրվել է 39.9 մլն. դրամ, Վարդենիսի հիվանդանոց տանող ճանապարհի 2.3կմ հատվածը, որի արդյունքում ծախսվել է 264.0մլն.դրամ, Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի 25-րդ /Դրախտիկ համայնքի մոտակայք/ և 63+650-րդ /Փամբակ համայնքի մոտակայք/ կիլոմետրերում գտնվող կամուրջները, որի արդյունքում ծախսվել է 88.7մլն.դրամ, Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ53+00-կմ54+00 հատվածի փլված հենապատի մի հատվածը, որի նպատակով ներդրվել է 108.3մլն. դրամ, Երևան-Սևան-

Իջևան միջպետական նշանակության ավտոճանապարհի 67+500 կիլոմետրում գտնվող փլվածքը, որի արդյունքում ներդրվել է շուրջ 75.0մլն. դրամ: Նախատեսված էր հիմնանորոգել Մ/Ճ-Գավառ 4.5կմ երկարությամբ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+00-կմ4+500 հատվածը, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով հիմնանորոգվեց միայն 0.35կմ հատվածը, որի արդյունքում ծախսվել է 30.4մլն.դրամ:

գ. 2009թ. օգոստոս ամսից մեկնարկել էր Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ3+00-կմ5+00 ջրածածկման ենթակա հատվածի բարձրացման աշխատանքները: 2009թ. իրականացվել են գաբիոնային շարվածքի և հողային լիցքի աշխատանքներ, ինչի արդյունքում ներդրվել է 376.8 մլն. դրամ:

455. Ընդհանուր առմամբ մարզում ՀՀ 2009թ. պետական բյուջեի միջոցներով հիմնանորոգվել է 13.7կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, 2 կամուրջներ, 2 փլվածքներ, ինչպես նաև մեկնարկել է Սևան-Գավառ ավտոճանապարհի ջրածածկման ենթակա Լճաշենի շուրջ 2կմ հատվածի գաբիոնապատման և հողային լիցքի աշխատանքները:

456.Վերոհիշյալ հիմնանորոգման աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ 2009թ. պետական բյուջեից ներդրվել է 2085.4 մլն.դրամ, իսկ սպասարկման նպատակով 743.8մլն. դրամ:

457. 2009թ. ''Հազարամյակի մարտահրավերներ'' ծրագրով հիմնանորոգվել են հետևյալ ճանապարհահատվածները՝ Անտառամեջ – Դպրաբակ – Այգուտ – Թթուջուր - Ճամբարակ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 4.7կմ հատվածը 339.9 մլն.դրամով, Մ-10-Լճաշեն տեղական նշանակության ճանապարհի կմ0+00-կմ0+700 հատվածը 31.0 մլն.դրամով, Մ-10-Արծվաքար-Գավառ-Կարմիրգյուղ տեղական նշանակության ավտոճանապարհի որոշ հատվածներ 71.9 մլն.դրամով, Գավառ-Նորատուս տեղական նշանակության ավտոճանապարհի 1.6կմ հատվածը 77.9 մլն.դրամով, Մ-10-Ն.Գետաշեն-Վ.Գետաշեն տեղական նշանակության ավտոճանապարհի 2008թ. համնանորոգված հատվածներում կատարվել են դեպի երկրորդական ճանապարհներ տանող հատվածների /մոտեցումների/ ասպալտապատում 13.1 մլն. դրամով:

Ընդհանուր առմամբ 2009թ. ''Հազարամյակի մարտահրավերներ'' ծրագրով մարզում հիմնանորոգվել է 7.3կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, որի արդյունքում ներդրվել է 597.6մլն. դրամ:

458. Ասիական զարգացման բանկի ծրագրով մարզում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1)Հիմնանորոգվել են Մ-11-Աստղաձոր կմ0+00-կմ2+322 տեղական նշանակության ավտոճանապարհի 2.3կմ հատվածը 153.5մլն.դրամով, Մ-10-Վարդաձոր կմ0+00-կմ2+600 տեղական նշանակության ավտոճանապարհի 2.6կմ հատվածը 233.3մլն.դրամով, Մ-10-Ծակքար-Թազագյուղ կմ0+00-կմ5+981 տեղական նշանակության ավտոճանապարհի շուրջ 6.0կմ հատվածը 445.3մլն.դրամով, Մ-14-Ծովագյուղ-Սեմյոնովկա կմ0+00-կմ14+340 հանրապետական նշանակության ավտոճանապարհի 5.3կմ հատվածը 460.8մլն.դրամով, Վարդենիս-Շատվանի խաչմերուկ կմ0+00-կմ5+200 միջպետական նշանակության ավտոճանապարհի 5.2կմ հատվածը 283.5մլն.դրամով, Մ-11-Գեղամաբակ կմ0+00-կմ5+042 տեղական նշանակության ավտոճանապարհի 2.4կմ հատվածը 156.8մլն.դրամով, Մ-11-Ջաղացաձոր կմ0+00-կմ5+752 տեղական նշանակության ավտոճանապարհի 0.9կմ հատվածը 76.0մլն.դրամով, Մ-11-Գեղաքար կմ0+00-կմ8+548 տեղական նշանակության ավտոճանապարհի 2.5կմ հատվածը 317.0մլն.դրամով, Վարդենիս-Գեղամասար

կմ0+00-կմ17+900 միջպետական նշանակության ավտոճանապարհի 17.9կմ հատվածը 1642.0մլն.դրամով և Մ-14-Տրետուք-Կուտական կմ0+00-կմ11+900 տեղական նշանակության ավտոճանապարհի 11.9կմ հատվածը 1601.0մլն.դրամով:

459. Ընդհանուր առմամբ Ասիական զարգացման բանկի ծրագրով 2009թ. մարզում հիմնանորոգվել է 56.9կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, որի արդյունքում ներդրվել է 5369.3 մլն.դրամ:

460. ,,Համաշխարհային բանկի,, ծրագրով մարզում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ հիմնանորոգվել են Վարդենիս-Ակունք կմ0+00-կմ2+120 տեղական նշանակության ավտոճանապարհի 2.12կմ հատվածը 315.0մլն.դրամով, Մ-11-Կարճաղբյուր կմ0+00-կմ1+870 տեղական նշանակության ավտոճանապարհի 1.87կմ հատվածը 214.1մլն.դրամով, Ճամբարակ-Վահան կմ0+00-կմ5+730 հանրապետական նշանակության ավտոճանապարհի 4.0կմ հատվածը 623.7մլն.դրամով և Մ-10-Ձորագյուղ կմ0+00-կմ4+900 տեղական նշանակության ավտոճանապարհի 2.7կմ հատվածը 348.8մլն.դրամ:

461. Ընդհանուր առմամբ Համաշխարհային բանկի ծրագրով 2009թ. մարզում հիմնանորոգվել է 10.7կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ,որի արդյունքում ներդրվել է 1501.6 մլն.դրամ:

462. 2009թ. մարզում ճանապարհաշինության բնագավառում պետական բյուջեով, Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի և Հազարամյակի մարտահրավերներ ծրագրերով կատարված ընդհանուր ներդրումը կազմել է 10297.8 մլն.դրամ, որի արդյունքում հիմնանորոգվել է 88.7կմ ճանապարհներ, 2 փլվածքներ, 2 կամուրջներ, մեկնարկել է Սևան-Գավառ ավտոճանապարհի Լճաշեն համայնքի վարչական տարածքով անցնող 2կմ հատվածի բարձրացման աշխատանքները, ինչպես նաև կատարվել են պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ:

463. ՀՀ 2010թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզում կատարվել են հիմնանորոգման հետևյալ աշխատանքները՝ Մ-4-Ճամբարակ-Դրախտիկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ48+800-կմ51+600 հատվածում կատարվել են երկաթյա արգելափակոցների տեղադրման, ճանապարհի կահավորման և նշագծման, ինչպես նաև իջատեղերում ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ, որի արդյունքում ներդրվել է 42.7մլն.դրամ, 2010թ. գարնանը վերսկսվեց Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ3+00-կմ5+00 ջրածածկման ենթակա հատվածի բարձրացման աշխատանքները: Իրականացվել են հողային լիցքի և մետաղական արգելափակոցների տեղադրման աշխատանքներ, ինչի նպատակով ծախսվել է 292.1 մլն. դրամ: Հիմնանորոգվել են նաև Մ-4 Երևան-Սևան-Իջևան միջպետական նշանակության ավտոճանապարհի 69-րդ կիլոմետրում և Մ-11 Մարտունի-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ23+525-կմ23+650 հատվածներում Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով առաջացած փլվածքները, 56.4մլն.դրամով: Կառուցվել է Դպրաբակ-Կալավան մարզային ենթակայության ավտոճանապարհի շրջանցիկ շուրջ 1կմ ճանապարհահատվածը և կամուրջ Գետիկ գետի վրա, որի արդյունքում ծախսվել է 310.0մլն.դրամ:

464. Ընդհանուր առմամբ մարզում ՀՀ 2010թ. պետական բյուջեի միջոցներով հիմնանորոգվել են առանձին ճանապարհահատվածներ, կառուցվել է մեկ կամուրջ, վերականգնվել թվով 2 փլվածքներ, ինչպես նաև վերսկսկել է Սևան-Գավառ

ավտոճանապարհի ջրածածկման ենթակա Լճաշեն համայնքի վարչական տարածքով անցնող շուրջ 2կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Վերոհիշյալ աշխատանքների իրականացնելու նպատակով ՀՀ 2010թ. պետական բյուջեից հիմնանորոգման նպատակով ներդրվել է 701.2 մլն.դրամ, իսկ սպասարկման նպատակով 684.6մլն. դրամ:

465. Ասիական զարգացման բանկի ծրագրով մարզում 2010թ. վերսկսվել և ավարտին են հասցվել Վարդենիս-Շատվանի խաչմերուկ, Մ-11-Գեղաքար, Մ-11-Գեղամաբակ և Մ-11-Ջաղացաձոր շուրջ 13.4կմ երկարությամբ տարբեր նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգումը, որի արդյունքում ներդրվել է 1938.0 մլն.դրամ:

466. Համաշխարհային բանկի ծրագրով մարզում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ ավարտին են հասցվել 2009թ.-ից կիսատ մնացած Ճամբարակ-Վահան 5.73կմ հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները, 180.0մլն.դրամով: Հիմնանորոգվել են նաև Հ-39-Կարմիրգյուղ-Սարուխան շուրջ 5կմ տեղական նշանակության ավտոճանապարհը 554.0մլն.դրամով, Մ-10-Լճաշեն կմ0+00-կմ1+700 տեղական նշանակության ավտոճանապարհը 92.0մլն.դրամով, Գավառ-Նորատուս տեղական նշանակության ավտոճանապարհի 0.5կմ հատվածը 71.0մլն.դրամով: 2010թ. սեպտեմբեր ամսից սկսած հիմնանորոգվում է Գեղամավան-Գագարին կմ0+00-կմ6+073 տեղական նշանակության ավտոճանապարհը: Իրականացվել են կողնակների հարթեցման, բետոնյա եզրաքարերի տեղադրման, հիմքի տեղադրման ջրահեռացման ցանցի և 2.6կմ միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 185.0մլն.դրամ:

467. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրով հիմնանորոգվել է Ճամբարակ քաղաքի Գ.Նժդեհ փողոցի 1.2կմ հատվածը, որի արդյունքում ծախսվել է 117.1մլն.դրամ:

468. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցներով հիմնանորոգվել է Թթուջրի համայնքային նշանակության կամուրջը, 37.6մլն.դրամով:

469. 2010թ. մարզում ճանապարհաշինության բնագավառում պետական բյուջեով, Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի, Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերով և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցներով կատարված ընդհանուր ներդրումը կազմել է 4560.5 մլն.դրամ, որի արդյունքում հիմնանորոգվել է 26.1կմ ճանապարհներ, 2 փլվածքներ, կատարվել է Սևան-Գավառ ավտոճանապարհի Լճաշեն համայնքի վարչական տարածքով անցնող 2կմ հատվածի բարձրացման հողային լիցքի և մետաղական պաշտպանիչների տեղադրման աշխատանքներ, կառուցվել է Դպրաբակ-Կալավան տեղական ենթակայության կամուրջը և կոպճապատվել է շուրջ 1կմ ճանապարհ, ինչպես նաև կատարվել են միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ:

470. 2009-2010թթ. բացի հիմնանորոգման աշխատանքներից պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի տարածքում կատարվել են նաև միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ:

471. 2011թ. պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել են Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի 53-54-րդ կիլոմետրում գտնվող փլվածքը,Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի 3-5-րդ կիլոմետրում գտնվող հատվածը, Ճամբարակի հետիոտնային նշանակության կամուրջը և Գեղարքունիքի գերեզմանոց տանող ճանապարհը: Նախատեսված էր կահավորել Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի կմ6+220-կմ12+220 և Մ-4-Ճամբարակ-Դրախտիկ ավտոճանապարհի կմ48+800-51+600 հատվածները:

472. Բացի հիմնանորոգման աշխատանքներից պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի տարածքում կատարվում են նաև միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքներ:

473. Ասիական զարգացման բանկի միջոցներով հիմնանորոգվել է Անտառամեջ-Ձորավանք–Դպրաբակ–Այգուտ–Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք կմ15+240-կմ48+800 ճանապարհահատվածը:

474. Համաշխարհային բանկի միջոցներով վերսկսվել էր Գեղամավան-Գագարին ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:
2011թ. համար նախատեսված թվարկված բոլոր ծրագրերը նախատեսված էր ավարտել տարվա ընթացքում:

475. 2009-2011թթ. ՏԱՊ-երում ամրագրված են միջպետական, հանրապետական և մարզային ճանապարհների հիմնանորոգման ու վերանորոգման, ինչպես նաև համայնքային և սահմանամերձ համայնքային ճանապարհների ձմեռային պահպանության ու շահագործման միջոցառումներ: Աշխատանքների ցանկում են եղել փոսային նորոգումները, բարեկարգումը, միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցումը, խճապատումը և Գավառի ու Սևանի համայնքային փողոցների նորոգումը:

Աղյուսակ 9.7. Գեղարքունիքի մարզում ճանապարհների կապիտալ վերանորոգման, վերականգնման և պահպանման աշխատանքների ֆինանսավորումը 2009-2010.թ.(մլն դրամով)

Միջոցառման անվանումը	2009թ.			2010թ.		
	նախա-տեսված /կմ/	փաս-տացի /կմ/	փաս-տացի ներդրում /մլն դրամ/	նախա-տեսված /կմ/	փաս-տացի /կմ/	փաս-տացի ներդրում /մլն դրամ/
Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների նորոգում	71.1	46.7	4823.1	38.0	1.7	649.6
Մարզային նշանակության ճանապարհների նորոգում	31.0	25.3	2713.6	24.5	11.8	1387.5
Համայնքային նշանակության ճանապարհների նորոգում	42.5	16.7	2017.3	26.3	12.6	1838.8
Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ընթացիկ և ձմեռային	288.7/ 380.3	288.7 / 380.3	651.3	288.8/ 380.3	288.8/ 380.3	597.8

պահպանում						
Մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանում	55.3/ 92.8	54.3/ 92.8	66.7	55.8/ 98.2	52.8/ 98.2	60.8
Համայնքային նշանակության ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանում	21.5/ 36.0	20.9/ 36.0	25.8	24.0/ 42.2	21.5/ 42.2	26.0

476. Ամփոփելով ճանապարհաշինության ոլորտի 2009-2010թթ. ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումների իրականացման փորձը՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգման՝

1/ ֆինանսական առումով փաստացի ներդրումը նախատեսվածի նկատմամբ գերազանցել է 100 տոկոսը, սակայն հարկ է համարվում նշել, որ 2008թ. ձևավորված աշխատանքային խմբի կողմից 2009-2011թթ. մարզային զարգացման ծրագիրը կազմելիս կատարված հաշվարկները չեն համապատասխանել հաշվետու ժամանակահատվաշում նախագծային կազմակերպությունների կողմից կատարվող հաշվարկներին /հումքի, նյութերի թանկացումներ, նախահաշվային գործակիցների բարձրացումներ և ծրագրի կազմման պահից հետո հարկադրաբար առաջացած կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքներ/:

2/ հաշվետվությունների վիճակը խնդրահարույց է: Պատվիրատու և կապալառու կազմակերպությունները մարզպետարան չեն ներկայացնում մարզի տարածքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություններ, բացի այդ մարզպետարանին լիարժեք տեղեկատվություն չի տրամադրվում վարկային ծրագրերով իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների մասին:

477. 2012-2015թթ. ճանապարհաշինության ենթաոլորտի հիմնախնդիրները ըստ առաջնահերթության**.**

1) 2012-2015թթ. սույն վերանայված մարզային զարգացման ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել, վերանորոգել և վերականգնել մարզի տարածքում գտնվող միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ճանապարհներ, խիստ վթարային վիճակում գտնվող կամուրջներ, Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով առկա փլվածքներ: Կբարելավվի նաև ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները /տես հավելված 7-ը/:

2)Մարզի տարածքում գործող առանձին ճանապարհների և ճանապարհահատվածների վրա /հատկապես տեղական ենթակայության/ երկար տարիներ հիմնանորոգման /վերանորոգման/ աշխատանքներ չկատարելու պատճառով, այժմ դրանք ավտոտրանսպորտի համար դարձել են դժվար երթևեկելի, առանձին հատվածներ նույնիսկ անանցանելի: Ձնհալքների, հեղեղների և գարնանային սելավաջրերի պատճառով այժմ խիստ վթարային և վթարային վիճակում են հայտնվել տեղական ենթակայության որոշ կամուրջներ: Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով անհրաժեշտություն է առաջանում գործող առանձին ճանապարհահատվածներ տեղում բարձրացնել կամ շրջանցիկ ճանապարհներ կառուցել: Հիմնանորոգված ճանապարհները անկախ նշանակությունից ենթակա են ամենամյա ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության: Այս թվարկված բոլոր հիմնախնդիրները հաշվի առնելով կարելի է գնահատել մարզում ճանապարհաշինության բնագավառի կարիքները /աղյուսակ 9.8/:

Աղյուսակ 9.8. Ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսները 2012-2015թթ.:

Միջոցառում	Գնահատված արժեքը /մլն. դրամ/
1.Ճանապարհաշինություն	
Միջպետական և հանրապետական ճանապարհների հիմնանորոգում	6 650.0
Տեղական /մարզային և համայնքային/ ճանապարհների հիմնանորոգում	16 585.0
Ընդամենը հիմնանորոգում	**23 235.0**
Միջպետական և հանրապետական ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանություն	2 080.0
Տեղական /մարզային և համայնքային/ ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանություն	375.6
Ընդամենը ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում	**2 455.6**
Ընդամենը ճանապարհներ	**25 690.6**
2.Ջրամատակարարում և ջրահեռացում	**9 109.5**
Խմելու ջրի մատակարարում	7 344.0
Ջրահեռացում	1 765.5
3.Գազամատակարարում	**3 131.0**
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	**37 931.1**

9.5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

9.5.1 Քաղաքաշինության ենթաոլորտի իրավիճակի վերլուծություն

478. Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

479. Մարզի համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների հաշվարկի հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի նիստի N 36 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի հիմնադրույթները:

480. Համաձայն ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի 8-րդ բաժնի 38-րդ կետով սահմանված հիմնադրույթների՝ մարզի

գյուղական համայնքների գերակշիռ մասի համար օպտիմալացման սկզբունքով պետք է մշակվեն պարզեցված գլխավոր հատակագծեր, որի արդյունքում զգալիորեն կնվազեն դրանց մշակման արժեքները:

481. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է. <<Պետության կողմից սույն օրենքով համայնքներին որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից առաջացած ֆինանսական միջոցներն առաջնահերթության կարգով ուղղվում են համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և գոտիավորման այլ փաստաթղթերի մշակմանը>>:

482. Յուրաքանչյուր երկրի կենսատարածության ձևավորումը և ծավալումը տեղի է ունենում քաղաքաշինությամբ կազմավորված միջավայրում: Հազարամյակներ շարունակ ապրելով իր զարգացումը և մշտապես լինելով մարդկության քաղաքակրթության էական բաղադրիչ, քաղաքաշինությունը լուծել է ձեռակերտ շրջակա միջավայրի ձևավորման հիմնարար խնդիրներ:

483. Ներառելով տարածական պլանավորման մարզի տարածքային զարգացման ուրվագծի, Սևանա լճի բնապահպանական խնդիրները, ճարտարապետության, շինարարության, բնակարանային-կոմունալ ոլորտները և առնչվելով բազմաթիվ այլ բնագավառների հիմնախնդիրներին, քաղաքաշինությունը, ըստ էության, կոչված է ապահովելու պետության, հասարակության և անհատի շահերի փոխհամաձայնեցումը՝ կապված երկրի տարաբնակեցման համակարգերի հավասարակշռման և տարածական կազմակերպման, տարածքային, բնական, պատմամշակութային ռեսուրսների կայուն օգտագործման, ազգաբնակչության համար անվտանգ ու մատչելի բնակելի տարածություն ունենալու և կոմունալ ծառայություններ ստանալու հնարավորության ընձեռնման, վտանգավոր երկրաբանական ու տեխնածին երևույթներից պաշտպանության, շենքերի և կառուցվածքների սեյսմակայունության ապահովման ու անվտանգ շահագործման խնդիրների հետ:

484. ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1227-Ն որոշմամբ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ″ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ″ ծրագրով հատկացված միջոցների հաշվին ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով մշակել է Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծը, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի նիստի N 22 արձանագրային որոշմամբ: Նշված որոշման 21-րդ կետի համաձայն ուրվագծով նախատեսված միջոցառումների կատարման ուղղությամբ ներդրումային ծրագիր իրականացնելու հնարավորության հարցը քննարկվել է Ասիական Զարգացման Բանկի խորհրդատուների հետ, որի ընթացքում հաստատվել է Բանկի մտադրությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում կոշտ թափոնների կառավարման բնագավառում բազմափուլ ներդրումային ծրագիր իրականացնելու վերաբերյալ:

485. Նշված հիմնախնդիրներն ու դրանց լուծմանը նպատակաուղղված միջոցառումներն ամրագրվում են տարածական զարգացման հենքը հանդիսացող՝ ազգային, տարածքային և տեղական մակարդակների հիերարխիկ կառուցվածք ունեցող պլանավորման փաստաթղթերով՝ առկա իրավիճակի համալիր գնահատականի և համակարգային վերլուծության արդյունքում: Ուստի, տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորումն այն հիմնական նախադրյալն է, որը միարժեքորեն պետք է գնահատվի որպես տարածական զարգացման ծրագրերի և կառավարման գործառույթների իրականացման հիմք և երաշխավոր:

486. Գեղարքունիքի մարզի 92 համայնքներից 78-ը բարձր լեռնային են, 22-ը՝ սահմանամերձ, 54-ը՝ ափամերձ, 5-ը՝ սողանքավտանգ ուստի տարածական պլանավորման կարևոր ուղղություններից մեկը սահմանամերձ բնակավայրերի անվտանգության ապահովման և զարգացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծման և ներդաշնակ կենսագործունեության ապահովման խնդիրն է:

487. Բնակավայրերի անվտանգ և բնականոն զարգացման նախադրյալների ստեղծման տեսանկյունից հատկապես կարևորվում է տեղական մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի, այն է՝ հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի կազմման անհրաժեշտությունը: Վերջիններիս առկայությունը, ի լրումն վերը նշված խնդիրների, մեծապես կնպաստի տեղական ինքնակառավարման ինստիտուտի կայացմանը, քանի որ կառավարման ապակենտրոնացման պայմաններում կառուցապատմանն առնչվող գրեթե բոլոր թույլտվական գործառույթները վերապահված են համայնքների ղեկավարներին: Նշված փաստաթղթերի կազմումը, լինելով համայնքի օրենքով սահմանված պարտադիր լիազորություն, տեղական ինքնակառավարման դեռևս ոչ կատարյալ ինստիտուտի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում՝ դժվար իրագործելի խնդիր է դարձել: Նշված բնագավառում առկա պետական աջակցության և դրա շարունակականության ապահովումն էապես կնպաստեն քաղաքաշինական գործունեության իրականացման գործառույթների թափանցիկությանը, սուբյեկտիվ որոշումների բացառմանը, կառուցապատման ոլորտում ներդրումային գործընթացների խթանմանը, մարզի բնակավայրերում անվտանգ կենսամիջավայրի ձևավորմանը:

488. Մինչև 1998թ. մարզի 92 համայնքներից ընդամենը 42-ն ունեին գլխավոր հատակագծեր, որոնցում արդեն սպառվել էր տարածքային զարգացման հնարավորությունները և լրացել է հաշվարկային ժամկետները (20 տարի): Այժմ 5 քաղաքային /Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ/ և 2 գյուղական /Չկալովկա, Աղբերք/ համայնքների համար կազմվել են նոր գլխավոր հատակագծեր, իսկ 34 ափամերձ համայնքների գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքներն ընթացքի մեջ են / կցվում է առդիր 2 թերթ /, մինչդեռ անհրաժեշտ է, որպեսզի բոլոր համայնքներն ունենան գլխավոր հատակագծեր՝ հավելված 8:

489. ″Քաղաքաշինության մասին″ ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 32-րդ մասի պահանջի հաշվառումով գլխավոր հատակագիծ չունեցող համայնքների համար մինչև 2016 թվականի հունվարի 1-ը անհրաժեշտ է համայնքային միջոցների հաշվին/ պետական բյուջեի միջոցների հաշվին համաֆինանսավորմամբ/ մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել այդ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը:

490. Ռազմական գործողությունների հետևանքով 1992թ օգոստոսի 8-ին Արծվաշենից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման համար անհրաժեշտ է ստեղծել հիմնադրամ, որը կգնահատի յուրաքանչյուր ընտանիքի սոցիալական վիճակը և կցուցաբերի համապատասխան աջակցություն: Առաջին փուլով անհրաժեշտ է հատկացնել 708 մլն դրամ:

491. ՀՀ Գեղարքունիքի մարզում շենքերը և շինությունները հիմնականում կառուցվել են խորհրդային տարիներին գործող սեյսմիկ նորմերի պահանջներին համապատասխան, որոնք չեն համապատասխանում գործող պահանջներին:

492. Մարզի տարածքի շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիությունը նվազեցնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է կատարել տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, որի համար կպահանջվի շուրջ 5 մլն դրամ:

493. Տեխնիկական վիճակի ուսումնասիրությունից հետո անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում կատարել շենքերի և շինությունների ամրացման աշխատանքներ:

9.5.2. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն

<u>Բնական աղետներ</u>

494. "ՀՀ կառավարության 2007 թ հունվարի 11-ի նիստի "ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին" N 1 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել "ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգի խնդիրներից բխող՝ ՀՀ տարածքում առավել ռիսկային 131 սողանքային տեղամասերում միջոցառումների իրականացման ժամանակացույցը, որում ընդգրկվել են մարզում առկա 10 սողանքային՝ Այգուտ, Դպրաբակ, Ձորավանք, Մարտունի, Կալավան, Թթուջուր, Գետիկ, Երանոս, Ավազան և Ջաղացաձոր տեղամասերը: Նշված տեղամասերում իրականացվելիք միջոցառումները մշտապես պետք է ներկայացվեն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում: ՀՀ Գեղարքունիքի մարզում առավել ռիսկային սողանքային տեղամասերում միջոցառումների իրականացման համար ըստ ժամանակացույցի կպահանջվի 500.0 մլն. ՀՀ դրամ:

495. Մարզում շահագործվող բազմաբնակարան բնակելի շենքերի, կառույցների և շինությունների /որոնք կառուցվել են մինչև 1988թ./ սեյսմակայունության ուժեղացում: Շենքերի սեյսմիկ կայունությունը ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել 3.5 մլն. դրամ:

<u>Սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատումը</u>

496. Գոյություն ունեցող շենքերի, շինությունների սեյսմիկ վտանգի գնահատում համաձայն սեյսմիկ ռիսկի քարտեզների, որոնց համար անհրաժեշտ է 10.0 մլն. դրամ:

9.5.3 Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

497. Մարզի 92 համայնքներում գործում է 128 հանրակրթական դպրոց: Կրթական օբյեկտները մշտապես գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում: Դրանց հիմնանորոգման և պահպանման համար տարեցտարի մեծանում են պետական միջոցների ներդրումները: ՀՀ 2005 թվականին պետական բյուջեից Գեղարքունիքի մարզի կրթական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 230.5 մլն. դրամ, որով վերանորոգվել են 9 կրթական դպրոցների շենքեր: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացիալ թագավորության կառավարության կողմից հատկացված 40.5 մլն. դրամով վերանորոգվել են 6 հանրակրթական դպրոցների շենքեր:

498. ՀՀ 2006 թվականին պետական բյուջեից մարզին հատկացվել է 850.0 մլն. դրամ, որով սկսվել են 23 կրթական օբյեկտների վերանորոգման աշխատանքներ: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացիալ թագավորության կառավարության

կողմից հատկացված 56.0 մլն. դրամով վերանորոգվել են 5 հանրակրթական դպրոցների շենքեր: Լինսի հիմնադրամի ֆինանասավորմամբ սկսվել է Մարտունու թիվ 3 միջն. դպրոցի շինարարությունը:

499. ՀՀ 2007 թվականին պետական բյուջեից մարզին հատկացվել է շուրջ 1328.0 մլն.դրամ, որից՝ 1054.84 մլն. դրամը քաղաքաշինության նախարարության ծրագրերով և 273.16 մլն. դրամը մարզպետարանի ծրագրերով, որով և իրականացվել է մարզի դպրոցների կառուցման և հիմնանորոգման աշխատանքները: Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով իրականացվել է 8 հանրակրթական դպրոցների շենքեր մասնակի հիմնանորոգման աշխատանքներ, իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով՝ 17 հանրակրթական դպրոցների շենքերի: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացիալ թագավորության կառավարության կողմից հատկացված 86.5 մլն. դրամով վերանորոգվել են 8 հանրակրթական դպրոցների շենքեր:

500. ՀՀ 2008 թվականին պետական բյուջեով մարզին հատկացվել է 2021.4 մլն. դրամ, որից՝ 345.0մլն. դրամը մարզպետարանի ծրագրերով և 1676.4 մլն. դրամը քաղաքաշինության նախարարության ծրագրերով: Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով իրականացվել է 9 կրթական օբյեկտներում մասնակի հիմնանորոգման աշխատանքներ, իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով՝ 22 հանրակրթական դպրոցների շենքերում: ՀՀ 2009 թվականին պետական բյուջեով մարզին հատկացվել է 1017.3 մլն. դրամ, որից՝ 763.3 մլն. դրամը ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով և 253.98 մլն. դրամը Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով: Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով իրականացվել է 9 կրթական հանրակրթական դպրոցների մասնակի հիմնանորոգման աշխատանքներ, իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով՝ 22 հանրակրթական դպրոցների: ՀՀ 2010 թվականին պետական բյուջեով մարզին հատկացվել է 708.4 մլն. դրամ, որից՝ 512.4 մլն. դրամը ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով, և 196.0 մլն. դրամը Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով: Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով իրականացվել է 7 կրթական օբյեկտներում մասնակի հիմնանորոգման աշխատանքներ, իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով՝ 17 հանրակրթական դպրոցների: ՀՀ 2011 թվականին պետական բյուջեով մարզին հատկացվել է 594.46 մլն. դրամ, որից՝ 396.7 մլն. դրամը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով, և 197.7 մլն. դրամը Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով: Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով իրականացվել է 6 հանրակրթական դպրոցների մասնակի հիմնանորոգման աշխատանքներ, իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով՝ 17 հանրակրթական դպրոցների:

501. ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի թիվ 108-Ն որոշմամբ հատկացվել է 1135.0 հազ. դրամ՝ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար: Գեղարքունիքի մարզպետարանի ծրագրերով իրականացվել է 2 հանրակրթական դպրոցների մասնակի հիմնանորոգման աշխատանքներ:

502. Այսպիսով, հստակ երևում է, որ տարեցտարի պետության կողմից մեծանում է կատարվող ներդրումների չափը, որի շնորհիվ մարզում 8 դպրոց ամբողջությամբ հիմնանորոգված է: Վաղաշեն, Գեղհովիտ, Վ.Գետաշեն և Լիճք գյուղական համայնքներում նոր դպրոցներ են կառուցվում: ՀՀ Գեղարքունիքի մարզի մի խումբ հանրակրթական դպրոցներում վերը նշված ծրագրերով վերջին տարիների ընթացքում մասնակի հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել, որի արդյունքում դպրոցները համեմատաբար լավ վիճակում են գտնվում, իսկ մնացած հանրակրթական դպրոցները ընդհանրապես երբևէ չեն հիմնանորոգվել և գտնվում են խիստ անմխիթար

վիճակում, չունեն սանհագույցներ, մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ, 3 դպրոցներ գտնվում են վթարային վիճակում՝ հավելված 1-ում արտացոլված է մարզի առաջնահերթ վերանորոգման կարիք ունեցող դպրոցները՝ ըստ վթարայնության աստիճանի, և պահանջվող ֆինանսավորումը:

9.5.4 Մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգում

503. Մարզի մշակութային կյանքի բնականոն զարգացման ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել պատմամշակութային արժեքների պահպանում և վերականգնում: Մարզի գյուղական համայնքների 77 մշակութային օբյեկտներից 7-ը հիմնանորոգվել են, իսկ մնացածը ամրացման, հիմնանորոգման և վերանորոգման կարիք ունեն: Մարզի 15 համայնքներ չունեն մշակույթի տներ:

9.5.5 Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում

504. ՀՀ 2005 թվականից մինչև օրս Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից կառուցվել և վերանորոգվել են Աստղաձոր, Ծովասար,Լուսակունք, Արծվանիստ,Սարուխան և Ծովագյուղ համայքների ամբուլատորիաներ: Ակունք և Ծակքար համայնքների ամբուլատորիաները ընդգրկված են վերանորոգման ծրագրերում:

505. ՀՀ 2006 թվականին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացիալ թագավորության կառավարության կողմից հատկացված 7.0 մլն. դրամով վերանորոգվել են 2 հիվանդանոցներ:

506. ՀՀ 2007 թվականից պետական բյուջեով հիմնանորոգվել և հագեցվել են բուժսարքավորումներով <<Գավառի ԲԿ>>, <<Մարտունու ԲԿ>>, <<Վարդենիսի հիվանդանոց>>, <<Վարդենիկի ԱԿ>>, << Փամբարակի ԱԿ>> և <<Սևանի հիվանդանոց>> ՓԲԸ–ները, ինչպես նաև Սևանի հոգեբուժարանը:

507. ՀՀ 2008 թվականին պետական բյուջեով հիմնանորոգվել և հագեցվել են բուժսարքավորումներով 3 առողջապահական կենտրոններ:

508. << Բժիշկներ առանց սահմանների>> Բելգիական կազմակերպության ծրագրով վերանորոգվել են Ծովակ, Մ.Մասրիկ, Գեղամասար և Կարճաղբյուր համայնքային ամբուլատորիաներ, ֆրանսիական Իզերի նահանգի կողմից հանգանակված միջոցների հաշվին վերակառուցվում և բուժսարքավորումներով վերազինվում է Գավառի բժշկական կենտրոն ՓԲԸ–ն: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել է Սևանի պոլիկլինիկան:

509. Գեղարքունիքի մարզի վերանորոգման կարիք ունեցող բուժհիմնարկների ցանկը և պահանջվող ֆինանսավորումը ներկայցված է հավելված 2-ում:

9.5.6 Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման բարեփոխումներին և վարչական շենքերին ուղղված միջոցառումներ

510. Մարդկային աղքատության հետ առնչվող հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Գեղարքունիքի մարզում խնդիրն առնչվում է, բնակչության բնակարանային ապահովման, աշխատատեղով ապահովման, բնակավայրերի բարեկարգման և ենթակառուցվածքների ապահովման հիմնախնդիրների լուծմանը, որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի բնակչության համար արժանավայել կենսապայմանների ապահովումը:

511. Մարզում դեռևս առկա են բավական մեծ թվով անօթևանի կարգավիճակ ունեցող, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ, որոնք չեն կարող այդ խնդիրները ինքնուրույն կարգավորել. անհրաժեշտ է պետական աջակցություն այս ոլորտի կարգավորման համար:

512. Հաշվի առնելով սեյսմակայուն շինարարությանը ներկայացվող արդի պահանջները և այն հանգամանքը, որ վերջին տարիներին մարզում բազմաբնակարան բնակելի շենքերի շահագործման ընթացքում գրեթե չեն իրականացվել հիմնանորոգման աշխատանքներ, որի արդյունքում զգալիորեն աճել է շենքերի ֆիզիկական մաշվածությունը: Կարևորվում է բնակության համար վտանգավոր համարվող շենքերի նկատմամբ համակարգված մոտեցումների ձևավորումը և համապատասխան միջոցառումների իրականացումը:
Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիությունը նվազեցնել սեյսմիկ վտանգի մակարդակին համապատասխան:

513. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն, պահանջում է լուրջ պետական միջամտություն և վերահսկողություն, քանի որ նշված շենքերի հետագա տևական շահագործումն առանց ուժեղացման-վերականգնման աշխատանքների կատարման կբերի կոնստրուկտիվ տարրերում վնասվածքների և դեֆորմացիաների հետագա զարգացման, նորերի առաջացման, շենքերի սեյսմակայունության կտրուկ նվազման և այդ առումով հետագայում վերակառուցման աշխատանքների իրականացման համար ֆինանսական զգալի միջոցների լրացուցիչ պահանջի, վթարայնությամբ պայմանավորված դրանց քանդման անհրաժեշտության, ինչպես նաև հնարավոր անկանխատեսելի հետևանքների:

514. 2011 թվականի ՀՀ կառավարության փետրվարի 3-ի թիվ 108-Ն որոշմամբ հիմնանորոգվում են Գեղարքունիքի մարզի ներքոհիշյալ համայնքների բազմաբնակարան բնակարանային շենքերի մի մասի տանիքները՝ Գավառ քաղաքի թվով 3 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները Սևան քաղաքի թվով 3 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները Մարտունի քաղաքի թվով 4 բազմաբնակարան շենքերի տանիքները Ճամբարակ քաղաքի թվով 2 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները: Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի շենքերը գտնվում են անմխիթար վիճակաում և կարիք ունեն հիմնանորոգման:

515. Մարզում կան 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածության թվով երկու շենք՝.
Գագարինի Գայի փողոցի թիվ 1 շենքը և Սևան քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 36 շենք:

516. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է՝ 2006 թվականին 22.0 մլն. դրամ, 2007 թվականին 88.0 մլն. դրամ, 2008թվականին 15.0 մլն. դրամ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի հինանորոգման նպատակով:

9.5.7 Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում

517. Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1) Մարզային պահեստային կառավարման կետերի հիմնանորոգում, տեխնիկական զինվածությամբ և գույքով ապահովում
2) Առկա քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների վերանորոգում, անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով կահավորում
3) Բնակչության պատսպարման համար անհրաժեշտ պաշտպանական կառույցների նախագծում և կառուցում
4) Նախատեսվող արագ կառուցվող պաշտպանական կառույցների և գետանցների համար շինանյութի և տեխնիկական սարքերի, սարքավորումների նախօրոք ձեռք բերում և պահեստավորում

518. Անհրաժեշտ է ժամանակակից հրշեջ տեխնիկական միջոցներով հրշեջ փրկարարական ջոկատները վերազինելու նպատակով՝ գոյություն ունեցող հրշեջ փրկարարական ջոկատների շենքերի վերակառուցում և նորերի կառուցում:

Քաղաքաշինության ոլորտի 2012-2015թթ իրատեսական բյուջեն կազմում է 8172.2 մլն դրամ, իսկ կարիքները՝ 10501.8 մլն դրամ:

Աղյուսակ 9.9. ՄԶԾ ենթակառուցվածքների ծրագրավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ. ըստ տարիների

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ/մլն դրամ/				
	2012թ.	2013թ.	2014թ	2015թ.	Ընդամենը՝ 2012-2015թթ
Ճանապարհաշինություն	6.400.0	6.400.0	6.400.0	6.490.6	25.690.6
Ջրամատակարարում	1.810.0	1.830.0	1.850.0	1.854.0	7.344.0
Ջրահեռացում	420.0	435.0	445.0	465.5	1.765.5
Գազամատակարարում	1. 302.0	878.0	633.0	318.0	3.131.0
Քաղաքաշինություն	2.321.6	2.151.1	2.041.3	1.689.3	8.203.3
Ենթակառուցվածքներ Ընդամենը	12.253.6	11.694.1	11.369.3	10.817.4	46.134.4

519. Աղյուսակ 9.9-ում 2012-2013թթ գազիֆիկացման ոլորտի ֆինանսավորման մեջ ներառված է Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված, ինչպես նաև գազաբաշխման համակարգերի վթարային գազատարների փոխարինման ու վերատեղադրման համար /2012թ.-ին՝ 450.0մլն դրամ, 2013թ.-ին՝ 110.0մլն դրամ/ ''ՀայՌուսգազարդ'' ՓԲԸ-ի կողմից նախատեսված հատկացումները:

10.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

10.1 Տարածքային կառավարում

10.1.1 Վարչատարածքային բաժանում

520. Հայաստանի տարածքային կառավարման ներկայիս համակարգը նախանշվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, համաձայն որի ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները և որով անցում կատարվեց վարչատարածքային բաժանման նոր երկաստիճան կառավարման համակարգին (հանրապետական և տեղական ինքնակառավարում): Հիմնվելով Սահմանադրության վրա՝ ՀՀ Ազգային Ժողովը 1995թ.-ի նոյեմբերին ընդունեց 'ՀՀ վարչատարածքային բաժանման մասին' ՀՀ օրենքը: Գեղարքունիքի մարզում ընդգրկվեցին նախկին Կամոյի, Կրասնոսելսկի, Մարտունու, Սևանի և Վարդենիսի վարչական 5 շրջանները:

521. Սահմանադրությունը վարչատարածքային բաժանման հիմքում դնում է իշխանության տարբերակման և տարանջատման գաղափարը: Մարզերում իրականացվում է պետական կառավարում: Տարածքային կառավարման համակարգի մեջ բացի մարզպետից, մարզպետարանից մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, որոնք մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, սակայն, հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են համապատասխան մարզպետների համակարգման ոլորտում: (օր. անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գանձապետարանի, հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային ծառայությունները և այլն):

522. 2005թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում տարածքային կառավարման գործող համակարգը, ըստ էության, փոփոխությունների չենթարկվեց: Վերափոխված Սահմանադրության 88.1 հոդվածով սահմանվում է, որ ՀՀ կառավարության կողմից նշանակված մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը և, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

10.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ

523. Տարածքային կառավարման բնագավառում դեռևս չլուծված խնդիրներից կարևորագույնը մարզպետարանների իրավասությունների ոչ հստակ սահմանումն է: Ներկայումս մարզպետների գործունեությունը հիմնականում կարգավորվում է դեռևս 1997 թվականին ընդունված 'Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին' ՀՀ Նախագահի հրամանագրով, որի համաձայն մարզպետներին վերապահված են իրավասություններ տնտեսական և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Հատկանշական է, որ չնայած վերջին տարիներին իրականացված սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներին, հրամանագիրը էական փոփոխությունների չի ենթարկվել, ինչի հետևանքով դրանում ամրագրված բազմաթիվ դրույթներ և փոխհարաբերություններ վերանայման կարիք ունեն: Ավելին, ներկայումս

առանձնապես կարևորվում է «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի անհետաձգելի ընդունումը:

524. Հաշվի առնելով խնդրի համապետական բնույթը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը 2012-2015թթ.-ի պետք է դիտարկել ընդհանուր օրենսդրության վերափոխման համատեքստում:

525. Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզ խորհրդի դերի ակտիվացումը, հաշվի առնելով որ այն մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող խորհրդակցական մարմինն է:

526. Գեղարքունիքի մարզխորհուրդը ՀՏԶԾ-ի իրականացման վերջին տարիների ընթացքում ուղղակիորեն մասնակցել է ՄԶԾ-ների գերակայությունների վերջնական համաձայնեցման, հրապարակայնության ապահովման և իրազեկման գործընթացներին՝ այսպիսով ձեռք բերելով որոշակի փորձ:

527. Տարածքային կառավարման բնագավառում 2012-2015թթ.-ի գործունեության կարևորագույն ուղղություններն ըստ առաջնահերթությունների հետևյալներն են.

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ-պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի պաշտոնական անձնագրերի դրույթների հստակեցում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կարևորվում է ՀՀ կառավարության կողմից պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերի ու չափորոշիչների մշակումը և սահմանումը, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացմանը:

3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով ԿԶԾ-ով ամրագրված զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:

4) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականությունները ու իրավասությունները՝ հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում մշակված ու գործադրված ինստիտուցիոնալ համակարգը

5) Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ ԶՄԽ-ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը:

6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ

կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բազա, որն ի վերջո կծառայի որպես մարզային կյանքի բոլոր բնագավառների համար բոլորի կողմից ընդունված պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

7) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը:

528. Հաշվի առնելով Գեղարքունիքի մարզպետարանում և, ընդհանուր առմամբ, մարզում վերջին շրջանում ընթացող բարեփոխումները (2003-2011թթ.-ին), տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառներում ԿԶԾ-2-ի գերակայությունները, անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման, մարզային իշխանությունների գործունեության իրական հաշվետվականությունը, թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու, ինչպես նաև զարգացման պլանավորման բնագավառում հանրային, մասնավոր ու հասարակական սեկտորների համագործակցության ուղղությամբ կուտակվել է զգալի արդյունավետ փորձ, որը հիմք է հանդիսանում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների իսկապես արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար:

10.1.3. Մարզպետարանի կառավարում

529. Իրավիճակը շտկելու նպատակով 2012-2015 թվականների համար, օրինակ, մարզպետի առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից պետք է իրականացվի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքի կատարելագործում: Այս ուղղությամբ արդեն իսկ արձանագրվել է որոշակի առաջընթաց հատկապես Մեծ Բրիտանիայի ՄԶՆ-ի հետ համագործակցության շրջանակներում (ՀՏԶԾ և Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր): ՀՀՈԲԾ-ի հետ համագործակցության արդյունքում մշակվեց մարզպետարանի կառուցվածքային հարցերին վերաբերող մի փաստաթուղթ (տես՝ ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարանների կառուցվածքային և գործառութային բարեփոխումների ուսումնասիրություն, ք.Երևան, 2006թ.), որի առաջարկություններից մի քանիսը կարող են օգտագործվել վերը նշված առաջարկությունը մշակելիս: Ընդհանուր մոտեցումը, սակայն, պետք է հիմնվի նոր ստորաբաժանումներ ստեղծելուց խուսափելու սկզբունքի վրա: Փոխարեն առաջարկվում է վերանայել և հստակեցնել մարզպետարանի աշխատակազմի պաշտոնների անձնագրերը և գործառույթները:

530. Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակներում մարզպետարանում ձևավորվեց Մոնիտորինգի և գնահատման համակարգ (ՄԳ համակարգը մանրամասնորեն ներկայացված է ՄԶԾ-ի ‘Մոնիտորինգի և գնահատման համակարգ’ բաժնում), որը պահանջեց համապատասխան լրացումներ մտցնել մարզպետարանի ՄԳ խմբի անդամների պաշտոնի անձնագրերում: Մարզպետարանի մոնիտորինգային գործունեության կազմակերպման և իրականացման հիմքում ընկած է երկու սկզբունք: Նախ և առաջ, ծրագրերի մոնիտորինգը պետք է իրականացվի համապատասխան ոլորտային ստորաբաժանումների մասնագետների կողմից, հետևաբար, առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծումը նպատակահարմար չէ: Մյուս կողմից,

հարկավոր է ունենալ ոլորտային մոնիտորինգային հաշվետվությունները վերլուծող և ամփոփող որևիցե մարմին, որտեղ կուտակվի պլանավորված ծրագրերի իրականացման ընթացքի մասին ողջ ինֆորմացիան: Այս նպատակով մարզպետարանում Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կազմում ընդգրկված Ծրագրերի և ներդրումների բաժինը առանձնացվել է որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում, որն անմիջականորեն ենթակվում է ՄԳ խմբի ղեկավար հանդիսացող մարզպետի տեղակալին, և իր բուն ծրագրային գործունեության հետ համատեղ իրականացնում է նաև ՄԳ խմբի աշխատանքների կազմակերպման և համակարգման, ինչպես նաև ամփոփ մոնիտորինգային հաշվետվությունների կազմման գործառույթները: Հայաստանի Հանրապետության կառավարության 02.04.2009թ. N 329-Ն որոշման համաձայն մարզպետարանի աշխատակազմում ձևավորվել են քաղաքացիական ծառայության նոր պաշտոններ: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում կատարվել է փոփոխություններ և նոր պաշտոնների անձնագրերը ներկայացվել է ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանը՝ հավելված 9:

10.1.4. Քաղաքացիական ծառայություն

531. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Ներկայումս կարելի է արձանագրել այն փաստը, որ համակարգը հաղթահարել է կայացման շրջանին բնորոշ դժվարությունները: Հստակ են քաղաքացիական ծառայության պաշտոնները, կազմակերպվել և օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով շարունակում են կազմակերպվել քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն ու ատեստավորումը: Քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները զբաղեցվում են օրենքով սահմանված կարգով՝ մրցույթների կամ ատեստավորման հիմա վրա: Պլանավորվող ժամանակաշրջանի համար անրաժեշտ է միջոցներ ձեռնարկել համակարգի հետագա կատարելագործման, քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման, պաշտոնների անձնագրերի հստակեցման և դրանց համապատասխան կադրային ապահովվածության ապահովման ուղղությամբ:

532. Քաղաքացիական ծառայության համակարգում ներկայումս կարևոր հիմնախնդիրներից մեկն այն է, որ մարզպետներին իրավունք է վերապահված համակարգել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, սակայն վերջիններս ունեն գերատեսչական պատկանելություն և նրանց ղեկավարները, որպես քաղաքացիական ծառայողներ, ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմնին՝ անհասկանալի դարձնելով մարզպետի հետ փոխհարաբերությունների դրսևորումները:

533. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավվել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով, մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

10.1.5. ***Էլեկտրոնային կառավարում***

534. Իրականացված ծրագրի արդյունքում ներկայումս ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ինչպես նաև բոլոր մարզպետարաններն ունեն էլեկտրոնային կառավարման համակարգեր: Դա հնարավորություն է տալիս հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակմամբ: Իհարկե, սա միայն առաջին քայլն է, որին պետք է հետևի կայքերում տեղադրված տեղեկատվության անընդհատ թարմացումը, ինչպես նաև համակարգիչներից օգտվելու՝ մարզպետարանի և պոտենցիալ սպառողների գիտելիքների բարձրացումը:

535. Մարզպետարանի աշխատակիցների մեծ մասի համակարգչային ոչ բավարար գիտելիքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ օգտագործելու գոյություն ունեցող համակարգը: Մյուս կողմից ինտերնետի տարածվածության ցածր աստիճանը և ոչ մատչելի լինելու հանգամանքը, ինչպես նաև բնակչության կողմից համակարգիչների կիրառման սահմանափակության պատճառով մարդիկ չեն գրում էլեկտրոնային նամակներ և չեն օգտվում արդեն իսկ ընձեռնված հնարավորությունից:

536. 2012-2015թվականների ընթացքում անհրաժեշտ է.

1) Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց համայնքների և մարզպետարանի միջև:

2) Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով գնումների գործընթացի կազմակերպումը նույնպես բխում է ԿԶԾ 2-ի պահանջներից, և կոչված է բարձրացնելու համակարգի թափանցիկությունն ու մատչելիությունը մարզի բնակչության ավելի լայն շրջանակների համար**:**

537. Մշակվել և ներդրվել է մարզում գործող ծրագրերի տվյալների բազա: Այնուամենայնիվ, բազան տվյալներով համալրելու, այն թարմացնելու, ինչպես նաև դրանից օգտվելու կարողությունների զարգացման առումով դեռևս անելիքներ շատ կան: Մարզպետարանի ղեկավարությունը պլանավորում է դիմել հատկապես դոնոր կազմակերպություններին իրենց կողմից մարզում իրականացվող ծրագրերի ու միջոցառումների մասին տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Ընդ որում, հաշվի առնելով տվյալների բազայի կենսունակության, ինչպես նաև բազայում պարունակվող տվյալների արդիականության ապահովման անհրաժեշտությունը, պետք է համապատասխան գործընկերների հետ կնքել եռամյա փոխըմբռնման հուշագրեր, որոնցով և կկարգավորվեն տվյալների բազայի համալրման խնդիրները:

538. 2010թ. մարտի 1-ից ՀՀ պետական կառավարման համակարգը, որի մեջ մտնում են ՀՀ կառավարությունը, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, նախարարությունները, նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական կառավարման մարմինները և մարզպետարանները անցել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին: <<Մալբերի>> համակարգի ներդրումը զգալի տեղաշարժ է մտցրել, ինչպես փաստաթղթաշրջանառության, այնպես էլ ընդհանուր գործավարության կանոնակարգման մեջ:

539. Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն բարձրացել է՝

1/ փաստաթղթաշրջանառության արագությունը
2/ օպերատիվությունը

3/ կատարող ստորաբաժանումների պատասխանատվությունը
4/ ծառայողների համակարգչային գնահատման օբյեկտիվությունը
5/ հանձնարարականների կատարման ժամկետայնությունը
6/ թղթերի խնայողությունը
7/ պատասխանների և գրությունների ժամանակին առաքումը

540. Համակարգի ներդրմամբ պակասել է մատենավարությունը: Վերջին 1.5 տարվա ընթացքում մարզպետարանի աշխատակիցները՝ մասնավորապես քաղաքացիական ծառայողները, ապահոված են համակարգիչներով, տպիչ և բազմացնող սարքերով:

541. Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը էլ ավելի արդյունավետ կգործեր եթե համակարգին միանային նաև, ինչպես մարզի համայնքները, այնպես էլ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները և ստորաբաժանումները, քանի որ դրանց հասցեագրված գրությունները, որոշումները կամ թղթակցությունները ուղարկվում են փոստով կամ հանձնվում են առձեռն, որի ընթացքում դրանք հաճախ տեղ են հասնում ուշացումներով:

10.2.Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

10.2.1. *Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ*

542. Մարզային զարգացումը դժվար է պատկերացնել առանց տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքային զարգացման: Ավելին, մարզի զարգացումը պետք է դիտարկել համայնքների զարգացման տեսանկյունից: Այսինքն, մի դեպքում մարզում առկա հիմնախնդիրները պետք է լուծվեն պետության աջակցությամբ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք կրում են հատվածական բնույթ և կարող են պայմանավորված լինել կառավարության ծրագրերով, մյուս կողմից համայնքային հիմնախնդիրների լուծման հիմնական և արդյունավետ համակարգը պետք է տեսնել համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում**:**

543. Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

544. Հայաստանում ներկայիս ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում ուղղված է տարածքային և տեղական կառավարման մարմիններին լիազորությունների և իրավասությունների փոխանցմանը: Այս գործընթացը զգալիորեն դանդաղում է երկու հիմնական պատճառներով: Առաջինը, համայնքները շատ փոքր են և մասնատված: Ապակենտրոնացման քաղաքականությունն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է խոշորացնել համայնքները՝ կրճատելով դրանց թիվը և միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ: Սա շատ նուրբ քաղաքական հարց է, և կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումն առաջին քայլն է այս ուղղությամբ:

545. Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակը ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, որը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Այն նախատեսված է նաև ԿԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգարվվել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները:

546. Համաձայն 'Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին' ՀՀ օրենքի Գեղարքունիքի մարզում կազմավորվել են 92 համայնքներ, որոնցից 5-ը քաղաքային, իսկ 87-ը՝ գյուղական: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Գեղարքունիքի մարզում համայնքները հիմնականում կազմավորվել են 'մեկ բնակավայր-մեկ համայնք' սկզբունքով: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզում մեկից ավելի բնակավայրեր են ընդգրկում միայն Սևան քաղաքային համայնքը, Կալավանի, Գեղհովիտի, Կուտականի և Այգուտի գյուղական համայնքները: Ընդ որում հիշյալ դեպքերում համայնքը կազմված է ընդամենը երկու բնակավայրերից: Գյուղական համայնքների թիվն ըստ բնակչության թվաքանակի ներկայացված է Աղյուսակ 10.1-ում:Ընդ որում հիշյալ բոլոր համայնքները կազմված են երկու բնակավայրերից, բացառությամբ Գեղհովիտ համայնքից, որը կազմված է երեք բնակավայրերից:

Աղյուսակ 10.1. Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների թիվն՝ ըստ բնակչության թվի

Համայնքներ	**Գեղարքունիք**	**Հայաստան**
Մինչև 100 բնակիչ ունեցող	**3**	**27**
101-ից մինչև 200 բնակիչ ունեցող	**6**	**79**
201-ից մինչև 500 բնակիչ ունեցող	**19**	**181**
501-ից մինչև 1000 բնակիչ ունեցող	**16**	**189**
1001-ից մինչև 3000 բնակիչ ունեցող	**24**	**309**
3001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող	**9**	**57**
5001-ից մինչև 10000 բնակիչ ունեցող	**10**	**29**
Ընդամենը	**87**	**871**

547. Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից մարզի 87 գյուղական համայնքներից 44-ը կամ շուրջ 50,5 %-ն ունեն մինչև 1.000 բնակիչ, իսկ 3.000 ավել բնակիչ ունեն 43 գյուղական համայնքներ կամ ընդհանուրի մոտ 49 %-ը:

548. Համայնքային բյուջեների ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առաջնային խնդիրներն են համայնքների կարողությունների բարձրացումը և բյուջեների հավաքագրման ապահովումը: Մասնավորապես, մարզում բնակչության մեկ շնչի հաշվով համայնքի բյուջեների ընդհանուր եկամուտները (ներառյալ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաները) կազմում է 12.961 դրամ: Ընդ որում 38 համայնքներում (կամ ընդհանուրի մոտ 38%-ում), ընդ որում Գավառ, Սևան, Վարդենիս քաղաքներում, այդ ցուցանիշը ցածր է միջինից:

549. Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Սակայն չլուծված հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքային բյուջեի 100%-ով հավաքագրման ապահովումը: Մասնավրապես, մարզի կտրվածքով համայնքային բյուջեները սեփական եկամուտների մասով

հավաքագրվել են 85-95%-ով: Այդ միջին ցուցանիշից ցածր մակարդակի վրա են գտնվում 47 համայնքներ (կամ ընդհանուրի շուրջ 51%-ը): Սա նշանակում է, որ այդ հարաբերականորեն բարձր ցուցանիշը ապահովվել է 44 համայնքների հաշվին: Այս խնդիրը արդիական է այնքանով, որ 25 համայնքներում (կամ 27,0%-ում) հավաքագրման ցուցանիշը չի գերազանցում պլանավորված եկամուտների 60%-ը:

550. Ապակենտրոնացմանը խոչընդոտող երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների բացակայությունն է, որը թույլ կտա ստանձնել նոր լիազորությունները և առավել արդյունավետ կառավարել տեղերում: Այդ իսկ պատճառով, կարողությունների բարձրացումը ապակենտրոնացման ընթացքում կարևոր նախապայման է: Կարողությունների զարգացման տարբեր մեթոդներ կան: Նախ և առաջ դա ուսուցողական դասընթացներն են, որոնք կազմակերպվում են տեղական և կենտրոնական մակարդակով թե՛ կառավարության, թե՛ դոնորների կողմից: Դրանք հիմնականում ուղղված են կարողությունների զարգացմանը բյուջետավարման, համայնքային և մարզային զարգացման պլանավորման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման բնագավառներում: Կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերը, անշուշտ, պետք է շարունակվեն և ընդլայնվեն:

551. Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսությունն է և բազաների հստակությունը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները:

552. Այս բնագավառում մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը: Օրինակ, Հայաստանի ֆինանսիստների միության կողմից շրջանառության մեջ է դրվել պետական բյուջեից դոտացիաների տրամադրման նոր հայեցակարգը, որը լայնորեն քննարկելուց հետո դրվելու է համապատասխան օրենսդրական ակտի հիմքում: Սա նշանակում է, որ մարզպետարանը պետք է նախաձեռնի շրջանառվող նախագծի վերաբերյալ լայնածավալ հանրային ու մասնագիտական քննարկումներ դոտացիաների հաշվարկման նոր բանաձևերի ու մոտեցումների կիրառման համար ՏԻՄ-երի համապատասխան մասնագետներին վերապատրաստման ուղղությամբ:

553. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու սահմանանիշերի տեղադրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

554. Տեղական ինքնակառավարման բնագավառի 2009-2011թթ.-ի գերակայություններն են.

1) ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը:

2) Ավարտել համայնքների սահմանների ճշգրտման և սահմանանիշերի տեղադրման աշխատանքները:

3) Նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը:

4) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

10.2.2. Համայնքային ծառայություն

555. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է օրենք 'Համայնքային ծառայության մասին', համաձայն որի ՀՀ կառավարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատվել են օրենքից բխող բոլոր նորմատիվ-իրավական փաստաթղթերը: Համայնքների ղեկավարների կողմից հաստատվել են համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերն ու պաշտոնների անձնագրերը:

556. Տեղական ինքնակառավարման համակարգի կենսագործունեությունը էապես պայմանավորված է համայնքային ծառայության համակարգի արդյունավետ իրականացմամբ: Նոր կազմավորված համակարգը իր հետ առաջ է բերում խնդիրներ, որոնց լուծումը պետք է նախատեսել 2012-2015թթ.-ներին: Պլանավորվող ժամանակաշրջանում, համաձայն օրենսդրության պահանջների, պետք է կազմակերպվի բոլոր համայնքային ծառայողների վերապատրաստումը, որին կհետևի նրանց հերթական ատեստավորումը: Դրա համար անհրաժեշտ է համայնքային ատեստավորման և մրցույթային հանձնաժողովներին ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, համակարգչային ծրագրերով, ատեստավորման կազմակերպման համար անհրաժեշտ հարցաշարերով, տեղեկատվական նյութերով և փաստաթղթերով: Համայնքային ծառայության համակարգի աշխատանքների ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) կազմակերպել համայնքային մրցույթային և ատեստարվորման հանձնաժողովների անդամների վերապատրաստումը,

2) ապահովել համայնքային ծառայության օրենսդրական փաստաթղթերի և հարցաշարերի թարմացումը և տրամադրումը համապատասխան հանձնաժողովներին,

3) մարզում ստեղծել միասնական տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի այս կամ այն պաշտոնին համապատասխան կադրերի վերաբերյալ՝ թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով,

4) խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքեր սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը փոփոխելու և հաստատելու ուղղությամբ

5) միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների վարձատրության միասնական համակարգ սահմանելու ուղղությամբ,

6) համայնքներին ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներով և համակարգչային ծրագրերով:

557. Հիշյալ աշխատանքների կատարմանը զուգահեռ, հաշվի առնելով գործնականում առաջացած խնդիրները, կմշակվեն օրենսդրական փոփոխություններին վերաբերվող առաջարկություններ և դրանք սահմանված կարգով կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը:

10.2.3. Տեխնիկական ապահովվածություն

558 Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը, որը կակտիվացնի նաև ապակենտրոնացման գործընթացը: Սակայն, համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Տեխնիկական աջակցություն այս բնագավառում տրամադրվում է բազմաթիվ դոնոր կազմակերպությունների կողմից:

559. 2013թ.-ին բոլոր համայնքները պետք է ապահովված լինեն ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով: Համակարգչին տիրապետելու հմտությունները պետք է ներառվեն համապատասխան համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում՝ իրականցնելով ծրագրերի ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

560. Ցավալի իրողություն է այն, որ համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չեն օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Պաշտոնական տեղեկագրերի ոչ մատչելի գները հնարավորություն չեն տալիս համայնքներին կազմակերպել բաժանորդագրություն և տեղեկանալ իրականացվող զարգացումներին ու փոփոխություններին: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակում:

1/ Ցավալի իրողություն է այն, որ համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չեն օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակում և համայնքներին ինտերնետային կայքով ապահովում:

10.2.4. *Համայնքային զարգացման ծրագրեր*

561. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2012-2015թթ.-երին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա: Ցավոք սրտի տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանում, ինչի հետևանքով շատ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը չունեն իրատեսական հիմնավորումներ և չեն իրականացնում իրենց հիմնական ֆունկցիան: Նկատի ունենալով ներկա իրողությունը, ինչպես նաև մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը, 2012-2015.թթ-երին անհրաժեշտ է մշակել համայնքի զարգացման ծրագրերի միասնական մեթոդաբանական ուղեցույցներ և դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը համապատասխանեցնել միասնական կառուցվածքային չափանիշներին: Սա կպահանջի վերապատրաստման

դասընթացներ, որոնց պետք է մասնակցեն ՏԻՄ-երի համապատասխան ծառայողները: Կարևորն այն է, որ միասնականությունը թույլ կտա խուսափել կրկնողություններից և բարձրացնել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

562. Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, սակայն հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցներով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները: Այս ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանան սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար: Այս առումով կարևոր դեր կարող են խաղալ Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրերը և նրանց մշակման և իրականացման ընթացքում ձեռք բերված փորձը, որը հիմք կհանդիսանա համայնքների կողմից ծրագրերի կազմման մեթոդաբանության համար և կօգնի խուսափել կրկնողություններից:

563. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2012-2015 թթ-ին անհրաժեշտ է քննարկել և համայնքների առանձնահատկություններից ելնելով առաջարկություններ ներկայացնել համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու իմաստով:

564. Մնացյալ բոլոր դեպքերի համար 2012-2015թթ.-երին գործուն ջանքեր պետք է ներդրվեն միջհամայնքային համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հաշվի առնելով համայնքների միությունների արդեն իսկ կուտակած որոշ փորձն ու համագործակցության որոշ դրսևորումները, պետք է միջոցներ ձեռնարկվեն միջհամայնքային միավորումների ստեղծման ուղղությամբ:

565. Միջհամայնքային միավորումների կազմավորման համար էական նշանակություն ունի հետևյալ հիմնախնդիրների լուծումը.

1) Նոր վարչատարածքային բաժանման ժամանակ, որպես կանոն, հիմք է ընդունվել ‘մեկ բնակավայր մեկ համայնք’ սկզբունքը: Արդյունքում գյուղական համայնքների զգալի մասը փոքր են, սեփական միջոցները չեն բավարարում նույնիսկ ՏԻՄ աշխատակազմի աշխատավարձի ապահովմանը:

2) Բնակչությանը մատուցվող ծառայությունների մի զգալի մասը իրականացվում է նախկին շրջանների տարածքներում, ապակենտրոնացում իրականացնելիս դրանք հնարավոր չէ տրոհել առանձին համայնքների միջև:

3) Համայնքների մասնագիտական և ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով, դժվարանում է համայնքներին նոր խնդիրներ վերագրելու գործընթացը, դանդաղում է կառավարման ապակենտրոնացման իրականացումը:

4) Միջհամայնքային միավորումների ձևավորումը կապահովի ռեսուրսների համակենտրոնացում, որը հնարավորություն կտա ոչ միայն բարելավել արդեն իսկ մատուցվող ծառայությունների որակը, այլև մատուցել նոր ծառայություններ և այլն:

10.2.5 Քաղաքացիական հասարակություն

566. Ժամանակակից արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն ուղիներից մեկը: Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երի ղեկավարները պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացները արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

567. Մարզպետարանը ողջունում է մարզի տարածքում գործունեություն ծավալող մի շարք հասարակական կազմակերպություններին, նրանց կողմից ցուցաբերվող ակտիվության և մարզի համայնքներում առկա տարաբնույթ հիմնախնդիրների կարգավորման հարցում նախաձեռնություն ցուցաբերելու համար և կարևորում նրանց՝ մարզպետարանի հետ համագործակցություն ծավալելու գործընթացը: ՄԶԾ իրականացման գործընթացում մարզպետարանը պատրաստակամ է ՄԶԾ կազմման, ինստիտուցիոնալ կառույցների, այդ թվում ոլորտային աշխատանքային խմբի՝ ՈԱԽ, մարզի զարգացման հանձնաժողովի՝ ՄԶՀ, մոնիտորինգի գնահատման համակարգի՝ ՄԳՀ հանրային իրազեկման գործընթացին մասնակից դարձնել նաև մարզի հասարակական կազմակերպություններին, անհրաժեշտության դեպքում աջակցել նրանց՝ հետագա գործունեության ընթացքում:

568. 2012-2015 թթ.-ի ընթացքում տարածքային կառավարման մարմինների գործունեության թափանցիկության շարունակականությունն ապահովելու նպատակով մարզպետի, նրա տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների և ՀԼՄ-ների ջանքերով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) շարունակել մարզային և հանրապետական ՀԼՄ-ներով լրատվական բնույթի նյութերի պարբերական թողարկումները՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերն ու այլ ընթացիկ աշխատանքները, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ.

2) պարբերաբար և համակարգված ձևով շարունակել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների՝ մարզի համայնքներ, մարզային ենթակայության կազմակերպություններ աշխատանքային այցելությունները, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպումներով, մարզպետի կողմից կազմակերպվող քաղաքացիների ընդունելություններով, տարբեր խնդիրների շուրջ հրավիրվող քննարկումներով, ՏԻՄ-երի կողմից հանրությանը պարբերաբար ներկայացվող հաշվետվություններով, հանրային լսումներով:

3) հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների օգնությամբ շարունակել Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվական բնույթի նյութերի պատրաստումն ու տարածումը.

4) ակտիվացնել հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների ներգրավվածությունը մարզպետարանում կազմակերպվելիք մարզխորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրվող տարբեր քննարկումներին, հասարակական լսումներին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին.

5) մարզպետարանի ինտերնետային կայքի միջոցով շարունակել մարզպետի գործունեության հրապարակայնության ապահովման գործընթացը, այնտեղ տեղադրելով մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային գործունեության վերաբերյալ նյութեր, մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները և մարզային ենթակայնության հիմնարկ-կազմակերպությունների վերաբերյալ հայտարարությունները, մարզպետի և ՏԻՄ տարեկան և կիսամյակային հաշվետվությունները, մարզում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, ՄԶԾ-ի շրջանակներում ձևավորված աշխատանքային խմբերի գործունեության, դրանց տարեկան և կիսամյակային հաշվետվությունների, տեղեկատվություն ՄԶԾ շրջանակներում իրականացվող և իրականացվելիք ծրագրերի, մարզային զարգացման հանձնաժողովի՝ ՄԶՀ գործունեության, հրապարակման անհրաժեշտություն ունեցող այլ բնույթի նյութերի վերաբերյալ:

569. 2012-2015թթ.-ի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) ակտիվացնել աշխատանքները՝ մարզի համայնքապետարաններում ինտերնետային կայք էջերի ստեղծման և դրանց կանոնավոր գործունեության ուղղությամբ.

2) փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպել համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

3) Համայնքների հնարավորություններից ելնելով հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ, և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը:

4) Հասարակական կազմակերպությունների, համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին, մարզի տարածքում գործող ՋԼՄ-ներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին, կազմակերպել դրանց իրազեկման գործընթացը:

5) Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի բնակչությանը իրազեկելու նպատակով դրանք տեղադրել մարզպետարանի կամ համայնքապետարանների ինտերնետային կայք էջերում, մեկական օրինակ փակցնել համայնքապետարաններում առկա տեղեկատվական տախտակների վրա, փակցնել մարդաշատ և հանրության համար առավել մատչելի վայրերում:

6) շարունակել պետության կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը վերաբերող որոշումների հրապարակայնության ապահովման գործընթացը:

7) Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել հանրային իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը տրամադրել իրավական և այլ բնույթի տեղեկատվություն կամ խորհրդատվություն:

8) ,,Տեղական հանրաքվեի մասին,, օրենքի դրույթներից ելնելով՝ նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպ և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

570. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ, ‘Գավառ’ Ջրօգտագործողների ընկերությունը, համայնքների միություններ, ‘Գեղարքունիքի մարզի ՀԿ ցանց’, ՓՄՁ զարգազման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ, ‘Սևան’ ազգային պարկ, Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ և այլն):

10.2.6 Մարզի զարգացման ծրագրերի մշակման ինստիտուցիոնալ համակարգը

571. Անհրաժեշտ ենք համարում ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-ն որշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրից այստեղ մեջբերել ՀՀ մարզերում համալիր զարգացման ծրագրերին վերաբերող հիմնարար դրույթները, ընդ որում դրանց փորձը հաշվի առնելով ,,ՀՀ կառավարությունը մշակել է տարածքային զարգացման հայեցակարգ,,.

1) Մարզերի զարգացման հիմնական գերակայությունները և ուղղությունները պետք է արտացոլվեն մարզերի զարգացման միջնաժամկետ համալիր ծրագրերում, որոնք կազմվում են մարզպետարանների կողմից և հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

2) Մարզային զարգացման ծրագրերի (ՄԶԾ) հիմնական նպատակը ԿԶԾ-ով և Կառավարության այլ ռազմավարական ծրագրերով նախանշված գերակա զարգացման

ուղղությունների ապահովումն է՝ հաշվի առնելով մարզերին բնորոշ առանձնահատկությունները:

3) ՄԶԾ-ների կազմումը և իրագործումը ընթանում է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ:

4) ՄԶԾ-ները պարբերաբար վերանայվում են՝ կապված, նախ և առաջ, ԿԶԾ և Կառավարության այլ ռազմավարական ծրագրերի վերանայման և ընդունման հետ, ինչպես նաև հիմք ընդունելով ՄԶԾ-ների իրականացման ընթացքում ի հայտ եկած տարբեր հանգամանքները, որոնք ցուցահանվում են մոնիտորինգի և գնահատման գործառույթով:

5) ՄԶԾ-ների կազմման և իրագործման ընթացքում բարձրացվել են մարզային խորհուրդների դերը, իսկ մարզպետարաններում ստեղծվել են անհրաժեշտ կարողություններ՝ այդ ողջ գործընթացը համակարգելու և կառավարելու համար:

6) Միասնական մեթոդաբանությամբ կազմված ՄԶԾ-ների հիման վրա հստակեցվել և կանխորոշվել են ՀՀ Կառավարության տարածքային քաղաքականության գերակայությունները, որոնք նախ և առաջ ուղղված են մարդկային և եկամտային աղքատության հաղթահարմանը և մարզերի զարգացման անհամամասնությունների նվազեցմանը:

7)Սոցիալական ենթակառուցվածքներում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող կապիտալ ծախսերի տարածքային կառուցվածքը նպատակադրվել է առաջին հերթին նվազեցնելու մարդկային աղքատության մակարդակը՝ գերակայությունը տալով այս առումով առավել աղքատ մարզերին:

8)Եկամտային աղքատությունը նվազեցնելու և մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունները մեղմելու նպատակով ՀՀ Կառավարությունը.

ա. Միջոցներ է հատկացնում՝ ուսումնասիրելու համար յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժը:

բ. Ըստ ամենայնի նպաստում է մարզերում գերակա ոլորտների զարգացման ծրագրերի կազմմանը և այդ ծրագրերի ներքին և արտաքին ներդրողներին և գործարարներին ներկայացմանը:

գ. Որոշակի ներդրումներ են կատարվել մարզային ենթակառուցվածքներում (այդ թվում՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ)՝ նպատակ ունենալով էապես բարելավելու գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

ե. Առանձին դեպքերում իրականացվելու են ուղղակի և անուղղակի ֆինանսական աջակցություն գործարարներին՝ առավել աղքատ մարզերում և տարածաշրջաններում (մասնավորապես՝ բարձր լեռնային և սահմանամերձ) գործունեություն ծավալելու նպատակով:

572. Ահա այս համատեքստում է, որ կարևորվում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի ՄԶՆ-ի դրամաշնորհային ֆինանսավորմամբ 2003թ.-ից գործող Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի փորձը (2003-2008 և 2009-2011թթ-ների համար նախատեսված Հայաստանի տարածքային զարգացման ծրագիրը գործում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Ծրագրերի նպատակն էր մարզերում աղքատության նվազեցումը և աղքատամետ զարգացման ծրագրեր կազմելու ու իրականացնելու բնագավառում մարզպետարանների կարողությունների ուժեղացումը: Այժմ մշակվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015թթ. Զարգարգացման ծրագիրը:

573. Մարզպետարանի առաջնորդությամբ, արդեն որպես ավանդույթ մարզային զարգացման ծրագրի մշակման աշխատանքներին լծվել են մարզի քաղաքացիական հասարակությունը, մասնագիտացված կազմակերպությունները, դոնոր կազմակերպությունները, ճյուղային նախարարությունների և պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները: Առաջին անգամ Հայաստանում Գեղարքունիքի և Տավուշի մարզերում ստեղծվեցին և գործադրվեցին ՄԶԾ-ի մշակման աշխատանքները: 2012-2015 թթ.մարզի զարգացման ծրագրի մշակման աշխատանքները ավանդույթ է դարձել, ինչպես նաև ՄԳ գործընթացների մեխանիզմները, մարզերի զարգացման պլանավորման նոր ինստիտուցիոնալ համակարգը արդեն ավել մատչել են: Այս լայնածավալ աշխատանքները համակարգում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը:

574. Մարզային զարգացման ծրագրի մշակման ու հետագա գործունեության ընթացքում փորձարկվել են և հաջող գործադրվել այնպիսի նոր մեթոդներ ու կառույցներ և ուժեղացվել են գործողները, ինչպիսիք են ,,Աղքատության մասնակցային գնահատումը,, համայնքային թիրախային խմբերը, ոլորտային աշխատանքային խմբերը (ընդ որում՝ իշխանության և հասարակության հավասարաչափ անդամակցությամբ), Մարզային զարգացման հանձնաժողովը և Տարեկան աշխատանքային պլանները, մոնիտորինգի և գնահատման կիսամյակային և տարեկան հաշվետվությունները և դրանց դերը հաջորդ ժամանակահատվածի պլանավորման ընթացքում, ինչպես նաև հրապարակայնության և բնակչության իրազեկվածության ապահովման գործառույթը:

575. ՄԶԾ-Ի նվաճումներից մեկը մարզային զարգացման պլանավորման ու իրականացման ինստիտուցիոնալ համակարգն է, որը խարսխված է ՄԶԾ-ների շուրջ ձևավորված Մոնիտորինգի և գնահատում բաժնում արձանագրված սկզբունքների վրա: ՄԶԾ-ների շուրջ ձևավորված գործընթացների գերակա նպատակներից են մարզում փաստացի առկա և պոտենցիալ միջոցների առավել արդյունավետ պլանավորումն ու օգտագործումը, իրականացնող մարմինների հաշվետվողականությունն ու նրանց գործունեության թափանցիկությունը, պոտենցիալ ներդրողներին առաջնահերթ ծրագրերի և միջոցառումների առաջադրումը: Այստեղ հարկավոր է նաև նշել, որ պլանավորման գործընթացն իր մեջ անպայմանորեն պարունակում է առաջնահերթ ծրագրերի ընտրության համար հստակ մշակված չափանիշները, որը պետք է իրականացվի ոլորտային աշխատանքային խմբերի համապատասխան մասնագետների կողմից:

576. Բխելով Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակներից, ԿԶԾ-ից և գործող ոլորտային քաղաքականություններից, այն հնարավորություն է տալիս համակարգել գոյություն ունեցող մարդկային, ֆինանսական ու տեխնիկական ռեսուրսները և դրանք ուղղել լայն հասարակության հետ համաձայնեցված առաջնահերթությունների իրականացմանը: Բնականաբար, գործող ինստիտուցիոնալ համակարգը դեռևս կպահանջի զգալի լրամշակումներ և շահագրգիռ մարմինների առաջարկություններ և մեկնաբանություններ, սակայն մեր խորհին համոզմամբ, համակարգի ճկունությունը և համապարփակությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այն խարսխված է Հայաստանում գործող վարչա-տարածքային բաժանման, բյուջետավարման, գնումների, միջնաժամկետ պլանավորման գործող համակարգերի օգտագործման (բոլոր տեսակի ֆինանսական միջոցների համար), մասնակցային ու հրապարակային գործընթացների պարտադիր կիրառման, ու հստակ հաշվետվողականության սկզբունքների վրա, թույլ է տալիս վստահ ասել, որ մշակված այս համակարգը դառցել է Հայաստանում մարզերի զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման մոդելի հիմքը: Բացի այդ, ունենալով արդեն ավելի քան 9 տարվա փորձ, Գեղարքունիքի մարզպետարանը պատրաստակամություն է հայտնում իր

ուժերի սահմաններում հանդես գալ որպես այլ մարզերում ու մարզպետարաններում մոդելի տարածմանը նպաստող փորձի փոխանակման, մասնագիտական, ինչպես նաև մեթոդաբանական աջակցության ռեսուրս:

577. Հետևաբար անհրաժեշտ ենք համարում նշել, որ մարզպետարանը հավանություն տալով ինստիտուցիոնալ համակարգին, նպատակահարմար է գտնում ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը առաջարկել մոդելային այս համակարգը տարածել ՀՀ այլ մարզերում, ինչը հնարավորություն կտա միասնականացնել մարզային զարգացման ծրագրերի մշակման, միջոցների ծրագրավորման, դրանց մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև հրապարակայնության հետ կապված խնդիրները: Բացի այդ, միջին ժամկետ ծրագրերը նախատեսում են նաև տարեկան աշխատանքային պլանների կազմման աշխատանքներ, որոնք համահունչ են ծրագրային բյուջետավարման բնագավառում ընթացող վերափոխումների հետ, ինչպես նաև բավարարում են աղքատության գնահատման ու դրա վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական մոնիտորինգային համակարգերին,:

Աղյուսակ 10.2 ՄԶԾ ծրագրավորվող տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների ֆինանսավորումը 2012-2015թ.թ.(մլն. դրամ)

ՄԶԾ ոլորտը	**Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թ.թ.**				
	2012թ.	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**Ընդամենը 2012-20115թթ.**
Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում, քաղաքացիական ծառայություն	10.0	11.0	11.0	10.0	42.0
Համայնքների ֆոդային բյուջեներով նախատեսված կապիտալ ներդրումներ	478.4	481.1	493.2	496.1	1.948.9
Ընդամենը	488.4	492.1	504.2	506.1	1.990.9

Գեղարքունիքի մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ համակարգ



Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Կարևոր նախապայմաններ
Տարածքային կառավարում		
Ոլորտային նպատակ՝ Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում	Օրենսդրության հստակեցում
Արդյունք 1. Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում		Նորմատիվ իրավական դաշտի առկայություն, այդ թվում՝ մարզային մակարդակով
Միջոցառումներ 1.1 Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների յուրացում 1.2 Մարզպետարանում աշխատող քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման ապահովում		Օրենսդրական պահանջներ
Արդյունք 2. Մարզպետարանի վերափոխված կառավարման կազմակերպական կառուցվածք	Մոնիտորինգի և գնահատման աշխատանքների համակարգման և ՄԳ հաշվետվությունների ամփոփման նպատակով Ծրագրերի և ներդրումների բաժնի առանձնացում որպես կառուցվածքային ստորաբաժանում՝ մարզպետի տեղակալի անմիջական ենթակայության ներքո /համապատասխան ենթաօրենսդրական ակտի ընդունում/	
Միջոցառումներ 2.1 Համապատասխան կարգավորող որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը		

Արդյունք 3. Սոցիալական ծառայությունների ապակենտրոնացում	3.1 Մարզպետարանի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունները կփոխանցվեն համայնքներին	ՀՀ կառավարության կողմից փորձնական ծրագրի իրականացման ընթացք
Միջոցառումներ 3.1 ՀՀ օրենսդրական բարեփոխումների իրագործում, համայնքներին համապատասխան տեղեկատվության տրամադրում		
Արդյունք 5. Մարզի բոլոր քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում ինտերնետային կենտրոնների ստեղծում, դրանց տեխնիկական միջոցներով և ինտերնետով ապահովում	Գործող ինտերնետ կենտրոնների թիվը մարզի քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում	• Արդեն իսկ գոյություն ունի նման կենտրոն Գավառ քաղաքում: • Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունները և տարածքները: • Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:
Միջոցառումներ 5.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում, 5.2 Համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում, 5.3 Հանրակրթական դպրոցների հետ կազմակերպական աշխատանքների իրականացում:		
Արդյունք 6. Մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում	Միասնական տեղեկատվական ցանցում ընդգրկված համայնքների թիվը	• Արդեն իսկ գոյություն ունի նման կենտրոն Գավառ քաղաքում: • Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական

		կազմակերպությունների տեխնիկական հնարավորություններ ը և տարածքները: • Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:
Միջոցառումներ 6.1 Համապատասխան տեխնիկական ապահովում, 6.2 Ծրագրային ապահովում, 6.3 Կադրերի վերապատրաստում		Մարզպետարանում և համայքների մեծ մասում գոյություն ունեն համակարգիչներ
Արդյունք 7. Մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հարաբերությունների բարելավվում:		Հանրապետական գործադիր մարմնի տարածքային ծառայություններն ունեն իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվային-իրավական դաշտ
Միջոցառումներ 7.1 Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնցով կարգավորվում են պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները:		
Տեղական ինքնակառավարում		
Ոլորտային նպատակ՝ Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում	1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճան 2. Համայնքային մակարդակում հավաքագրվող հարկեր և տուրքեր, % նախորդ տարվա նկատմամբ	Բավարար ֆինանսական միջոցների առկայություն ՀՀ կառավարությունը շարունակում է ապակենտրոնացման քաղաքականությունը:
Արդյունք 1. Համայնքային բյուջեների հավաքագրման	1.1 Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ	• գոյություն ունի բյուջետային ոլորտի հստակ կերպով

ցուցանիշների աճ	(% պլանավորված եկամուտների նկատմամբ)	կարգավորվող օրենսդրություն • համայնքային բյուջեների հարկային եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացում • յուրաքանչյուր տարի ավելանում են պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող դոտացիաների ծավալները
Միջոցառումներ 1.1 Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները 1.2 Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ:		
Արդյունք 2. Հողերի գոտիավորման, օգտագործման սխեմաների և բնակավայրի գլխավոր հատակագծերի կազմում	1.1 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ ունեցող համայնքների թիվը Թիրախ՝ (2012-2015թթ.-ին մարզի բոլոր համայնքներում կավարտվեն հողերի ժամանակավոր սխեմաների կազմումը:) 1.2Մշակված գլխավոր հատակագծեր ունեցող համայնքների թիվը Թիրախ՝ (2012-2015թ. կիրականացվեն մարզի բոլոր համայնքներում բնակավայրերի գլխավոր հատակածերի կազմումը)	• Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է: • Մյուս մարզերում ևս աշխատանքներն ընթացքի մեջ են:

Միջոցառումներ 2.1 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում 2.2 Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում		
Արդյունք 3. Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում	3.1. Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված աշխատատեղերի քանակը, % Թիրախ՝ (Աշխատատեղի 90%-ը կապահովվի համակարգիչներով 2012-2015թթ. ընթացքում) 3.2. 2012-2015թթ. նախատեսվում է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայողների վերապատրաստում շուրջ 570 մարդ: 3.3. Վերապատրաստում ստացած համայնքապետարանների աշխատողների թիվը Թիրախ՝ (Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով 2012-2015թթ. մարզում նախատեսվում է վերապատրաստել յուրաքանչյուր տարին շուրջ 80-100 մարդ:) 3.4.Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվը 20	Նոր ընտրված տեղական իշխանությունները շարունակում են համայնքային կարողությունների զարգացման համար մշակված մոտեցումների կիրառումը
Միջոցառումներ 3.1 Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի		Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

միջոցներով 3.2 Մարզում համայնքային ուսումնական կենտրոնի հիմնում 3.3 Համայնքների վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորում 3.4 ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով		
Արդյունք 4. Միջհամայնքային միավորումների կարողությունները բարձրացվել են	4.1. ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված միջհամայնքային միավորումների քանակը, %	Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է: Կան 4 համայնքների միություններ,որոնք ընդգրկում են համայնքների մոտ 77%-ը: Ենթադրվում է, կձևավորվեն նոր միջհամայնքային միավորումներ՝ ըստ ՏԻՄ-ի մասին 2002թ-ի օրենքի
Միջոցառումներ 4.1 Միջհամայնքային միավորումներին տեխնիկական աջակցության տրամադրում 4.2 Միջհամայնքային միավորման շենքային պայմանների բարելավում 4.3 Միջհամայնքային միավորումների շրջանակներում աղբահեռացման գործընթաց սկսել 4.4 Միջհամայնքային միավորումների իրավական հիմքերի ամրապնդում		Համայնքները սատարում են միջհամայնքային միավորումների ստեղծման գաղափարին:
Արդյունք 5. Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի մշակման որակի	5.1.ՄԶԾ և համայնքների եռամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցման դասընթացներին մասնակցած	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան

բարձրացում և համապատասխանեցում մարզային զարգացման ծրագրին	աշխատակազմի թիվը 5.2.ՄԶԾ-ին համապատասխանեցված համայնքային զարգացման ծրագրերի թիվը	մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 5.1.ՄԶԾ-ի և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում		
Արդյունք 6. Համայնքային հիմնախնդիրների կարգավորման գործընթացում ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներգրավվածություն	6.1Հանրային իրազեկման նպատակով պատրաստվող հաղորդումների թիվը 6.2.Բնակչությանը ուսուցում անցկացնող ՀԿ –ների թիվը յուրաքանչյուր համայնքում տարեկան 2 անգամ 6.3. ՏԻՄ և համայնքի ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 6.1. Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրության իրազեկում; 6.2. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում՝ հասարակական կազմակերպությունների միջոցով 6.3. Ավագանու և բնակչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ 6.4. Համայնքներում տեղեկատվական տախտակների կանոնավոր գործընթացի վարում, համայնքներում ինտերնետային կայք էջերի ստեղծում, ինտերնետային կապի հասանելիություն		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Արդյունք 7. Հասարակական վերլուծական տեղեկատվական կենտրոնների ստեղծում	Յուրաքանչյուր տարածքում հասարակական վերլուծական կենտրոնների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

ՀԿ-ների հիմքի վրա		
Միջոցառումներ ***7.1*** Մարզի համայնքների իրավական տեղեկատվական բազայի ստեղծում		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Արդյունք 8. ՄԶԾ-ների ինստիտուցիոնալ և ՄԳ համակարգերիի արմատավորում		
Միջոցառումներ ***8.1.*** ՄԶՀ-ների և ՈԱԽ-ների անդամների տեխնիկական առաջադրանքների հաստատում ***8.2.*** Առաջնահերթ ծրագրերի ընտրության հստակ չափանիշների մշակում և հաստատում ***8.3.*** ՀԿ ցանցի հետ ՈԱԽ-ներում և ՄԶՀ-ում ՀԿ-ների ներկայացուցիչների անդամակցությունը կարգավորող փոխըմբռնման հուշագրի կնքում ***8.4.*** ՄԳ համակարգի շարունակականության ապահովում ***8.5.*** Իրազեկման միջոցառումների իրականացում	8.1. Հաստատված տեխնիկական առաջադրանքներ 8.2 ՄԶՀ-ի համապատասխան որոշում՝ հաստատված մարզպետի կողմից 8.3. Փոխըմբռնման հուշագրի կնքում 8.4 Տարեկան կտրվածքով իրականացված ՄԳ ուսումնասիրությունների թիվ Տարվա ընթացքում պատրաստված ՄԳ հաշվետվությունների քանակ 8.5. Կիսամյակային և տարեկան հրապարակված հաշվետվությունների թիվը 2012-2015թթ.-երին 2005-2007թթ.-երի ՄԶԾ-ի արդյունքների և 2012-2015թթ.-երի ՄԶԾ-ի ընթացքի մասին իրազեկման միջոցառումների քանակը և տեսակը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են Ֆինանսական միջոցները առկա են Ֆինանսական միջոցները առկա են

11. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

11.1. Ներածություն

578. ՄԶԾ առաջընթացի վերլուծության և համապատասխան բարեփոխումների իրականացման տեսանկյունից չափազանց կարևորվում է իրականացվող միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար:

579. ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգը մշակվել է 2006թ.-ին և իրականացվել 2005-07թթ. Տարեկան աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների առաջընթացի ուսումնասիրման և վերլուծության նպատակով (քանի որ Ծրագրերի իրականացումը սկսվել է 2006թ.-ից, ապա 2006թ.-ի աշխատանքային պլանը ներառեց նաև 2005թ.-ի պլանով սահմանված միջոցառումները):

580. Ինչպես և ՄԶԾ-ը, այնպես էլ ՄԳ հայեցակարգի մշակումն ու իրականացումը ևս առաջին փորձն էր Հայաստանում՝ մարզային մակարդակում պլանավորված քաղաքականությունների առաջընթացի համակարգված գնահատման և վերլուծությունների առումով: Եվ այդ փորձը ցույց տվեց, որ համակարգը կենսունակ է և հուսալի, ինչը նշանակում է, որ այն թույլ է տալիս չափել իրականացվող միջոցառումների և ծրագրերի արդյունքները, բացահայտել դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները և դժվարությունները ու կյանքի կոչել այն հանձնարարականները, որոնք թույլ կտան բարելավել քաղաքականությունների պլանավորման և իրականացման գործընթացները:

581. Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով մարզպետարանի կազմում Մարզպետի հրամանով ձևավորվել է համապատասխան վարչություններից ոլորտային մասնագետներից բաղկացած ՄԳ խումբ, որի աշխատանքները համակարգվում են Գեղարքունիքի մարզպետի տեղակալի կողմից: ՄԳ համակարգով նախատեսված խմբի գործունեության արդյունքները ամփոփվում ևվերլուծում է մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կողմից:

582. ՄԳ գործառույթի ինստիտուցիոնալացման նպատակով Գեղարքունիքի մարզպետի հրամանով ՄԳ խմբի անդամների պաշտոնի անձնագրերում որոշակի փոփոխություններ կատարվեցին, որոնք ենթադրում էին ՄԳ գործառույթի ամրագրում: Սա նշանակում է, որ եթե մինչ այդ մոնիտորինգի խումբը գործում էր Մարզպետի հրամանով, սակայն աշխատանքային պարտականությունների շրջանակը իրականում չէր ենթադրում ՄԳ գործառույթի իրականացում, ապա ներկայումս այս գործառույթը դարձել է նրանց առօրյա պարտականությունների մի մասը՝ ի պաշտոնե:

583. ՄԳ գործառույթի կենսունակությունն ապահովելու համար կարևոր էր նաև ՄԳ խմբի կարողությունների հզորացումը ՄԳ մեթոդաբանությունների և մեթոդների վերաբերյալ: Այս հարցում առաջին ՄԶԾ շրջանակում մարզպետարանին առանցքային աջակցություն են ցուցաբերել ՀՏԶԾ փորձագետները:

584. Ընդհանուր առմամբ, ՄԶԾ ՄԳ-ն մի պարզ համակարգ է, որը.

1) համապատասխանում է ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին,

2) ապահովում է այնպիսի մի մոտեցում, որը թույլ է տալիս ուշադրության կենտրոնում պահել առաջնայնություններն արտացոլող ցուցանիշները, հանգեցնում է հուսալի արդյունքի, ինչպես նաև երաշխավորում է ներդրված միջոցների դիմաց ցանկալի որակ՝ հատկապես միջոցների սահմանափակության պարագայում,
3) ճկուն է ՄԶԾ-ի փոփոխվող կարիքների հանդեպ,
4) նպաստում է վճռորոշ ցուցանիշների համար համայնքային մակարդակի տվյալների ստեղծմանը,
5) թափանցիկ է և ապահովում է արդյունքների մասին լայն իրազեկումը:

11.2 Տարեկան աշխատանքային պլան

585. ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով յուրաքանչյուր տարեսկզբին ՄԳ խմբի կողմից մշակվում է Տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ): ՏԱՊ-ի նպատակներն են.

1) Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:

2) Շաղկապել նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ների արդյունքների հետ՝ 'տրամաբանական հենքի' օգնությամբ:

3) Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:

4) Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումները իրականացնելու համար:

5) Որոշակիացնել միջոցառումների իրականացման ժամկետները՝ ըստ եռամսյակների:

6) Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

586. Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը:

587. ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումները ամփոփված են Տրամաբանական հենքում: Տրամաբանական հենքը կառավարման հզոր գործիք է, որը պարզաբանում է առանձին ծրագրերի կամ միջոցառումների նախագծման պատճառահետևանքային կապերը և դրանց փոխկապակցվածությունը Ծրագրի խնդիրների, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ: Սա արդյունավետ ու ճկուն մեթոդ է ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, մոնիտորինգի ու գնահատման, ինչպես նաև հաշվետվականության հետ կապված խնդիրները լուծելու համար: Այսպիսով տրամաբանական հենքը օգնում է.

1) նկարագրել այն խնդիրները, որոնց իրականացմանն ուղղված է տվյալ միջոցառումը,
2) բացահայտել այն կարևոր նկատառումները, որոնք պետք է հաշվի առնել արտաքին գործոնների առումով, քանի որ դրանք կարող են ազդել դրված գերակա նպատակների իրականացման վրա,

3) սահմանել այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են տվյալ նպատակի իրականացումը չափելու համար,

4) բացահայտել, թե որ աղբյուրներից են ստացվելու յուրաքանչյուր ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները,

5) հատկորոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, ինչպես նաև սահմանել այն ժամկետները, որոնց սահմաններում պետք է իրականացվեն տվյալ նպատակները,

6) բացահայտել անհրաժեշտ միջոցները և ներդրումները:

11.3. ՄԶԾ ՄԳ և ԿԶԾ ՄԳ համակարգերը

588. ՄԶԾ-ի մոնիտորինգի համակարգը համապատասխանեցված է ՀՀ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին և ներառում է այն կարևոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

589. ՀՀ նախկին ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգում տեղ էր գտել 177 ցուցանիշ, որոնցից 36-ը համարվում են 'հիմնական' (նպատակային), իսկ մնացած 141-ը որակվում են որպես 'գործոնային' (բացատրող) ցուցանիշներ (տես՝ ԿԶԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ, ք. Երևան, 2005:): Ընդհանուր առմամբ, վերջինս վերաբերում է (ըստ ՀԲ-ի տերմինաբանության) միջանկյալ (մուտքի կամ ելքի) ցուցանիշներին, իսկ առաջինը՝ վերջնական (արդյունքի և ազդեցության) ցուցանիշներին: Այդ ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ բաղադրիչների.

1) Աղքատության կրճատում և բարեկեցության աճ (44 ցուցանիշ),

2) Կրթություն (29 ցուցանիշ),

3) Առողջապահություն (41 ցուցանիշ),

4) Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ (22 ցուցանիշ),

5) Քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն (32 ցուցանիշ)

6) Բնապահպանական կայուն զարգացում (9 ցուցանիշ):

590. Ներկայումս ԿԶԾ-ն գտնվում է վերանայման փուլում և շատ շուտով պատրաստ կլինի նոր ԿԶԾ-ն: Նոր ԿԶԾ-ն կունենա մոնիտորինգի և գնահատման վերանայված և թարմացված տարբերակ: Լինելով ճկուն և 2006թ.-ի սկզբից գործող, նոր ՄԶԾ մոնիտորինգի համակարգ, այն օժտված է ԿԶԾ ՄԳ համակարգի և նրանում անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելու բավարար ներուժով :

591. Մարզային մակարդակով ԿԶԾ-ի հիմնական ցուցանիշների սահմանման հարցը քննարկման ընթացքում է: Կարևոր է նաև, որ յուրաքանչյուր տարածքային կառավարման մարմին (մարզպետարան) համագործակցի ԿԶԾ-ի քարտուղարության

հետ՝ ԿԶԾ-ի պարբերական վերանայումների և նրա հետագա կատարելագործման համատեքստում: Ավելին, ՄԶԾ-ներում նախատեսվում են մի շարք գործողություններ, որոնց իրականացումը պետք է ապահովեն հենց տարածքային կառավարման մարմինները՝ այդպիսով աջակցելով ԿԶԾ-ի մոնիտորինգի գործընթացին: Դրանցից են.

1) ԿԶԾ-ով նախատեսված մարզում իրականացվող միջոցառումների մոնիտորինգ, վերլուծություն ու գնահատում,

2) մարզի մակարդակով ԿԶԾ-ի ցուցանիշների մոնիտորինգ ու վերլուծություն,

3) պետական աջակցության կարիք ունեցող ընտանիքների ու խոցելի խմբերի մոնիտորինգ և գնահատում,

4) քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման ու ԿԶԾ-ում նրանց մասնակցության ընդլայնման մոնիտորինգ, և

5) ԿԶԾ-ի մասին հանրության իրազեկության աստիճանի բարձրացում:

592. Բացի այն, որ ծրագիրը տվյալների շտեմարան է, այն նաև պարունակում է օգտակար քարտեզագրման ու գծապատկերման գործիքներ: Քանի որ այն անվճար և հեշտ կիրառելի է, ապա մի շարք երկրներում այն լայն տարածում է ունի նաև ոչ կառավարական սեկտորում, ինչը մոնիտորինգին հավելյալ թափանցիկություն է հաղորդում:

593. Այս ծրագիրը թույլ է տալիս ոչ միայն մարզային մակարդակում ԿԶԾ ցուցանիշներ հավաքագրել և վերլուծել, այլ ստեղծվում է մարզային ամբողջ տեղեկատվության կարևորագույն շտեմարան և հնարավորություն է ընձեռնվում քարտեզագրելու համայնքային մակարդակի տվյալները: Սա նպաստում է ոչ միայն մոնիտորինգի գործընթացին, այլև ՄԶԾ-ի առաջընթացի վերլուծությանը, թիրախների սահմանմանը և հետագա միջոցառումների ու քաղաքականության մշակմանը:

11.4 ՄԶԾ ՄԳ համակարգի կառուցվածքը

594. ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

1) քաղաքականության ուսումնասիրում,

2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում,

3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում

4) ազդեցության գնահատում:

595. Քաղաքականության ուսումնասիրում: Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և ենթադրվում է, որ մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության է առնում նախատեսված միջոցառումների առաջընթացը (այդ թվում՝ հատկացումները և գնումների ընթացակարգերն ու գործընթացները), բացահայտում է խոչընդոտները և հետազոտում գալիք ամիսներին անելիքները: Այս ուսումնասիրությունը կատարվում է տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ում ներառված միջոցառումների նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:

596. ՄԶԾ-ի ցուցանիշների և թիրախների վերանայում: Յուրաքանչյուր տարվա վերջում մոնիտորինգի տարեկան հաշվետվության համար ՄԶԾ-ի ցուցանիշների ցուցակը թարմացվում է: Այդ ցուցակը ներառում է ցուցանիշներ երկու աղբյուրներից. ՄԶԾ-ին հատուկ ցուցանիշներ՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքից, և ցուցանիշներ՝ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգից: Ցուցանիշները խմբավորված են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

1) Տնտեսական զարգացում

2) Կենսամակարդակ

3) ՓՄՁ զարգացում

4) Գյուղատնտեսության զարգացում

5) Առողջապահություն

6) Կրթություն

7) Սոցիալական պաշտպանություն

8) Համայնքային զարգացում

9) Շրջակա միջավայրի պաշտպանություն

597. Մասնակցային մոնիտորինգ և գնահատում: Յուրաքանչյուր տարվա վերջում ՀԿ-ների կողմից իրականացվում է մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ:

598. ՄՄԳ-ն որպես կանոն իրականացվում է ՄԶԾ-ի ոլորտների համար ներկայացուցչական ընտրանքի միջոցով՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում ներդրումների ծավալը և միջոցառումների իրականացման ժամկետները:

ՄԶԾ-ի շրջանակներում կիրառված մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանությունները

Համայնքային գնահատման քարտեր

Համայնքային Գնահատման Քարտեր (ՀԳՔ) մեթոդաբանությունը զարգացել է վերջին տարիներին և համարվում է ճկուն, որակական, հեշտ իրականացվող տեղական մոնիտորինգի, արձագանքների ստացման և մասնակցային պլանավորման գործընթաց, որը կարող է օգտագործվել տեղական խնդիրները վերհանելու և դրանք բարեփոխելու նպատակով: ՀԳՔ հիմնական նպատակներից մեկը մարդկանց ձայնը լսելի դարձնելն է, հատկապես խոցելի և աղքատ խմբերի, հանրային իրազեկության բարձրացումը, ինչը թույլ կտա կոլեկտիվ միջոցառումներ ձեռնարկել և ներքևից-վերև ճնշում գործադրել ցածրորակ ծառայությունների մատուցման դեմ:

Շահառուների գնահատում

'Շահառուների գնահատում' մեթոդաբանությունը առավելապես որակական տեղեկատվության ստացման միջոց է, որն ուղղված է ծրագրի ազդեցության և օգուտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանն ու վերլուծությանը, ինչը թույլ կտա քաղաքականություն մշակողներին ու պաշտոնյաներին բարելավելու ծրագրի մշակման և իրականացման ընթացակարգերը: Այս մեթոդաբանության առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ տեղեկատվությունը և վերլուծությունը բխում է ծրագրի շահառուների տեսակետներից, ընկալումներից և փորձից:

599. Ազդեցության գնահատում: Յուրաքանչյուր տարվա վերջում, մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվում է ՄԶԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ են տալիս.

1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում,

2) ստանալ ՄԶԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄԶԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ (ինչպես, օրինակ, աղքատների համար առանձին ծառայությունների մատչելիությունը):

600. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը:

601. Բացի այդ այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանականան տվյալները համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

602. Այնուամենայնիվ, ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ վերջինս պատասխանատու է ողջ համակարգի գործառնության համար: Սակայն, այս պարագայում մարզպետարանի ՄԳ խմբի մասնակցությունը սահմանափակվում է իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ: Այսպիսով՝ ամրապնդվում է նաև կապը մարզային իշխանությունների և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

Մարզպետարանի ՄԳ խմբի գործառույթները՝ ըստ ՄԶԾ ՄԳ փարրերի



11.5 ՄԶԾ-ի մոնիտորինգի ցիկլը

603. Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄԶԾ-ի տարեկան վերանայման և ՏԱՊ-ի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամսիներին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա,

2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում,

3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

11.6 ՄԳ հաշվետվությունների բովանդակությունը

604. Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

605. Միջանկյալ հաշվետվությունը ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամիսներին:

606. Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին և ներառում է հետևյալ բաժինները.

1) ԿԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա:

2) ՄԶԾ-երի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը:

3) Տարվա ընթացքում իրականացված գնումները:

4) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով:

5) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ:

6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները:

7) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները:

8) Հաջորդ տարվա հիմնախնիդրներ, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

11.7 Տարեկան սեմինար-խորհրդակցություն

607. ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքները ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզային խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր հանրության ներկայացուցիչները: Անհրաժեշտ է հրավիրել նաև ԿԶԾ-ի մոնիտորինգի բաժնի անձնակազմին, որպեսզի քննարկվեն նաև ՄԶԾ ՄԳ արդյունքների և եզրակացությունների ԿԶԾ-ի գործընթացին համահունչության հարցերը: Այդ սեմինար-խորհրդակցության նպատակներն են.

1) ՏԱՊ-ի իրագործման առաջընթացի ներկայացում

2) ՄԶԾ ցուցանիշների նկատմամբ առաջընթացի վերլուծություն

3)ՄՄԳ արդյունքների եզրահանգումների ու հանձնարարականների ներկայացում

4) Ոլորտային ազդեցության գնահատման արդյունքների, եզրահանգումների ու հանձնարարականների ներկայացում

5) Հաջորդ տարվա խնդիրների իրագործման հետ կապված հարցերի քննարկում:

608. Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կարևոր իրադարձություն է, քանի որ այն կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար:

609. Սեմինար-խորհրդակցությունը պետք է դիտվի նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

11.8. Ինստիտուցիոնալ դրույթներ

610. ՄԶԾ-ով նախատեսվող միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև ՄԶԾ-ի ռազմավարական նպատակների կատարման առաջընթացը որոշելու համար անհրաժեշտ է մարզպետարանի կառուցվածքում ուժեղացնել մոնիտորինգի և գնահատման գործառույթը: Այդ ուղղությամբ առաջին քայլերն արդեն արված են: Մարզպետարանի կառուցվածքում ստեղծված է ՄԳ խումբ, որը բաղկացած է մարզպետարանի տարբեր վարչությունների և բաժինների մասնագետներից: Բացի այդ, նրանց պաշտոնի անձնագրերում արդեն իսկ ՄԳ գործառույթը ամրագրված է որպես անմիջապես պաշտոնից բխող պարտականություն:

610. Չափազանց կարևոր է այս խմբի կարողությունների շարունակական կատարելագործումը: Այդ ուղղությամբ մարզպետարանը պետք է պարբերաբար դասընթացներ կազմակերպի խմբի մասնագետների համար՝ ՄԳ նոր մեթոդաբանություններին և արդյունքների վերլուծության, ներկայացման մեթոդներին ծանոթացնելու նպատակով:

611. Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի Մարզային խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը: Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության

ապահովման գործում: ՏԶՀ-ն ներառում է շահագրգիռ կողմերի լայն շրջանակ (քաղաքացիական հասարակություն, ՀԿ-ներ) և նրանց կողմից վերահսկողությունը կապահովի մոնիտորինգային գործունեության հաշվետվականությունը և թափանցիկությունը:

612. Բացի այդ չափազանց կարևոր է ՄԶԾ ՄԳ համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերի իրականացումը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հատկապես մասնակցային ՄԳ-ին և ազդեցության գնահատմանը: Լինելով արտաքին և անկախ ՄԳ տեսակներ՝ ՄԳ համակարգի այս տարրերի կանոնավոր իրականացումը նախ և առաջ պայմանավորված է մարզային իշխանությունների կողմից դրանց կարևորության ճիշտ ընկալումից և համապատասխան կամք դրսևորելուց: Հաշվի առնելով այն, որ ՄԳ այդ տեսակների իրականացման համար անհրաժեշտ են որոշակի ֆինանսական ռեսուրսներ, ապա մարզային իշխանությունները պետք է հետևողական լինեն այդ ռեսուրսները ժամանակին հայթհայթելու, գրագետ և անկողմնակալ ուսումնասիրություններ կատարող սուբյեկտների ճիշտ ընտրությունը ապահովելու և նրանցից որակյալ վերլուծություններ ու իրատեսական հանձնարարականներ պահանջելու հարցերում:

613.Այս համակարգի կենսունակության և հետագա զարգացման երաշխիքը կլինի ՄԳ-ի որպես մարզային զարգացման ինստիտուցիոնալ համակարգի անբաժանելի մասի ամրագրումը ՄԶԾ մոդելի բաղադրիչների կազմում: Բոլոր մարզերում այս համակարգի արմատավորումը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել ԿԶԾ-ի ՄԳ համակարգը մարզային մակարդակում, բարձրացնել տարբեր դոնորների կողմից այս բնագավառում իրականացվող միջոցառումների հասցեականությունը, ինչպես նաև հստակեցնել ու միասնականացնել միջմարզային համեմատությունների անցկացման աշխատանքները:

ՄԶԾ ՄԳ համակարգը



11.9. 2012-2015 թթ. ՄԳ աշխատանքային պլան և հետագա քայլեր

614. Ստորև ներկայացվում է ՄԶԾ ՄԳ համակարգով նախատեսված աշխատանքները՝ տարեկան կտրվածքով:

1) ՏԱՊ-ի քաղաքականությունների ուսումնասիրում

2) ՄԶԾ-ի ցուցանիշների և ՏԱՊ-ի ոլորտային թիրախների վերանայում

ա. Ցուցանիշների ցանկի և դրանց սահմանումների վերջնական ձևակերպում

բ. Ցուցանիշների համար ելակետային տվյալների հավաքագրում:

գ.ՄԶԾ-ի ծրագրերի վերաբերյալ տվյալների հավաքագրում, այդ թվում նաև՝ համայնքային մակարդակի տվյալները:

3) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման իրականացում.

4) Ազդեցության գնահատման անցկացում.

5) Մոնիտորինգի միջակյալ և տարեկան հաշվետվությունների պատրաստում.

5) Տարեկան սեմինար-խորհրդակցության կազմակերպում:

615. Բացի վերոհիշյալ աշխատանքները՝ ՄԳ համակարգի կենսունակության ապահովման նպատակով մարզպետարանը համապատասխան քայլեր պետք է ձեռնարկի նաև հետևյալ ուղղություններով.

1)Մարզպետարանի մասնագետների կարողությունների հզորացմանն ուղղված դասընթացների պարբերաբար կազմակերպում:

2)ՄԳ բոլոր տարրերի լիակատար ու շարունակական իրականացման համար ֆինանսական ռեսուրսների հայթայթում, հատկապես ՄԳ արտաքին տարրերի համար:

3)Մասնակցային ՄԳ և Ազդեցության գնահատման բաղադրիչների իրականացման համար Տեխնիկական առաջադրանքների մշակում, այդ թվում՝ իրականացնողների ընտրության հստակ չափանիշների ձևավորում և մրցույթային կարգի սահմանում:

4)ՄԳ հաշվետվությունների հրապարակայնության ապահովման մեխանիզմների մշակում, իրագործում և դրանց կենսունակությանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորում մարզպետարանի ընդհանուր ծախսերում:

5)ՀՀ նախարարությունների և այլ կառավարման մարմինների, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում՝ ՄԳ համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական աջակցությունն ապահովելու նպատակով:

6)ՄԳ լիարժեք իրականացման նպատակով՝ մարզում իրականացվող միջոցառումների, դրանց ծավալների և ֆինանսական ներդրումների վերաբերյալ

ամբողջական տեղեկատվության ստացման համար, ճյուղային նախարարությունների և դոնոր հանրության հետ կապերի ամրապնդում:

7)Տեղեկատվական հոսքերի կայուն և թափանցիկ մեխանիզմների մշակում և իրագործում, տվյալների բազայի ստեղծում և դրա պարբերաբար թարմացում:

ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը

Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչը	Իրականացման նպատակը	Իրականացման ընթացակարգը	Արդյունքը	Իրականացնող կողմը
Քաղաքականության վերանայում	Տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ի նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:	▪ ՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցառումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն: ▪ ՝ ՏԱՊ-ի իրականացման ընթացքում ծագած հիմնախնդիրների բացահայտում: ▪ ՝ Հաշվետու հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում: ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում: ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Կիսամյակային հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ
ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն	ՄԶԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում:	▪ ՝ ՄԶԾ և մարզային մակարդակում ԿԶԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների հավաքագրում: ▪ ՝ Վերոհիշյալ ցուցանիշների թարմացում: ▪ ՝ Ցուցանիշների	Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ

		համեմատական վերլուծություն՝ ՄԶԾ ազդեցությունը գնահատելու նպատակով: ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:		
Մասնակցային մոնիտորինգ և գնահատում	ՄԶԾ-ի առաջընթացի վերաբերյալ հանրության կարծիքների և արձագանքների վերլուծություն	▪ ՝ ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն ▪ ՝ ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն ▪ ՝ Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում ▪ ՝ Հետազոտական խմբի ձևավորում ▪ ՝ Դաշտային աշխատանքների իրականացում ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Մասնակցային մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն (այս հաշվետվության Գործադիր Ամփոփումը ներառվում է ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության մեջ)	Քաղաքացիական հասարակության խմբեր, տեղական ՀԿ-ներ
Ազդեցության գնահատում	ՄԶԾ որևէ ոլորտում մասնագիտական հետազոտություն	▪ ՝ ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն ▪ ՝ ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն ▪ ՝ Հետազոտական	Ազդեցության գնահատման հաշվետվություն (այս հաշվետվության Գործադիր Ամփոփումը ներառվում է ՄԶԾ	Անկախ փորձագետներ

		գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում ▪ ՝ Հետազոտական խմբի ձևավորում ▪ ՝Դաշտային աշխատանքների իրականացում ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում	մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության մեջ)	

12. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

616. Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի պլանավորված ֆինանսավորումը 2012-2015թ.թ. կազմել է 91**.946.6** մլրդ դրամ, որը ներկայացվել է ստորև բերված Աղյուսակ 12-1-ում:

617. ՄԶԾ հիմնական գերակայությունները պահպանվել են նաև 2012-2015թթ-ին համաձայն սույն վերանայված ՄԶԾ-ի: Դրա մասին է վկայում նաև ծրագրավորվող ՄԶԾ ֆինանսավորման ոլորտային կառուցվածքը, որը ներկայացված է Աղյուսակ 12-1ում

Աղյուսակ 12.1. ՄԶԾ ծրագրավորվող ֆինանսավորումը 2012-2015թ.թ.(մլն. դրամ)

ՄԶԾ ոլորտը	**Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թ.թ.**				
	2012թ.	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**Ընդամենը 2012-20115թթ.**
Մասնավոր հատված և ՓՄՁ զարգացում	62,5	83,5	116,0	118,5	**380.5**
Գյուղատնտեսություն	890.0	927.0	853.0	742.0	**3.412.0**
Բնապահպանություն	196.9	197.0	198.0	202.2	**794.1**
Կրթություն	6,383.3	6,771.4	6,922.8	6,723.9	**26,801.4**
Հանգիստ, մշակույթ և կրոն	54.9	59.3	59.3	99.9	**273.4**
Առողջապահություն	2,500.0	2,800.0	3,100.0	3,500.0	**11,900.0**
Սոցիալական ապահովության	50.0	60.0	70.0	80.0	**260.0**
Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում, քաղաքացիական ծառայություն	10.0	11.0	11.0	10.0	**42.0**
Համայնքային ֆոնդային բյուջեով նախատեսված կապիտալ ներդրումներ	478.4	481.1	493.2	496.1	**1,948.8**
Ենթակառուցվածքներ,այդ թվում	**12,253.6**	**11,694.1**	**11,369.3**	**10,817.4**	**46,134.4**
ճանապարհներ	6.400.0	6.400.0	6.400.0	6.490.6	25.690.6
Ջրամատակարարում	1.810.0	1.830.0	1.850.0	1.854.0	7.344.0
Ջրահեռացում	420.0	435.0	445.0	465.5	1.765.5
գազամատակարարում	1 302.0	878.0	633.0	318.0	3.131.0
քաղաքաշինություն	2.321.6	2.151.1	2.041.3	1.689.3	8203.3
Ընդամենը	**22,879.6**	**23,084.4**	**23,192.6**	**22,790.0**	**91,946.6**

618.ՓՄՁ ֆինանսավորման մասնավորապես վարկային երաշխիքները նախատեսվածից ավելի պահանջարկի դեպքում ֆինանսական որևէ խնդիրներ չեն առաջանա, քանի որ ՓՄՁ-ների կողմից բանկերին վարկերի մարման հետևանքով ազատված երաշխիքային միջոցները լրացուցիչ աղբյուր են հանդիսանում նոր բանկային երաշխիքներ տրամադրելու համար:

619. Ճանապարհների վերականգնմանն ու վերանորոգմանն ուղղվող ֆինանսական միջոցների պահանջը մեծ է: Հաշվի է առվել հաշվետու ժամանակահատվածում չվերանորոգված ճանապարհների լրացուցիչ մաշվածքը, նոր ճանապարահատվածների նորոգման ծրագրերը, ինչպես նաև գարնանային հեղեղումներից տուժած ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների վերականգնման անհրաժեշտությունը:

620. 2012-2015թ.թ. անհրաժեշտ է ամբողջովին ավարտել համապատասխան կարիքներ ունեցող դպրոցների կապիտալ վերանորոգումը: Այս ուղղությամբ նախատեսվող առաջանցիկ ծրագրերը, ապահովված լինելով համապատասխան ֆինանսավորմամբ, այսուհանդերձ ավելացնում են 2012-2015թթ. ՄԶԾ իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծավալը:

621. Ընդհանուր առմամբ բազմակողմանի և երկկողմանի դոնորների հետ արդյունավետ և հետևողական աշխատանքը ՄԶԾ ֆինանսական ճեղքվածքի նվազեցման ամենահիրատեսական և գերակա ուղղությունն է:

622. Այս առումով, Գեղարքունիքի մարզպետարանը համայնքների և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ ավելի ակտիվորեն է շարունակում դոնորների հետ համագործակցությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

1) 2012-2015թ.թ. մարզային զարգացման ծրագիրը կներկայացվի դոնոր հանրությանը այդ նպատակով հատուկ կազմակերպված դոնոր ֆորումի ընթացքում;

2) Պլանավորվող ժամանակահատվածում պարբերաբար կիրականացվեն դոնորների այցելություններ Գեղարքունիքի մարզ (դոնորների օրեր մարզում) ավելի անմիջականորեն ծանոթանալու ՄԶԾ իրագործման ընթացքին;

3) Կկազմակերպվեն երկկողմանի հանդիպումներ առանձին ծրագրերի իրագործման առումով համապատասխան դոնորների հետ;

4) ՄԶԾ իրականացման հաշվետվությունները, մոնիտորինգի և գնահատման արդյունքները պարբերաբար կներկայացվեն բոլոր շահագրգիռ դոնորներին;

5) Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի հայկական սփյուռքի հետ համագործակցությանը (Հայաստան-Սփյուռք վեհաժողովի կողմից հաստատված գյուղական աղքատության կրճատման ծրագիր և այլն), ինչպես նաև արտերկրում բնակվող և աշխատող մարզի բնակչության հետ տարվող աշխատանքներին:

623. Ընդհանուր առմամբ ՄԶԾ ֆինանսական ներդրումները կուղղվեն.

1) Պետական բյուջեից ֆինանսական միջոցներ:

2) Դոնոր հանրության (մասնավորապես Եվրոմիության) կողմից ստացվող ֆինանսական միջոցները, մարզային իշխանությունների հետ ավելի ակտիվ համագործակցության պայմաններում:

3) Համայնքների, մասնավորապես զարգացող համայնքային միավորումների կողմից լրացուցիչ ներդրված միջոցները:

624. Տարբեր աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների և համապատասխան ծրագրերի առավել ամբողջական հաշվառումը և ընդգրկումը ՄՋԾ-ում հանդիսանում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի մշակման կարևորագույն գերակայություններից մեկը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Գեղարքունիքի մարզի առաջնահերթ վերանորոգման կարիք ունեցող դպրոցները՝ ըստ վթարայնության աստիճանի, և պահանջվող ֆինանսավորումը

հ/հ	Դպրոցի անվանումը	Գումարը (Հազ ՀՀ դրամ)
Ճամբարակի տարածաշրջան		
1.	Թթուջրի միջն դպրոց	96779.5
2.	Ճամբարակի թիվ 4 միջն դպրոց	64800.0
3.	Դրախտիկի միջն դպրոց	109340.0
Վարդենիսի տարածաշրջան		
1.	Վարդենիսի N1 մ/դ	365220.0
2.	Վարդենիսի N2 մ/դ	148988.2
3.	Վարդենիսի N4 մ/դ	269500.0
4.	Ծովակի մ/դ	365750.0
5.	Մ.Մասրիկի միջն դպրոց	313390.0
Գավառի տարածաշրջան		
1.	Գավառի N 2 մ/դ	297810.0
2.	Գավառի N4 մ/դ	100000.0
3.	Գավառի N 5 մ/դ	377041.5
4.	Հայրավանքի մ/դ	149780.0
5.	Գանձակի N2 մ/դ	224840.0
Սևանի տարածաշրջան		
1.	Սևանի N1 մ/դ	482050.0
2.	Սևանի N3 մ/դ	499730.0
3.	Սևանի N5 մ/դ	93170.0
4.	Սեմյոնովկայի հ/դ	18480.0
5.	Դդմաշենի միջն	107456.4
6.	Ծովագյուղի միջն	210247.9
Մարտունու տարածաշրջան		
1.	Գեղհովիտի N2 մ/դ շինարարություն	513000.0
2.	Վ.Գետաշենի N2 մ/դ շինարարություն	300000.0
3.	Վաղաշենի միջն դպրոցի շինարարություն	168537.0
4.	Լիճքի հ/դ շինարարություն	121000.0
5.	Ծովասարի մ/դ	79520.0
6.	Ն.Գետաշենի թիվ 2 մ/դ	227566.6
7.	Վ.Գետաշենի թիվ 1 մ/դ	360573.9
8.	Վարդենիկի թիվ 3 մ/դ	34305.6
9.	Ծովինարի մ/դ	195980.0
10.	Մարտունու թիվ 1 մ/դ	261082.5
11.	Լիճքի մ/դ	246714.3
12.	Արծվանիստի մ/դ	214293.1
13.	Երանոսի թիվ 1 մ/դ	290688.2
14.	Աստղաձորի մ/դ	269918.5

15.	Վարդենիկի թիվ 2 մ/դ	470871.6
16.	Վարդաձորի մ/դ	176796.1
17.	Մարտունու N2 մ/դ	415420.0
18.	Երանոսի թիվ 2 մ/դ	275660.0
19.	Զոլաքարի թիվ 2 մ/դ	467500.0
20.	Ծովինարի տ/դ	40040.0
	Ընդամենը	**9423840.9**

Հավելված 2. Գեղարքունիքի մարզի վերանորոգման կարիք ունեցող բուժհիմնարկների ցանկը և պահանջվող ֆինանսավորումը

հ/հ	Բուժհիմնարկի անվանումը	Գումարը (ՀՀ դրամ)
Ճամբարակի տարածաշրջան		
1.	Ճամբարակի Ա/Կ	100000.0
2.	Վահանի ԲՄԿ	1000.0
3.	Ջիլի ԲՄԿ	1000.0
4.	Գետիկի ԲՄԿ	1000.0
5.	Շորժա ԲՄԿ	1000.0
6.	Թթուջրի ԲՄԿ	1000.0
7.	Դրախտիկի ԲՄԿ	1000.0
8.	Աղբերքի ԲՄԿ	1000.0
9.	Անտառամեջի ԲՄԿ	1000.0
10.	Բարեպատի ԲՄԿ	1000.0
11.	Կալավանի ԲՄԿ	1000.0
Սևանի տարածաշրջան		
1.	Սևանի հիվանդանոց	240000.0
2.	Սեմյոնովկայի ԲՄԿ	1000.0
3.	Չկալովկայի ԲՄԿ	1000.0
4.	Նորաշենի ԲՄԿ	1000.0
5.	Գեղամավանի ԲՄԿ	1000.0
6.	Վարսերի ԲՄԿ	1000.0
Մարտունու տարածաշրջան		
1.	Մարտունու Բ/Կ	400000.0
2.	Ծակքարի ԱԱՊԿ	50000.0
Վարդենիսի տարածաշրջան		
1.	Վարդենիսի հիվանդանոց	140000.0
2.	Վարդենիսի պոլիկլինիկա	50000.0
3.	Փ.Մասրիկ ԲՄԿ	1000.0
4.	Նորաբակի ԲՄԿ	1000.0
5.	Տորֆավանի ԲՄԿ	1000.0
6.	Վանևանի ԲՄԿ	1000.0
7.	Լճավանի ԲՄԿ	1000.0
8.	Ախպրաձորի ԲՄԿ	1000.0
9.	Մաքենիսի ԲՄԿ	1000.0
10.	Սոթքի ԲՄԿ	1000.0

11.	Արեգունի ԲՄԿ	1000.0
12.	Կախակնի ԲՄԿ	1000.0
13.	Ծափաթաղի ԲՄԿ	1000.0
14.	Այրքի ԲՄԿ	1000.0
15.	Փամբակ-Դարանակի	1000.0
Գավառի տարածաշրջան		
1.	Գավառի պոլիկլինիկա	20000.0
2.	Լճափի ԲԱ	50000.0
	Ընդամենը	**1078000.0**

Հավելված 3. Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում պահանջվող մասնագետների ցանկ

N	Բուժհիմնարկի անվանում	Թափուր հաստիքներ	Քանակը
1.	Սևանի պոլիկլինիկա	Թաղամասային թերապեվտ	1
		Մանկաբույժ	1
		Գինեկոլոգ	2
		Բժիշկ վիճակագիր	1
2.	Սևանի հիվանդանոց	Ռենտգենոլոգ	1
		Սոնոգրաֆիստ	1
		Պաթանատոմ	1
		Հեմատոլոգ	1
		Շտապօգնության բժիշկ	4
		Ներզատաբան	1
		Ինֆեկցիոնիստ	1
		Ֆիզիոթերապեվտ	1
3.	Գավառի Բ/Կ	Պաթանատոմ	1
		Շտապ օգնության բժիշկ	4
		Անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ	1
		Ուռոլոգ	1
		Անոթային վիրաբույժ	1
4.	Այրան կետում	Հեմատոլոգ	1
5.	Գավառի պոլիկլինիկա	Տեղամասային թերապեվտ	1
		Տեղամասային մանկաբույժ	2
		Մաշկավեներոլոգ	1
		Ֆթիզիատոր	1
		Քիթկոկորդ ականջաբան	1
		Նյարդաբան	1
		Ակնաբույժ	1
		Ռենգենոլոգ	1
		Ֆունկցիոնալիստ	1
		Լաբարանտ	1
		Ֆիզիոթերապեվտ	1
6.	Մարտունու Բ/Կ	Պաթանատոմ	2

		Շտապօգնության բժիշկ	1
		Ֆթիզիատոր	1
		Նևրոպաթոլոգ	1
		Սրտաբան	1
7.	Աստղաձորի ԲՄԿ	Ընտանեկան բժիշկ	1
8.	Լիճքի ԲՄԿ	Ընտանեկան բժիշկ	1
9	Վարդաձորի ԲՄԿ	Ընտանեկան բժիշկ	1
10.	Երանոսի ԲԱ	Ընտանեկան բժիշկ	1
11.	Գեղհովիտի ԲԱ	Ընտանեկան բժիշկ	1
12.	Նորատուսի ԲԱ	Ընտանեկան բժիշկ	2
13.	Կարմիրգյուղի ԲԱ	Ընտանեկան բժիշկ	1
14.	Վարդենիսի հիվանդանոց	Գինեկոլոգ	2
		Պաթանատոմ	1
		Ռենտգենոլոգ	1
		Վիրաբույժ	1
		Շտապօգնության բժիշկ	4
15.	Վարդենիսի պոլիկլինիկա	Գինեկոլոգ	2
		Ռենտգենոլոգ	1
		Վիրաբույժ	1
		Ինֆեկցիոնիստ	1
		ԼՕՌ	1
		Ընտանեկան բժիշկ	3
16.	Ճամբարակի Ա/Կ	Պաթանատոմ	1
		Շտապօգնության բժիշկ	4
		Ռենտգենոլոգ	1
		Ակնաբույժ	1
		Հոգեբույժ	1
		Ինֆեկցիոնիստ	1
		Ֆթիզիատոր	1
		Նևրոպաթոլոգ	1
		Ընտանեկան բժիշկ	3

Հավելված 4. Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկների սարքավորումների պահանջարկը

N	Բուժհիմնարկի անվանումը	Պահանջվող սարքավորում
1.	Մարտունու բժշկական կենտրոն	Գաստրոսկոպ
		Ռենտգեն ապարատ
		Վիրաբուժական գործիքների կոմպլեկտ
		Գինեկոլոգիական աթոռ
		Կլինիկական լաբորատորիա
		Ավտոկլավ
		Ձեռքի էլեկտրական կամ ոչ էլեկտրական օվթալմոսկոպ
		Ակնոցների ընտրման կոմպլեկտ
		Բինոկուլյար լուպա
		Սիկոսկոպ

		ԷԿԳ ապարատ
		Լարինգոսկոպ
		Աուդիտոմետր
		Բրոնխոսկոպ
		Կվարցային լամպ
		Չորացնող ապարատ
		Բիքսեր, նաև փոքր բիքս
		Ցերեկային լուսավորման լամպեր
		Գլուկոմետր
		Էնդոսկոպիկ հետազոտության /գաստրասկոպիա/ ապարատ
		Լաբորատոր հետազոտման ապարատներ / բիոքիմիկան անալիզատոր, մեզի անելատոր
		ԷԱԳ հետազոտման ապարատ
		Կարդիոմոնիտորներ
2.	Վարդենիսի պոլիկլինիկա ՊՓԲԸ	Գաստրոսկոպ
		Ռենտգեն ապարատ
		Վիրաբուժական գործիքների կոմպլեկտ
		Գինեկոլոգիական աթոռ
		Կլինիկական լաբորատորիա
		Ավտոկլավ
		Ձեռքի էլեկտրական կամ ոչ էլեկտրական օվթալմոսկոպ
		Ակնոցների ընտրման կոմպլեկտ
		Բինոկուլյար լուպա
		Սիկոսկոպ
		ԷԿԳ ապարատ
		Լարինգոսկոպ
		Աուդիտոմետր
		Բրոնխոսկոպ
		Կվարցային լամպ
		Չորացնող պահարան
		Բիքսեր, նաև փոքր բիքս
		Ցերեկային լուսավորման լամպ
		Գլուկոմետր
3.	Վարդենիսի հիվանդանոց ՊՓԲԸ	Անեսթեզիայի ապարատ
		Գաստրոսկոպ
		Վիրաբուժական մեծ կոմպլեկտ
		Վիրահատական սեղան
		Ծննդաբերության վակում սեղան
		Ֆունկցիոնալ մահճակալ
		Ավտոկլավ
		Դեղորայք, ներարկիչ, վիրակապ
		Չորանոց
		Լաբորատոր սարքավորումներ
		ԼՕՐ գործիքներ և սարքավորումներ
		ԷԿԳ ապարատ
		Կյուվեզ նորածնի
		Խառնարաններ
4.	Ճամբարակի Ա/Կ	Էլեկտրասրտագրության ապարատ

		Կոլոնոսկոպ
		Ցենտրիֆուգա
		Թերմոստատ
		Աուդիոմետր
		Բոր մեքենա
		Բինոկուլյար միկրոսկոպ
		Լաբորատոր սարքավորումների հավաքածու
		ԼՕՐ գործիքների հավաքածու
		Ստոմոտոլոգիական գործիքների հավաքածու
		Չորացնող պահարան
		Արտածծող պահարան
		Հեմոգլոբինոմետր
		Գլուկոմետր
		Ավտոկլավ
		Թերմոստատ- 2
		Էլեկտրակարդիոգրաֆ - 2
		Վիրաբուժական հավաքածու
		Վիրահատական հավաքածու
		Էլեկտրական դանակ
		Պոլինարկոն
		Մոնիտոր
		Պուլս օքսիմետր
		նազա, արհեստական շնչառության
		Դեֆիբիլատոր
		Լարինգոսկոպ
		Արտածծիչ
		Վակում արտածծիչ
		Գինեկոլոգիական և մանկաբարձական հավաքածու
		էլեկտրական ստերիլիզատոր – 4
		ԼՕՐ հավաքածու
5.	Գավառի հիվանդանոց ՊՓԲԸ	Լաբորոսկոպ (վիրահատական)
		Իմունոֆերմենտային և բիոքիմիական անալիզատոր
6.	Սևանի հիվանդանոց ՊՓԲԸ	Արհեստական շնչառության ապարատ -2
		Վիրահատական մեծ հավաքածու – 2
		Մանկաբարձական վիրահատությունների հավաքածու
		Ձիտոսկոպ – 2
		Լապորոսկոպ
		Միկրոսկոպ – 2
		Օստեոսինթեզի հավաքածու
		Կմախքային ձգման հավաքածու
		Նոտոէլեկտրակալորիմետր
		Կարդիոմոնիտոր
		Լարինգոսկոպ փոքրերի – 2
		Էլեկտրածծիչ
		Նարկոզի ապարատ
		Դեֆիբիլիատոր
		Լարինգոսկոպ մեծերի

		Ստերիլիզատորներ
		Չորացնող պահարան
		Դեզ կամերա
		Թերմոստատ
		ԷԿԳ ապարատ
		էծոկարդիոգրաֆ
		Սոնոգրաֆ
		Գաստրոսկոպ
		Ֆիզիոթերապեվտիկ ապարատներ
		Նորածնային ինկուբատորներ/կյուվեզ
		Հիվանդների սայլակներ
		Նորածնային մահճակալներ
		Բազմակամերանի էլեկտրակարդիոգրաֆ
		Մոնիտորներ
		Վթարային սնուցման լամպեր
		Էնդոսկոպիկ ապարատներ
		Ռենտգեն ապարատներ
7.	Սևանի պոլիկլինիկա	Ռենտգեն ապարատ
		Էխոկարդիոգրաֆ
		Ցենտրիֆուգա

Հավելված 5. Գեղարքունիքի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցառումների ծրագիր՝ ըստ առաջնահերթությունների

Գավառի տարածաշրջան

h/h	**Միջոցառման անվանումը**	**Երկարությունը կմ**	**Խողովակի տրամագիծ մմ ՕԿՋ ծակոտկեն մմ**	**Բնակչության թիվ**	**Պահանջվող ֆինանսական միջոցները ընդամենը մլն.դ**
1.	Նորատուսի ջրահեռացման ցանցի կառուցում	25		7100	400.0
2.	Նորատուսի ինքնահոս ջրագծի կառուցում Գավառի 'Խաչեր' պոմպակայանից	7.5	150-300		40.0
3.	Գավառի խմ.ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	40			830.0
4.	Գավառի ջրահեռացման ցանցի հիմնանորոգում	20			400.0
5.	Սարուխանի ներքին ցանցի հիմնանորոգում	26			410.0
6.	Կարմիրգյուղի ներքին ցանցի վերանորոգում	16	200	6271	115.0
7.	Գանձակի ներքին ցանցի հիմնանորոգում	28			440.0
8.	Գեղարքունիքի ներքին ցանցի հիմնանորոգում	2	100	2060	10

9.	Լանջաղբյուրի ներքին ցանցի հիմնանորոգում	2.5	100	2415	15.0
10.	Լանջաղբյուրի արտաքին ցանցի նորոգում	2.5	150		12.0
11.	Լանջաղբյուրի ՕԿՋ-ի նորոգում				6.0
12.	Ծաղկաշենի խմելու ջրագծի վերանորոգում, Ծաղկաշենի ՕԿՋ-ի վերանորոգում	1.5	100	575	8.0
13.	ԸՆԴԱՄԵՆԸ	171			2686.0

Սևանի տարածաշրջան

h/h	**Միջոցառման անվանումը**	**Երկարությունը կմ**	**Խողովակի տրամագիծ մմ ՕԿՋ ծավալ մՅ**	**Բնակիչների թիվ**	**Ֆինանսական միջոցները ընդամենը մլն դրամ**
1.	ք.Սևանի խմելու ջրի ն/ց-ի հիմնանորոգում	70		22900	640.0
2.	Ք.Սևանի ջրահեռացման ցանցի վերանորոգում	40			100.0
3.	Վարսերի խորքային հորի կառուցում			2010	10.0
4.	Գեղամավանի խմ.ջրի ն/ց-ի կառուցում	4	100-150	1876	20.0
5.	Նորաշենի խմ.ջրի ն/ց-ի հիմնանորոգում	4	100	460	20.0
6.	Նորաշենի ՕԿՋ-ի վերանորոգում		500		18.0
7.	Չկալովկայի ՕԿՋ-ի վերանորոգում		2x500	533	36.0
8.	Չկալովկայի խմելու ջրի ն/ց-ի հիմնանորոգում	2.5	100		15.0
9.	Չկալովկայի խորքային հորի կառուցում				10.0
10.	Զովաբերի խմելու ջրագծի կառուցում	2.5	100	1660	15.0
11.	Զովաբերի ներքին ցանցի վերանորոգում	1	100		5.0
12.	Դդմաշենի ներքին ցանցի վերանորոգում	17	100-150	2750	100.0
13.	Դդմաշենի մանկապարտեզի ջրամատակարարում	0.5	100		3.0
14.	Ծաղկունքի ՕԿՋ-ի կառուցում		400		15.0
15.	Ծաղկունքի ներքին ցանցի հիմնանորոգում	3.5	100		18.0
16.	Լճաշենի խմելու ջրի ն/ց-ի հիմնանորոգում	10	100-150	4576	54.0
17.	Լճաշենի նոր թաղամասի ջրագծի կառուցում	2	100		12.0
18.	Սեմյոնովկայի խմելու ջրագծի կառուցում	10	100	299	25.0
19.	Սեմյոնովկայի 2 հատ կապտաժի կառուցում				2.0
20.	Գեղամավանի խմելու ջրի ն/ց-ի հիմնանորոգում	10			65.0
21.	Ծովագյուղի խմելու ջրի ն/ց-ի հիմնանորոգում	17			85.0
22.	ԸՆԴԱՄԵՆԸ	194			1268.0

Մարտունու տարածաշրջան

h/h	**Միջոցառման անվանումը**	**Երկարությունը կմ**	**Խողովակի տրամագիծ մմ ՕԿՋ ծավալ մ3**	**Բնակչության թիվ**	**Դասակարգման ֆինանսական միջոցները ընդամենը մլն դրամ**
1.	ք.Մարտունու խմ.ջրի ն/ց-ի հիմնանորոգում	24			1000.0
2.	ք.Մարտունու ջրահեռացման ցանցի նորոգում	20			200.0
3.	Գեղհովիտի ջրագծի հիմնանորոգում	3	75-100	6427	15
4.	Ն.Գետաշենի խմ.ջրի ն/ց-ի կառուցում	7		8323	35.0
5.	Ծակքարի խմ.ջրի ն/ց-ի կառուցում	1.5	100	2556	9.0
6.	Ձորագյուղի խմ.ջրի ն/ց-ի կառուցում	4	100	4644	20.0
7.	Ձորագյուղի կոյուղու կառուցում	2			60.0
8.	Երանոսի խմ.ջրի ն/ց-ի հիմնանորոգում	8		6194	40.0
9.	Զոլաքարի խմ.ջրի ն/ց-ի կառուցում	4		6878	23.0
10	Զոլաքարի ն/ց-ի վերանորոգում	4			16.0
11.	Աստղաձորի ներքին ցանցի վերանորոգում	3	100	4137	15.0
12	Աստղաձորի խմելու ջրատարի կառուցում	14.0			130
13	Ծովինարի ՕԿՋ-ի և ջրագծի կառուցում	1		5076	8.0
14	Ծովինարի խմելու ջրի ն/ց-ի վերակառուցում	15			65.0
15	Վարդենիկի ներքին ցանցի վերանորոգում	60	100	10199	300.0
16	Վ.Գետաշենի ներքին ցանցի վերանորոգում	15	100-200	5109	100.0
17	Վարդաձորի ներքին ցանցի վերանորոգում	5		3033	30.0
18	Մադինայի ներքին ցանցի վերանորոգում	8	100	1161	40.0
19	Մադինայի խմելու ջրագծի կառուցում	1	200		8.0
20	Լիճքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	2.6	100	5146	18.0
21	Լիճքի ջրամբարի վերանորոգում		500		18.0
22	ԸՆԴԱՄԵՆԸ	202.1			2150.0

Ճամբարակի տարածաշրջան

h/h	**Միջոցառման անվանումը**	**Երկարությունը կմ**	**Խողովակի տրամագիծ մմ ՕԿՋ ծավալ մ3**	**Բնակչության թիվ**	**Դասակարգվող ֆինանսական միջոցները ընդամենը մլն.դ**
1.	Վահանի խմելու ջրագծի վերանորոգում	14.0		1213	40.0

2.	Վահանի կապտաժի վերանորոգում 4 հատ				2.0
3.	Վահանի ջրընդունիչի և ՕԿՋ-ի վերանորոգում				15.0
4.	Թթուջրի արտաքին ջրատարի վերանորոգում	1.0	100	996	10.0
5.	Այգուտի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	30		1052	180.0
6.	Ճամբարակի խմելու ջրի համակարգի վերակառուցում	33.0		7400	420.0
7.	Ճամբարակի կոյուղու ցանցի հիմնանորոգում	10			200.0
8.	Ջիլի ներքին ցանցի վերանորոգում	2	100	553	12.0
9.	Ջիլի արտաքին ջրատարի հիմնանորոգում	3.0	100		15.0
10.	Գետիկի ջրագծի նորոգում	2.0		494	6.0
11.	Գետիկի ջրագծի հատվածի նորոգում	1.8			5.0
12.	Գետիկի ՕԿՋ-ի նորոգում				3.0
13.	Գետիկի ջրագծի հիմնանորոգում և կապտաժի նորոգում	2.0			4.0
14.	Գետիկի կոյուղու գծի կառուցում	1.0			5.0
15.	Աղբերքի խմելու ջրի համակարգի վերակառուցում (4 հատ ՕԿՋ-ներ)	8.0		209	100.0
16.	գ. Մարտունու ջրագծի արտաքին հատվածի վերակառուցում	3.0		680	20.0
17.	գ. Մարտունու ջրագծի վերանորոգում	7.0			3.0
18.	Գ.Մարտունու ՕԿՋ-ի և ն/ց-ի կառուցում	1.0			5.0
19.	Դպրաբակի ջրամատակարարման համակարգի վերանորոգում և կառուցում	25			61.0
20.	Դրախտիկի ջրամատակարարման համակարգի վերանորոգում և կառուցում	5			50.0
21.	Ձորավանքի ջրամատակարարման համակարգի վերանորոգում	0.5			2.0
22.	Թթուջրի խմելու ջրագծի վերանորոգում	11			10.0
23.	Արտանիշի խմելու ջրի ա/ց-ի վերանորոգում	5			15.0
24.	ԸՆԴԱՄԵՆԸ	165.3			1183.0

Վարդենիսի տարածաշրջան

հ/հ	**Միջոցառման անվանումը**	**Երկարությունը կմ**	**Խողովակի տրամագիծ մմ ՕԿՋ ծավալ մ3**	**Բնակիչների թիվ**	**Դահանցվող ֆինանսական միջոցները ընդամենը մլն.դ**
1.	Տորֆավանի ջրամատակարարման ցանցի նորոգում, նոր ջրատարի անցկացում	7	150-900	554	20.0
2.	Ծովակի ներքին ցանցի վերակառուցում	12	50-150	2705	50.0
3.	Ծովակի կապտաժի ամրացում,				2.0

	1 հատ խորքային հորի կառուցում				5.0
4.	Շատվանի ներքին ցանցի հիմնանորոգում	6	150	559	60.0
5.	Նորաբակի ջրամատակարարման համակարգի վերանորոգում	7.2		278	62.0
6.	Այրք-Ջաղացաձոր-Գեղամասար ջրագծի կառուցում	7		203	20.0
7.	Կարճաղբյուրի ներքին ցանցի վերանորոգում, խմելու ջրագծի կառուցում	10.0 11		8153	50.0 60.0
8.	Տրետուք, Կուտական, Կախակն ջրամատակարարման նոր համակարգի կառուցում	9		203	47.0
9.	Փ. Մասրիկի խմելու ջրի նոր համակարգի կառուցում	12		862	40.0
10.	Նորակերտ, Փ. Մասրիկ ջրանցման հատվածի կառուցում	5.0		947	30.0
11.	Վարդենիսի ներքին ցանցի վերակառուցում	25.0		12700	300.0
12.	Վարդենիսի նոր թաղամասի կոյուղու ցանցի կառուցում	10+4			200.0
13.	Վարդենիսի ջրահավաք ավազանի վերանորոգում				30.0
14.	Ծափաթաղի ջրամատակարարման ամբողջական համակարգի կառուցում	8.0		247	50.0
15.	Ակունքի ջրահեռացման համակարգի կառուցում Ակունքի կապտաժի ամրացում	10		4526	200.0 20.0
16.	Խաչաղբյուրի ջրագծի վերակառուցում	2.8		1313	30.0
17.	Խաչաղբյուրի ջրաղբյուրի կապտաժի պատերի հիմնանորոգում				10.0
18.	Խաչաղբյուրի ներքին ցանցի կառուցում	0.7			7.0
19.	Գեղաքարի ջրագծի նորոգում, Խմելու ջրագծի կառուցում	1.0 3.5		139	10.0 15.0
20.	Խաչաղբյուր-Լուսակունք ջրագծի հատվածի հիմնանորոգում	0.5		1497	6.0
21.	Լուսակունքի խմելու ջրի համակարգի վերակառուցում	11			67.0
22.	Գեղամասարի ջրագծի վերանորոգում	4.0		1075	40.0
23.	Դարանակի ջրագծի վերանորոգում	6.0		162	34.0
24.	Ն. Շորժայի արտաքին ջրագծի վերականգնում	5.4		86	25.0
25.	Ավազանի խմելու ջրագծի կառուցում	3.0		271	15.0
26.	Արեգունու խմելու ջրագծի ն/ց վերանորոգում	3.0		337	16.0
27.	Մաքենիսի խմ.ջրի ն/ց-ի ընդլայնում	1.5			10.0
28.	Սոտքի խմելու ջրագծի կառուցում	10.0			60.0
29.	Վ.Շորժայի խմելու ջրատարի վերանորոգում	10.0			29.0
30.	Արփունքի խմելու ջրագծի կառուցում	12.0			60.0

31.	Փամբակի խմելու ջրագծի կառուցում	3.0			8.0
32.	Կութի խմելու ջրագծի վերակառուցում	3.0			12.0
33.	Այրքի խմելու ջրատարի հիմնանորոգում	2.7			13.0
34.	Նորակերտի խմելու ջրագծի կառուցում	1.5			7.0
35.	Վանեվանի խմելու ջրագծի կառուցում	3			15.0
36.	Գեղամաբակի խմելու ջրագծի կառուցում	1.0			5.0
37.	Ջաղացաձորի խմելու ջրագծի կառուցում	2.5			7.0
38.	Լճավանի խմելու ջրագծի կառուցում	2.0			5.0
39.	Մ.Մասրիկի խմելու ջրագծի ա/g նորոգում, ՕԿՋ-ի/500խոր.մ/ կառուցում	12.8			60.0 10.0
40.	ԸՆԴԱՄԵՆԸ	249.1			1822.0

Ծանոթություն. հավելվածում ներկայացված թվերը ենթակա են ճշգրտման՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման փուլում:

Հավելված 6. 2012-2014թթ ՀՀ պետբյուջեի հաշվին Գեղարքունիքի մարզում նախատեսվող կապիտալ ծախսերը, այդ թվում՝ կապիտալ ներդրումները.

h/h	Նախարարության, պատվիրատուի, օբյեկտի անվանումը	Նախահաշվային արժեքը		Մնացորդը առ 01.01.2011թ	2012թ. ծրագրի նախագիծ		2013թ	2014թ.
		1984թ. գներով	Նախագծ տարվա գներով		կապ. ներդրում	հզոր. գործ.	Կանխատեսում նախահաշիվ	
1	2	3	4	5	6	7	8	9
	Գազատարերի կառուցում		1358000.0	1341000.0	535000.0	9.7	450000.0	356000.0
1	Գագարինավանի <Շիրազ> թաղամասի գազիֆիկացում		6000.0	6000.0	6000.0	0,5կմ		
2	Դրախտիկ գյուղի գազատար		55000.0	55000.0	15000.0	5,5կմ	20000.0	20000.0
3	Արտանիշ գյուղի գազատար		76000.0	76000.0	30000.0	11,0կմ	20000.0	26000.0
4	Աղբերքի գազատար		25000.0	25000.0	25000.0	3,0կմ		
5	Ջիլի գազատար		88000.0	88000.0	68000.0	10,0կմ	20000.0	
6	Դպրաբակի գազատար		81000.0	81000.0	31000.0	9,0կմ	25000.0	25000
7	Բարեպատի գազատար		54000.0	54000.0	20000.0	7,0կմ	20000.0	14000
8	Անտառամեջ գյուղի գազատ.		30000.0	30000.0	15000.0	4,0կմ	15000.0	
9	Ձորավանքի գազատար		37000.0	37000.0	20000.0	5,0կմ	17000.0	
10	Կալավանի		54000.0	54000.0	20000.0	7,0կմ	20000.0	14000.0

	գազատար							
11	Ջվիզ արգելոցի գազատար		37000.0	37000.0		5,0կմ	20000.0	17000.0
12	Փ.Մասրիկ գյուղի գազատար		68000.0	68000.0	20000.0	6,8կմ	20000.0	28000.0
13	Արփունք գյուղի գազատար		60000.0	60000.0	20000.0	6,0կմ	20000.0	20000.0
14	Նորակերտ գյուղի գազատար		15000.0	15000.0	15000.0	1,5կմ		
15	Ավազան գյուղի գազատար		32000.0	32000.0	10000.0	3,2կմ	10000.0	12000.0
16	Գեղամասար գյուղի գազատ		90000.0	90000.0	30000.0	9,1կմ	30000.0	30000.0
17	Արեգունի գյուղի գազատար		31000.0	31000.0	10000.0	3,0կմ	10000.0	11000.0
18	Դարանակ գյուղի գազատար		23000.0	23000.0	10000.0	2,3կմ	13000.0	
19	Փամբակ գյուղի գազատար		59000.0	59000.0	20000.0	5,9կմ	20000.0	19000.0
20	Ծափաթաղ գյուղի գազատար		97000.0	80000.0	30000.0	9.7	30000.0	20000.0
21	Վանևան գյուղի գազատար		40000.0	40000.0	20000.0	4,0կմ	20000.0	
22	փ.Մասրիկ-Ծափաթաղ մայրուղային գազատար		300000.0	300000.0	100000.0	27,0կմ	100000.0	100000.0

Հավելված 7. ՀՀ Գեղարքունիքի մարզում ճանապարհային ցանցի բարելավման միջոցառումների ծրագրերը ըստ առաջնահերթությունների /հիմնանորոգում, վերանորոգում և վերականգնում/

1.Մարզում միջպետական և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները գտնվում են բավարար վիճակում, բացառությամբ՝

-Մ-11 Մարտունի–Վարդենիս-Ադ.սահման ավտոճանապարհի կմ 27-31կմ /Կարճաղբյուրի զորամաս-Ծովակի խաչմերուկ հատված/ 3.5կմ ճանապարհահատվածի բարձրացում, կամ շրջանցիկ ճանապարհի կառուցում 1700.0 մլն. դրամ:

-Մ-14 Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի կմ 60+00 կմ 73+00 /Ծափաթաղ-Արեգունի/ շուրջ 13կմ գրունտային հատվածի հիմնանորոգում /ասֆալտապատում/, 1400.0 մլն. դրամ:

-Մ-14 Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի Վարդենիս համայնքով անցնող /Զարենցի փողոց 1.9կմ/ և Մ-11 Մարտունի-Վարդենիս-Ադ. սահման Վարդենիս համայնքով անցնող /Լեռնագործների փողոց 1.4կմ/ տարանցիկ ճանապարհահատվածների հիմնանորոգում/ասֆալտապատում/,500.0 մլն. դրամ:

-Մ-11 Մարտունի– Վարդենիս - Ադ.սահման ավտոճանապարհի կմ 45+00 կմ 56+00 /Շատվանի խաչմերուկ-Ադ.սահման/ 11 կմ գրունտային հատվածի հիմնանորոգում /ասֆալտապատում/, 1200.0 մլն. դրամ:

-Մ-14 Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի կմ 53+00 կմ 54+00 /Ծափաթաղի հատված/ փլվածքի վերականգնում, 300.0 մլն. դրամ:

-Հ-39 Մ-10-Գավառ 4.2կմ ճանապարհահատվածի ասֆալտապատում և 11.5կմ կոպճապատում, 570.0 մլն. դրամ :

-Մ-4-Սեմյոնովկա-Մ-4 1.4կմ /Մ-4-Ծովագյուղ հատված/ ճանապարհահատվածի հիմնանորոգում, 160.0 մլն. դրամ:

-Հ-29 Սևան-Ծաղկունք-Զովաբեր 4.9կմ /Ծաղկունք-Դդմաշեն հատված/ ճանապարհահատվածի հիմնանորոգում, 540.0 մլն. դրամ:

-Հ-30-Արծվաշեն 3.2 կմ ճանապարհահատվածի կոպճապատում, 40.0մլն. դրամ:

-Հ-39-Գավառի օդանավակայան 2.2կմ ճանապարհի ասֆալտապատում, 240.0 մլն.դրամ:

Վերոհիշյալ աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու համար կպահանջվի շուրջ 6650.0 մլն. դրամ:

2. Մարզի մի շարք համայնքներում առկա են մարզային և համայնքային ենթակայության հանրապետական և տեղական /մարզային/ նշանակության ճանապարհների և կամուրջների, ներհամայնքային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման /ասֆալտապատման և կոպճապատման/ խնդիրներ, որոնք առաջացել են այդ ճանապարհների վրա երկար տարիներ վերանորոգման աշխատանքներ չկատարելու պատճառով:

<u>2.1 Տեղական /մարզային և համայնքային/ ենթակայության ճանապարհների /այդ թվում՝ բնակավայրերի միջով անցնող փարանցիկ հատվածների/ հիմնանորոգում</u>

<u>Գավառի տարածաշրջան</u>

S-4-9 Մ-10-Լճափ-Մ-10 4.8կմ ասֆալտապատում, 500.0 մլն. դրամ
S-4-5 Մ-10-Նորատուս 2.0կմ ասֆալտապատում, 200.0 մլն. դրամ
S-4-6 Նորատուսի տրանսպորտային հանգույց 3.1կմ ասֆալտապատում, 200.0մլն. դրամ

<u>Մարտունու տարածաշրջան</u>

Հ-208 Մ-10-Ն.Գետաշեն-Վ.Գետաշեն-Մադինա 8.3կմ /Ն.Գետաշեն-Վ.Գետաշեն-Մադինա
/ասֆալտապատում, 976.0 մլն. դրամ
Հ-210 Մ-10-Երանոս 2.5կմ ասֆալտապատում, 260.0 մլն. դրամ
Հ-203 Մ-11-Վաղաշեն 1.0կմ ասֆալտապատում, 100.0 մլն. դրամ
Հ-209 Մ-10-Լիճք 2.9կմ ասֆալտապատում, 300.0 մլն. դրամ
S-4-11 Մարտունի-Վաղաշեն-Վարդենիկ 12.1կմ ասֆալտապատում, 1300.0 մլն. դրամ
S-4-18 Երանոս-Ծակքար 5.1կմ ասֆալտապատում 600.0 մլն. դրամ
S-4-14 Ծովինար-Կարճաղբյուր 6.9կմ ասֆալտապատում, 700.0 մլն. դրամ

Տ-4-15 Վերին Գետաշեն գյուղի շրջանց 4.0կմ կոպճապատում, 80.0 մլն. դրամ

Վարդենիսի տարածաշրջան

Հ-227 Մ-11-Ծովակ-Լճավան-Ախպրաձոր 11.6կմ ասֆալտապատում, 1200.0 մլն. դրամ

Հ-221 Մ-11-Նորաբակ 3.1կմ /Շատվան-Նորաբակ հատված/ ասֆալտապատում, 320.0 մլն. դրամ

Հ-217 Մ-14-Արփունք-Կախակն 2.8կմ /Մ-14-Արփունք հատված/ ասֆալտապատում, 250.0 մլն. դրամ

Հ-222 Սոթք-Ազատ 2.0կմ ասֆալտապատում 180.0 մլն. դրամ

Հ-224 Վարդենիս-Այրք-Ն. Շորժա 7.0կմ ասֆալտապատում 630.0 մլն. դրամ

Հ-219 Մ-14-Դարանակ 1.0կմ ասֆալտապատում, 90.0 մլն. դրամ

Հ-220 Մ-14-Փամբակ 1.0կմ ասֆալտապատում, 90.0 մլն. դրամ

Հ-215 Մ-11-Ծովակ 1.5կմ կոպճապատում, 150.0 մլն. դրամ

Տ-4-25 Ակունք-Խաչաղբյուր-Մ-11 3.0կմ /Խաչաղբյուր-Մ-11 հատված/ ասֆալտապատում, 290.0 մլն. դրամ

Տ-4-20 Մ-14-Նորակերտ 1.0կմ ասֆալտապատում, 60.0 մլն. դրամ

Տ-4-23 Շատվան-Կութ-Սոթք 10.4կմ /2.9կմ ասֆալտապատում, 7.5կմ կոպճապատում/ 410.0 մլն. դրամ

Տ-4-31 Մ.Մասրիկ-Կախակն 6.2կմ ասֆալտապատում, 560.0 մլն. դրամ

Տ-4-21 Մ-11-Գեղամասար 14.0կմ կոպճապատում, 1200.0 մլն. դրամ

Տ-4-26 Մ-11-Վարդենիս երկաթուղու կայարան 1.8կմ ասֆալտապատում, 160.0 մլն. դրամ

Սևանի տարածաշրջան

Հ-197 Սևան-Վարսեր 3.3կմ ասֆալտապատում, 350.0 մլն. դրամ

Հ-195 Մ-10-Չկալովկա 0.5կմ ասֆալտապատում, 50.0 մլն. դրամ

Հ-196 Մ-10-Նորաշեն 0.8կմ ասֆալտապատում, 70.0 մլն. դրամ

Հ-194 Մ-4-Սևանի թերակղզի 1.5կմ ասֆալտապատում, 60.0մլն. դրամ

Հ-193 Սևան-Ախթամար-Մ-4 8.0կմ ասֆալտապատում, 780.0 մլն. դրամ

Հ-198 Գագարինի տրանսպորտային հանգույց 1.0կմ ասֆալտապատում, 60.0 մլն. դրամ

Հ-191 Մ-4-Դդմաշեն 6.5կմ ասֆալտապատում, 600.0 մլն. դրամ

Տ-4-4 Ծաղկունք-Մ-4 1.5 կմ ասֆալտապատում, 140.0 մլն. դրամ

Ճամբարակի տարածաշրջան

Հ-230 Մ-14-Ջիլ 2.8կմ ասֆալտապատում, 220.0 մլն. դրամ

Հ-229 Մ-14-Աղբերք-Հ-30 4.0կմ ասֆալտապատում , 350.0 մլն. դրամ

Հ-30 Հ-30-Կալավան 5.5կմ կոպճապատում, 110.0 մլն. դրամ

Հ-30 Հ-30-Անտառամեջ 5.7կմ կոպճապատում, 114.0 մլն. դրամ

Տ-4-27 Դրախտիկ-Հ-30 4.0կմ կոպճապատում, 80.0 մլն. դրամ

Ընդամենը մարզում հիմնանորոգման /ասֆալտապատման և կոպճապատման/ կարիք ունեն 163.7կմ տեղական /մարզային և համայնքային/ ենթակայության ճանապարհներ, որոնց համար կպահանջվի 13790.0 մլն. դրամ:

2.2 Քաղաքային համայնքների փողոցների հիմնանորոգում

Ճամբարակ՝ 3.0կմ /անմխիթար վիճակ/, 330.0 մլն. դրամ

Վարդենիս՝ 4.0կմ /անմխիթար վիճակ/, 440.0 մլն. դրամ

Մարտունի՝ 5.0կմ /անմխիթար վիճակ/, 550.0 մլն. դրամ

Գավառ՝ 5.0կմ /անմխիթար վիճակ/, 550.0 մլն. դրամ

Սևան՝ 4.0կմ /անմխիթար վիճակ/, 440.0 մլն. դրամ
Ընդամենը 21 կմ քաղաքային համայնքների փողոցների հիմնանորոգման համար կպահանջվի շուրջ 2310.0 մլն. դրամ:

2.3 Սահմանամերձ համայնքների ճանապարհների հիմնանորոգում

Վահան՝ 2կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 20.0 մլն. դրամ
Թթուջուր՝ 2կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 20.0 մլն. դրամ
Արտանիշ՝ 1կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 10.0 մլն. դրամ
Ջիլ՝ 1կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 10.0 մլն. դրամ
Կուտական՝ 1.5կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 15.0 մլն. դրամ
Սոթք՝ 4կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 40.0 մլն. դրամ
Ծափաթաղ՝ 2կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 20.0 մլն. դրամ
Գեղամասար՝ 3կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 30.0 մլն. դրամ
Ավազան՝ 2կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 20.0 մլն. դրամ
Արփունք՝ 2կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 20.0 մլն. դրամ
Նորաբակ՝ 3կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 30.0 մլն. դրամ
Արեգունի՝ 2կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 20.0 մլն. դրամ
Կախակն՝ 1.5կմ գրունտային ճանապարհի կոպճապատում, 15.0 մլն. դրամ
Ընդամենը՝ 13 համայնք, 27.0կմ ճանապարհների կոպճապատում, որի համար կպահանջվի 270.0 մլն. դրամ:

2.4 Տեղական /մարզային և համայնքային/ ենթակայության ճանապարհների /այդ թվում՝ բնակավայրերի միջով անցնող տարանցիկ հատվածների/ վրա առկա խիստ վթարային և վթարային վիճակում գտնվող կամուրջների հիմնանորոգում

Գանձակի համայնքային կամուրջի հիմնանորոգում 50.0մլն. դրամ
Լանջաղբյուրի համայնքային կամուրջի հիմնանորոգում 25.0մլն. դրամ
Ձորավանքի համայնքային կամուրջի հիմնանորոգում 50.0մլն. դրամ
Մարտունի քաղաքի համայնքային թվով 2 կամուրջների հիմնանորոգում 40.0մլն. դրամ
Վարդենիկի համայնքային կամուրջի հիմնանորոգում 20.0մլն. դրամ
Գեղարքունիքի համայնքային կամուրջի հիմնանորոգում 20.0մլն. դրամ
Կարճաղբյուրի համայնքային կամուրջի հիմնանորոգում 10.0մլն. դրամ

Ընդամենը մարզում խիստ վթարային վիճակում գտնվող կամուրջների հիմնանորոգման համար կպահանջվի շուրջ 215.0 մլն. դրամ:

Այսպիսով՝ մարզի ամբողջ ճանապարհային ցանցի /այդ թվում խիստ վթարային վիճակում գտնվող կամուրջների/ հիմնանորոգման, վերանորոգման և վերականգնման համար մոտավոր հաշվարկներով կպահանջվի 23235.0 մլն. դրամ, իսկ ճանապարհային ցանցի ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջը կազմելու է տարեկան 613.9 մլն. դրամ: Համաձայն 2012-2015թ.թ ծրագրի ընդհանուր հաշվարկով մարզի ճանապարհաշինության բնագավառի ներդրումների չափը կազմելու է 25690.6 մլն. դրամ:

Հավելված 8 ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանա լճի կենտրոնական գոտուն հարակից համայնքների գլխավոր հատակագծերիի մշակման վերաբերյալ 30.08.2011 թ.

հհ	Համայնքի անվանումը	Նախագծող կազմակերպություն	Կարգավիճակ

1.	ք.Գավառ	<<Քաղաքաշինություն>> ԳՀՆԻ	Ավարտված և հաստատված
2.	ք.Սևան	<<Արխիտոն>>	Ավարտված և հաստատված
3.	ք.Մարտունի	<<Հայնախագիծ>> ՓԲԸ	Ավարտված և հաստատված
4.	Չկալովկա	<<Արխիտոն>>	Ավարտված և հաստատված
5.	Աղբերք	<<Արխիտոն>> ՍՊԸ	Ավարտված և հաստատված
6.	Լճաշեն	<<Հողշինմոնիթորինգ>> ՍՊԸ	Ավարտման փուլում
7.	Նորաշեն	<<Տեքտոմ>> ՍՊԸ	Ավարտման փուլում
8.	Ծովազարդ	<<Հողշինմոնիթորինգ>> ՍՊԸ	Նախագծման փուլում է
9.	Հայրավանք	<<Հողշինմոնիթորինգ>> ՍՊԸ	Ավարտման փուլում
10.	Բերդկունք	<<Հայնախագիծ>> ՓԲԸ	Նախագծային աշխատանքները ավարտվել և քննարկվել են միջ գերատեսչական հանձնաժողովի նիստում
11.	Նորատուս	<<Հայգյուղշին>>	Նախագծման փուլում է
12.	Գեղարքունիք	<<Հայգյուղշին>>	Նախագծման փուլում է
13.	Կարմիրգյուղ	<<Հայհողշին>>	Նախագծման փուլում է
14.	Երանոս	<<Արխիտոն>>	Նախագծման փուլում է
15.	Վարդաձոր	<<Արխիտոն>>	Նախագծման փուլում է
16.	Ձորագյուղ	<<Արխիտոն>>	Նախագծման փուլում է
17.	Ծակքար	<<Արխիտոն>>	Նախագծման փուլում է
18.	Լիճք	<<Արխիտոն>>	Նախագծման փուլում է
19.	Վաղաշեն	<<Հայնախագիծ>> ՓԲԸ	Նախագծման փուլում է
20.	Վարդենիկ	<<Քաղաքաշինություն>> ԳՀՆԻ	Ավարտման փուլում
21.	Ջիլ	<<Հայնախագիծ>> ՓԲԸ	Նախագծման փուլում է
22.	Շորժա	<<Տեքտոմ>> ՍՊԸ	Ավարտման փուլում
23.	Ծափաթաղ	<<Հայնախագիծ>> ՓԲԸ	Նախագծման փուլում է
24.	Ն.Գետաշեն		Մրցույթի նախատարաստման փուլում
25.	Աստղաձոր		Մրցույթի նախատարաստման փուլում
26.	Զոլաքար		Մրցույթի նախատարաստման փուլում
27.	Ծովինար		Մրցույթի նախատարաստման փուլում
28.	Արծվանիստ		Նախածային առաջադրանքը հաստատվել է միջգերատեսչական հանձնաժողովի կողմից

29.	Ծովագյուղ		
30.	Լճափ		Նախածային առաջադրանքը հաստատվել է միջգերա տեսչական հանձնաժողովի կողմից
31.	Կարճաղբյուր		
32.	Փամբակ		
33.	Լճավան		
34.	Նորակերտ		
35.	Արեգունի		
36.	Դարանակ		
37.	Գեղամասար		
38.	Ծովակ		
39.	Կալավան		
40.	Դրախտիկ		Մրցույթի նախատարաստման փուլում
41.	Արտանիշ		

Հավելված 9. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը:

Աշխատողների թիվը՝ 179
Քաղաքացիական ծառայող՝ 151
Հայեցողական պաշտոն՝ 3
Մարզպետի սպասարկող անձնակազմ՝ 9
Տեխնիկական սպասարկող անձնակազմ՝ 14

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի բաղկացած է 7 վարչությունից՝

1.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն, որի կազմում.
ա) գյուղատնտեսության բաժին
բ) բնապահպանության բաժին

2. Ֆինանսական և սոցիալալ տնտեսական վարչություն, որի կազմում.
ա) Ֆինանսատնտեսագիտական բաժին
բ) հաշվապահական հաշվառման բաժին

3. ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, որի կազմում.
ա) ՏԻ և ՀԾՀ հարցերի բաժին
բ) ՀԳՄՏՍԳ համակարգման բաժին

4. ԿՄ և ՍՊՈՐՏԻ վարչություն, որի կազմում.
ա) կրթության բաժին
բ) մշակույթի և սպորտի բաժին

5. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, որի կազմում.
ա) սոցիալական ապահովության բաժին
բ) առողջապահության բաժին

6. Քաղաքաշինության վարչություն, որի կազմում.
ա) Ճարտարապետաշինարարական բաժին
բ) Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին
գ) Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

7. Քարտուղարություն, որի կազմում.
ա) ընդհանուր բաժին
բ) վարչատնտեսական բաժին

Բաժիններ
ա/ անձնակազմի կառավարման բաժին
բ/ իրավաբանական բաժին
գ/ հողաշինարարության և հողօգտագործման բաժին /մարզային հողային պետական տեսչություն
դ/ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
ե/ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշպանության բաժին
զ/ Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին

Առանձնվացված ստորաբաժանումներ
1. Գավառի ՍԾՏԳ
2. Մարտունու ՍԾՏԳ
3. Սևան ՍԾՏԳ
4. Վարդենիսի ՍԾՏԳ
5. Ճամբարակի ՍԾՏԳ

2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 329-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. <u>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ</u>

ա/ Ճարտարապետության բաժին
բ/ շինարարության բաժին
գ/ անշարժ գույքի և կադաստրի բաժին
դ/ կոմունալ տնտեսության բաժին, իսկ այժմ այն վերակազմավորվել և կոչվում են՝
ա/ ճարտարապետաշինարարական բաժին
բ/ բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին
գ/ տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին
Մինչև կառուցվածքային փոփոխությունները՝ տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը եղել է առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում, սակայն վերը նշված ՀՀ կառավարության որոշումով այն ընդգրկվել է քաղաքաշինության վարչության կազմի մեջ և այն կոչվում է տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՂԵԼ ԵՆ

ա/ Ֆինանսաքկան բաժին
բ/ Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժին
գ/ արդյունաբերության և գնումների գործի կազմակերպման բաժին
դ/ ծրագրերի և ներդրումների բաժին, այժմ վարչությունում գործում են՝
ա/ հաշվապահական հաշվառման բաժին
բ/ ֆինանսատնտեսագիտական բաժին, վերը նշված որոշմամբ ծրագրերի և ներդրումների բաժինը դարձել է առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում և անվանվել է զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ

ա/ Վերլուծության և տեղեկատվության բաժին
բ/ աջակցության և նյութատեխնիկական սպասարկման կազմակերպման բաժին

4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՂԵԼ ԵՆ

ա/ Ջրային ավազանների պահպանման բաժին
բ/ ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության բաժին
այժմ վերամիավորվել են և այն կոչվում է գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն, որը ընդգրկում է հետևյալ բաժինները՝
ա/ գյուղատնտեսության բաժին
բ/ բնապահպանության բաժին

5. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎՈՒՄ ԵՆ

ա/ կրթության բաժին
բ/ մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժին, այժմ վարչությունը անվանվում է՝ կրթության, մշակույթի և սպորտի վարչություն, որում ընդգրկված են հետևյալ բաժինները՝
ա/ կրթության բաժին
բ/ մշակույթի և սպորտի բաժին

6. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱԺԻՆՆԵՐ

ա/ տեղական ինքնակառավարման մարմինների բաժին
բ/ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման բաժին, այժմ այն անվանվում է՝
Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, որում ընդգրկվում են՝
ա/ տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի

բաժին
բ/հանրապետական գործադիր մարմինների տարածքային
ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժին:

7. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՂԵԼ ԵՆ՝

ա/ Ընդհանուր բաժին
բ/ տնտեսական բաժին
գ/ հաշվապահության բաժին,այժմ քարտուղարությունում ընդգրկված են
ա/ ընդհանուր բաժին
բ/ վարչատնտեսական բաժին
Նույն թվականի և նույն որոշմամբ ստեղծվել է իրավաբանական
առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում:

8. ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի թիվ 718-Ն որոշմամբ ,,Երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը վերանվանվել է ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին:

Այն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 524-Ա որոշմամբ հաստատվել է:

Հավելված 10. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության թվաքանակը և համայնքային բյուջեների մի շարք ցուցանիշները

ՀՀ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
1.	ք. Գավառ	25830	376,431.8	367,697.4	97.7	271,349.4	271,349.4	100	14573.4
2.	ք. Սևան	23800	373,974.0	363,912.3	97.3	257,397.2	257,397.2	100	15713.2
3.	ք. Վարդենիս	12752	198,196.0	204,590.7	103.2	155,451.6	155,451.6	100	15542.3
4.	ք. Մարտունի	14286	210,634.0	210,678.7	100.0	142,210.5	142,210.6	100	14744.1
5.	ք. Ճամբարակ	7100	115,994.5	110,552.7	95.3	86,630.6	86,630.6	100	16337.3
6.	Լճափ	1235	19,690.0	18,695.8	95.0	13,199.5	13,199.5	100	15943.3
7.	Ծաղկաշեն	670	11,854.8	11,850.2	100.0	6,965.3	6,965.3	100	17693.7
8.	Հայրավանք	852	13,630.7	13,528.3	99.2	8,645.3	8,645.3	100	15998.5
9.	Բերդկունք	290	6,615.0	5,930.0	89.6	3,500.0	3,500.0	100	22810.3
10.	Գեղարքունիք	2127	33,165.8	33,046.0	99.6	24,037.6	24,037.6	100	15592.8
11.	Կարմիրգյուղ	5983	81,909.8	81,779.2	99.8	65,405.7	65,405.7	100	13690.4
12.	Գանձակ	4370	68,425.3	67,564.8	98.7	48,215.1	48,215.1	100	15658.0

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
13.	Սարուխան	8428	122,647.0	122,372.1	99.8	97,428.1	97,428.1	100	14552.3
14.	Լանջաղբյուր	2462	37,037.9	36,629.5	98.9	27,788.3	27,788.3	100	15043.8
15.	Ծովազարդ	2153	35,125.0	34,179.7	84.6	24,090.2	24,090.2	100	16314.4
16.	Նորատուս	6825	102,600.0	100,745.2	98.2	75,370.9	75,370.9	100	15033.0
17.	Չկալովկա	601	12,022.8	12,123.4	100.8	5,655.9	5,655.9	100	20004.7
18.	Վարսեր	2024	32,062.0	29,840.7	93.1	19,374.7	19,374.7	100	15840.9
19.	Նորաշեն	553	9,727.1	9,749.4	100.2	6,347.6	6,347.6	100	17589.7
20.	Գեղամավան	1947	26,666.2	27,465.1	103.0	18,340.5	18,340.5	100	13696.0
21.	Դդմաշեն	2862	44,050.0	35,501.6	80.6	26,903.0	26,903.0	100	15391.3
22.	Սեմյոնովկա	262	8,470.4	7,256.2	85.7	3,500.0	3,500.0	100	32329.8
23.	Ծաղկունք	1093	21,458.0	21,749.9	101.4	9,056.3	9,056.3	100	19632.2

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
24.	Ծովագյուղ	4318	66,667.1	59,841.7	89.8	45,632.4	45,632.4	100	15439.3
25.	Լճաշեն	5036	80,640.8	86,187.0	106.9	58,438.8	58,438.8	100	16012.9
26.	Զովաբեր	1729	26,400.0	27,094.7	102.6	20,038.9	20,038.9	100	15268.9
27.	Ծակքար	2826	40,861.0	40,887.1	100.1	29,085.0	29,085.0	100	14459.0
28.	Մադինա	1162	20,651.5	21,043.1	101.9	14,009.5	14,009.5	100	17772.4
29.	Արծվանիստ	3223	48,276.5	44,828.2	92.9	34,746.0	34,746.0	100	14978.7
30.	Զոլաքար	6780	95,611.2	92,554.0	96.8	81,760.4	81,760.4	100	14101.9
31.	Վ. Գետաշեն	5044	71,213.6	75,946.3	106.6	61,937.8	61,937.8	100	14118.5
32.	Աստղաձոր	4308	63,444.5	61,909.6	97.6	48,185.7	48,185.7	100	14727.1
33.	Վարդաձոր	3011	45,657.0	45,714.6	100.1	32,911.6	32,911.6	100	15163.4
34.	Ն.Գետաշեն	8167	110,152.7	109,764.5	99.6	94,438.1	94,438.1	100	13487.5

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
35.	Գեղհովիտ	6553	98,419.9	97,652.0	99.2	76,489.9	76,489.9	100	15019.1
36.	Վարդենիկ	9643	138,800.0	139,459.6	100.5	113,382.7	113,382.7	100	14393.9
37.	Ծովինար	5155	74,440.0	71,180.9	95.6	57,521.5	57,521.5	100	14440.3
38.	Երանոս	5960	91,166.3	95,452.1	104.7	68,222.3	68,222.3	100	15296.4
39.	Ձորագյուղ	4788	71,788.6	71,792.0	100.0	52,968.6	52,968.6	100	14993.4
40.	Ծովասար	2956	43,411.2	43,496.9	100.2	28,171.4	28,171.4	100	14685.8
41.	Վաղաշեն	4313	62,267.0	62,523.4	100.4	50,677.2	50,677.2	100	14437.1
42.	Լիճք	5471	84,935.7	82,667.0	97.3	62,160.1	62,160.2	100	15524.7
43.	Գետիկ	536	8,867.2	8,837.6	99.7	5,977.8	5,977.8	100	16543.3
44.	Թթուջուր	1012	15,913.0	15,463.6	97.2	10,744.5	10,744.5	100	15724.3
45.	Մարտունի	670	11,200.9	10,447.6	93.3	7,881.3	7,881.3	100	16717.8

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
46.	Վահան	1214	20,381.7	18,964.9	93.0	12,594.6	12,594.6	100	16788.9
47.	Ձորավանք	147	4,854.0	4,802.1	98.9	3,500.0	3,500.0	100	33020.4
48.	Անտառամեջ	161	4,003.0	4,265.9	106.6	3,500.0	3,500.0	100	24863.4
49.	Դպրաբակ	607	9,370.0	9,797.1	104.6	7,091.2	7,091.2	100	15436.6
50.	Ջիլ	690	14,060.5	12,666.1	90.1	7,682.9	7,683.0	100	20377.5
51.	Կալավան	168	4,090.0	4,090.0	100.0	3,500.0	3,500.0	100	24345.2
52.	Դրախտիկ	972	18,072.9	15,520.5	85.9	11,599.3	11,599.3	100	18593.5
53.	Աղբերք	243	9,879.6	9,750.0	98.7	3,500.0	3,500.0	100	40656.8
54.	Շորժա	503	10,593.3	11,443.1	108.0	4,773.1	4,773.1	100	21060.2
55.	Արտանիշ	713	16,136.9	15,140.9	93.8	7,184.2	7,184.2	100	22632.4
56.	Այգուտ	1047	14,804.2	14,867.4	100.4	12,050.0	12,050.0	100	14139.6

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
57.	Արծվաշեն	0	0	0	0	0	0	0	0
58.	Կարճաղբյուր	2507	37,380.9	37,282.3	99.7	28,681.3	28,681.3	100	14910.6
59.	Փամբակ	514	8,781.9	8,352.1	95.1	5,318.7	5,318.7	100	17085.4
60.	Լճավան	592	15,142.7	15,046.9	99.4	7,124.1	7,124.1	100	25578.9
61.	Ախպրաձոր	365	9,260.7	9,131.1	98.6	3,725.9	3,726.0	100	25371.8
62.	Նորակերտ	995	20,000.0	21,823.7	109.1	8,740.5	8,740.5	100	20100.5
63.	Շատվան	606	15,194.5	15,078.7	99.2	7,955.9	7,956.0	100	25073.4
64.	Վանևան	398	7,542.6	6,653.9	88.2	3,745.8	3,745.8	100	18951.3
65.	Տրետուք	219	9,980.0	9,864.9	98.8	3,500.0	3,500.0	100	45570.8
66.	Կութ	192	6,480.7	6,512.7	100.5	3,500.0	3,500.0	100	33753.6
67.	Ջաղացաձոր	182	8,400.0	7,501.9	89.3	3,500.0	3,500.0	100	46153.8

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
68.	Սոթք	985	19,313.8	19,371.8	100.3	10,276.4	10,276.4	100	19607.9
69.	Արեգունի	398	11,198.8	11,538.0	103.0	3,362.7	3,368.1	100	28137.7
70.	Կախակն	454	13,410.1	13,295.6	99.1	5,157.2	5,157.2	100	29537.7
71.	Վ. Շորժա	46	5,994.7	6,047.8	100.9	3,500.0	3,500.0	100	130319.6
72.	Ավազան	205	6,513.8	6,384.9	98.0	3,500.0	3,500.0	100	31774.6
73.	Դարանակ	185	10,443.1	11,364.7	108.8	3,500.0	3,500.0	100	56449.2
74.	Ն Շորժա	127	6,870.3	6,744.2	98.2	3,500.0	3,500.0	100	54096.9
75.	Շատջրեք	468	11,313.5	11,040.3	97.6	5,777.9	5,777.9	100	24174.1
76.	Արփունք	545	12,159.6	11,772.2	96.8	5,030.3	5,030.3	100	22311.2
77.	Փ. Մասրիկ	867	17,560.0	21,241.9	121.0	8,779.2	8,779.2	100	20253.7
78.	Ծափաթաղ	414	7,474.2	7,490.1	100.2	4,648.9	4,648.9	100	18053.6

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
79.	Այրք	597	13,087.7	11,326.8	86.5	5,573.4	5,573.4	100	21922.4
80.	Խաչաղբյուր	1435	22,291.5	22,191.7	99.6	15,290.3	15,290.3	100	15534.1
81.	Լուսակունք	1623	23,283.7	23,845.6	102.4	19,547.2	19,574.8	100	14346.1
82.	Նորաբակ	274	7,919.8	7,804.5	98.5	3,500.0	3,500.0	100	28904.4
83.	Ազատ	152	7,166.5	7,181.5	100.2	3,500.0	3,500.0	100	47148.0
84.	Մաքենիս	481	10,248.0	10,137.4	98.9	4,842.8	4,842.8	100	21305.6
85.	Գեղաքար	174	7,176.1	7,065.6	98.5	3,500.0	3,500.0	100	41242.0
86.	Գեղամաբակ	126	7,300.3	7,401.8	101.4	3,500.0	3,500.0	100	57938.9
87.	Գեղամասար	1198	20,178.1	21,547.6	106.8	11,794.7	11,794.7	100	16843.2
88.	Կուտական	220	12,689.0	12,435.9	98.0	3,500.0	3,590.0	100	57677.3
89.	Մ. Մասրիկ	3428	53,180.0	52,233.8	98.2	32,844.8	32,852.0	100	15513.4

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվաքանակը	**Համայնքի բյուջեն (2010թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Դոտացիաներ (2010 թվականի տվյալներով) հազ. դրամ**			**Բյուջեն 1 բնակչի հաշվով**
			Ընդ. եկամուտներ	Փաստացի հավաքագրում	Հավաքագրման %	Պլանավորված	Փաստացի հատկացված	կատարման %	
90.	Ակունք	4527	66,267.4	65,520.0	98.9	57,000.6	57,000.6	100	14638.3
91.	Տորֆավան	529	7,764.2	7,777.4	100.2	6,787.8	6,787.8	100	14677.1
92.	Ծովակ	2898	43,874.6	44,801.2	102.1	35,411.3	35,462.7	100	15139.6
	Ընդամենը	256557	4,022,262.70	3,978,300.90		2,868,637.80	2,868,819.90		2065042.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ